քնքուշ նրբազգացություն, նա պահպանելով հանդերձ կանացիությունը դաստակներին ու սրունքներին, պահպանել էր նաև մանկական դյուրաբեկությունն ու նորատիությունը: Մի պահ տղամարդը ինքնամոռաց շլացավ այդ կնոջով, նրա մարմնով, թուխ, փայլատ, լույս կլանող Հարավի այն տաք ձերմակությամբ, որն ի չիք է դարձնում Արևմուտքի սառափե ձերմակությունը, արևային այն մարմիններից մեկով, որոնց լույսը մարում է թեյավարդի կիսագույնի ու համպարի ստվերների մեջ»: ¹³⁶

Չուլայի վեպում նկարիչ Կլոդի և Քրիստինի հանդիպումը սկսվում է առաջին իսկ էջերից, Կլոդը ևս պատրաստվում էր «մերժվածների ցուցասրահում» իր «Պլեներ» կտավը ներկայացնելուն և բնորոշուհիներ էր փոխում՝ երագած կնոջ կերպարը պատկերելու համար:

«Լուսամուտներից ներս հորդացող տոթի պատճառով օրիորդը վրայից դեն էր նետել սավանները և անքուն գիշերներից ուժասպառ՝ լույսով ողողված՝ նա քնած էր, այնքան անհաղորդ, որ ոչ մի էլևէջ չէր խաթարում մաքրամաքուր մերկությունը: Գիշերային իր տապում գիշերազգեստի կոճակներն արձակվել էին, ձախ թևքը սահել էր՝ ի ցույց դնելով պարանոցը: Դա մետաքսե նրբության, ոսկեշող, փթթող մաշկ էր, երկու փոքրիկ՝ ավիշից ուռճացած, պիրկ կրծքերով, որոնցից դուրս էին ցցվել երկու դժգույն վարդ: Նա աջ թևն անց էր կացրել ծոծրակի տակ, քնատ գլուխը թեքվել էր, կրծքավանդակը տրվել էր շենշող մոռացության, մինչդեռ խառնված սև մազերը նրան կարծես հազգրել էին մուգ թիկնոց:

-Ահ, գրողը տանի, չափազանց լավն է:

Մա էր, հենց սա, այն կերպարը, որ նա անընդհատ փնտրել էր իր կտավի համար, ու հենց այս դիրքով»: ¹³⁷

Առաջին հանդիպումը **Բացահայտումը**, ճակատագրական է դառնում երկու վեպերի հերոսների համար: Մանեթը և Քրիստինը մարմավորում են դարի գույգ մեծագույն կտավների կերպարները: Առաջին դեպքում խոսքը Ժան-Օգյուստ-Դոմինիկ Էնգրի «Թուրքական բաղնիք» (1862), երկրորդում՝ Էդուարդ Մանեի «Նախաձաշ խոտի վրա» (1863), թերևս նաև «Օլիմպիա» (1863) կտավների մասին է: Այս երկու գեղանկարներն էլ ժամանակին մեծ աղմուկ են բարձրացրել, վեպերի հեղինակները փորձում են սատարել քարկոծվող նկարիչներին և ներկայացնել նրանց

¹³⁶ Goncourt Ed. et J. de, Manette Salomon, Gallimard, 1996, p.273

¹³⁷ Zola, L'Oeuvre, Le livre de poche, 1996, p.69

փնտրտուքները, դեգերումները՝ կտավը կերտելու ճանապարհին: Ինչպես արդեն նշել ենք, թե՛ Գոնկուրները և թե՛ Ջուլան իրենց ստեղծագործություններում դառնում են արվեստի քննադատներ և նկարչի կերպարների միջոցով փորձում են ներկայացնել իրենց ժամանակի արվեստի հրատապ հիմնախնդիրներն ու նորարարական միտումները:

Երկու վեպերում էլ *Բացահայտմանը* հաջորդում է գոհունակությունը՝ արվեստագետը հենց այդ կնոջն է փնտրել ուզած կերպարը պատկերելու համար: Այսինքն, կինը վերածվում է *Քնորդուհու*: Այս դեպքում խոսքը հերթական բնորոշուհու մասին չէ, որոնց թե՛ Կորիոլիսը և թե՛ Կլոդը հեշտությամբ գտնում, փոփոխում էին: Թե՛ «Մանեթ Սալոմոնում» և թե՛ «Ստեղծագործությունում» նկարիչ-հերոսները առանձնահատուկ մոտեցում են ցուցաբերում իրենց կտավներին, որոնք իրենց ստեղծագործական հավատամքն էին դառնալու: Ստացվում է, որ Մանեթը և Քրիստինը լինելու էին գալիք գլուխգործոցների մոդելները, ուստի արվեստագետները իրենց բոլոր հույսերը կապում են երկու կանանց հետ: Եթե Մանեթը մինչ Կորիոլիսը բազմիցս բնորդել էր այլ կտավների համար, ապա Քրիստինի կյանքում սա առաջին դեպքն էր:

*«Երկուշաբթի Մանեթը պարտաճանաչ գտնվեց: Մի քանի բարից հետո նա սկսեց դանդաղ հանվել՝ հետև-հետևի օրոցին կանոնավոր ծալելով հանած հագուստները: Հետո բարձրացավ բնորոշուհիների համար նախատեսված սեղանին՝ մինչև կուրծքը վեր քաշած վերնաշապիկով, որի ասեղնագործ ծայրը պահում էր ատամների արանքում՝ այնպիսի զուսպ, հավաք, ամաչկոտ շարժումներով, ասես պարկեշտ մի կին ներքնազգեստն էր փոխում»:*¹³⁸

*«Առանց շտապելու նա հանեց գլխարկն ու մորթեկար թիկնոցը, հետո նույն հանգիստ շարժումով կրծկալը, հետո սեղմիրանը, իջեցրեց փեշերը, արձակեց ներքնազգեստի թևքերը, և այն սահեց կոնքերին: Ոչ մի խոսք չարտասանեց, թվում էր այլ տեղ էր, ինչպես այն երեկոներին, երբ երազանքներով տարված, իր սենյակում, անտարբեր, ինքնաբերաբար հանվում էր»:*¹³⁹

Հարկ է նշել, որ թե՛ Մանեթը և թե՛ Քրիստինը հետագայում հպարտությամբ զմայլվելու են կտավում պատկերված իրենց մերկ

¹³⁸ Goncourt Ed. et J. de, Manette Salomon, Gallimard, 1996, p.270

¹³⁹ Zola, L'Oeuvre, Le livre de poche, 1996, p.191

մարմիններով, որոնք ի ցույց էին դրված ողջ արվեստասեր հասարակությանը:

Մանեթը՝ Կորիոլիսի, Քրիստինը՝ Կլոդի կյանքում լինելով սուկ **բնորոշուհիներ**, աստիճանաբար դառնում են **Միրուհիներ**, ապա և **Կողակիցներ**: Երկու կանայք էլ իրենց երիտասարդությամբ, գեղեցկությամբ մրցակից չունեին և հեռացնելով նկարիչների նախկին բնորոշուհիներին, շարունակում էին կեցվածք ընդունելու մենաշնորհը վայելել:

Ինչպես Գոնկուր եղբայրների, այնպես էլ Ջուլյի վեպերում բնորոշուհի-սիրուհի-կողակցուհի կերպարին հաջորդում է **մոր** կերպարը:

Կորիոլիսը և Կլոդը ներքուստ չեն համակերպվում հայր դառնալու իրողության հետ: Ջավակները նրանց համար արվեստի գործեր էին հանդիսանում՝ առաջինը տարված էր երեխայով, երբ վերջինս դեռևս փոքր էր ու «անուշիկ», երկրորդը, երբ որդին մահանում է, դիակը դարձնում է կտավի, պատկերման նյութ: Նա, մինչ կտավում հավերժացնելու պահը, անհաղորդ է մնում վաղամեռիկ որդու հանդեպ: Ցուցադրության ժամանակ, հենց հազարավոր այցելուներից հագիվ երկուսը նայեցին կտավին, Կլոդը ողբաց, ողբաց իր գավակի՝ կտավի մահը:

Այլ է Մանեթի և Քրիստինի հոգեվիճակը: Երկուսի դեպքում էլ մայրացման բերկրանքին հաջորդում են մարմնի ձևախախտման ապրումները: Նրանք զգում են, որ երեխաների աշխարհ գալուց հետո հետո նկարիչ-սիրեցյալները դժգոհ են նայում իրենց մայրացած մարմիններին:

*«Մենդաբերելուց հետո Մանեթը դարձել էր այլ կին: Բնորոշուհին անսպասելի սպանվել, մեռել է նրա մեջ: Մայրացումը՝ մարմնանալով կլանել էր նախկին վեհությունը»:*¹⁴⁰

*«Առաջին մեկ ժամում նկարիչը, առանց բառ արտասանելու, իր սանդուղքի վերից նրան հայացքներ նետեց, որոնք սրախողիտող արեցին կնոջը՝ ուսերից մինչև ազդրերը: Քրիստինին աննկատ համակեց մահվան թախիծը, չհասկացավ՝ տառապում է ցրտի՞ց, թե՞ հուսահատությունից, որը հեռվից մոտենալով, վերածվում էր դառնության: Նա այնպիսի հոգնություն զգաց, որ սայթաքեց և թմրած ոտքերը դժվարությամբ շարժելով, հեռացավ»:*¹⁴¹

¹⁴⁰ Goncourt Ed. et J. de, Manette Salomon, Gallimard, 1996, p.424

¹⁴¹ Zola, L'Oeuvre, Le livre de poche, 1996, p.344

Վեպերի ավարտին արդեն Մանեթը և Քրիստինը գիտակցում են իրենց անգորությունը նկարիչ-ամուսինների, արվեստի հանդեպ: Հերթական անգամ հարց է ծագում՝ արվեստը կհաղթի կյանքին, թե՞ կյանքը՝ արվեստին: Երկու նկարիչներն էլ, չկարողանալով դիմագրավել կյանք-արվեստ պայքարին, ընդունում են իրենց պարտությունը: Այդ պահից նրանք ձախողված նկարիչներ են: Նրանք մեռնում են, ինչպես վերը նշվեց՝ մեկը հոգեպես, մյուսը՝ ֆիզիկապես: Մահվան այդ հանգրվանին նրանք հասնում են իրենց արդեն օրինական կանանց պատճառով, որոնք վերածվել էին **Բռնաստիքուհիների**:

«Եվ դանդաղ, այնպիսի դեմքով, որն ասես հրճվում էր իր կտավների գոհաբերությամբ ու հոգեվարքով, նա շարունակեց այրել գեղանկարները: Երբ վերջինը մոխրացավ, ուշադիր գննեց, թե ի՞նչ էր մնացել վառված բոլոր կտավներից՝ հանքանյութի նմանվող արծաթագույն մի նստվածք. նա այն վերցրեց վրձնի երկու կողուկով, գնաց դեպի Մանեթն ու անսպասելի նետեց հագուստի բացվածքը»:¹⁴²

«Կողքը կախվել էր երկարաձիգ աստիճանից՝ իր ձախողված գեղանկարի դիմաց: Պարզապես վերցրել էր հանդիպակաց պատի շրջանակը պահող պարաններից մեկը, ելել էլ կանգնակին, որպեսզի հենասյուններն ամրացնելու համար պարանի ծայրն անցկացնի այն օղակի միջով, որ մի օր ինքն էր մեխել: Հետո, բարձրությունից, ցատկել էր պարասպրոյան մեջ: Շապիկով, ռոտաբրֆիկ, սահազրու սևացած լեզվով ու ակնաբիբերից դուրս պրծած արնակալած աչքերով նա կախված էր սարսափելիորեն ձգված իր անշարժ ընդարմածությամբ, դեմքով դեպի գեղանկարը, չափազանց մոտ առեղծվածային վարդը ցայլքին ծաղկած Կնոջը. ասես վերջին շնչով նրան էր փոխանցել իր հոգին, և այժմ էլ շարունակում էր նրան նայել սևեռուն ակնաբիբերով:

«Օ՛, Կողք, օ՛ Կողք...նա քեզ իլեց, քեզ սպանե՛ց, սպանե՛ց, պոռնիկը»¹⁴³:

Երկու ձախողված նկարիչների սխալը նույնն էր՝ նրանք ներշնչանքի աղբյուր կնոջը շփոթել էին կյանքի առօրեականության կնոջ հետ:

Այսպիսով սույն հոդվածով մենք փորձ արեցինք ներկայացնել բնորոշուհու ոգեշնչող և կործանող դերը գեղանկարչի մասին պատմող վեպերում: Մանեթ Սալոմոնը՝ Էդ. և Ժ. դը Գոնկուրների համանուն և Քրիստինը՝ Զոլայի «Ստեղծագործությունը» վեպում, աստիճանական զարգացում են ապրում՝ բնորոշուհի-սիրուհի-կողակից-մայր-կին-բռնակալ

¹⁴² Goncourt Ed. et J. de, Manette Salomon, Gallimard, 1996, p.516

¹⁴³ Zola, L'Oeuvre, Le livre de poche, 1996, p.476

հերթագայությամբ: Երկուսն էլ ի սկզբանե փորձեցին սատարել ու ոգեշնչել նկարիչներին՝ իրենց փնտրտուքներով լի արվեստի դժվարին աշխարհում: Սակայն, վերջում, անգիտակցաբար մղեցին վախճանի: Բնորոշիչների ոգեշնչումը տևում է մինչև կտավի արարումը, մինչ այն պահը, երբ երկուսն էլ իջնում են իրական կյանք: Չգիտակցելով և չընդունելով արվեստ-կյանք պայքարը՝ նրանք ինքնստինքյան մնում են այս կյանքում: Իսկ ինչ վերաբերում է Կորիոլիսին և Կլոդին, նրանք որպես նկարիչներ իրենց հերթին ներշնչվեցին բնորոշիչներով այնքան ժամանակ, որքան վերջիններս ի գորու էին ոգևորելու արվեստագետների երևակայությունը: Ի վերջո թե՛ Կորիոլիսը և թե՛ Կլոդը, ինչպես Պիզմալիոնի պարագայում, պաշտեցին իրենց կտավի, այսինքն արվեստագետի երևակայած, տենչացած կնոջը: Կյանք–արվեստ հավերժական հակամարտությունում, որն ի դեպ գեղանկարչի մասին վեպի հիմնական թեմաներից է, հերթական հաղթանակը արվեստինը եղավ:

Նույն այս գաղափարը հատուկ է Գեղանկարչի մասին այլ, ինչպես օրինակ Բալզակի «Անհայտ գլուխգործոց», Սոպասանի «Մահվան պես հզոր» վեպերին, սակայն դա արդեն այլ ուսումնասիրության նյութ է:

Ани Джаникян

ПАРАДИГМА: НАТУРШИЦА – ХУДОЖНИК– ИСКУССТВО В РОМАНАХ «МАНЕТ САЛОМОН» БРАТЬЕВ ГОНКУР И «ТВОРЧЕСТВО» ЗОЛЯ

В статье определяется роль и значение натурщицы в жизни и творчестве художника, прослеживается развитие образа (натурщица – любовница – сожительница- мать - жена- тиран) в романах «Манет Саломон» братьев Гонкур и «Творчество» Э.Золя.

Ani Janikyan

MODEL - ARTIST - ART PARADIGM IN “MANETTE SALOMON” BY GONCOURT BROTHERS AND “THE OEUVRE” BY E.ZOLA

The article defines the role and importance of Model in artist’s life and works, shows the development of the image of Model (model - mistress - concubine – mother – wife - tyrant) in “Manette Salomon” by Goncourt brothers and “The Oeuvre” by E.Zola.

**ԺԱՆ ԺՐՆԵՒ ԾԻՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԸ
(Ժեստեր, սիմվոլային կերպարներ)**

Հիմնաբառեր՝ երևակայություն, անհրական աշխարհ, ժեստ, սևամորթներ, սպիտակամորթներ, սիմվոլային կերպարներ

Ժեստը կարող է սիմվոլ ստեղծել և կարող է դառնալ իր իսկ ոչնչացման «գործիքը»: Այն կարող է թե՛ ստեղծել, թե՛ կարգավորել բեմական տարածքը: Ժեստը կարող է աջակցել բառերին, որպեսզի ընդգծի արտահայտած մտքերը, դրանք դարձնի ավելի զգայական և շեշտի վերջիններին նշանակությունը:

Թատերական ժեստի բազմաթիվ դրսևորումներ և դրանք հստակ կատարելու պարտադիր պահանջը դերասաններից՝ տեսնում ենք Ժան Շրնեի ցանկացած պիեսում, քանի որ Շրնեի կարծիքով դերասանները բեմի վրա պետք է կատարեն ոչ թե գործողություններ, այլ ժեստեր, չխաղալ ներկայացում, այլ իրականացնել ծես: *«Ուրեմն անհրաժեշտ է դերասաններին և դերասանուհիներին [...] ստիպել դիմել դժվար գործողությունների, անել, հիասքանչ ժեստեր, բայց չվերաբերող սովորական կյանքի իրադարձություններին, քանի որ մենք հակադրում ենք կյանքն ու բեմը, ուրեմն կանխազգում ենք, որ մահը բեմին հարակից է և ցանկացած ազատություն թույլատրելի է»¹⁴⁴*: Առհասարակ Շրնեն խառնաշփոթ ու երկիմաստություն է սփռում իր պիեսներում, ինչը ցույց է տալիս, որ մենք գտնվում ենք մի աշխարհում, որն արմատապես տարբերվում է մեր առօրյա աշխարհից:

Շրնեի «Ադախիները» պիեսը սկսվում է անսովոր ժեստերի դրսևորմամբ, որոնք ներկայացնում են կերպարների փոխհարաբերությունները, պատկերում են նրանց երկրնտրանքը, դժվարին ընտրությունը: Շրնեն ընդգծում է. *«Դերասանուհիները, հետևաբար հարկ է, որ գսպեն իրենց ժեստերը, դրանցից յուրաքանչյուրը դարձնելով կախվածի, կամ բեկվածի պես: Յուրաքանչյուր ժեստը առկախված վիճակում կդնի դերասանուհիներին: Լավ կլինի, որ որոշ պահերում նրանք քայլեն ոտքի մասնների վրա՝ մի կամ երկու կոշիկը հանելուց հետո, որը նրանք կպահեն ձեռքում, զգուշությամբ, որպեսզի դնեն կահույքի վրա՝ առանց*

¹⁴⁴ Genet J. Lettres à Roger Blin. Paris. Gallimard. 1968. P 11.

որևէ բանի բախվելու [...]»¹⁴⁵: Երկու աղախինները՝ Սուլանժը և Քլերը, ծես-խաղի միջոցով փորձում են իրենց Տիկնոջ երևակայական սպանությունը, ինչը միանգամայն բավարարում է նրանց խաղի սկզբնական փուլում: Վիճում են, մեղադրում են մեկմեկու, պատմում են դեպքեր Տիկնոջ և իրենց կյանքից, խառնում են իրականն ու ֆանտազիան, հնարավորն ու անհնարինը: Պիեսի վերջում ծիսական խաղը շուտ է գալիս սպասուհիների դեմ: Քլերը վերջ է տալիս իր կյանքին, խմում է Տիկնոջ համար նախատեսված թունավորած լոբենու թեյը, դրանով կարծես թե սպանում է նաև իր Տիկնոջը: Այս պիեսը ներկայացնում է մի սպանություն, ըստ էության ոչնչի համար, որը երկու աղախինների համար, համաձայն Ժընեի, սահմանված էր ճակատագրով, եթե ոչ Տիկնոջ, ուրեմն՝ իրենցից մեկի:

«Աղախինները» պիեսում բոլորը խաղում են՝ իրական Տիկինն ազնվական տիկնոջ դեր, Քլերը խաղում է իր Տիկնոջ դերը, իսկ Սուլանժը՝ իր քրոջ Քլերի դերը:

Իրական Տիկինը՝ ամեն օր խաղալով մեծահոգի և բարի տիկնոջ իր դերը, միաժամանակ անընդհատ նվաստացնում է աղախիններին, այդ է պատճառը, որ թվացյալ Տիկնոջ ժեստերը հատկապես պեսք է ընդգծեն արհամարհական վերաբերմունքն աղախինների նկատմամբ: «Աղախինները գոյություն ունեն իմ շնորհիվ, միայն իմ շնորհիվ: Իմ ճիշերի և վարմունքի շնորհիվ»¹⁴⁶: Քլերը, ով մարմնավորում է Տիկնոջը, պարզում է ձեռքը. «*նրա ժեստը՝ ձեռքը և տոնը կլինեն ծայրահեղ ողբերգական*»¹⁴⁷: Քլերի խնդիրն է Սուլանժին հասցնել կատաղության այն աստիճանի, որ վերջինս ընդունակ լինի նույնիսկ խեղդամահ անել իր տիրուհուն, մինչդեռ Սուլանժը, ով մարմնավորում է իր քրոջը՝ Քլերին, խաղում է իր ձեռքերի հետ. «*զննելով իր ձեռքերը՝ ձեռնոց հագած, նրանց տալով մեկ փնջի, մեկ էլ հովհարի ձև*»¹⁴⁸: Ռետինե ձեռնոցները տհաճորեն հիշեցնում են խոհանոցը՝ աղախինների տիրույթը, ուր անցնում է նրանց կյանքի մեծ մասը, կեղտոտ սպասքաջուրը, լվացարանի խողովակի գլխոցը: Ռետինե ձեռնոցներով արգելված է ներս մտնել ննջասենյակ, ինչն էլ զայրացրել է թվացյալ Տիկնոջը: Ձեռքերը փակել-բացելու շարժումները ընդգծում են Սուլանժի զգայական հոգեվիճակը,

¹⁴⁵ Ժենե Ժ. Աղախինները, Երևան, Ակտուալ Արվեստ, 2014, էջ 11:

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 37:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 21:

¹⁴⁸ Նույն տեղում:

ցանկությունը՝ մեղմելու, հուզմունքը և շեղվել նողկալի իրակա-
նությունից:

Այսպիսով՝ աղախինները փորձելով ազատվել իրենց ստորացուցիչ
վիճակից, հորինում են մի խաղ-տեսիլք՝ տիկնոջ երևակայական
սպանությունը, որը հետզհետե վերածվում է ծիսական խաղի՝
ծիսակարգի: Լինելով անսահման հավատարիմ՝ աղախիններն ամեն օր
Տիկնոջ աչքերում տեսնում են իրենց չնչինությունը, բայց նրանց
կատաղության է հասցնում ոչ թե Տիկնոջ խստությունն ու արհամա-
րհական վերաբերմունքը, այլ կեղծ բարեսրտությունը: «Տիկինը բարի է:
Տիկինը գեղեցիկ է: Տիկինը քնքռւշ է»¹⁴⁹, - սարկազմով ասում են
աղախինները և ամեն անգամ չեն կարողանում վտանգավոր խաղն
ավարտին հասցնել:

Կոշիկները փայլեցնելու գործողությունը թավշյա կարմիր զգեստի
գուգորդմամբ՝ կազմում են հաջորդ ժեստային բարդ սիմվոլը:
Գործողությունը սկսվում է Սուլանժով, ով պագում է գորգի վրա, հետո
ծնկի է գալիս և թքելով փայլեցնում է տիկնոջ լաքած կոշիկները: Ծնկի
գալը՝ հնազանդության, խոնարհության և նույնիսկ հիացմունքի նշան է:
Թուքը, ընդհակառակը, արտահայտում է ասելություն, մերժում,
ըմբոստացում: Այս կրկնակի ժեստը ցույց է տալիս հուզական
զգացումների երկակիությունը, որը զգում է Սուլանժը Տիկնոջ հանդեպ:
Քլերը, ով Տիկնոջ դերն է խաղում, մի ժեստ է անում, որն էլ ավելի է
հարստացնում այս սիմվոլային կերպարը: Նա մեկնում է ոտքը Սուլանժին
և հրամայում է գննել իրեն հենց նոր փայլեցրած կոշիկների մեջ: Մինչդեռ
Սուլանժը ենթարկվում է, կեղծ տիկինը հիանում է իրենով դիմացի հայելու
մեջ: « Ես Ձեզ ասել եմ, Քլեր, խուսափեք թուքումուրից: Թող դա ննջի ձեր
մեջ, աղջիկս, թող այնտեղ փտի: Ա՛հ, ա՛հ: Դուք սոսկալի եք, գեղեցկուհիս:
Ավելի կոացեք և ձեզ նայեք կոշիկներինս մեջ: (Նա պարզում է ոտքը,
Սուլանժը գննում է այն): Կարծում եք՝ ինձ համար հաճե՞լի է զգալ, որ
ոտքս պատած է ձեր թքի ծածկույթով: Ճահճային մշուշաքողո՞վ»¹⁵⁰:
Տիկինը կարծում է, որ աղախինը պետք է գոհանա իր տիկնոջ կոշիկի
արտացոլանքով: Հերթական նվաստացում ... և աղախինը ենթարկվում է
Տիկնոջ նողկալի քմահաճույքին և հանդես է գալիս ամենաստորացված՝
«շատ խոնարհ» վիճակում, իսկ փայլեցրած կոշիկից երևացող Սուլանժի
խեղաթյուրված արտացոլանքն արտահայտում է այն ասելությունը, որ

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 129:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 25:

աղախինը զգում է տիկնոջ հանդեպ: Վերջապես փոխադարձ վիրավորանքներից հետո տեղի է ունենում մի ժեստ, որը լրացնում, ամբողջացնում է «Աղախինները» պիեսի տիրուհի-աղախին սիմվոլային հարաբերությունների կառույցը: Սուլանժն այս անգամ թքում է կարմիր թավշյա զգեստի վրա, որ հագել էր Քլերը, որպեսզի վերափոխվի իր Տիկնոջը. «*Ձեր կուրծքը՝ ... փղոսկրյա: Ձեր ազդրերը ... ոսկյա: Ձեր ոտքերը ... սաթե: (Թքում է կարմիր զգեստի վրա:) Ատում եմ ձեզ*¹⁵¹: Այս դեպքում թուքը, միաժամանակ նշանակում է, թե՛ արհամարհանքի և ըմբոստացման դրսևորում և թե՛ պատկերի խեղաթյուրման միջոց: Այս ըմբոստացմամբ Սուլանժը վերադարձնում է թվացյալ տիրուհուն (իր քրոջը՝ Քլերին) աղախնի իր խղճուկ ինքնությանը: Թեև ժեստերի միջոցով «հեքիաթի հյուսվածքով» սիմվոլային կերպարների կերտումը ցայտուն արտահայտված է «Աղախինները» պիեսում, այնուամենայնիվ այս դրամայի կերպարները ամբողջովին չեն վերածվել սիմվոլի, հարաբերականորեն պահպանել են իրենց ինքնությունը: Կերպարների անձնավորումը և փոխհարաբերությունները սահմանափակվում են դերասանների ժեստերով և կեցվածքով: Միայն Շընեի ավելի ուշ գրված պիեսներում՝ «Նեգրերը»-ում և «Շերտավարագույրները»-ում, ժեստերը գերակայում և զրկում են կերպարներին իրենց ինքնությունից՝ վերածելով այդ կերպարները սիմվոլների:

«Նեգրերը» պիեսում ինտրիգ չկա՝ ավելի շուտ մտահոյացում, գաղափար կա: Այդ է պատճառը, որ Ժան Շընեն «Նեգրերը» պիեսը որակել է որպես զավեշտախաղ (կլոունադա): Իր պիեսում Շընեն ստեղծել է իրականության բազմաթիվ մակարդակներ, որոնք պետք է ներկայացվեն բեմի վրա՝ շեշտելով ներկայացման ծիսական բնույթը: Նեգրերը հավաքվել են իրականացնելու ծես՝ սպիտակամորթ կնոջ սիմվոլիկ սպանությունը, որը նրանց համար համարժեք է Սպիտակամորթների քաղաքակրթության ոչնչացմանը, նաև ցույց տալու, թե ինչպես են Սպիտակամորթները պատկերացնում Սևամորթներին: «*Այս երեկո մենք մտադի ենք միայն զվարճացնել ձեզ: Դե, մենք Սպիտակամորթ մի կնոջ ենք սպանել: Նա այնտեղ է (ցույց է տալիս դիակառքը): Ողջ դատարանը սրբում է արցունքները՝ խիստ ընդգծված թատերական ժեստով և ցավագին երկար հեցկլտոց է*

¹⁵¹ Նույն տեղում, էջ 41:

արձակում, որին հաջորդում է Նեգրերի կատարելապես համակարգված շատ սուր ծիծաղը»¹⁵²:

Օեսի ընթացքում Նեգրերը վիճում են՝ սե՛ր թե ատելություն են զգում սպիտակամորթների հանդեպ: Գտնում են, որ ատելության պատճառը մաշկի տարբեր գույն է: Ստրկությունը, որից տանջվում են նեգրերը ամենևին էլ ֆիզիկական ազատության սահմանափակումը չէ, որին ենթարկվում էին անցյալ դարում, այլ մտավոր օտարումը, որը նրանց թուլյլ չի տալիս լինել այնպիսին, ինչպիսին որ կան: Օիսակատարության բեմադրիչը՝ Արշիբալը, ամփոփում է ներկայացված ծեսի նշանակությունը. «Մենք այն ենք, ինչ-որ ցանկանում են, որ լինենք, ուստի կլինենք անհեթեթ մինչև վերջ»¹⁵³: «Նեգրերը» պիեսի սկզբում տեսնում ենք ժեստերի օրինակ, որոնց իմաստն անհատի հոգեբանության ոչնչացումն է: Նեգրերը պարում են մենուետ, իբրև թե նեգրի սպանած (հանուն ընդհանուրի) սպիտակամորթ կնոջ դիակառքի շուրջը. նախ՝ ընդգծված հարգալից ժեստերով ողջունում են բեմի վերին հարթակում գտնվող պալատական հանդիսատեսին՝ ծաղրապատկերված Թագուհուն, Դատավորին, Միսիոներին, Կառավարչին, որոնց մարմնավորում են կրկին Սևամորթները, բայց սպիտակ դիմակներով, հետո խոնարհվում են իրական հանդիսատեղի առջև: Նրանց ժեստերը հեռու են առօրյա կյանքում կիրառվող ժեստերից, որոնք էլ պիեսին անմիջապես հաղորդում են անհեթեթ հանդիսավորություն: Նեգրերը իրենց սեղմիրանների և հագուստների վրայից պոկում են ծաղիկներ, (Ժընեն շեշտում է՝ պոկել arracher բայը, որը բռնություն է հիշեցնում, ընդգծում է այն ջանքը, թե ինչպիսի արժեք ունի այս ժեստը սևականների համար), որպեսզի դնեն դիակառքի վրա: Դիակառքը, որտեղ չկա դագաղ այս պիեսում ներկայացվում է որպես երկրպագության խորան: Օեսի մասնակիցներն ազատվում են իրենց անհատականությունից, որպեսզի դառնան ծիսական խմբի ամբողջական և լիարժեք մասնակիցը և իրենց ողջ հոգևոր ուժը կենտրոնացնեն ծեսի արդյունավետության վրա: Օեսի նախապատրաստման ընթացքում Վիլաժը հանում է ծխախոտը իր գրպանից: Սա սովորական ռեֆլեքսային, կենցաղային գործողություններից մեկն է և կարծես թե կարող է խափանել ծեսը, ցրել պատրանքը: Բոբոն կռահում է վտանգը. «Դուք իրավացի եք, ծխե՛նք»,- ասում է նա: Սները կաշկանդված անշարժ են մնում: Միայն Արշիբալն է հասկանում

¹⁵² Genet, Jean, Les Nègres. Paris, Édition de Michel Corvin, 2005, p. 27-28.

¹⁵³ Նույն տեղում, էջ 122.

Բոբոյին. «Օխենք բոլորս ծխախոտ և ծխով լցնենք այստեղ»¹⁵⁴: Մյուսները ենթարկվում են նրան՝ հանելով սիգարետները իրենց գրպաններից, և դիակառքը պատվում է ծխախոտի թանձր ծխով: Ոչինչ չպետք է խափանի ծխական արարողակարգը: Երբ Վիլաժը պատմում է, թե ինչպես է գայթակղել և հետո սպանել սպիտակամորթ կնոջը, Նեժը նրան մեղադրում է, որ նա սպանվածի մասին խոսում է քնքշությամբ, նույնիսկ սիրահարվածի տոնով:

*Նեժ – Երբ դուք խոսում եք նրա մասին ձեր հաստ շրթունքների և ձեր հիվանդ աչքերի միջով այնպիսի մեղմ և այնքան տառապալից տխրություն է անցնում, որ ես նկատում եմ Պարոն՝ ն, երբ մարդու մեջ կարոտն է բույն դնում: Հեռվից գալով Ուրբանգիից կամ Տանգանիկայից անսահման մի սեր այստեղ մահացավ, լիզե՛ք սպիտակ կրունկները: Դուք սիրահարված եք, նե՛ գր: Երդվե՛ք, որ չեք մտածել փոխել ձեր գույնը, ինչպես ուրիշները փոխում են ընտանիք, երկիր, անուն, դուք էլ կփոխեք ձեր աստծուն, որպեսզի հասնեք նրան*¹⁵⁵:

Հանցագործությունը, որը կատարվել է քնքշանքով, կխափանի արարողակարգը, քանի որ նեգրերը խմբվել են դիակառքի շուրջը, որպեսզի փառաբանեն իրենց աստելությունը և պահանջեն, որ ընդունեն իրենց մաշկի գույնը, որը վաղուց արհամարհվում էր Սպիտակամորթներից և վկայակոչում են. *«իրենց մարդախույս լինելը, դաժանությունը, գույնը, դեղին աչքը, ստրկական անցյալը, իրենց աֆրիկյան ժառանգությունը»*¹⁵⁶: Նրանք հասկանում են, որ միայն աստելության միջոցով կարող են հասնել իրենց պահանջներին: Ահա թե ինչու է Արշիրալը խորհուրդ տալիս Վիլաժին. *«Հորինե՛ք, ոչ թե սեր, այլ աստելություն, ուստի նաև պոեզիա, քանի որ սա միակ ոլորտն է, որ մեզ իրավունք է տրված կատավարելու»*¹⁵⁷: Եվս մեկ ժեստ, որ ընդգծում է գոհաբերության կարևորությունը իրագործելու ծխական սպանություն: Նեժը դիակառքի վրայից ետ է վերցնում մի հիբիկ իրեն զարդարելու համար: Օտսի մասնակիցները զայրանում են. *«Երեսառած երեխայի այս ժեստը վայել չէր ծեսին»*¹⁵⁸: Նեժի մեղքը շատ լուրջ է: Ոչ միայն, որ նա

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 34:

¹⁵⁵ Genet, Jean, Les Nègres. Paris, Édition de Michel Corvin, 2005, p. 57-58:

¹⁵⁶ COE. Richard. "Pouvoir noir et poésie blanche, Cahiers Renaud- Barrault, 74. Quatrieme trimestre, 1970. P. 13.

¹⁵⁷ Genet, Jean, Les Nègres. Paris, Édition de Michel Corvin, 2005, p. 37-38.

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 29:

ցանականում է գեղեցկացնել իր անձը, այլ նաև որ ձգտում էր իրականացնել այդ այն ծաղիկներից մեկով, որ ծեսի մասնակիցները դրել էին դիակառքի վրա, որպեսզի իրենց անձի գոհաբերության նշան, ի օգուտ համայնքի և ծեսի միասնականությանը:

Այսպիսով՝ կերպարները զրկվելով իրենց անհատականությունից, կարող են վերափոխվել ուրիշ կերպարի կամ էլ վերածվել սիմվոլի: Այս ձևափոխությունը իրականացվում է բազմաթիվ տպավորիչ ժեստերի օգնությամբ: Միմվոլային շարժումներով սևամորթները Դիուֆին դարձնում են երիտասարդ սպիտակամորթ աղջիկ, ով իր մոր հետ կրպակ ունի: Մինչդեռ Դիուֆը կանգնած է մնում դիակառքի մոտ, նեգրերը, հետ-հետ գնալով և թաշկինակը թափահարելով, հրաժեշտ են տալիս աղջկան: Հրաժեշտի այս ժեստերն ամրապնդում և հաստատում են կերպարի անցումը «սև մեծ աշխարհից՝ նոր սպիտակ աշխարհ»:

Վերածվելով սպիտակամորթի՝ Դիուֆը ձեռք է բերում նոր ռասսային բնորոշ վարքագիծ: Դիուֆը նմանակում է լավ դաստիրակված սպիտակամորթ աղջկա կեցվածքն ու սովորույթները՝ ոչ միայն պարզաջրում է բաժակները, այլև այնպիսի ժեստեր է անում, որ կարծես թե նկարում, գործում և դաշնամուր է նվագում: Նա վերածվում է սպիտակների արժեքներ կրողի:

Ժընեի թատրոնում ծիսական ժեստերի ուժը չի սահմանափակվում միայն կերպարների ձևափոխմամբ, այլև դերասանների անսովոր ժեստերն ու շարժումները մեծացնում են բեմի չափերը մի քանի անգամ, որը իրականում ընդհամենը մի քանի մետր քառակուսի է: Այսպես, երբ նեգրերը հրաժեշտ են տալիս Դիուֆին, նրանք հեռանում են նրանից անաղմուկ և դանդաղ: Նեգրերը հեռու չեն գնում, բայց նրանց քայլը զգալիորեն դանդաղում է՝ ակնհայտ դարձնելով աճող հեռավորությունը, որը նրանց ավելի ու ավելի է բաժանում Դիուֆից: Ժան Ժընեն գնտում է, որ բեմը զարմանքի, թովչանքի և գմայլանքի վայր է: Եվ այս երևակայական տարածության մեջ անձրևում է, քամի է, գիշերն ու ցերեկը հերթափոխում են իրար, աճում են բույսեր՝ համաձայն դերասանների պատկերած տպավորիչ ժեստերի:

«Շերտավարագույրները» պիեսի առաջին արարում Սաիդը ժեստերի միջոցով «նմանակում է որոտ և կայծակ», իսկ նրա մայրը. « [...] ծիծաղելով պարզում է ձեռքը, որպեսզի որսա անտեսանելի կաթիլները: Բոլոր հարսանքավորները կթրջվեն:

Նրանք դողացնելով դուրս են գալիս բեմի ձախ կողմով»¹⁵⁹:

Հատկապես այս պիեսի բեմադրման փորձերի ընթացքում է, որ ժրնեն մանրամասնորեն մեկնաբանում է, թե ինչպես պետք է դերասանները ժեստերի միջոցով պատկերեն կերպարների վրդովմունքն ու տագնապը: 14-րդ արարում կերպարների մի մասը շտապում է դեպի բեմի աջ կողմ, մյուս մասը՝ ձախ կողմ, քանի որ անձրևում է: Նրանք այնպիսի ժեստեր են անում, ինչպիսին որ կանեին քիվի տակ գտնվող մարդիկ, վախենալով, որ կթրջվեն: Դերասանների ժեստերը միայն բնության տարերքը չէ, որ պատկերում են, նաև զիջերը՝ հստակ և տպավորիչ: Չորս լեզեռներն են հենց նոր մտան բեմ: Նրանց ժեստերը պետք է հուշեն, որ զիջեր է: «Բեմ են մտնում չորս լեզեռներ: Նրանցից մեկը՝ Հելմուտը, մաքրում է իր հրացանը, Պիեռը մաքրում է իր կոշիկը, Ֆելտոնը խմում է բաժակից: Այս բոլորը անադմուկ է տեղի ունենում»¹⁶⁰: Դատելով նրանց շարժումներից, կարելի է ենթադրել, որ այժմ զիջեր է: Նրանք պետք է խոսեն խլացված ձայներով: Հետո խարխափելով հայտնվում են լեյտենանտն ու Գեներալը: Նրանք շատ դանդաղ են առաջանում՝ մեկը մյուսի հետևից խարխափելով և կռացած: Գիջերը պետք է հստակ պատկերվի զինվորների «կույր ժեստերով»: Ժրնեի այս պիեսում նույնիսկ հողն ու բնությունն են կենդանանում դերասանների ժեստերի միջոցով: 13-րդ արարում լեյտենանտը նկարում է շերտավարագույրի վրա լեռնային տեղանք և մեկնաբանում է. «Մենք գտնվում ենք այստեղ՝ մեծ մայրու ետևում [...]»¹⁶¹: Մայրը, ով մոլորվել և թափառում է խավարում, դիմում է գոյություն չունեցող ծառին. «Մի կողմ քաշվիր, թող անցնես: [...] Քո շունչը կմաքրի իմ շնչադիները, էվկալիպտը կլցվի իմ թոքերի մեջ, իմ շնչառությունը [...]»¹⁶²: Նրա բոլոր ժեստերը,- ճշգրտում է ժրնեն,- պետք է տեսանելի դարձնեն անտեսանելի ծառը: Մայրը նույնիսկ ծամում է երևակայական ծառից պոկած երևակայական տերևը:

Ամփոփենք: Ինչպես տեսանք ժեստը ժան ժրնեի թատրոնի անմիջական տեսանելի և կարևոր տարրն է: Նախ ժրնեն՝ դրամատիկակորեն ձևափոխելով անհեթեթ ժեստերը, դրանք բարձրացնում է էսթետիկ մակարդակի: Ժրնեի թատրոնում ժեստերը գրկում են կերպարներին իրենց անհատականությունից՝ վերածելով

¹⁵⁹ Genet, Jean, Les Paravents, Paris, Editions Gallimard, 2000, p. 24.

¹⁶⁰ Genet, Jean, Les Paravents, Paris, Editions Gallimard, 2000, p. 176.

¹⁶¹ Նույն տեղում, էջ 179.

¹⁶² Նույն տեղում, էջ 180:

սիմվոլների, իսկ թատերական գործողությունները՝ հանդիսավոր ծեսերի: Ժեստերը ընդարձակում են բեմական տարածքը, ուր ամեն ինչ հարաբերական է, նաև «կահավորում են» բեմը ծիսականության համար անհրաժեշտ երևակայական իրերով: Եվ վերջապես ժեստերը բառերն օժտում են հոգևոր, քնարական և կախարդական զորությամբ՝ միահյուսելով խոսքի գեղեցկությունը երևակայական աշխարհի հետ, կրկնապատկում են զգայական տպավորությունները, որպեսզի հայտարարեն՝ դուք թովիչ ժեստերի երևակայական աշխարհում եք թատրոնում:

Лилит Барикян

КОДЫ РИТУАЛЬНОГО ТЕАТРА ЖАНА ЖЕНЕ

(жесты, символические персонажи)

Статья посвящена художественным принципам Жана Жене, создавшего свое представление о театральном искусстве, которое основывается на общении со зрителем на языке символов, с применением яркого грима, сценических костюмов и жестов, контрастирующих с обыденностью реальной жизни.

Lilit Barikyan

THE CODES OF JEAN GENET'S RITUAL THEATER

(gestures, symbolic characters)

The article deals with the scenic principles of Jean Genet, who created his idea of theater based on communication with the audience in the language of symbols, with the usage of bright make-up, costumes and gestures, contrasting with the commonplace reality.

**ԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԱՅԻ «ՑԱՆՔ ՈՒ ՀՈՒՆՁ» ՇԱՐՔԻ ՎԵՊԵՐԻ
ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հիմնաբառեր՝ Անրի Թրուայայի «Ցանք ու հունձ», ընտանեկան խրոնիկա, ժամանակագրություն, պատմական իրադարձություններ

Ընտանիքը և ընտանեկան փոխհարաբերությունները տարբեր հումանիտար առարկաների ուսումնասիրության նյութ են՝ հոգեբանության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմության և այլն: Սակայն առավել ցայտուն այս հասկացությունները պատկերվել են գրական ստեղծագործություններում. «Գեղարվեստական ամեն գործ ընտանիքի, ցեղի ճակատագրի հետևանք է կամ նկարագիր»¹⁶³:

Ընտանիքի թեման գրականության մեջ հնագույններից է, անշուշտ. հիշենք հենց միայն Աբրահամի մասին աստվածաշնչյան պատումը: Ընտանիքն անհատի միկրոաշխարհն է, որը հաճախ խորհրդանշում է հայրենիքի հավաքական կերպարը, ազգին, որը թեև ճգնաժամային շատ փուլեր է ապրում, սակայն վերջնականապես չի մասնատվում:

Մասնագետների կողմից ընտանեկան թեմայի մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տալիս ստանալ գրական նոր՝ **ընտանեկան խրոնիկայի** ժանրի սահմանումը, որի հիմնական բնորոշիչը սերունդների հերթափոխումն է դարաշրջանի նկարագրության համատեքստում: Այս ժանրի աշխատություններն ստեղծվում են՝ հիմնականում «ներկայացնելու համար սերնդից սերունդ անցնող հոգևոր, մտավոր ու ճակատագրային ժառանգությունը, որը կապող օղակ է հանդիսանում կենցաղավարման ու գաղափարական որևէ ընդհանրություն չունեցող սերունդների միջև»¹⁶⁴: Հարկ է նշել, որ ընտանեկան խրոնիկայում իրենց արտահայտումն են գտնում պատմավեպի որոշ առանձնահատկություններ, օրինակ՝ պատմական և հասարակական համատեքստի սերտ համադրումը գրական պատումին: Սակայն ընտանեկան վեպի պատմականությունն առանձնահատուկ է. «*Խոշոր իրադարձությունները, իսկ հաճախ նաև իրական պատմական դեպքերը, որպես կանոն, չեն հետաքրքրում հեղինակին. դրանք արտահայտվում են զուտ այնքանով, որքանով հատվում են նկարագրվող ընտանիքի պատմությանն ու*

¹⁶³ Косиков Г.К. К теории романа, М., 1994. С. 75.

¹⁶⁴ Bradley K.R. Discovering the Roman Family, Oxford University Press, 1991, p. 78

ճակատագրին (հայացքների ձևավորում, կատարված քայլերի պատճառ, կարևոր որոշումներին ծառայող հանգամանքներ և այլն)»¹⁶⁵:

Այդպիսով հեղինակն առաջարկում է պատմության ներկայացման այլ տեսանկյուն՝ ոակուրս՝ նվազեցնելով դրա ծավալը կամ «մարդկայնացնելով» այն: Արդյունքում ընտանեկան վեպը (կամ «ընտանեկան սագան», որը ժամանակակից գրականագիտության մեջ կիրառվող եզրույթ է) դառնում է պատմավեպին հաճախ համարժեք այն ժանրը, որը պատկերում է կայսրության անկումը, պետության վախճանը կամ պետականության ձևավորումը: Մա ունի շատ պարզ բացատրություն. գաղափարախոսությունների փոփոխությունն առավել ակնհայտ կարելի է պատկերել սերնդափոխության, հայրերի և որդիների միջև ծագող կոնֆլիկտների օրինակով, իսկ պետության անկումն ավելի պատկերավոր նկարագրություն է ստանում, երբ արտահայտվում է մեծ գերդաստանի մասնատման օրինակով:

Ընտանեկան վեպը, որպես առանձին ժանր, կարևոր տեղ է զբաղեցնում 20-րդ դարի ֆրանսիական գրականության մեջ, ինչի մասին են վկայում մեծ հոշակ ու տարածում գտած ստեղծագործությունները՝ «Ռուզոն-Մակարները» (Էմիլ Զոլա), «Թիբոների ընտանիքը» (Ռոժե Մարտեն դյու Գար), «Պասքյո ընտանիքի պատմությունը» (Ժորժ Դյուամել), «Բուսարդելների ընտանիքը» (Ֆիլիպ Էրիա), «Ռեզոների ընտանիքը» (Էրվե Բազեն) և այլն: *«Ընտանեկան վեպի ժանրի կայացման գործում մեծ ներդրում են ունեցել Օ. դը Բալզակը և Է.Զոլան. հենց նրանց ստեղծագործություններում են ընտանիքի պատմության օրինակով ներկայացվում հասարակական, բարոյահոգեբանական ու տնտեսական իրավիճակը և զարգացումները»:*¹⁶⁶

Ընտանեկան սագայի ժանրին պատկանող ստեղծագործությունների առանձնահատկություններն են **հստակ ժամանակագրության** գծային սկզբունքի պահպանումը, որը տեքստում ձևակերպվում է իրադարձություններն ըստ ամսաթվերի նշելու միջոցով (Թոմաս Ման, «Բուդենբրոքներ»), **գլուխների պատկերավոր վերնագրերի միջոցով** (Քոլին Մաքալոու, «Տատասկներում երգող թռչունները»), **պատմական**

¹⁶⁵ Уваров Ю.П. Французский реалистический роман 60-х -80-х годов XX века (идейно-тематические и жанровые тенденции): Дисс. М. 1986

¹⁶⁶ Симонова Л. А. Трилогия Э.Базена "Семья Резо" в контексте французского семейного романа, М. 2005, С. 3

իրադարձություններն ու ընտանեկան դեպքերը համադրելու (Մաքսիմ Գորկի, «Արտամանովների գործը»), ինչպես նաև ուղղակի կերպարների հասունացումը կամ ծերանալը նկարագրելու միջոցով: Գծային սկզբունքը պայմանավորում է ընտանեկան խրոնիկան որպես ժանր, թեև սերունդների պատմությունը կարող է ներկայացվել նաև այլ եղանակներով (*ռեսրոսպեկցիա* կամ հիշողություններ, հիմնական սյուժեի հետ կապ չունեցող պատմությունների ներմուծում և այլն):

Ընտանեկան խրոնիկայի գեղարվեստական ժամանակը ներկայացվում է 2-4 սերունդների կյանքի տևողությամբ և զբաղեցնում է հասարակության պատմության նշանակալի մի հատված՝ պատմական իրադարձություններով ու փոփոխություններով հարուստ: Ընտանեկան վեպի հիմնական խնդիրն անհատի գոյության ու կազմավորման պատկերումն է ընտանիքի միկրոմիջավայրում, ինչպես նաև առանձին ընտանիքի (կամ առանձին դասակարգի) կենցաղի ու կյանքի նկարագրությունը հասարակական տարուբերումների համատեքստում:

*«Ընտանեկան վեպերում հիմնականում ներկայացվում է ընտանիքի դիմադրության, վերապրելու պատմությունը շատ դրամատիկ իրավիճակներում»:*¹⁶⁷ Օրինակ՝ Գերմանիայի ճգնաժամն իր արտահայտումը գտավ Թ.Մանի «Բուդենբրոքներում», բրիտանական կայսրության ճգնաժամը՝ «Ֆորսայթներում»:

1940-կան թթ. ֆրանսիացի մեծանուն գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ Անրի Թրուայան գրեց Ռուսաստանի վերաբերյալ իր առաջին ընտանեկան էպոպեան՝ ներշնչված ծնողների ու հարազատների պատմածներից («Քանի աշխարհը կանգուն է», 3 հատոր), որի յուրատեսակ «ֆրանսիական տարբերակն» է «Ցանք ու հունձ» վիպաշարը: Այն բաղկացած է 5 ստեղծագործությունից՝ «Ցանք ու հունձ» (1953), «Ամելի» (1955), «Կեռնեխը» (1956), «Քնքուշ ու բիրտ Էլիզաբեթը» (1957), «Հանդիպում» (1958) և ժամանակագրորեն ընդգրկում է համաշխարհային երկու պատերազմների միջակայքը:

Համաշխարհային ու ֆրանսիական նոր պատմության կարևորագույն էջերն ընդգրկող այս վիպաշարի հիմնական նպատակը սոցիալ-քաղաքական ծանր ու բեկումնային ժամանակներում նոր մտածելակերպով հասարակության ձևավորման ներկայացումն է: Մեկ ընտանիքի, ավելի ճիշտ՝ գերդաստանի երեք սերունդների կյանքն է պատմում հեղինակը նրբորեն ընդգծելով արժեհամակարգերի հերթա-

¹⁶⁷ Косиков Г.К. К теории романа, М. 1994. С. 79

փոխումը, գյուղական-քաղաքային միջավայրերի տարաձև ազդեցությունը, համաշխարհային պատերազմների քառսում ձևավորված հասարակության երազանքները:

Վիպաշարի *Ժամանակը գծային* է. հեղինակը կիրառում է առաջընթաց ժամանակագրությունը¹⁶⁸, ներկայացնելով պատմական իրադարձություններին զուգահեռ ընտանեկան դիմագծի վերափոխումը:

Վիպաշարի առաջին գործողությունները զարգանում են Շապել-օ-Բուա ավանում, որտեղ նկարագրվում է գավառի ավանդական ընտանիքում հասունացող աղջնակի՝ Ամելիի կյանքը: Հեղինակը ներկայացնում է 19-րդ դարավերջին Ֆրանսիայի գյուղերի կենցաղավարությունը, ավանդապաշտ հասարակությունը և ընտանիքի՝ որպես բարձրագույն արժեքի պահպանման կարևորությունը: Ամելիի մոր՝ Մարիայի կերպարը պատկերվում է կին միապետին բնորոշ հատկանիշներով՝ ազդեցիկ, սկզբունքային, պատկառելի, իմաստուն ու քմահաճ: Մա ընտանեկան վեպին բնորոշ առանձնահատկություններից է՝ «գերդաստանի կեցվածքը կանխորոշող դոմինանտ կերպարի ներմուծում»:¹⁶⁹

Ամելիի ծնողների փոխհարաբերությունները լի են քնքշությամբ, որը հմտորեն քողարկվում է շրջապատից ու երեխաներից, և հեղինակը միայն իրավիճակային նկարագրությամբ է ներկայացնում այն. «Տերմի մեկնումից հետո տունը հայտնվեց լռության մեջ: Խանութն էլ ավելի մոայլ էր թվում, սովորականից ավելի տխուր: Մարիան՝ ծայրահեղ գունատ, աչքերը խոր ընկած, հաշվում էր թափանցիկ տարայի մեջ լցված գունավոր կոնֆետները: Նա հաճախ էր հառաչում. տեսնողին կրկար՝ օղը չի հերիքում»:¹⁷⁰ Հետաքրքրական է, որ ընտանեկան վեպերին բնորոշ է լարված, խնդրահարույց իրավիճակով սկիզբը, իսկ Թրուայան օգտագործում է խաղաղ կառուցման սցենարը՝ վեպն սկսելով ընտանեկան բարօրության մթնոլորտի նկարագրով:

Զգայական դաստիարակության առումով էլ Մարիան խոր գիտելիքներ չի փոխանցում և Ամելին առաջին սիրահարությունն

¹⁶⁸ Առաջընթաց կամ պրոգրեսիվ ժամանակագրությունը ենթադրում է իրադարձությունների ժամանակային հստակ հերթականությամբ նկարագրելը

¹⁶⁹ Никольский Е. В. Жанр романа семейной хроники, *Вестник Адыгейского государственного университета. Серия 2: Филология и искусствоведение*, 2011, С. 37

¹⁷⁰ Troyat H., *Les Semailles et les Moissons*, Paris, Librairie Plon, 1953, p. 62

ապրում է հուզական նուրբ բացահայտումներով. Թրուայան ժանրի կանտոններին համաձայն պատկերում է Ժան Էռոլի հետ ժամադրություններն ու Ամելիի դեռատի անմեղությունը. «*Ջրասանքի ժամանակ Ժանը խուսափում էր Ամելիին շատ մոտենալ և միայն զգուշությամբ ձեռքն էր բռնում՝ օգնելով առվակի վրայով թռչել կամ փոքրիկ բլրակը մազլցել*»:¹⁷¹

Մոր կորուստն Ամելիի կյանքի «առաջին ողբերգությունն»¹⁷² էր. ընտանիքի համար ծայրահեղ տխուր ու հոգեբանորեն անելանելի այս իրավիճակում հեղինակը կարողանում է հայր-զավակներ հարաբերությունների նուրբ նկարագիրը տալ: Գյուլի ավանդական միջավայրը զսպում է երկու սերունդների մտածողության միջև տարբերությունը, և հերոսները կարողանում են խուսափել միջսերնդային բախումներից, որոնք համարվում են ընտանեկան վեպի հիմնական առանձնահատկություններից:

Հուզական աշխարհի մասին միայն զրքային պատկերացում ունեցող Ամելին միանգամայն այլ զգացմունք է սկսում տածել Պիեռ Մազալեգի հանդեպ՝ կայացած ու բիրտ տղամարդու, ով ինքն էլ սիրո նոր տեսակ ու ամուսնություն է առաջարկում աղջկան. «*Ամելին գլուխը հենել էր Պիեռի ուսին ու առանց շարժվելու հայացքով շոյում էր նրա կիսասափրված այտերը՝ լողալով չգիտակցված երջանկության մեջ*»¹⁷³: Վեպի առանցքը չկառուցելով սերունդների միջև տարաձայնությունների վրա Թրուայան կիրառում է ավելի նուրբ հնարք. նա պատկերում է բնական հակադրությունները, որ առկա են այդ սերունդների միջև՝ սիրո ամոթխած արտահայտում ու կրքերի բացահայտ առատություն, պահպանողական կենցաղավարում ու ռիսկային գործարքների նախաձեռնում և այլն:

Պիեռ-Ամելի գույգի՝ Փարիզ տեղափոխվելու պատմությանը զուգահեռ Թրուայան նկարագրում է գյուղից արտագաղթելու երևույթը. գավառացու՝ մեծ քաղաքում արված բացահայտումները ոչ միայն մեզ ծանոթացնում են 1910-ական թթ. Ֆրանսիայի մայրաքաղաքի անցուդարձին ու իշխող տրամադրություններին, այլև կենցաղի, բարքերի տարբերությունն է ընդգծում: Երիտասարդ աղջնակի պատկերացումները վերափոխվում են նոր միջավայրում, ու նրա զգայական հասունացմանը

¹⁷¹ Ibid., p.8

¹⁷² Ibid., p.173

¹⁷³ Ibid., p.358

զուգահեռ զարգանում է նաև աշխարհայացքը. «Կար մի ժամանակ, երբ սրճարան այցելելն անգամ ամոթալի էր թվում նրան, իսկ այսօր կանգնել էր իր և Պիեռի նորոգած սրճարանի տարածքում ու պատրաստվում էր կյանքի համար վաստակել խմիչք վաճառելով»:¹⁷⁴ Սպասարկման ոլորտի բարեփոխումներն ու դրանց վերաբերյալ հասարակության վերաբերմունքի փոփոխությունն է այդկերպ ներկայացնում հեղինակը, որին անմիջապես հաղորդում է Առաջին համաշխարհային պատերազմի սկզբի մասին բոթը:

Վիպաշարի հաջորդ մասում Թրուայան հմուտ վավերագրի նման նկարագրում է պատերազմի արհավիրքները և թիկունքում առկա իրավիճակը: Պատմական իրադարձությունների նկարագրությունն այս ժանրի առանձնահատկություններից է, թեև Թրուայան հարցին մոտենում է գիտնական պատմաբանի վարպետությամբ՝ պատումը հիմնելով փաստագրական տեղեկությունների, իրական կերպարների ներմուծման ու հստակ վիճակագրության վրա: Գեղարվեստական առումով էլ տեքստն արժեքը չի կորցնում, որովհետև հեղինակը կիրառում է իրեն հատուկ՝ հակադիր իրավիճակների նկարագրումով տպավորությունը սաստկացնելու հնարը. նորածին դստեր հետ փողոցում զբոսնող Ամելին և մարտի դաշտում գտնվող ամուսնու մասին նրա մտածումնաբանությունը տպավորիչ հակապատկերների տեսքով են ներկայացվում. «Ամելիի շուրջ Փարիզը շարունակում էր տարածել իր միալար բզզոցը, և փոքրիկ էլիզաբեթի քունն իր խաղաղությամբ ասես հերքում էր քանդարար մեքենայի գոյությունը... Այնինչ Ամելին զգում էր սառը քրտինքի պես երկրի մեջքով իջնող արյան հոսքն ու սարսռուն»:¹⁷⁵

Պատերազմական պատկերներն ավելի վառ ներկայացնելու համար Թրուայան Ամելիին ներկայացնում է ամուսնուն այցի գնացած. վիրավոր ու կիսակուշտ զինվորների նկարագրությունը հաճախ է նատուրալիստական երանգ ստանում՝ կուլմինացիային հասնելով վիրավոր Պիեռի նկարագրով:

Վիպաշարի հաջորդ հատվածում հեղինակն անցնում է ընտանիքի հաջորդ սերնդի կայացման պատմությանը, որտեղ թեև առկա են կրկնվող մոտիվները (դաստիարակություն, աստվածապաշտություն), սակայն դրանք ընդամենը ֆոն են հանդիսանում հակադրություններն ընդգծելու համար: Ժամանակային-տարածական գործոնները գալիս են այլ ուղի

¹⁷⁴Ibid. p. 405

¹⁷⁵ Henri Troyat, Les Semailles et les Moissons/Amélie, Paris, Librairie Plon, 1955, p.31

թելադրելու նոր հերոսուհուն՝ արդեն պատանի Էլիզաբեթին. մայրաքաղաքում մեծացող աղջնակը սեփական տեսակետն ունի սիրո, հարաբերությունների, կյանքի վերաբերյալ:

Շատ են նախորդ սերնդի հետ նաև իրավիճակային հակադրությունները՝ կրոնական-աշխարհիկ կրթություն, գյուղական-քաղաքային միջավայր, նախապատերազմյան-հետպատերազմական իրադրություն և այլն: Պատերազմական տարիներին ինքնուրույնություն ստացած կանայք հասարակությանը թելադրում են նոր կանոններ՝ սիրո վրա հիմնված ամուսնություն, նախատինքի չարժանացող ամուսնալուծություն և այլն: Անհատն սկսում է դիտարկվել որպես հասարակության մաս, ոչ թե նույնականացվել վերջինիս հետ: Ընտանեկան արժեքների հիման վրա դաստիարակություն ստացած մարդն ստիպված չէ կուրորեն դավանել դրանց կամ անպայմանորեն հպատակվել. ընտանիքից առանձին կայացման հարցը վիպաշարի հաջորդ մասերի համար դառնում է կենտրոնական: Այս գծի ժառանգումով Թրուայան մտենում է ընտանեկան վեպի ժանրին՝ ընտանեկան միկրոաշխարհից, սահմանափակումից, սովորականից հանելով իր հերոսներին ու «փորձարկելով» նրանց այլ միջավայրերում:

Էլիզաբեթի զգայական բացահայտումների և Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների նկարագրությունը կառուցվում է նախորդ համակարգի վրա՝ ճակատագրերի զարգացման համար առաջարկելով արդեն այլընտրանքային ուղիներ:

Ընտանեկան այս վիպաշարում ցայտուն ընդգծում չի ստանում ընտանիքի անդամների միջև բախումների նկարագրությունը, *«ինչը լավագույնս ներկայացնում է հասարակության զարգացմանը զուգընթաց հին կարգերի վերացումը»*¹⁷⁶: Հեղինակն ընտանիքի պատմությունը կառուցում է շատ ավելի սահուն ու անբախում՝ դրան հակակշռելով ժամանակի հասարակական-քաղաքական բուռն զարգացումները և այդպիսով խուսափելով բովանդակության երկու «պայթյունային» գիծ տանելու ավելորդությունից:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Ա.Թրուայայի «Ցանք ու հունձ» վիպաշարը 20-րդ դարում մեծ տարածում վայելած ընտանեկան վեպի լավագույն ավանդույթների շարունակողն է՝ մինևույն ընտանիքի մի քանի սերնդի կյանքի նկարագրություն, հստակ ժամանակագրություն, հասարակական-տնտեսական զարգացումների ներկայացում, ընտանե-

¹⁷⁶ Magny Cl.-Edm. Histoire du roman francais depuis 1918, Paris. 1950. p. 305

կան միկրոաշխարհում անհատի կայացման ու գոյության խնդրի պատկերում: Լինելով գիտակ պատմաբան ու մարդկային հմուտ հոգեբան՝ Թրուայան իր ստեղծագործությունը համեմել է պատմական փաստերի համաժամանակյա մեջբերումով և դրանց ֆոնին կառուցել մեկ ընտանիքի երեք սերունդների ճակատագիրը:

Карине Эвоян

Жанровые особенности пенталогии А.Труайя «Сев и жатва»

В статье рассматривается специфика особого типа романа - семейной хроники - в пенталогии А. Труайя "Сев и Жатва", выявляются определяющие черты данного жанра: линейная хроникальность и семейная проблематика (наличие нескольких поколений одного рода, микроклимат семьи, отношения между поколениями), специфика историзма и т.д.

Karine Evoyan

Genre Peculiarities of "Sowing and Reaping" by Henri Troyat

The article discusses the specifics of a particular type of novel - a family chronicle - in the pentalogy "Sowing and Reaping" ("Les semailles et les moissons") by Henri Troyat. The author of the article reveals specific features of the mentioned genre: linear narrative and family relationship problems (presence of several generations of one family, the microclimate of the family, intergenerational relations), specifics of historicism, etc.

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՇԱՌԼ ԴԸ ԿՈՍՏԵՐԻ «ԹԻԼ
ՈՒԼԵՆՇՊԻԳԵԼԻ ԵՎ ԼԱՄՍԵ ԳՈՒԴՋԱԿԻ ՄԱՍԻՆ
ԼԵԳԵՆԴՈՒՄ»**

Հիմնաբառեր՝ Շառլ դը Կոստեր, պատմության հայեցակարգ, Ուլենշպիգել, պատմական իրականություն

Բելգիական գրականության ձևավորման գործում իր մեծագույն ներդրումն ունեցավ մեծ ռոմանտիկ Շառլ դը Կոստերը, ով իր «Թիլ Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի մասին լեգենդում» ժողովեց ֆլամանդական ժողովրդի ազգային ավանդույթներն ու բարքերը:

Հաշվի առնելով, որ Բելգիան որպես ինքնիշխան պետություն իր անկախությունը ձեռք էր բերել միայն 1830 թ. և այն, որ նորաստեղծ պետությունը չուներ սեփական լեզուն, մեծագույն խնդիր էր դրված հեղինակների առջև՝ ստեղծելու այնպիսի գրականություն, որն ազգային ինքնագիտակցության ամուր հենք կլիներ: «Ազգը մեռնում է, եթե չգիտի իր անցյալը»¹⁷⁷, ասում էր դը Կոստերը:

19-րդ դարի առաջին տասնամյակներին Բելգիայում ի հայտ եկան մի շարք գրողներ, ովքեր, ընդօրինակելով համաշխարհային հռչակ վայելող ֆրանսիացի հեղինակներին (հատկապես ռոմանտիկներին), փորձում էին գրական աշխարհում սեփական խոսքն ասելու իրավունք ձեռք բերել: Նրանց մի մասը տարված էր «ֆլամանդական շարժման» գաղափարներով՝ այդպիսով փորձելով վերակենդանացնել ֆլամանդերեն գրված գրականությունը, մյուս մասը՝ վալոնների հետևորդները, նպատակ էին դրել համաշխարհային հարթակ դուրս բերել ֆրանսալեզու բելգիական գրականությունը:¹⁷⁸ Մենք համակարծիք ենք այն հեղինակներին, ովքեր համարում են, որ Շառլ դը Կոստերի ստեղծագործությունը միավորում է այս երկու ուղղությունները, քանի որ այն գրված է ֆլամանդական արխաիզմներով համեմված ֆրանսերենով: Բազմաթիվ քննադատների բնորոշմամբ՝ Շառլ դը Կոստերի «Թիլ Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի մասին լեգենդը» իրավամբ առաջին ստեղծագործությունն է, որը թույլ

¹⁷⁷http://www.e-reading.club/chapter.php/86033/1/de_Koster_-_Legenda_ob_Ulenshpigele.html

¹⁷⁸ Лукон В.А. Французский неоромантизм, Москва. 2009.С. 65.

տվեց խոսել բելգիական գրականության՝ որպես առանձին, ինքնուրույն երևույթի մասին:

«Թիլ Ուլենշպիգելը» հեղինակի թվով երրորդ ստեղծագործությունն է «Ֆլամանդական լեգենդներ» (1858) և «Բրաբանտական հեքիաթներ» (1861) ժողովածուներից հետո:

Վեպի ստեղծման նախադրյալները տեսնում ենք հեղինակի և իր գաղափարակիցների կողմից 1856 թվականին հիմնված «Ուլենշպիգել» շաբաթաթերթի էջերում: 1860 թ. դը Կոստերը ծառայության է անցնում Բրյուսելյան թագավորական արխիվում՝ ուսումնասիրելու վեպի ստեղծման համար անհրաժեշտ պատմական փաստաթղթերը: Համարյա տաս տարի տևած տքնաջան աշխատանքներն իրենց արդյունքը տվեցին. 1867 թ. դեկտեմբերի 31-ին լույս տեսավ «Թիլ Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի մասին լեգենդը», որը հեղինակին կենդանության օրոք փառք ու ճանաչում չբերեց:

Դը Կոստերի վեպին նվիրված ուսումնասիրություններում շեշտը հիմնականում դրվել է դրա ժանրային առանձնահատկությունների (արկածային խաբեբայապատման, ֆաբլիոյի, հերոսապատման և առասպելի տարրերի սինթեզի) վրա, սակայն գիտական ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում պատմավեպում անպայմանարեն արտացոլվող պատմության հեղինակային հայեցակարգը:

Հայտնի է, որ, չնայած բազմաթիվ խեղաթյուրումներին ու պատմագիրների անհատական մոտեցմանը, պատմությունը, («ιστορία» հարցաքննում, ճանաչում, սահմանում) գիտելիքը պահպանելու և փոխանցելու միջոցներից մեկն է: Մարդկության զարգացման յուրաքանչյուր փուլում տարբեր էին պատմության և փաստագրման սկզբունքները, արդյունքում՝ ի հայտ եկան պատմության մի շարք հայեցակարգեր (գծային, փուլային, պարուրաձև, մշակութաբանական և այլն): Սրանցից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի և յուրովի է բացատրում մարդկության պատմությունը: Գրականագիտությունը կարևորում է այն, թե որքանով և ինչպես է պատմականության սկզբունքը դրսևորվում գեղարվեստական ստեղծագործություններում: Այն արտահայտվում է հեղինակի՝ այս կամ այն պատմական ժամանակաշրջանի պատկերի վերակերտումով՝ կենդանի կերպարներ, կոնկրետ մարդկային ճակատագրեր և բնավորություններ ներկայացնելու միջոցով:¹⁷⁹ Պատմականության դրոշմն առկա է ցանկացած տիպի

¹⁷⁹ http://yunc.org/историзм_литературы

գեղարվեստական ստեղծագործության վրա, և եթե անգամ հեղինակի կողմից այն որպես սկզբունք միտումնավոր կիրառված չէ, ստեղծագործությունն, այնուամենայնիվ, պատկերացում է տալիս տվյալ ժամանակաշրջանի, հասարակական և քաղաքական կյանքի, տիրող բարքերի և մարդկային հարաբերությունների մասին:

Ֆրանսիական գրականության մեջ առաջին պատմավեպը Շատոբրիանի 1807 թվականին տպագրված «Տառապյալները» հինգհատորանին է, սակայն եվրոպական պատմավեպի նախահայրն է համարվում Վալտեր Սկոտը, ով երկար տարիներ ձեռնամուխ է եղել շոտլանդական հին ձեռագրերն ու գրվածքները, ինչպես նաև կելտական Վերածննդի շրջանում ստեղծված ֆոլկլորն ու ազգային էպիկական ավանդույթները ուսումնասիրելու գործին:¹⁸⁰ Հենց այդ ազգային ավանդույթների, ֆոլկլորի, կենցաղի, բարքերի պատկերման միջոցով էլ Վալտեր Սկոտը ստեղծեց պատմավեպի ժանրի հիմնական դրույթները, որոնք հետագայում զարգացրին ֆրանսիացի, իտալացի և այլ ազգերի բազմաթիվ հեղինակներ: Նրանց թվում էր նաև Շառլ դը Կոստերն իր «Թիլ Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի մասին լեգենդով»:

Ուսումնասիրելով Շառլ դը Կոստերի վեպի քրոնոտոպը՝ որպես պատմության հեղինակային հայեցակարգի հիմնադրույթներից մեկը, մենք առանձնացրել ենք ժամանակատարածական 3 շերտ, որոնք անվերջ սերտաճում են միմյանց: Ֆլանդրիայի պատմության հերոսական էջերն ուսումնասիրելու ընթացքում Շառլ դը Կոստերն իբրև իր վեպի **պատմական իրականություն** ընտրեց 16-րդ դարում իսպանական միապետների՝ Կառլոս V ու Ֆիլիպ II, ինչպես նաև կաթոլիկ եկեղեցու և ինկվիզիցիայի դեմ ֆլամանդական ժողովրդի ազատագրական պայքարի շրջանը: Ժամանակատարածական այս հատվածը պայմանականորեն համարենք դը Կոստերի վեպի **առաջին**՝ գլխավոր շերտը: Հեղինակի ընտրությունը, թեևս, պայմանավորված է 19-րդ դարի առաջին կեսին նորանկախ Բելգիայի և Նիդեռլանդների լարված քաղաքական դրությամբ. մի կողմից, իր տարածքային ամբողջությունից ամուր կառչած Նիդեռլանդների թագավոր Վիլհելմ I-ի Բելգիայի անկախացումը չհանդուրժելը, մյուս կողմից դարեր շարունակ տարբեր տերությունների մաս կազմող երկրի անկախությանն անվերջ սպառնացող ներքին

¹⁸⁰ Лазарева Т.Г. Историзм в раннем творчестве Вальтера Скотта. Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. С. 108.

խնդիրները, սեփական լեզու և գրականություն չունենալը, վալոնական և ֆլամանդական մշակույթների բախումը, տնտեսական ոլորտի դժվարությունները և այլն: Այսպիսով՝ 19-րդ դարի Բելգիայի քաղաքական իրականությունը պայմանականորեն համարենք ժամանակատարածական *երկրորդ* շերտը:

Որպես վերջին *երրորդ շերտ* ենք ընդունել Շառլ դը Կոստերի վեպի գլխավոր հերոս Թիլ Ուլենշպիգելի առասպելական անցյալը: Միջնադարյան պատումների հերոսը զվարճասեր խաբեբա էր, ում կատակները հաճախ դաժան բնույթ էին կրում: Հեղինակն իր հերոսին մի ժամանակատարածական շերտից տեղափոխում է դեպի մեկ ուրիշ իրականություն՝ չրկելով նրան կատակասեր ու զվարճալի խաբեբայի «բնածին» հատկանիշներից, սակայն միևնույն ժամանակ օժտելով նրան հերոսական գծերով: Շառլ դը Կոստերը Ուլենշպիգելի կերպարը զգալիորեն ազնվացրել է, իսկ միջնադարյան նույնանուն հերոսի բացասական հատկանիշներով օժտել է Ֆիլիպ II թագաժառանգին՝ ժողովրդի գրկում ծնված զավակի և արքայորդու բնավորությունները հակադրելու նպատակով:

Վեպի իրականությունը պատկերելիս հեղինակը գործի է դրել պատմափաստագրական հարուստ բազա՝ երևակայական հերոսների, նրանց գործողությունների ու կենսակերպի մեջ տարբալուծելով բազմաթիվ իրական դեպքեր ու իրադարձություններ: Վեպի հերոսների հասարակ, առօրեական զրույցներից հայտնի են դառնում ժամանակի արքունական աշխարհին պատկանող պատմական անձինք, զորավարներ, եկեղեցական պաշտոնյաներ և այլ նշանակալի դեմքեր: Հետևելով Վալտեր Սկոտի ստեղծած ավանդույթին՝ հեղինակը հնարավորինս հավատարիմ է մնում իր կողմից օգտագործված պատմական փաստերին, միևնույն ժամանակ չի խնայում երևակայությունը՝ իր ներկայակալի ամենավառ գույներով նկարագրելու ֆլամանդական ժողովրդի բարքերն ու սովորույթները, առօրյան ու ապրելակերպը: Այդ նպատակին հասնելու համար հեղինակն օգտագործում է ֆլամանդական հնաբառեր, որոնցով լեցուն է թե՛ հեղինակի, թե՛ հերոսների խոսքը:

Երևակայական կերպարների կերտման տեսանկյունից ևս կարող ենք գուզահեռներ անցկացնել դը Կոստերի և Վալտեր Սկոտի միջև, քանի որ երկուսն էլ իրենց հերոսներին օժտում են ռոմանտիկական վեհ ու ազնվագույն հատկանիշներով՝ նրանցում խտացնելով ժողովրդի առաքինություններն ու հերոսությունները:

Պատմական կերպարները, ինչպես արդեն նշվեց, վեպում բավականին մեծ թիվ են կազմում, սակայն առանցքային են հատկապես Իսպանիայի Կառլոս V և նրա որդի Ֆիլիպ II թագավորների կերպարները:

Կառլոս V /1500-1558/ ծնունդով Նիդեռլանդներից էր, նա Բուրգունդիայի դուքս Ֆիլիպ Գեղեցիկի և Կաստիլիայի դշխուհի Խուանա Խելագարի որդին էր, դաստիարակվել է կաթոլիկ եկեղեցու օրենքներով: 1515 թվականից նա արդեն թագավորում էր, 1516-ին իր պապի՝ Ֆերդինանդ II Արագոնացու մահից հետո Կառլոսը վերադառնում է Իսպանիա, ուր երկար տարիների դադարից հետո հանդիպում է հոգեկան հիվանդությամբ տառապող իր մորը, ով ի վիճակի չէր ստանձնելու թափուր գահը: Կառլոս V Հաբսբուրգն իր վրա է վերցնում Իսպանիայի միավորումը (Սիցիլիան, Սարդինիան, Արագոնը և Հարավային Իտալիան, ինչպես նաև Կաստիլիան): 1519 թվականին Գերմանիայի թագավոր և Ավստրիայի արքայազն Մաքսիմիլիան I մահից հետո Կառլոս V ժառանգեց ավստրիական և գերմանական տարածքներն ու հռչակվեց Հռոմեական Սրբազան Տերության կայսր: Նրան դժվարությամբ էր հաջողվում համախմբել մեկ պետության մեջ տարբեր լեզուների ու բարբերի տեր ժողովուրդների, մյուս կողմից էլ օսմանների, Ֆրանսիայի թագավոր Ֆրանսուա I դեմ մղված բազմաթիվ պատերազմները տիրակալից մեծ զգոնություն էին պահանջում: Իշխանական դիրքերը անխախտ պահելու նպատակով Կառլոս V դաժան հաշվեհարդար էր տեսնում բողոքականների նկատմամբ. մահապատժի էին ենթարկվում բոլոր նրանք, ովքեր որևէ կերպ կարող էին սպառնալ կաթոլիկ եկեղեցուն: Պատմական այս անցքերն էլ նկարագրվում են Շառլ դը Կոստերի «Թիլ Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի մասին լեգենդում»: Իհարկե պատմության մեջ Կառլոս V հայտնի էր որպես հզոր տիրակալ, սակայն դը Կոստերը նրան դիտարկում է ֆլամանդական ժողովրդի աչքերով ընթերցողի ուշադրությունը սևեռելով հատկապես անմեղ ժողովրդի նկատմամբ կատարած նրա դաժանություններին: Միևնույն ժամանակ, նրա կերպարի բացասական կողմերն առավել ընդգծելու նպատակով Շառլ դը Կոստերը որպես հակադրություն առաջադրում է Ուլենշպիգելի հորը՝ Կլասսին, ով իր մեջ ամբողջացնում է հասարակ գյուղացու հավաքական կերպարը: Հետաքրքրական է, որ դը Կոստերը հակադրության գիծը զարգացնում է ընդհուպ մինչև երկու հերոսների մահն ու անդրշիրիմյան կյանքը, ուր իր գործած երկրային մեղքերի համար Սատանայի կողմից տանջանքների է դատապարտվում Կառլոս V թագավորի հոգին, իսկ Կլասսինը՝ հանձնվում է հրեշտակներին:

Դեռ Կառլոս V կենդանության օրոք, նրա որդին՝ Ֆիլիպ II (1527-1598) դառնում է Սիցիլիայի և Նեապոլի, իսկ Կառլոս V գահը լքելուց հետո Իսպանիայի, Նիդեռլանդների և մյուս բոլոր տարածքների թագավորը: 1580 թվականից նա հռչակվեց նաև Պորտուգալիայի թագավոր՝ որպես Ֆիլիպ Առաջին: Կառլոս V կամքով Ֆիլիպը մեծացել է Իսպանիայում, դաստիարակվել լավագույն ուսուցիչների կողմից: Նա առանձնանում էր բնության, ընթերցանության, արվեստների նկատմամբ մեծ հակումով: Կաթոլիկ եկեղեցու նկատմամբ հավատն ու Կառլոս V ցուցումները Ֆիլիպին բերել էին այն համոզման, որ երկիրը պետք է զերծ պահել հերետիկոսներից:

Հարկ է նշել, որ գահը ստանձնելուց առաջ Ֆիլիպը ճամփորդել է Նիդեռլանդներում, խորապես հետաքրքրվել է երկրի ճարտարապետությամբ ու գեղանկարչությամբ (նա իր անձնական հավաքածուի մեջ միայն Բոսխի մոտ 40 կտավ ուներ), այդուհանդերձ արքան անպատիժ չթողեց բողոքականներին, ինչն էլ հանգեցրեց ժողովրդի ապստամբությանն ու 1581 թվականին իսպանական լծից Նիդեռլանդների ազատագրմանը:

Վեպում Ֆիլիպ II արքայի ծայրաստիճան դաժանությունը կենդանիների նկատմամբ Դը Կոստերի կողմից փաստերի ակնհայտ խեղաթյուրում է, քանի որ պատմական աղբյուրներից հայտնի է բնության և կենդանիների նկատմամբ Ֆիլիպ II մեծ սերը¹⁸¹: Ֆիլիպ II կերպարը ներկայացված է հնարավորինս մութ և դաժան գույներով ի հակադրումն Թիլի կերպարի, որում ամբարված են ժողովրդի լուսավոր ու բարի կողմերը: Ի տարբերություն Վալտեր Սկոտի, ով պատմական կերպարներին պատկերում էր այնպիսին, ինչպիսին նրանք պահպանվել են պատմության մեջ, Շառլ դը Կոստերը Կառլոս V և Ֆիլիպ II կերպարները կերտելիս միակողմանի մոտեցում է ցուցաբերել՝ անտեսելով արքաների դրական հատկանիշները և ծայրահեղացնելով, համարյա գրոտեսկի հասցնելով նրանց բացասական գծերը:

Սյապիսով՝ Շառլ դը Կոստերն իր վեպում ընդհանուր առմամբ հավատարիմ է մնացել պատմական փաստերին ու անցքերին՝

¹⁸¹ Կենդանիներին տանջելու մոտիվը դը Կոստերը փոխառել է Թիլ Ուլենշպիգելի մասին միջնադարյան պատումներից, որոնցում հենց Ուլենշպիգելն էր տանջում կենդանիներին: Կարելի է ենթադրել, որ իր գլխավոր հերոսին ազնվացնելու միտումով դը Կոստերը միջնադարյան հերոսի բացասական գծերը փոխանցել է Ֆիլիպ II կերպարին:

ցուցաբերելով ռեալիստական մոտեցում, սակայն պատմական անձանց պատկերելիս հեղինակը դիմել է ռոմանտիկական մեթոդին՝ չափազանցության հասցնելով հերոսների հատկանիշները:

Лусине Мусаханян

**КОНЦЕПЦИЯ ИСТОРИИ В РОМАНЕ ШАРЛЯ ДЕ КОСТЕРА
«ЛЕГЕНДА ОБ УЛЕНШПИГЕЛЕ И ЛАММЕ ГУДЗАКЕ»**

В статье анализируется авторская концепция истории в романе Шарля де Костера «Легенда об Уленшпигеле и Ламме Гудзаке», отмечается реалистический подход в интерпретации исторических событий и романтические принципы воссоздания образов исторических персонажей.

Lusine Musakhanyan

**THE CONCEPT OF HISTORY IN “THE LEGEND OF THYL ULENSPIEGEL
AND LAMME GOEDZAK” BY CH. DE COSTER**

The article discusses the author's concept of history in the novel “The Legend of Thyl Ulenspiegel and Lamme Goedzak”. The author of the article detects realistic approach to the interpretation of historical events and romantic principles in the recreation of images of historical characters.

ՆԵՈՌՈՍԱՆՏԻԿԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ԷԴՄՈՆ ՌՈՍՏԱՆԻ «ՍԻՐԱՆՈ ԴԸ ԲԵՐԺՐԱԿ» ՊԻԵՍՈՒՄ

Հիմնաբառեր՝ Էդմոն Ռոստան, «Սիրանո դը Բերժրակ» հերոսական կատակերգություն, չափածո դրամա

1897 թ-ի դեկտեմբերի 28-ին Փարիզի *Porte-Saint-Martin* թատրոնում մեծաքանակ հանդիսատեսի ներկայությամբ տեղի ունեցավ Էդմոն Ռոստանի «Սիրանո դը Բերժրակ» **հերոսական կատակերգության** աղմկահարույց բեմամուտը, որն իր նշանակությամբ համեմատվում էր «Սիդի» և «Էրնանիի» բեմամուտի հետ:

Ռեալիստական դրամատուրգիայի կողմնակից որոշ քննադատներ «Սիրանոյի» հաջողությունը մեկնաբանեցին որպես «*ռոմանտիզմի տհաճ պոռթկում*»¹⁸², սակայն հիմնականում, նույնիսկ տարբեր հայացքների և հասարակական ուղղությունների ներկայացուցիչները գրեթե համակարծիք էին Ռոստանի հերոսական կատակերգության և ներկայացման բարձր գնահատանքի հարցում: Դա նախ և առաջ նեոռոմանտիկական թատրոնի հաղթանակն էր, որն ընդունվեց որպես ազգային բանաստեղծական ավանդույթների և, իհարկե, առաջին հերթին Վիկտոր Հյուգոյի ավանդույթների վերածնունդ:

Ակնհայտ է, որ մեծ ռոմանտիկներին հետևելով է, որ Ռոստանն իր հայացքն ուղղում է դեպի Ֆրանսիայի ամենափառավոր XVII դարը: Հենց այդ դարաշրջանում է, որ անազատության որբերգական գիտակցումը հպարտ և հանդուգն անհատի հոգում բողոք է առաջացնում, և նա մարտահրավեր է նետում կարգավորված կյանքով ապրող հասարակությանը, Ռոստանը գտնում է իր փնտրած կերպարը: Դա XVII դարի նշանավոր բանաստեղծ և վիպասան Սավինյեն Սիրանո դը Բերժրակն է (1619-1655), ում Ռոստանն օժտում է իր պատկերացմամբ՝ իդեալական հերոսի գծերով:

Իրական Սիրանոյի և ռոստանյան Սիրանոյի տարբերությունների և նմանությունների մասին բազում աշխատություններ են գրվել, սակայն դրանցից ոչ մեկում բացատրված չէ իրական փաստերից Ռոստանի

¹⁸² Михайлов А.. Драматургия Эдмона Ростана // Эдмон Ростан. Пьесы. М. 1983. С. 7

հեռացման պատճառները: Մեր կարծիքով, այդ հեռացումը կապված է Ռոստանի՝ հայեցակարգի հետ, համաձայն որի մարդու մեջ, ինչպես և Տիեզերքում, ծայրահեղություններն ու հակադրությունները միակցված են ու անբաժանելի: Այդ սկզբունքը, որն ընկած է նաև Սիրանոյի կերպարի հիմքում, հանգեցնում է պատմական Սիրանոյի կենսագրության մի շարք փաստերից հեռացմանը: Այդուհանդերձ՝ դրամատուրգին ընդհանուր առմամբ հաջողվել է նկարագրել այդ նշանավոր մարդու բնավորության հիմնական կողմերը՝ նրա ազատասիրությունը, ճշմարտասիրությունը, բնատուր միտքը, անկախ բնավորությունը և հատկապես քաջությունը, զգացմունքների նրբությունն ու կյանքի և սեփական անձի հանդեպ երգիծական վերաբերմունքը:

Գլխավոր հերոսի այդ գծերն են պայմանավորել ստեղծագործության (մեզ հայտնի քննադատական գրականության մեջ չքննարկված) **ժանրային առանձնահատկությունները:**

«Սիրանո դը Բերժըրակը» ֆրանսիական նեոռոմանտիկների նախընտրած ժանրի՝ **չափածո դրամայի** ամենահայտնի օրինակն է: Հենց պոետական ձևն է, որ առանձնահատուկ հմայք է հաղորդում թե՛ գլխավոր հերոսի կերպարին, թե՛ պիեսին ամբողջությամբ:

«Սիրանո դը Բերժըրակ» չափածո դրամայի ժանրը Ռոստանը բնորոշել է որպես «հերոսական կատակերգություն»: Եթե «հերոսական» ածականը հիմնավորված է գլխավոր հերոսի թե՛ արտաքին թշնամիների, թե՛ սեփական ճակատագրի և զգացմունքների դեմ մղած խիզախ պայքարով, ապա «կատակերգություն» եզրույթը կարող է կասկած հարուցել. պիեսի վերջում հերոսը մահանում է, այն էլ սեփական մեծահոգության պատճառով հնարավոր երջանկությունից զրկվելու ողբերգական գիտակցումով: Մեր կարծիքով, Ռոստանի առաջադրած «կատակերգություն» եզրույթն արդարացված է պիեսի ընդհանուր երգիծական ուղղվածությամբ, գլխավոր հերոսի լավատեսական հնչերանգով, որն, ի դեպ, առանձնացնում է Սիրանոյին այլ նեոռոմանտիկների հերոսներից:

«Սիրանո դը Բերժըրակ» հերոսական կատակերգության մասին գրող բոլոր քննադատներն այն բնութագրում են որպես նեոռոմանտիկական՝ չնկատելով, որ պիեսի մտածված և կատարյալ **կառուցվածքը** (ինչպես և Ռոստանի նախորդ պիեսներինը) ստեղծված է մելոդրամայի ավանդույթների համաձայն: Այստեղ առկա են մելոդրամայի ժանրին բնորոշ և՛ հերոսների հոգևոր և զգայական աշխարհը, և՛ հակադրությունների վրա հիմնված բուռն զգացմունքները, և՛

ողբերգական տեսարանները, և՛, իհարկե, լավ ավարտը: Մելոդրամայի դասական կառուցվածքում կարևոր դեր է խաղում կնոջ կերպարը, և հերոսուհին հաճախ պետք է ընտրի երկու տղամարդկանցից մեկին: Սակայն, պահպանելով այդ սյուժետային գիծը (Ռոքսանայի սիրուն հավակնում են Քրիստիանը, Սիրանոն և դը Գիշը), Ռոստանը (ինչպես և Հյուգոն «Էռնանի» դրամայում) այնպես է կառուցում իր կատակերգությունը, որ ուշադրության կենտրոնում, միևնույն է, մնում է պրոտագոնիստի կերպարը: Բացի դրանից, սյուժետային սխեման այս պիեսում ավելի բարդ է, քան մելոդրամայինը: Այսպես, օրինակ, հիմնական հանգույցը ձևավորվում է ոչ թե առաջին գործողության սկզբում (ինչպես «Ռոմանտիկներ» կամ «Հեռավոր արքայադուստրը» պիեսներում), այլ երկրորդի վերջում, երբ կնքվում է Սիրանոյի և Քրիստիանի պայմանավորվածությունը: Առաջին գործողությունն, այսպիսով, ներկայանում է որպես պիեսի նախերգանք, որում արտացոլվում է պիեսի ողջ բովանդակությունը: Բավականին սրընթաց սկզբից հետո գործողությունը դանդաղում է (*ռետարդացիա*): Երրորդ գործողության կուլմինացիայի հանգուցալուծումը սպասվում է հինգերորդ գործողության մեջ, բայց տեղի է ունենում ավելի շուտ, չորրորդ գործողության մեջ՝ Առասի պաշարման ժամանակ:

Նշենք, որ Ռոստանը հավատարիմ է մնում նաև սեփական կառուցվածքային սկզբունքներին՝ օրինակ, գլխավոր հերոսին գործողության հենց սկզբից բեմ չհանելուն, նրա բեմելը մանրակրկիտ կերպով մշակելուն: Գործողության կենտրոնական տեսարանը Սիրանոյի և դը Վալվերի մենամարտն է, որի ժամանակ դը Բերժըրակն արտասանում է իր հայտնի բալլադը: Մենամարտում Սիրանոյի հաղթանակը կանխորոշում է հաջորդ գործողություններում զարգացող տեսարաններն ու մտքերը: Կարդինայի դրածո Դը Վալվերի պարտությունը դառնում է ամենակարող հովանավորյալի դեմ Սիրանոյի պայքարի և Սիրանոյի ու Քրիստիանի բարդ փոխհարաբերությունների սկիզբ:

Եթե առաջին երկու գործողությունները *երգիծական* են՝ լի կատակերգական իրադարձություններով, ապա կենտրոնական՝ երրորդ գործողությունը *քնարական* է. այստեղ «*Ռոստանի բանաստեղծական ուժը, սրամտությունն ու երևակայությունը հասնում են զագաթնակետին*»:¹⁸³ Հերթով հայտնվում են Ռոքսանային սիրահարված երեք

¹⁸³ Նույն տեղում, էջ 142

երկրպագուները՝ յուրաքանչյուրն իր առավելություններով: Ռոքսանայի պատշգամբի մոտ ծավալվող գործողությունը (որն ավելի վաղ Ռոստանն օգտագործել է «Ռոմանտիկները» պիեսում) հիշեցնում է Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլյետի» հայտնի տեսարանը, սակայն նոր Ռոմեոն՝ Քրիստիանը, սիրո բառեր է արտասանում միայն Սիրանոյի հուշումով: Ավելի ուշ, երբ մթությունը հնարավորություն է ընձեռում Սիրանոյին առանց Քրիստիանի միջամտության դիմելու իր սիրելիին, բանաստեղծի և սիրահարի հոգին ազատվում է տգեղության կապանքներից: Երրորդ գործողության ընթացքում Սիրանոն երկու հաղթանակ է տանում՝ Քրիստիանի հանդեպ և դը Գիշի, ումից ազնվաբար Սիրանոն փրկում է Ռոքսանայի և Քրիստիանի սերը:

Չորրորդ գործողությունը **հերոսական** է. այստեղ պատկերված է Առասի պաշարումն ու իսպանացիների դեմ մարտը, բոլոր հերոսները ցուցաբերում են իրենց խիզախությունը. Սիրանոն վտանգում է իր կյանքը՝ թշնամու բանակի միջով նամակներ տանելով Ռոքսանային, Ռոքսանան հանուն սիրո գալիս է մարտի դաշտ, Քրիստիանը հերոսաբար զոհվում է: Քրիստիանի մահը ոչ միայն մեծ վիշտ է պատճառում Ռոքսանային, այլև բարոյական անհաղթահարելի արգելք դառնում Սիրանոյի համար:

Վերջին հինգերորդ գործողությունն առավելապես **քնարական** է. աղբատ և հյուծված Սիրանոն մահանում է՝ ավարտելով իր՝ թե՛ շրջապատի կեղծավորության դեմ, թե՛ հանուն Ռոքսանայի սիրո տասնհինգ տարի մղվող պայքարը: Ռոքսանան հասկանում է, որ կրքոտ սիրային նամակների հեղինակը Սիրանոն էր, և իրականում նա սիրել է վերջինիս հոգին ու տաղանդը: Այսպիսով՝ պիեսն ավարտվում է գլխավոր հերոսի բարոյական հաղթանակով, այսինքն՝ մեղոդրամայի կանոններին համապատասխան:

Եթե «Սիրանո դը Բերժրակ» պիեսի կառուցվածքի հիմքը կարելի է բնութագրել որպես մեղոդրամատիկական, ապա պիեսի բովանդակությունն, անշուշտ, **նեոռոմանտիկական** է: Դա արտացոլված է պիեսի թե՛ **քրոնոտոպում**, թե՛ **անձի հեղինակային հայեցակարգում**:

«Սիրանո դը Բերժրակ» պիեսում իր լավագույն արտացոլումն է գտել **տարածության և ժամանակի նեոռոմանտիկական հայեցակարգը**, որի հիմնական, ռոմանտիկներից ժառանգված առանձնահատկություններն են տեղի միասնության խախտումը և իրական, սահմանափակ տարածությունը որպես ողջ աշխարհի մոդել ներկայացնելը: Դրա վառ օրինակներից է առաջին գործողության մեջ «Բուրգունդյան օտելի»

սրահում Բ.Բարոյի «Կլորիզ» հովվերգության բեմադրության ժամանակ «թատրոնը թատրոնում» հնարի կիրառումը: Հակադրվելով նատուրալիստական թատրոնի կանոններին Ռոստանն օգտագործում է շեքսպիրյան այդ հնարը, որի շնորհիվ սահմանափակ տարածությունը՝ թատրոնն, աստիճանաբար ձևափոխվում է, լցվում ասպետներով, սպասավորներով, գողերով, ազնվականներով, ջութակահարներով, փակ օթյակում հայտնվում է կարդինալը: Այսպիսով Ռոստանը շեքսպիրյան «աշխարհը թատրոն է» հայտնի միտքը ներկայացնում է անսպասելի կողմից՝ թատրոնն աշխարհն է:

Եթե առաջին երեք գործողություններում տարածությունը փակ է, սահմանափակ, ապա դրա նեոռոմանտիկական ընդլայնման հիանալի օրինակ է չորրորդ գործողության մեջ Առասի ճակատամարտի պատկերումը: Բեմական տարածությունը դառնում է պատմական խոշոր և ողբերգական իրադարձության մի մաս:

Տարածության լայնարձակության փորձ կարելի է համարել նաև հինգերորդ գործողությունը, որը տեղի է ունենում զբոսայգում:

Նկատենք, որ Ռոստանի պիեսում տարածությունը հնչուն է՝ երգ, երաժշտություն, զենքի զրնգոց, կրակոցներ, թղթի գրեթե անձայն խշխշոց, եկեղեցական զանգեր: Մի կողմից՝ հնչյունները լցնում են տարածությունը, զգայական երանգ են հաղորդում գործողություններին և իրադրություններին, նույնիսկ կառուցվածքային կարևոր դեր են խաղում: Մյուս կողմից՝ հնչյունները լրացնում են հերոսների կերպարները: Արտաքին աշխարհի հետ կապված երաժշտության տեմպը, ռիթմը, եղանակը, ձայնակարգությունը, տարատեսակությունը, մշակումը և այլն, արտացոլում են Միրանոյի ներքին աշխարհը: Եվ հակառակը՝ երաժշտական արձագանքը, տեմպերի ու ռիթմերի աններդաշնակությունը փոխակերպվում ու միահունչ են դառնում Միրանոյի ներքին տեմպին ու ռիթմին:

«Միրանո դը Բերժրակ» պիեսում կարևոր դեր է խաղում նաև *ժամանակը*, որն արտահայտված է երկու հոսանքի ձևով: *Առաջին* օբյեկտիվ, կենցաղային ժամանակն է (րոպեներ, ժամեր, օրեր, տարիներ, տարեթվեր), որը ներկայացնում է առօրյա գոյությունը, *մյուսը*՝ սուբյեկտիվ, Միրանոյին թշնամի, նվազող ժամանակն է: Ժամանակի երկու հոսանքները միավորվում են վերջին՝ հինգերորդ գործողության մեջ, որտեղ աշնանային երեկոն, որպես օբյեկտիվ ժամանակ,

խորհրդանշում է հերոսների կյանքի մայրամուտը:¹⁸⁴ Միրանոն իրեն է ենթարկում տարածությունը, սակայն ինքն էլ ենթարկվում է ժամանակին, որը նրան մեկը մյուսի հետևից դաժան հարվածներ է հասցնում:

Գրաքննադատներից շատերն անդրադարձել են Ռոստանի «Միրանոն դը Բերժըրակ» պիեսի կերպարների վերլուծությանը, սակայն ցայսօր փորձ չի արվել որոշել այս պիեսում արտացոլված *անձի* հեղինակային *հայեցակարգը*, որն, ինչպես նշել ենք, *նեոռոմանտիկական է*: Ի տարբերություն մեծ ռոմանտիկների, նեոռոմանտիկները չեն հասնում մարդ-Տիեզերք, մարդ-Բնություն, մարդ-Աստված հարաբերությունների խորությանը: Նրանք, որպես կանոն, սահմանափակվում են մարդու և հասարակության հակադրությամբ: Սակայն ինքը՝ հակադրման սկզբունքը, ռոմանտիկական է, և կիրառելով այն՝ Ռոստանը ներկայացնում է երկու տարբեր. մեկը Միրանոյի «մենախոսությունն» է, մյուսը՝ ֆոն հանդիսացող, հասարակությունը: Ֆոնի ներկայացման մեջ արտացոլվում է (թեև խտացված) *աշխարհի հեղինակային հայեցակարգը*, Միրանոյի կերպարում՝ *անձի հայեցակարգը*:

Դրամատուրգը նշանակալիորեն հեշտացնում է մարդու և միջավայրի իրական փոխհարաբերությունները: Գլխավոր հերոսին հակադրված աշխարհը ներկայացված է այսպես կոչված «բարձր խավի» ներկայացուցիչներով՝ երեսպաշտներով, անազնիվ ֆինանսիստներով, պարզապես հիմարներով, և նրանց դեմ է Միրանոն ուղղում իր սրամտությունը, իր պայծառ և խայթիչ մտքի ողջ կարողությունը, իսկ եթե հարկն է՝ նույնիսկ իր սրի շեղբը:

Միրանոյին շրջապատող հասարակության կարծիքը ձևավորվում է երկու-երեք անատարկելի օրենքներով՝ ինչպիսին արտաքինն է, այնպիսին էլ հոգին է, ինչպիսին հագուստն է, այնպիսին էլ դիրքն է, ինչպիսին վարքն է, այնպիսին էլ դրա շարժառիթներն են: Այդ իսկ պատճառով միջավայրի գոյության կարևորագույն սկզբունքներից մեկը արտաքին ներդաշնակության, զեղեցկության համապատասխանության պահանջն է:

Ռոստանի հերոսական կատակերգության մեջ կերպարների ստեղծման գլխավոր միջոց է դառնում անհատի *բնեռային հասկությունների միավորումն* ու չափազանցումը: Բացի դրանից,

¹⁸⁴ Այստեղ Ռոստանը շեղվում է պատմական հերոսի կենսագրական փաստերից. Միրանոն դը Բերժըրակը մահացել է ոչ թե աշնանը, այլ ամռանը (23 հուլիսի 1655):

պիեսում ոչ ոք չի ներկայանում իր *խկական էությունը*։ Մադլեն Ռոբենը փոխում է իր անունն Ալեքսանդր Մակեդոնացու գեղեցկուհի կնոջ Ռոքսանայի անվամբ՝ իր միտքն ու զգացմունքները ենթարկելով ժամանակակից ճաշակին, Քրիստիանը ջանք չի խնայում խելացի երևալու, հոգով բանաստեղծ Ռագնոն զբաղվում է խոհարարական արհեստով։ Իսկ Սիրանոն հենց առաջին գործողության մեջ հայտնում է իր դիրքորոշումը. «*être admirable*» (*լինել հիանալի*), այսինքն՝ ազատ երգել, երգել, ծիծաղել, ներել, լինել միայնակ, լինել ազատ, արտասուվոր, ոչ այնպիսին, ինչպիսին բոլորն են, այլ կերպ ասած՝ լինել, ինչպիսին որ կաս. *Հաճելի է լինել ինչպիսին որ կաս։ Իսկ կեղծելը դժվար է ու ճնշող*։¹⁸⁵ Սիրանոյի հայտնվելու պահից խայտաբղետ «աշխարհի» տրամադրվածությունը բնորոշվում է Սիրանոյին իր կամքին, օրենքներին ենթարկելու։ Պետք է նշենք, սակայն, որ, ի տարբերություն ռոմանտիկական հերոսի, Սիրանոն դատապարտված չէ միայնության, հակառակը, նա ձգտում է միավորվել մարդկանց հետ, հաջողություն ունենալ ամբոխի և կանանց մոտ։ Այսպիսով՝ միջավայրին և հանգամանքներին հերոսի հակադրման ռոմանտիկական թեման Ռոստանի մոտ նշանակալից փոփոխություններ է կրում. ռոստանյան հերոսը նույնքան *կապված է* այդ միջավայրին, որքան և հակադրված է դրան։ Հենց այդ պատճառով անձի ռոստանյան հայեցակարգի հիմնական սկզբունքն է դառնում *ցանկացած հանգամանքներում գոյատևող հերոսի* պատկերումը։ Նման գոյատևման, այլ ոչ հերոսական արարքների մեջ է Ռոստանը տեսնում իր ստեղծած կերպարների հերոսությունը։

Սիրանոյի կերպարին հատուկ է «*թատերականությունը*»։ նա ապրում է կարծես ցուցադրաբար, գործում է «*կարծես շարունակ գիտակցելով, որ ոչ միայն հայրենակիցների, այլև նախնիների հայացքներն ու գալիք սերնդի ուշադրությունն են կենտրոնացված իր վրա*»։¹⁸⁶ Հասարակության հանդեպ այդ պահվածքը դարձավ Սիրանոյի կերպարի խորհրդանիշը և կոչվեց «*պանաշ*»։ Ֆրանսերեն *panache* բառը նշանակում է «փետրափունջ», դա քաջության ոգին է, որին հանդիպում ենք Ռոստանի ավելի ուշ գրված «Արծվի ձագը» և «Շանտրկլեր» պիեսներում, իսկ «պանաշի» սահմանմանը՝ Ֆրանսիական Ակադեմիա մուտք գործելիս արտասանած ելույթում։

¹⁸⁵ Ռոստան Է. Սիրանո դը Բերժրակ. Հայպետհրատ. Երևան. 1951 էջ 365

¹⁸⁶ Луначарский А.В. О театре и драматургии. Т.2. С.269

Միրանոյի կերպարի մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ քազմաթիվ գրականագետների աշխատություններում անցկացված **գրական գուգահեռներին**: Այսպես՝ որոշ քննադատների կողմից Ռոստանի Միրանոն դիտվում է որպես Հյուգոյի «Ռուի Բլազ» դրամայի գլխավոր հերոսի նմանակում կամ պարզ վերահրատարակում,¹⁸⁷ սակայն ակնհայտ է, որ նեոռոմանտիկ Ռոստանն իր պիեսում վերաիմաստավորել է կերպարի ստեղծման ռոմանտիկական սկզբունքները: Հայտնի է, որ Հյուգոյի պիեսներում կոնֆլիկտը պայմանավորված է արտաքին աշխարհին հերոսների սոցիալական դիրքի անհամապատասխանությամբ: Իսկ երբ բախումը տեղափոխվում է կերպարի ներաշխարհ (դե Միլվա, Տրիբուլե, Լուկրեցիա Բորջա), այն անպայման հերոսին մահվան է տանում: Մասնավորապես, Դոն Սեգարի մեջ բացակայում է ներքին բախումը, կոնֆլիկտի աղբյուր է հանդիսանում հերոսին հատուկ լավատեսության և ճակատագրի անհամատեղելիությունը: Իսկ Միրանոյին հատուկ են հենց ներքին հակասությունները, որոնք, պայմանավորված լինելով արտաքին աշխարհի հետ բախմամբ, ոչ միայն չեն դառնում նրա մահվան պատճառը, այլ, ընդհակառակը, հնարավորություն են տալիս ապրելու բարդ և լեցուն կյանքով:

Ռոստանի պիեսի երկրորդ գործողության հայտնի տեսարանում դր Գիշը Միրանոյին համեմատում է Սերվանտեսի հերոսի, իսկ նրա պայքարը՝ հողմադացների դեմ Դոն Կիխոտի պայքարի հետ: Բազմաթիվ քննադատական աշխատություններում¹⁸⁸ զարգացվում և հիմնավորվում է այդ (ինչպես նաև՝ Միրանո-Ռագնո և Դոն Կիխոտ-Մանչո Պանսա գույգերի միջև) գուգահեռը: Իրոք, թե՛ Դոն Կիխոտը, թե՛ Միրանոն միայնակ երագողներ են, երկուսն էլ անմտության աստիճանի խիզախ են և անձնուրացության աստիճանի վեհանձն, երկուսն էլ չափազանց ուշ են ծնվել և ապրում են անցած ժամանակաշրջանով՝ չկարողանալով միահյուսվել, հաշտվել օտար ժամանակաշրջանի հետ, երկուսն էլ ձգտում են վերափոխել աշխարհը, ճղճիմ իրականությունը տեսնել գեղեցիկ, ներդաշնակ և արդար: Բայց ի տարբերություն Դոն Կիխոտի Միրանոն գիտակցում է, որ իր երազանքները պատրանք են ու ի գորու չէ

¹⁸⁷ Տե՛ս **Robichet J.** Littérature française. P.1972. T.2. P.180

¹⁸⁸ **Beerbohm M.** Around Theaters. London. 1953. P.75; **Marcel-Hubert F.** Rostand et Cyrano// La Nouvelle Revue pédagogique. Malonne.1967. Déc. P.224; **Vernois P.** Architecture et écritures théâtrales dans «Cyrano de Bergerac» // Travaux de linguistique et de littérature. Strasbourg. 1966. T.VI. N 2. P.111-138

հեռանալ այդ երևակայական աշխարհից: Դոն Կիխոտը չի ընկալում իրական կյանքը, որը տեսնում է իր խելագարության լույսի ներքո, այդ պատճառով էլ կոչվում է հողմադացների, գինու տակառների և փայտե տիկնիկների հետ, իսկ Սիրանոն լավ է ճանաչում իր թշնամիներին, որոնք ամեննին էլ խամաճիկներ չեն: Ինչպես Դոն Կիխոտը, Սիրանոն իր մասին միայն վերջին պահին է մտածում, բայց, ի տարբերություն իսպանացի ասպետի, նա դիպուկ հարվածներ է հասցնում իր թշնամիներին, և «*նրա ձեռքում ոչ թե ծիծաղ առաջացնող ճաքած նիզակ է, այլ դ'Արտանյանի խրոխտ սրաշեղրը*»:¹⁸⁹ Ռոստանի Սիրանոյին կարելի է համարել Դոն Կիխոտի անմահ կերպարի վերաիմաստավորում, սակայն հեղինակի նպատակն, անկասկած, ֆրանսիական ազգային կերպար ստեղծելն էր: Սիրանոն մարմնավորում է ֆրանսիական ոգին, նա քաջ է, հանդուգն, սրամիտ, նրա համար անտանելի է տգեղության պատճառով ծիծաղելի լինելը, և նա ծաղրում է ինքն իրեն՝ դառնալով իր արտաքինը կողքից դիտող հանդիսատես:

Այստեղ չեն կարող չհիշել հայ մեծ դերասան Մհեր Մկրտչյանին, որի համար Սիրանոն երազած և ամենասիրելի դերն էր: Նա էլ էր հաճախ կատակում սեփական քթի մասին. «*Դեռ մանկուց ինձ ավելի անհանգստացրել է ոչ թե այն, թե ինչու է իմ քիթն այդքան մեծ, այլ այն, թե ինչու են ուրիշների քթերն այդքան փոքր*»:¹⁹⁰ Մհեր Մկրտչյանին հաջողվել էր արտահայտել Ռոստանի պիեսի հիմնական գաղափարը. ծիծաղելի արտաքինի պատճառով աշխարհը չի տեսնում բանաստեղծի հոգին: Եվ ոչ միայն միտքն ու հանճարեղությունը, այլև սուրն է Սիրանոյին հնարավորություն տալիս հաղթանակել այդ աշխարհում:

Համաձայն կերպարների ստեղծման նեոռոմանտիկական սկզբունքների՝ Սիրանոյի կերպարը զարգացում չի ապրում, այն գործողություն առ գործողություն ավելի լայնորեն է բացահայտվում, ներկայանում նոր, հակադիր կողմերով, որոնք, սակայն, չեն հանգեցնում նրա անձի փլուզմանը: Ընդհակառակը, դրանք համադրվում են, միախառնվում, հարստացնում մեկը մյուսին՝ ստեղծելով բնավորության յուրահատուկ ամբողջականություն:

Վ.Լուկովը Սիրանոյի բնավորության հիմնական գծերից առանձնացնում է ազատասիրությունը:¹⁹¹ Նշենք, սակայն, որ Ռոստանի

¹⁸⁹ Михайлов А. Драматургия Эдмона Ростана // Эдмон Ростан. Пьесы. М. 1983. С. 12

¹⁹⁰ <http://maneparayan.blogspot.am/2011/07/blog-post.html>

¹⁹¹ Луков В. Эдмон Ростан: Монография. Самара: СГПУ. 2003. С. 132

հերոսն իրեն ազատ է զգում հասարակության «արտաքին» օրենքներից, բայց ենթարկվում է սեփական, «ներքին» օրենքներին՝ ասպետական վարքականոնին: Այսպիսով Ռոստանը ժխտում է մարդու լիակատար, ոչնչով չսահմանափակված լիակատար ազատությունը:

Գրաքննադատության մեջ ընդունված կարծիքի համաձայն Սիրանոն, ով հաղթող է դուրս գալիս բոլոր մենամարտերից, պարտվում է Ռոքսանայի սրտի համար մղվող պայքարում:¹⁹² Կարծում ենք, սակայն, որ այս դաժան, սեփական կրքերի դեմ մղվող պայքարում Սիրանոն նույնպես հաղթող է հանդիսանում, քանի որ ոչ միայն ներում է իր երջանիկ հակառակորդի հանդգնությունները, ոչ միայն հոգատարությամբ է վերաբերվում նրան արշավանքի ժամանակ, այլև նրան է հանձնում իր միտքը, գրիչը, սիրտը: Եվ ամենակարևորը՝ թեն շատ ուշ, բայց արժանանում է Ռոքսանայի սիրուն և մահանում է երջանիկ ժպիտով:

Անձի ռոստանյան հայեցակարգը հիմնվում է, ինչպես նշել ենք, *մարդ-հասարակություն* հարաբերությունների վրա, սակայն մարդու էությունը բացահայտվում է ոչ միայն հասարակության հավաքական կերպարի, այլև առանձին անհատների հետ հարաբերություններում: Այդ իմաստով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում «Սիրանո դը Բերժերակ» պիեսի կերպարային համակարգի վերլուծությունը: Պետք է նշել, որ պիեսի հերոսների բնութագրմանը կարելի է հանդիպել բազմաթիվ ուսումնասիրություններում, ուստի մենք կփորձենք, չկրկնելով դրանցում ասվածը, քննարկել որոշ խնդիրներ:

«Սիրանո դը Բերժերակ» պիեսի կերպարների բավական մանրամասն վերլուծությունը տալիս է Ա.Միխայլովը: Նա ուսումնասիրում է բոլոր հերոսների բնավորությունները և իրավացիորեն նկատում, որ դրանց զարգացումը մեծապես պայմանավորված է Սիրանոյի ազդեցությամբ:¹⁹³

Ռոստանի պիեսի հիմնական գաղափարներից մեկն իրականության մեջ երազանքը տեսնելն է: Այն համընկնում է Սիրանոյի սկզբնական դիրքորոշման հետ՝ լինել, ինչպիսին որ կաս: Այսպիսով, «Սիրանո դը Բերժերակում» կրկին ծագում է *երազանքի և իրականության սինթեզը*:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ռոստանի «Սիրանո դը Բերժերակի» *կառուցվածքը, քրոնոտոպը, անձի հեղինակային հայեցակարգը*, կարելի է եզրակացնել, որ այս պիեսին հատուկ է տեղի միասնության խախտումը,

¹⁹² Михайлов А. Драматургия Эдмона Ростана // Эдмон Ростан. Пьесы. М.1983. С.12

¹⁹³ Նույն տեղում, էջ13

իրական, սահմանափակ տարածությունը որպես ողջ աշխարհի մոդել ներկայացնելը, *էրազմանքի և իրականության սինթեզը*, մարդու և միջավայրի միաժամանակ *կապվածությունն ու հակադրությունը*, կերպարների ստեղծման գլխավոր միջոց է դառնում անհատի *քննադին հասկությունների միավորումը*: «Միրանո դը Բերժերակ» պիեսում հայտնվում է *«պանաշը»* որպես կերպարի *«հին»* հերոսությունը *«նորից»* տարբերող չափանիշ և նեոռոմանտիկական հերոսի հայեցակարգի կարևոր բաղկացուցիչ մաս:

Татевик Тангян

ОТРАЖЕНИЕ НЕОРОМАНТИЧЕСКОЙ ЭСТЕТИКИ В ПЬЕСЕ ЭДМОНА РОСТАНА «СИРАНО ДЕ БЕРЖЕРАК»

Проведенный в статье анализ особенностей жанра, композиции, хронотопа, авторской концепции личности в героической комедии Э.Ростана «Сирано де Бержерак» позволяет выявить такие черты неоромантической эстетики как синтез мечты и действительности, противопоставление и, одновременно, взаимосвязь личности и среды, сочетание противоположных черт в образе героев, «панаш» как форма героического поведения в современных условиях.

Tatevik Tangyan

REFLECTION OF NEO-ROMANTIC AESTHETICS IN "CYRANO DE BERGERAC" BY EDMOND ROSTAND

The analysis of genre, composition, chronotope as well as the author's concept of personality in the heroic comedy "Cyrano de Bergerac" by E.Rostand reveals such features of Neo-Romantic aesthetics as synthesis of dream and reality, opposition and, at the same time, relationship between the individual and the environment, combination of characters' opposite features, "Panache" as a form of heroic behavior in modern conditions.

**ԱՆՏԻԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՄՆ-Ի ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հիմնադրանք՝ ԱՄՆ-ի մշակույթ, անտիկ մշակույթ, Հռոմեական հանրապետության պետական կարգ

Անտիկ մշակույթի ուսումնասիրությունն ու յուրացումը կարևոր դեր են խաղացել ամերիկյան մշակույթի ձևավորման գործընթացում: Այդ մասին բարձրաձայնում են հենց իրենք՝ ամերիկացիները: Քերոլայն Ուինթերերն իր գրքում, որը քննարկում է ԱՄՆ-ի ինտելեկտուալ կյանքի վրա Հին Հունաստանի և Հին Հռոմի մշակույթների ազդեցությունը, նշում է, որ անտիկ աշխարհի մշակութային ժառանգությունը կարևոր դեր է խաղում ամերիկյան աշխարհայացքի, ազգային գիտակցության, պետականության ձևավորման գործում. «Բոլոր մյուս՝ անգամ ոչ այդքան հեռու ժամանակներում գոյություն ունեցող, բայց ներկայումս մեռած քաղաքակրթությունները մեզ այժմ օտար ու անհասկանալի են թվում, սակայն երբ խոսք է գնում հին հռոմեացիների մասին, մեզ շատ հեշտ է նրանց պատկերացնել մեր ժամանակակիցների դերում»¹⁹⁴: Հենց հին հռոմեացիներից է ժամանակակից աշխարհը, այդ թվում և ԱՄՆ-ն, ժառանգել հիմնական իրավական սահմանակարգերն ու քաղաքականությունը: Ուշագրավ է, որ անգամ ամերիկյան երկաթուղու պատմաբան համար սահմանված չափանիշը՝ 4 ֆութ և 8,5 դյույմ, առաջացել է հինհռոմեական մարտակառքերի չափանիշից¹⁹⁵:

Հայտնի է, որ դեռևս 1620 թ. կրոնական դավանափոխների մի խումբ, որոնց այժմ ընդունված է անվանել «ուխտավոր հայրեր», Մասաչուսեթս նահանգում հիմնեց Փլիմութ անունով անգլիական գաղութը: Այդ գաղութի մասին մեզ հասած առաջին տեղեկությունների համար աղբյուր է ծառայում «Փլիմութում վերաբնակեցնելու պատմությունը» գիրքը՝ գրված երկրորդ

¹⁹⁴ **Winterer C.** Victorian Antigone: Classicism and Women's Education in America, 1840-1900. American Quarterly. Volume I. N1, March 2001, Pp. 70-93.

¹⁹⁵ Այդ չափանիշը գործառության մեջ է եղել Անգլիայում: Ինչպես հայտնի է, ամերիկյան երկաթուղիները կառուցվել են անգլիացի առաջին տարագիրների կողմից, մինչդեռ Անգլիայում առաջին միջքաղաքային ուղիները կառուցվել են հռոմեացի լեգիոնականների կողմից:

նահանգապետ Ու.Բրեդֆորդի կողմից: Մասաչուսեթս ժամանած անգլիացի պուրիտանները նպատակ ունեին այստեղ իրենց կյանքը կառուցել համաձայն աստվածաշնչյան կանոնների: Մակայն 17-րդ դարի վերջում պուրիտանական աստվածապետությունը սկսեց զիջել դիրքերը, և, հետևաբար, Աստվածաշունչը հետզհետե սկսեց կորցնել իր կարևորությունը: 1675թ. լույս տեսավ Բ.Թոմփսոնի «Նոր Անգլիայի ճգնաժամը» գիրքը, որտեղ առաջին անգամ հայտնվում են անտիկ աշխարհի բազմաթիվ վկայակոչումներ:

Ամերիկացիները տարբեր ոլորտներում իրենց անտիկ աշխարհի ժառանգորդներ են համարում: Իր աշխատություններից մեկում, որը վերնագրված է «Ամերիկայի պարտքը Հունաստանին և Քրիստոնեությանը» (America's Debt to Greece and Christianity), ամերիկացի գիտնական Թոմաս Ֆլեմինգն ապացուցում է, որ իր երկիրը ձևավորվել է մի կոմից՝ քրիստոնեության, մյուս կողմից՝ անտիկ մշակույթի անմիջական ազդեցության ներքո: Այնպես, ինչպես եկեղեցական հայրերը ժամանակին քրիստոնեությունը պաշտպանելու նպատակով դիմում էին անտիկ փիլիսոփայությանը, մշակույթին և գրականությանը, այդպես էլ ամերիկյան առաջին վերաբնակներն անտիկ աշխարհի օրինակով մի ազգ ստեղծեցին՝ իրականացնելով այն ամենը, ինչ ժամանակին կանխատեսել և ինչի մասին գրել էին հին հույներն ու հռոմեացիները, և ինչը այդպես էլ մինչև վերջ չէին հասցրել իրականացնել: Ձևակերպելով ապագա ժողովրդավարության սկզբունքները՝ ամերիկյան սահմանադրության հեղինակները դիմել են, առաջին հերթին, հին հռոմեացիներին: Քաղաքականության և քաղաքացիական իրավունքի ասպարեզներում ամերիկացիների համար Հռոմը մշտապես ծառայել և այժմ էլ շարունակում է ծառայել որպես չափօրինակ: Այսպես, օրինակ, Վեսթ-Փոյնթում մինչ օրս ուսուցանվում է հռոմեացիների ռազմական պատմությունը, ինչը պարտավոր է իմանալ յուրաքանչյուր շրջանավարտ: Այդ փաստը հերթական անգամ վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ի՝ որպես պետական կառույցի ստեղծման համար առաջին իսկ պահից օրինակ է ծառայել Հռոմեական հանրապետության պետական կարգը: Ըստ էության, դա եղել է Նոր ժամանակներում անտիկ գաղափարի վերակենդանացման ակնհայտ փորձ: Ամերիկացիները միտումնաբար վերակառուցել են Հռոմեական պետության հիմնական սկզբունքները: Առաջին հերթին, ինչպես արդեն վերը նշեցինք, այդ ամենը վերաբերում է ԱՄՆ-ի քաղաքական մշակույթին, որտեղ ակնհայտ է հինհռոմեական խորհրդանիշների գերիշխանությունը: Ամերիկյան առաջին վերաբնակներն այնքան են կարևորել հռոմեական ժառանգությունը, որ այն հսկայական

ազդեցություն ունեցավ նորաստեղծ պետության քաղաքական խորհրդանշական համակարգի վրա: Դեռևս Ջորջ Վաշինգթոնը՝ ԱՄՆ-ի առաջին նախագահը, գտնում էր, որ քանի որ ամերիկյան նահանգները միավորվում են հանուն ամերիկացիների բարօրության, ապա նորընտիր կառավարությունը պետք է լինի «ժողովրդի հետ, ժողովրդի համար ու ժողովրդի միջից»¹⁹⁶: Այսպիսով, ԱՄՆ-ի իշխանության տիպը համարվում է դեմոկրատիան՝ ժողովրդի իշխանությունը, որի գաղափարը ևս գալիս է անտիկ դարաշրջանից: Երկրի քաղաքական կառուցվածքը՝ նահանգների ինքնավարությունն ու կենտրոնական իշխանության գերակայությունը, ևս փոխառված է անտիկ դարաշրջանից: Ամերիկյան կարևորագույն հիմնարկությունները կոչվում են Հին Հռոմի քաղաքական կառույցների անուններով՝ Սենատ, Կապիտոլիում: Առ այսօր սենատորների ընտրության սկզբունքները մնում են նույնը. յուրաքանչյուր նահանգ երկու ներկայացուցիչ ունի պետության գլխավոր օրենսդիր մարմնում՝ Սենատում, և մի քանիսը՝ Ներկայացուցիչների պալատում, որոնք ընտրվում են քվեարկությամբ:

Ամերիկյան բազմաթիվ նշանաբաններ ու քաղաքական սկզբունքներ կրում են անտիկ մշակույթի ազդեցությունը. ինչպես քաղաքագետ Ջոել Մարկն է վկայում. «Ամերիկյան քաղաքականության մեջ առաջնային է հակառակորդների հանդեպ ունեցած հարգանքը, իշխանության խաղաղ փոխանցումը և արժանապատվորեն պարտվելը, սակայն սեփական համոզմունքների համար ամբողջ ուժով ու ազնվորեն պայքարելուց հետո միայն»¹⁹⁷:

Ուշագրավ է ԱՄՆ-ի կարևորագույն խորհրդանիշներից մեկի՝ ամերիկյան զինանշանի, ինչպես նաև պետական մեծ կնիքի ստեղծման պատմությունը, որտեղ նույնպես պարզորոշ արտահայտված է հռոմեական պետության գաղափարը: Ինչպես հայտնի է, 1776 թ-ի հուլիսի 4-ին, այսինքն՝ այն օրը, երբ ամերիկյան կոնգրեսը հավանություն տվեց Անկախության հռչակագրին, ազգային կոմիտեին, որի կազմի մեջ էին մտնում Բենջամեն Ֆրանքլինը, Ջոն Ադամսը և Թոմաս Ջեֆերսոնը, հանձնարարվեց մշակել Միացյալ Նահանգների Պետական մեծ կնիքի նախագիծը: Երբ կոմիտեի անդամները կոնգրեսի քննարկմանն առաջարկեցին իրենց աշխատանքի արդյունքները, պարզվեց, որ ինչպես Ֆրանքլինը, այնպես էլ Ջեֆերսոնը

¹⁹⁶ **Pious R. M.** Article on Democracy. Microsoft Encarta Online Encyclopedia. 2000. P.69

¹⁹⁷ <http://www.worldmagblog.com/blog/archives/018816.html>

իրենց նախագծերում օգտագործել են պյուժեներ Հին Կտակարանից¹⁹⁸, մինչդեռ Ջոն Ադամսը դիմել էր անտիկ պյուժեին. նրա նախագծի վրա պատկերված էր մահակի վրա կռթնած Հերակլեսը: Մի կողմից պատկերված էր Առաքինությունը, որը խորդուբորդ ճանապարհներով պատրաստ էր ուղեկցել նրան դեպի բարձունք, մյուս կողմից՝ Ծուլությունը, որը փորձում էր գայթակղել հերոսին՝ նրա առջև բացելով կանաչ ճանապարհ՝ սփռված բազում ծաղիկներով: Սակայն առաջարկված նախագծերից ոչ մեկը կոնգրեսի կողմից չընդունվեց, և գործը ժամանակավորապես հետաձգվեց՝ հեղափոխական լարված իրադարձությունների պատճառով: Եվ միայն Յորքթաունի ճակատամարտից հետո (1781 թ. հոկտեմբեր) այն նոր ընթացք ստացավ, իսկ 1782թ. հունիսի 20-ին Կոնգրեսը հավանություն տվեց նոր Պետական կնիքին, որի հեղինակն էր Չարլզ Թոմսոնը: Կնիքի վրա պատկերված է սպիտակագլուխ արծիվ. նրա կրծքին պատկերված է վահան՝ տասներեք կարմիր և սպիտակ գծերով, ինչը խորհրդանշում է ԱՄՆ-ի նախնական տասներեք նահանգները: Եվ այստեղ կրկին արտահայտված է կապը Հին Հռոմի հետ: Ինչպես հայտնի է, արծիվը պատկերված է եղել հռոմեական գորահրամանատարների գավազանների՝ որպես առաջնության, իշխանության խորհրդանիշ: Ավելի ուշ արծիվը դարձել է զուտ կայսերական նշան, գերագույն իշխանության խորհրդանիշ: Այդ իսկ պատճառով արծիվը հռոմեական օրենսդրության մեջ ստացավ պաշտոնական անվանում՝ «հռոմեական թռչուն» (*avis Romana*): Ամերիկյան կնիքի վրա պատկերված արծիվը մի թաթի մագիլներում սեղմում է ձիթենու ճյուղը՝ որպես խաղաղության խորհրդանիշ, իսկ մյուսում՝ նետեր՝ որպես պատերազմի նշան, կոցին՝ ժապավեն, որի վրա լատիներենով գրված է ԱՄՆ-ի նշանաբանը՝ *E pluribus unum* (Բազմությունից՝ միասնականություն), ինչը կրկին խորհրդանշական է: Այդ նույն ոգով է արված նաև կնիքի ռևերսը. այստեղ ևս առկա է լատիներեն լեզվով երկու նշանաբան: Նշանաբաններից մեկը՝ *Annuit coeptis* (Նա օրհնում է մեր ձեռնարկումը), փոխառված է Վերգիլիուսի «Էնեականից», երկրորդը՝ «*Incipit novus ordo saeculorum*» (Սկսվում է ժամանակների նոր կարգ), նույնպես Վերգիլիուսից է, բայց այս անգամ՝ «Բուկոլիկներից», որոնք պարունակում են մարգարեություն Ոսկե դարի սկզբում Աստծո զավակի

¹⁹⁸ Ֆրանսիայի նախագծի վրա պատկերված էր Մովսեսը՝ ծովեզրին կանգնած: Նա, կարծես, ձեռքի շարժումով հրամայում է ծովին կլանել իսրայելցիներին հետապնդող փարավոնին, որ նստած է իր կառքում՝ թագը գլխին և թուրը՝ ձեռքին: Ջեֆերսոնի նախագծում պատկերված էին անապատում թափառող իսրայելցիները:

ծննդյան մասին: Այսպիսով, ինչպես համոզվեցինք, ԱՄՆ-ի պետական կնիքը նույնպես կրում է անտիկ դարաշրջանի ազդեցությունը: Հատկանշական է ամերիկացիների՝ հենց հռոմեական ավանդույթին դիմելը, ինչը, մեր համոզմամբ, հերթական անգամ հաստատում է այն կայքը, որ գույություն ունի ամերիկյան քաղաքացիական կրոնի և նրա անտիկ նախատիպի միջև:

Հռոմեական խորհրդանիշների համակարգին դիմելն ամերիկացի պատմաբան Օ'Բրայենը բացատրում է հետևյալ կերպ. «Ընտրյալ ազգի» խորհրդանիշների համակարգը միշտ էլ թույլ կողմեր է ունեցել: Որպես ապացույց նա բերում է Հին Կտակարանից որոշ օրինակներ, երբ իսրայելցիները ստիպված են եղել պատիժ կրել իրենց սխալների համար: Այլ բան է Հին Հռոմը, որտեղ որևէ մեկը թույլ տված սխալների ու մեղքերի պատճառով երբեք այլ ազգերի կողմից պատժի չի ենթարկվել¹⁹⁹:

Հին հռոմեացիների քաղաքական փորձը ամերիկացիների առաջին սերնդին ներկայանում էր որպես «ինքնավարությանը ձգտող ազատ մարդկանց ազնվագույն նվաճում»²⁰⁰: Ինչպես գրում է Յեյլի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Յարոսլավ Պելիկանը, Հռոմի պատմությունը որպես դասագիրք է ծառայել ամերիկյան առաջին վերաբնակների համար, որին նրանք դիմում էին «իրադարձությունների ընթացքի, ազատության և բռնակալության զարգացման»²⁰¹ մասին տեղեկություններ քաղելու նպատակով: Այստեղից էլ առաջացել է Pax Americana (Ամերիկյան հաշտություն) հասկացությունը՝ որպես հռոմեական Pax Romana-ի շարունակություն:

Մանրամասն վերլուծության ենթարկելով ԱՄՆ Սահմանադրության և Անխախտության հռչակագրի հեղինակների կողմից առաջ քաշած նշանաբանները, ինչպես նաև օգտագործված տարբեր տեսակի խորհրդանիշները՝ Ջիմ Փեյզանը 2005թ. լույս տեսած իր հոդվածում, որը վերնագրված է «Միացյալ Նահանգներ. հեթանոսության վրա հիմնված երկիր» (United States, A Country Founded on Paganism), հերթական անգամ ապացուցում է, որ իր երկրի արմատները պետք է փնտրել հեթանոսության մեջ: Որպես իր խոսքերի ապացույց հոդվածի հեղինակը մի շարք փաստեր է բերում, օրինակ՝ ամերիկյան առաջին մետաղադրամներին հեթանոսական աստվածների, ինչպես նաև քաղաքական գործիչների նկարների

¹⁹⁹ **O'Brien C.** God Land. Efections on Religion and Nationalism. Harvard University Press. 1988. P. 62-63.

²⁰⁰ **Плезингер-мл А.** Циклы американской истории. М. 1992. С. 120

²⁰¹ **Pelikan J.** The Lessons of History // The Nature of Human Society. Philadelphia. 1977. P.35.

պատկերումը²⁰², ԱՄՆ-ի նախահայրերից ոմանց գերեզմանաքարերին լատինական տապանագրերի առկայությունը և այլն:

Քննելով ԱՄՆ-ի մշակութային կյանքի պատմությունը՝ կրկին ակնհայտորեն կարող ենք տեսնել անտիկ ավանդույթների կնիքը, որն առանձնապես ցայտուն է երևում արվեստի՝ առաջին հերթին, ճարտարապետության ոլորտում: Անտիկ կառույցները որոշ չափով արտացոլել են պետական կարգի մասին հին հույների և հռոմեացիների պատկերացումները: Անտիկ ոճին բնորոշ պարզությունն ու համաչափությունը հարմար գտնվեցին ժողովրդավարական իդեալներ քարոզող ամերիկացիների համար:

Հունական և հռոմեական անտիկ ճարտարապետության ազդեցության տակ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին հաստատվում է դասական ոճի ամերիկյան ազգային տարբերակը: Այդ ոճի առաջին կառույցների հեղինակներն էին ճարտարապետներ Ջոն Էրիսը և Փիթեր Հարիսոնը: Նրանց ավանդույթը շարունակելով և զարգացնելով՝ ժամանակի ականավոր ճարտարապետները կառուցել են ներկայիս ԱՄՆ-ի ամենահայտնի վարչական ու գործավարական շենքերը՝ Սպիտակ Տունը Վաշինգթոնում (1792, ճարտ. Ջ. Հոբան), Նյու Յորքի Հին քաղաքապետարանը (1812), Վաշինգթոնի Կապիտոլիումը²⁰³ (ճարտ. Ու. Թորնթոն, Բ. Լաթոբր, Չ. Բալֆինչ, Թ. Ուոլթեր և ուրիշներ), Ֆիլադելֆիայում Փենսիլվանիայի բանկը (1799, ճարտ. Բ. Լաթոբր), ԱՄՆ-ի բանկը (ճարտ. Ու. Սթրիքլենդ), Նյու Յորքի Բորսան (ճարտ. Ի. Ռոջերս) և այլն: Հարկ է նշել, որ այս ոճով էր ստեղծագործում նաև քաղաքական գործիչ, լուսավորիչ, ԱՄՆ-ի երրորդ նախագահ, ճարտարապետ Թոմաս Ջեֆերսոնը (Մոնտիչելլիի առանձնատունը և համալսարանական համալիրը Շարլոթսվիլում, Կապիտոլիումը Ռիչմոնդում):

Վաշինգթոնի Գերագույն դատարանի շենքի կենտրոնական մասը նույնպես նախագծված է հռոմեական տաճարների օրինակով: Սպիտակ մարմարով երեսապատված շենքը և նրա առաջ վեր խոյացող սյուները ոչ այլ ինչ են, եթե ոչ հինհռոմեական շինությունների նմանակում²⁰⁴: ԱՄՆ-ի

²⁰²Օրինակ, 10-ցենտանոց մետաղադրամի վրա պատկերված է եղել Մերկուրի աստվածը, իսկ 1 դոլարանոց արժեթղթի վրա՝ հռոմեական Վեսպասիանոս կայսրը:

²⁰³«Կապիտոլիում» բառը նույնպես փոխառված է հռոմեացիներից: Ինչպես հայտնի է, հռոմեական Կապիտոլիումը՝ Յուպիտեր աստծուն նվիրված տաճարը, կառուցվել է Կապիտոլիում բլրի վրա:

²⁰⁴ Հայտնի է որ Օգոստոս կայսեր օրոք Հռոմը «աղյուսաշեն» քաղաքից վերածվեց «մարմարե» քաղաքի:

մեծ թվով հուշարձանների նախագծերի հիմքում նույնպես ընկած է անտիկ ոճը: Այսպես, օրինակ, Նյու Յորք Միթիում գտնվող Վաշինգթոնի հրապարակի կամարը (Washington Square Arch), մասնագետների կարծիքով, ակնհայտորեն վերարտադրում է հռոմեական հաղթականարների ավանդույթը, Ջորջ Վաշինգթոնի հուշարձանը իր ոճով նմանակում է Տրայանոսի Սյունը, իսկ ԱՄՆ-ի Երկրորդ Բանկի շինությունը և Աբրահամ Լինքոլնի մարմարե հուշարձանը կառուցված են հունական Պարթենոնի օրինակով:

Ամերիկացիները լայնորեն օգտագործել են հին հույների ու հռոմեացիների փորձը նաև իրենց երկրի կրթական համակարգը կառուցելիս՝ հաճախ դիմելով ոչ միայն պատմական անձանց, այլ նաև այս կամ այն անտիկ հեղինակների հերոսների կերպարներին: Այսպես, օրինակ, պարզվում է, որ Սոֆոկլեսի ողբերգության հերոսուհու՝ Անտիգոնեի կերպարը ժամանակին ամերիկյան կնոջ համար իդեալ է համարվել և նույնիսկ որոշ չափով նպաստել է կանանց կրթության զարգացմանը: Ինչպես նշում է Քերոլայն Ուինթերերը²⁰⁵, ամերիկյան կանանց կրթության զարգացման ուսումնասիրությանը նվիրված իր հետազոտության մեջ, հինհունական ողբերգության հերոսուհու անունը հայտնի է դարձել ամերիկացիներին 1840թ.: Հիշեցնենք, որ հենց այդ ժամանակաշրջանում ամերիկացիներն անդրադարձան կանանց կրթական համակարգում արմատական փոփոխություններ կատարելու հարցին՝ բոլորի համար պարտադիր դարձնելով անտիկ մշակույթի և գրականության ուսումնասիրությունը: Հետաքրքրությունն անտիկ ողբերգության հերոսուհու նկատմամբ չի կորել նույնիսկ 20-րդ դարում: Ինչպես ավելացնում է Ք.Ուինթերերը, «Անտիգոնեն» դարձել է ամերիկյան ուսանողության կողմից ամենահաճախ բեմականացվող թատերգություններից մեկը:

Անտիկ մշակույթի և գրականության ուսումնասիրությունն առ այսօր հանդիսանում է ամերիկյան կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերի անբաժան մասը: Համընդհանուր պատկերացմամբ՝ դասական մշակույթի իմացությունը հիմք է տալիս ընթացիկ քաղաքական ու մշակութային իրադարձությունները հասկանալու համար: Թոմաս Ֆլեմինգը գրում է. «Եվրոպայի ու ԱՄՆ-ի քաղաքակրթությունը Հին Հունաստանի ու Հին Հռոմի ժառանգությունն է, իսկ այդ մեծ քաղաքակրթությունների պատմության ու գրականության ուսումնասիրությունը՝ լուրջ կրթության

²⁰⁵ **Winterer C.** Victorian Antigone: Classicism and Women's Education in America, 1840-1900. American Quarterly. Volume I. N1, March 2001, Pp. 70-93.

հիմքը»²⁰⁶: Նշենք, որ այսօր ԱՄՆ-ն միակ երկիրն է աշխարհում, որտեղ չափազանց մեծ կարևորություն է տրվում լատիներենի ուսուցմանը: Ջիլբերթ Լոուրը գրում է, որ բոլոր ուսանողները, անկախ իրենց ընտրած մասնագիտությունից, պետք է ուսումնասիրեն անտիկ մշակույթն ու լեզուն, մասնավորապես, լատիներենը, «որպեսզի հասկանան սեփական՝ ամերիկյան մշակույթն ու իրենց տեղը ժամանակակից աշխարհի խայտաբղետ խճնկարի մեջ»²⁰⁷: 1979-ին Նախագահական հանձնաժողովը նպատակ ուներ կազմել այնպիսի ուսումնական ծրագիր, որը երեխաներին «կտեղեկացնի այլ մշակույթների ու արժեքների հարաբերակցության մասին, կսովորեցնի գնահատել ազգերի նմանություններն ու հարգել նրանց տարբերությունները»: Դրան հաջորդեց Հումանիտար գիտությունների հանձնաժողովի հիմնադրումը, որը 1980-ի հաշվետվության մեջ, հիմնավորելով միջնակարգ դպրոցներում դասական մշակույթի դասերի նպատակայնությունը, նշում էր, որ դա մի միջոց է աշակերտներին ներկայացնելու «հին ժամանակներում սղամարդկանց ու կանանց առաջնորդող իդեալները», նրանց սովորեցնելու «ընտրել իրենց արժեքները՝ առանց մեքենայնորեն կարծելու, որ ներկա իրականությունը իր օրինակը չունի անցյալում»²⁰⁸:

Соня Апресова

РОЛЬ АНТИЧНОГО НАСЛЕДИЯ В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ АМЕРИКАНСКОЙ КУЛЬТУРЫ

В данной статье исследуются роль и значение античности в формировании американской государственности, культуры, системы образования, выявляются некоторые закономерности обращения американцев к античному миру, анализируются его причины.

Sonya Apresova

THE ROLE OF THE ANCIENT HERITAGE IN THE PROCESS OF FORMATION OF AMERICAN CULTURE

The article studies the role and significance of Greek and Roman Antiquity in the process of formation of the American State system, culture, education system. It also reveals some common patterns according to which Americans referred to the ancient heritage.

²⁰⁶ <http://www.groceryreport.com/Religion.htm>

²⁰⁷ <http://w/www.txclassics.org/greekarticles2.htm>

²⁰⁸ <http://www.txclassics.org/greekarticles2.htm>

**Ջ.Դ.ՍԵԼԻՆՋԵՐԻ «ԻՆԸ ՊԱՏՄՎԱԾՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԻ
ՆԵՐԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԴՐԱ ՎԵՐՍՏԵՂՈՒՄԸ
ԹԻՐԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Ջ.Դ.Սելինջեր, «Ինը պատմվածք», գեղարվեստական թարգմանություն, գրական հերոսի ներաշխարհ, ռճական միջոցներ, համարժեք թարգմանություն

Ջ.Դ.Սելինջերը XX-րդ դարի «նյույորքյան» գրական դպրոցի վառ ներկայացուցիչներից է, ԱՄՆ նոր գրական պատմության ամենահայտնի և թերևս ամենախորհրդավոր գրողը, ում ստեղծագործություններն առանձնանում են իրենց յուրօրինակությամբ: 1950-1960-ական թվականներին բազում ընթերցողների համար Ջ.Դ.Սելինջերը վերածվեց յուրահատուկ կուռքի, ում ստեղծագործությունները շրջադարձային դեր էին խաղում տարբեր սերունդների ներկայացուցիչների համար: 1951 թ-ին տպագրելով «The Catcher in the Rye» ստեղծագործությունը՝ Սելինջերն իր ուրույն ստեղծ գրադեցրեց համաշխարհային գրականության մեջ, իսկ 1953 թ-ին «Nine stories» բացառիկ ժողովածուի տպագրությամբ ի սկզբանե մեծ շփոթություն առաջացրեց գրաքննադատների և ընթերցողների շրջանում՝ պայմանավորված պատմվածքների խորը ենթատեքստով, հարուստ ներակայմամբ, ինչպես նաև բարդ հոգեբանական կերպարներով:

Սելինջերի «Ինը պատմվածք» ժողովածուում ներառված պատմվածքները նրա ստեղծագործական կյանքի ինը գոհարներն են, որոնք առանձնանում են իրենց խորհրդավորությամբ, հակիրճ շարադրանքով, ավարտունությամբ և հուզականությամբ: Սելինջերյան անկեղծ շարադրանքը անգուգական հմայք է հաղորդում պատմվածքներին և ընթերցողի մոտ ստեղծում այնպիսի զգացողություն, ասես հեղինակը պատմում է ընթերցողին վաղուց ծանոթ, արդեն հարազատ դարձած հերոսների մասին: Ջ.Դ.Սելինջերի «Ինը պատմվածք» ժողովածուն մինչ օրս տարբեր գրաքննադատներ տարբեր կերպ են մեկնաբանում: Մի շարք գրականագետներ հաճախ յուրաքանչյուր պատմվածքում փնտրում են փիլիսոփայական-կրոնական «Մախաբխարատի» ուսմունքի սկզբունքները՝

համարելով, որ պատմվածքներից յուրաքանչյուրն ըստ հերթականության մարդու ներաշխարհի դրսևորման իրական բանալին է, իսկ մյուսները կարծում են, որ միավորելով ինը պատմվածք մեկ ժողովածուում՝ Մելինջերը ստեղծել է անհատի հուզական, հոգեբանական, հոգևոր աշխարհը՝ արտացոլելով մարդկային տրամադրությունները, հուզումները, ապրումներն ու կրքերը՝ առաջնորդվելով ավանդական հնդկական պոեզիայի «դիվանի-ռասա» հայեցակարգով²⁰⁹:

«Ինը պատմվածք» ժողովածուի պարզ, բայց միաժամանակ միանշանակ մեկնաբանություն չունեցող անվանումը, ժողովածուի համար որպես մակագիր ծառայող ճապոնացի պոետ, նկարիչ և քարոզիչ Խակուիճա Օսեի խոսքերը (We know the sound of two hands clapping. But what is the sound of one hand clapping?) և ոչ պակաս հետաքրքիր ու խորհրդավոր պատմվածքները, վերջիններիս գաղտնագերծման բանալու փնտրտուքները տարբեր հայեցակարգերում և ուսմունքներում, գրավեցին ոչ միայն բազմաթիվ գրողների, լեզվաբանների և փիլիսոփաների ուշադրությունը, այլ հայտնվեցին նաև թարգմանիչների ուշադրության կենտրոնում, որոնք մինչ օրս ձգտում են համարժեքորեն վերստեղծել պատմվածքները թիրախ լեզուներում:

Գեղարվեստական թարգմանությունը եղել և մնում է յուրաքանչյուր ազգի, լեզվի կրողների, նրանց կենսակերպի, ավանդույթների, աշխարհայացքի, ներաշխարհի, ընդհանրապես մարդկային քաղաքակրթության և վերջինիս առանձնահատկությունների արտացոլման աղբյուր: Գեղարվեստական թարգմանությունը ոչ միայն սոցիալական և պատմամշակութային ահեղի դեր է կատարում, այլև առանց դրա առհասարակ անհնար է պատկերացնել ողջ քաղաքակրթությունը, միջազգային հաղորդակցությունը, որը հոգևոր արժեքների փոխանակման արդյունքում տարբեր ժողովուրդների մշակույթների փոխադարձ հարստացման աղբյուրն է: Գեղարվեստական թարգմանության հիմնական նպատակը որոշակի լեզվի կրողներին տվյալ հեղինակի ստեղծագործությունների, տվյալ ազգի մշակութային առանձնահատկությունների հետ ծանոթացնելն է²¹⁰:

²⁰⁹ Галинская И.Л. Загадки известных книг: Из истории мировой культуры. М.: Наука, 1986, с. 10-25

²¹⁰ Орлов, И. Б.: Советская повседневность: исторический и социологический аспекты становления: -М., Изд. дом Гос. Ун-та – Высшей школы экономики, 2008; с. 45-56

Հակադրվելով մյուս թարգմանության տեսակներին իր գեղարվեստական-գեղագիտական գործառնությամբ՝ գեղարվեստական թարգմանությունը թարգմանչին առաջադրում է խրթին խնդիրներ՝ պայմանավորված ոչ միայն լեզվական միավորների, ոճական միջոցների բնույթով, այլև տվյալ ստեղծագործության հերոսների բարդ հոգեբանական ներաշխարհով, անձնային առանձնահատկություններով: Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան Ջ.Դ.Մելինջերի «Ինը պատվածք» ժողովածուում ընդգրկված պատվածքների ("A Perfect Day for Bananafish", "Uncle Wiggily in Connecticut", "Just Before the War with the Eskimos", "The Laughing Man", "Down at the Dinghy", "For Esmé – with Love and Squalor", "Pretty Mouth and Green My Eyes", "De Daumier-Smith's Blue Period", "Teddy") գլխավոր հերոսների ներաշխարհն է և դրա վերստեղծումը թիրախ լեզուներում:

Յուրաքանչյուր թարգմանության հաջողվածությունն գնահատվում է թարգմանվածքի համարժեքության աստիճանով, իսկ գեղարվեստական ստեղծագործության թարգմանությամբ զբաղվող թարգմանչի խնդիրն է ստեղծել գեղագիտական-գեղարվեստական, իմաստային, շարահյուսական, ոճական, հնչյունային առումով բնագրին համարժեք տեքստային համակարգ: Համարժեքության ապահովման կարևորագույն և արդիական խնդիրներից է գեղարվեստական ստեղծագործության հերոսի հոգեբանության և ներաշխարհի ճիշտ վերստեղծումը: Գեղարվեստական ստեղծագործության կերպարը ստեղծվում է մի շարք ոճական և պատկերավոր միջոցների կիրառմամբ, այն միաժամանակ և ընդհանրացված, և կոնկրետ կերպար է, որը ստեղծվում է արտաքին տվյալների, հագուստի, դրանց հետ կապված այլ տարրերի, ինչպես նաև խոսքային առանձնահատկությունների, կերպարի մտքերի, զգացմունքների, զգացողությունների, նկարագրության միջոցով²¹¹:

Գեղարվեստական ստեղծագործություն թարգմանելիս թարգմանչի խնդիրն է ճշգրիտ վերլուծել գրական կերպարը, վերջինիս բնութագրող առանձնահատկությունները: Գեղարվեստական ստեղծագործության կերպարն անմիջականորեն և անքակտելիորեն կապված է տվյալ ստեղծագործության հեղինակի, վերջինիս կյանքի, անհատականության հետ, որը հաճախ որպես բանալի է ծառայում տվյալ ստեղծագործության, կերպարի առանձնահատկությունների բացահայտման, հոգեբանության,

²¹¹ Николаев А. И.: Основы литературоведения: учебное пособие для студентов филологических специальностей. – Иваново: ЛИСТОС, 2011. с. 21-30

մտածելակերպի վերլուծության և ստեղծագործության ամբողջական իմաստի, հեղինակային գաղափարական հայեցակարգի ըմբռնման համար: Իր հարցազրույցներից մեկի ժամանակ Ջ.Դ. Մելինջերը նշել է, որ գրականության մեջ տեղ չկա հեղինակի կյանքում տեղի ունեցող իրադարձությունների համար, հեղինակի ստեղծագործություններում արտացոլվում են միայն այն իրադարձությունները, որոնցում իսկապես դրսևորվում է տվյալ հեղինակի անհատականությունը²¹²: Անկասկած, հեղինակի անհատականության կնիքի շնորհիվ այս կամ այն ստեղծագործությունը դառնում է անկրկնելի և այդ առումով բացառիկ:

Տեսականորեն յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործություն իր ինքնանկարն է, ցանկացած կերպարում՝ ինքը՝ հեղինակը: Կարելի է պայմանականորեն ենթադրել, որ Ջ. Դ. Մելինջերի հերոսները հեղինակի արտացոլանքն են, սակայն Մելինջերը համաշխարհային գրականության այն հեղինակներից է, որոնք մինչ օրս շարունակում են «հանելուկ» մնալ ընթերցողների համար: Թերևս Մելինջերի՝ անձնային հատկանիշների, բնավորության գծերի մասին տվյալների սակավությամբ պայմանավորված՝ անհնար է իրականացնել վերջինիս ստեղծագործությունների այնպիսի բազմակողմանի վերլուծություն, որի արդյունքում ստեղծագործության գրական կերպարի մասին ամբողջական և ավարտուն պատկերացում կստեղծվի: Ընթերցողի՝ Մելինջերի մասին պատկերացումը ստեղծվում է միայն նրա կյանքի «ուրվագծերի» միջոցով: Եթե սելինջերյան ստեղծագործությունների հիմնական բնորոշիչ հատկանիշներից մեկը թերասությունն է, որը ստիպում է ընթերցողին իր պասիվ դերից դառնալ գործող կերպար, քանի որ վերջինս միշտ ստիպված է մտածել, վերլուծել, մտովի լրացնել սելինջերյան «խճանկարի» միտումնավոր բաց թողնված մասնիկները, ապա ստեղծագործությունների հերոսներին հիմնականում կարելի է բնութագրել որպես «թերի» կերպարներ, որոնց մասին բացի առանձին տարրերից գրեթե ոչինչ հայտնի չէ: Յուրաքանչյուր ընթերցող փորձում է ինքնուրույն գտնել ստեղծագործության բացակա տարրերը՝ հիմնվելով ստեղծագործության անհատական ընկալման, լեզվական պատկերի և մշակութային այլ գործոններով պայմանավորված առանձնահատկությունների վրա: Թերևս սա է պատճառը, որ սելինջերյան պատմվածքների մեկնաբանություններն այդքան տարբեր են և բազմաբնույթ:

²¹² <http://www.salinger.ru/id-ar-at-937/>

Գրական կերպարների ճշգրիտ և համարժեք վերստեղծման անհրաժեշտությունն առաջնային է ոչ միայն գեղարվեստական ստեղծագործության գաղափարական բաղադրիչների ամբողջականության և ավարտունության ապահովման, այլև հեղինակի յուրահատուկ անհատական գրական գրելաոճի ճշգրիտ փոխանցման համար, որն իր հերթին տվյալ հեղինակի «ձեռագիրն» է, պայմանավորված է մի շարք ազգային և պատմական գործառույթներով, բազմաթիվ թելերով կապված է հեղինակի աշխարհայացքի, նրա գեղագիտական ճաշակի, գրական դպրոցի և տվյալ դարաշրջանին բնորոշ առանձնահատկությունների հետ և, որպես կանոն, այս կամ այն չափով դրսևորվում է տվյալ հեղինակի բոլոր ստեղծագործություններում²¹³:

Թիրախ լեզվում գրական կերպարի վերստեղծումը ենթադրում է տվյալ ստեղծագործության հեղինակի կենսագրության, կյանքի բոլոր իրադարձությունների համակարգային, մանրակրկիտ ուսումնասիրություն, ինչպես նաև գրական կերպարի, նրա բնավորության, վարքագծի, մտքերի համընդհանուր վերլուծություն, հեղինակի և տվյալ գրական կերպարի զուգադրում, զուգահեռականների անցկացում հեղինակի և կերպարի միջև՝ ընդհանուր կողմերի բացահայտմամբ, տվյալ կերպարի ավելի հիմնավոր, խորը վերլուծություն տվյալ գեղարվեստական ստեղծագործության համատեքստում:

Ջ.Դ.Մելինջերի «Ինը պատմվածք» ժողովածուում ընդգրկված պատմվածքների կերպարների առանձնահատկությունների հիման վրա իրականացված բազմակողմանի ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ են տալիս ստեղծել սելինջերյան հերոսի որոշակի ընդհանուր մոդել: Հեղինակի ստեղծած կերպարներն, անկախ պատմվածքների բավական պարզ և հասկանալի շարադրանքից, չափազանց բարդ են: Մելինջերյան հերոսը, որը հաճախ երեխա է (ինչն այնուամենայնիվ թույլ չի տալիս Մելինջերին դասել «մանկական» գրողների շարքին), յուրօրինակ է, տարօրինակ և միայնակ՝ հակադրված ողջ աշխարհին իր հայացքներով, անմեղությամբ և ազնվությամբ: Այս կերպարը իրականության մասը չէ, նա օտարված է կյանքից, շրջակա աշխարհից և ապրում է իր մտացածին, երևակայական աշխարհում: Ջ. Դ. Մելինջերի հերոսը փխրուն հոգեբանություն և նուրբ, զգայուն հոգի ունի, հենց այս հատկանիշներն էլ

²¹³ Федоров А. В.: Основы общей теории перевода (Лингвистические проблемы): Москва, Издательский Дом “ФИЛОЛОГИЯ ТРИ”, 2002; с. 32

նրան առավել բացառիկ և ողբերգական են դարձնում: Այս հերոսն անօգնական է: Բանտարկված լինելով հուսահատության և անելանելիության ճիրաններում՝ նա անկարող է երես առ երես բախվել կյանքի դաժանության, այս աշխարհի արդեն ձևավորված նորմերի և դրվածքի, ընդմիջտ չհասկացված և բոլորից «տարբեր» լինելու մտքի հետ: Թեև սելինջերյան հերոսն անկարող է չընդդիմանալ շրջակա աշխարհին, փախուստն անհնարին է: Եթե մի դեպքում այս հերոսը, գիտակցաբար կամ ենթագիտակցաբար, հուսահատությունից դրդված փորձում է փախուստի դիմել՝ ապաստան գտնելով անցյալի ստվերներում, ապա մյուս դեպքում խուսափելով ներկայից՝ փրկություն է որոնում ապագայում: Օրինակ, «Հրաշալի օր բանանակեր ձկնիկի համար» պատմվածքի հերոս Սիմուրը, վերադառնալով պատերազմից, ապրում է այլ աշխարհում՝ հակադրելով իրեն իր կնոջ կերպարի հետ: Վերադառնալով տուն՝ ցնցված պատերազմի սարսափներից, իսկ հետագայում նաև կնոջ թեթևամիտ և անլուրջ վարքագծից, Սիմուրն անկարող է լինում շարունակել իր գոյությունը և վերջ է դնում իր կյանքին ինքնասպանությամբ: «Նավակում» պատմվածքի չափազանց զգայուն, փոքրիկ հերոսը՝ Լայոնելը, երկուսուկես տարեկանից պարբերաբար փախչում է տնից, մեկուսանում՝ խուսափելով մարդկանցից, իսկ «Օուռթաթ արջը» պատմվածքի փոքրիկ հերոսուհին՝ Ռամոնան, անուշադրության մատնվելով մոր կողմից, ապրում է իր մանկական, երևակայական աշխարհում՝ շարունակաբար հորինելով երևակայական ընկերներ՝ այսպիսով ընդօրինակելով մորը, որը չնայած ամուսնացած է և դուստր ունի, ապրում է անցյալով և իր՝ վաղուց մահացած սիրելի մասին հիշողություններով: Թեղդին՝ համանուն պատմվածքի հերոսը, չափազանց իմաստուն տղա է, որը կարողանում է կանխագուշակել ապագան: Գտնվելով շատերի ուշադրության կենտրոնում իր բացառիկ ունակությունների շնորհիվ՝ միևնույնն է՝ Թեղդին միայնակ է, և նրան ոչ ոք չի հասկանում, լինելով պայծառատես՝ բոլորի համար նա այդպես էլ մնում է երեխա: Գուշակելով իր իսկ մահը՝ Թեղդին ոչ մի քայլ չի ձեռնարկում մահից խուսափելու համար, ընդհակառակը՝ անում է ամեն ինչ, որպեսզի իրագործվի այն, «ինչ նախապես կանխորոշված է»:

Հավանաբար հենց այս ֆատալիստական տարրերի պատճառով է, որ շատ գրաքննադատներ մեկնաբանում են պատմվածքները՝ հիմնվելով հինդուիզմի սկզբունքների վրա:

Երեխաների կերպարները գերիշխում են Սելինջերի ստեղծագործություններում և հիմնականում առանցքային գործառույթ են կատարում

պատմվածքներում («Հրաշալի օր բանանակեր ձկնիկի համար» պատմվածքի փոքրիկ հերոսուհի՝ Սիբիլան, «Նավակում» պատմվածքի հերոս Լայոնելը, «Էսմեին սիրով և թշվառությամբ» պատմվածքի փոքրիկ հերոս Չարլզը, «Ծուռթաթ արջը» պատմվածքի հերոսուհի Ռամոնան, «Թեղդի» պատմվածքի հերոսներ տասնամյա Թեղդին և քույրը Պուպպին և այլն):

Ջ.Գ.Սելինջերի «Ինը պատմվածք» ժողովածուի գրեթե յուրաքանչյուր պատմվածքում արծարծվում է երեխայի՝ այդքան անկեղծ և փխրուն մանկական աշխարհից դաժան իրականության անցումը: Իրականությունը՝ մեծահասակների աշխարհն, ունի իր սահմանները, նորմերն ու կանոնները, որոնք ոչնչացնում են ամեն ինչ, հատկապես՝ անկեղծ երազանքներից և հույզերից կազմված մանկական աշխարհը: Երեխաները երջանկության աղբյուրն են և բանալին, սակայն պատմվածքներից յուրաքանչյուրում քննադատվում և դատապարտվում է այդ երեխաների շուրջ գոյություն ունեցող կործանված աշխարհը և դրա անբաժանելի մաս կազմող մեծահասակները, իրենց անտարբեր վարքն ու խարխլված արժեհամակարգը:

Վերոնջյալ եզրահանգումներն անուղղակի տեղեկատվության վերլուծության արդյունք են: Չնայած Ջ. Գ. Սելինջերի պատմվածքներում հերոսների ներաշխարհի մասին հիմնականում տեղեկություն ներկայացված չէ, այնուամենայնիվ վերջիններիս բնավորության մասին հնարավոր է դառնում պատկերացում կազմել համատեքստի, պատմվածքների ընդհանուր իմաստային, լեզվաբանական և գեղարվեստական միահյուսված տարրերի՝ տվյալ հերոսների խոսքային առանձնահատկությունների, վարքագծի, քայլերի, ընդհանուր երկխոսությունների հատկանիշների խորը, իմաստաբանական վերուծության միջոցով: Սակայն կարելի է արդյոք, հիմնվելով վերոնջյալի վրա, վստահությամբ պնդել, որ այս բոլոր կերպարներն արտացոլում են Սելինջերի անհատականությունը: Այս ամենը եղել և մնում է միայն ենթադրությունների մակարդակում: Սելինջերին, ում ողջ աշխարհում համարում են մարդ-հանելուկ, հաջողվել է ստեղծել իր նման յուրօրինակ, իրենց աշխարհում պարփակված, խորհրդավոր և առեղծվածային կերպարներ: Եթե համարենք, որ գրական վերլուծության միջոցով թարգմանչին այս կամ այն չափով հաջողվում է բացահայտել հեղինակի իմաստային և գաղափարական, գեղարվեստական մտահղացումը, ապա թարգմանության մակարդակում այլ հարց է առաջանում. ինչպե՞ս վերստեղծել հերոսի կերպարը՝ պահպանելով վերջինիս խորհրդա-

վորությունը, նրան բնորոշ առանձնահատկությունները՝ անհիմն չպարզեցնելով և հավելյալ կերպով չբարդացնելով ընդհանուր կերպարը, ինչն, իհարկե, թիրախ լեզվում ոչ միայն կխեղաթյուրի հերոսի կերպարը, այլև կաղավաղի ամբողջ ստեղծագործությունը, դրա գեղագիտական ազդեցությունը և հեղինակի անհատական ոճը:

Գրական կերպարը թարգմանության եզակի միավոր է, իսկ գրական կերպարի վերստեղծումը թիրախ լեզվում ենթադրում է աղբյուր տեքստում տվյալ կերպարի բոլոր առանձնահատկությունների պահպանում՝ տվյալ՝ Մելինջերի պատմվածքների դեպքում հիմնականում գրական հերոսների խոսքային առանձնահատկությունների, վարքագծի, ինչպես նաև ոճական տարրերի իմաստային վերուծության և փոխանցման միջոցով:

Խոսքային առանձնահատկությունների պահպանման համար թիրախ և աղբյուր լեզուների գերազանց իմացությունը բավարար չէ: Մելինջերի պատմվածքներում գերիշխում են երկխոսությունները երեխաների հետ: Մանկական խոսքն ինքնին ավելի է դժվարեցնում թարգմանչին առաջադրված խնդիրը՝ պայմանավորված աղբյուր լեզվում մանկական խոսքի առանձնահատկություններով, օրինաչափություններով և թարգմանչի՝ վերջիններիս չիմացությամբ: Արդյունքում բավական հաճախ մանկական խոսքը թիրախ լեզվում թարգմանվում է որպես «մեծահասակի» խոսք՝ մանկական խոսքին բնորոշ տարրերի չեզոքացմամբ: Այլ դեպքերում թարգմանչի՝ բնագրի անհատական ընկալմամբ պայմանավորված, այն թարգմանվում է մանկական խոսքի այնպիսի վառ արտահայտված երանգավորում ունեցող տարրերի միջոցով, որոնք խոչընդոտում են թիրախ լեզվում մանկական խոսքի համարժեք ազդեցության վերստեղծումը: Եթե մանկական խոսքի վերստեղծումը թիրախ լեզվում հիմնական գիտելիքներից բացի ենթադրում է նաև աղբյուր լեզվում մանկական խոսքի հնչյունային, լեզվական և շարահյուսական առանձնահատկությունների իմացություն, ապա հասուն կերպարների խոսքային առանձնահատկությունների թարգմանության համար անհրաժեշտ է որոշակի խոսքային առանձնահատկությունների իմացություն՝ պայմանավորված տվյալ երկրի, շրջանի, նահանգի, այդ վայրերում կիրառվող լեզուների (այդ թվում՝ բարբառաբանության, ժարգոնային, ծածկալեզվային բառերի և այլնի), անձի գենդերային, տարիքային, սոցիալական կարգավիճակի, կրթվածության և այլ յուրահատկություններով ու գործոններով:

Գեղարվեստական թարգմանության դեպքում ոճական առանձնահատկությունները չափազանց կարևոր դեր են խաղում հեղինակային հայեցակարգի տեսանկյունից, քանի որ արտահայտում են հեղինակի վերաբերմունքն ու գնահատականը տվյալ ստեղծագործության հերոսների նկատմամբ: Ցանկացած գրական կերպարի հետ կապված տեղեկատվության ճշգրիտ թարգմանությունն առանցքային է նախևառաջ թիրախ լեզվում բնագրի ոճական ազդեցության վերստեղծման համար: Լեզվական միավորների ոճական առանձնահատկությունների պահպանումը թիրախ լեզվում ենթադրում է նախևառաջ վերջիններիս ոճական գործառույթի բացահայտում, տեղեկատվական բովանդակության, իմաստային կառուցվածքի սահմանում: Գրական կերպարներին վառ երանգավորում հաղորդելու, վերջիններիս յուրօրինակության ու ընդհանուր պատկերավորության ապահովման, զգացմունքայնության ուժեղացման նպատակով կիրառված փոխաբերությունների, փոխանունությունների, համեմատությունների, կրկնությունների, բառախաղի, ակնարկների (այլուզիա), անձնավորման միջոցների, նորաբանությունների և այլ ոճական միջոցների կիրառումը դժվարեցնում է թարգմանչին առաջադրված խնդիրը: Թիրախ լեզվում ոճական միջոցների հիմնավորված և պատճառաբանված կիրառումը, ոճական առումով համարժեք տեքստի վերստեղծումը, ոճական պահանջների բավարարումը, խոսքի ճշգրտությունն ու արտահայտչականությունը ենթադրում են թարգմանչի աղբյուր և թիրախ լեզուների ոճական ռեսուրսների լիարժեք տիրապետում, ոճական նորմերի գերազանց իմացություն:

Մեղինջերի պատմվածքների գրական հերոսների առանձնահատկությունները, հեղինակի ողջ ստեղծագործական կյանքում դրսևորվող հեղինակային գրելաձևի անհատական յուրահատկությունը, պատմվածքների խորհրդավորությունն ու յուրօրինակությունը ոչ թե առանձին տարրեր են, այլև հատկանիշների փոխկապակցված և միահյուսված համակարգ, որը վերաբերում է ողջ ստեղծագործությանը: Մեղինջերի անհատական յուրահատկությունը իր լեզվական դրսևորումն է գտնում լեզվական մակարդակների համակարգում, որոնք իրենց բովանդակությամբ և փոխկապակցվածությամբ ստեղծում են մի անբաժանելի ամբողջություն, հեղինակային ոճի յուրօրինակության կրողներն են և դրանք հարկ է հնարավորինս համարժեք փոխանցել թիրախ լեզվում:

Չնայած այն հանգամանքին, որ տեքստի համարժեքության կարգը որոշակի չափով սուբյեկտիվ է և հարաբերական, այն հիմնվում է թարգմանչի անհատական ընկալման վրա, պայմանավորված է թարգմանչի անհատականությամբ, թարգմանչի լեզվական միջոցների ընտրությամբ, լեզուների և սոցիալ-մշակութային միջավայրերի տարբերություններով, բնագրի որոշակի «հրահրող» և այլ գործոններով, միևնույնն է՝ համարժեքության ապահովումը եղել և մնում է գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանության հիմնական և կարևորագույն խնդիրը²¹⁴:

Թիրախ լեզուներում Սելինջերի պատմվածքների հիմնական առանձնահատկությունների լիարժեք փոխանցումը հնարավոր է դառնում թարգմանչի ոչ միայն աղբյուր և թիրախ լեզուների համակարգային և կառուցվածքային յուրահատկությունների և համապատասխան մշակույթների գերազանց և կատարյալ իմացության և հաշվառման, գրական հերոսների ներաշխարհի, անձնային հոգեբանական առանձնահատկությունների հիմնարար և բազմակողմանի վերլուծության, այլև թարգմանչի հնարամտության և վարպետության շնորհիվ, որոնց օգնությամբ վերջինս լուծում է գտնում տարաբնույթ թարգմանական խնդիրների համար:

Лусине Хачатрян, Крстине Согибян

ВНУТРЕННИЙ МИР ГЛАВНЫХ ГЕРОЕВ РАССКАЗОВ "ДЕВЯТИ РАССКАЗОВ" ДЖ. Д. СЭЛИНДЖЕРА И ЕГО ВОССОЗДАНИЕ В ЯЗЫКАХ ПЕРЕВОДА

Объектом исследования данной статьи является внутренний мир главных героев рассказов, включенных в сборник "Девять рассказов" Дж. Д. Сэлинджера и особенности, проблемы и пути его адекватного воссоздания на языке перевода. В статье рассматриваются образы героев вышеупомянутых рассказов, предпринимается попытка путем всеобщего семантического, стилистического, психолингвистического, контекстуального анализа выявить их личностные, психологические особенности и их связь с индивидуальностью автора. В статье обсуждаются средства

²¹⁴ Федоров А. В.: Основы общей теории перевода (Лингвистические проблемы): Москва, Издательский Дом "ФИЛОЛОГИЯ ТРИ", 2002; с. 273-277

адекватного воссоздания художественных образов на языке перевода, обусловленных особенностями индивидуального стиля Сэлинджера, также рассматриваются другие проблемы перевода и возможные переводческие решения.

Lusine Khachatryan, Kristine Soghikyan

THE INNER WORLD OF CHARACTERS IN J.D. SALINGER'S "NINE STORIES" AND ITS REPRESENTATION IN TARGET LANGUAGES

The object of this article is the inner world of the main characters of stories by Salinger included in his "Nine stories" collection, as well as features, problems and ways of adequately rendering it in target languages. The article explores the characters of the abovementioned stories; an attempt is made to reveal their personality, psychological characteristics and their relationship with the author's personality by universal semantic, stylistic, psycholinguistic and contextual analysis. The article discusses the means of equivalent representation of literary characters in TLs conditioned by the peculiarities of J. D. Salinger's individual style; the article also studies other issues of translation and possible solutions, selected by translators.

ԿԻՆ-ՏՂԱՄԱՐԴ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՂԵԼԸ ՕԼԴԻՆԳՏՈՆԻ ՎԵՊԵՐՈՒՄ

Հիմնաբառեր՝ Օլդինգտոն, «Բոլոր մարդիկ թշնամիներ են», կին-տղամարդ փոխհարաբերություն, ամուսին-կին-սիրուհի մոդել

Կին-տղամարդ փոխհարաբերության մոդելը զգալի տեղ ու նշանակություն ունի Օլդինգտոնի վեպերում, ուստի մենք փորձ ենք անում քննելու վերոնշյալ մոդելը՝ վեր հանելով վերջինիս առանձնահատկություններն ու այլազան կողմերը՝ միտում ունենալով պատկերել այդ բարդ ժամանակահատվածում կնոջ և տղամարդու դերը միմյանց կյանքում, դրանց դրսևորումները, հերոսների՝ կեսին գտնելու հոգևոր փնտրտուքը, սիրո գործառույթը, մարմնավոր կապի, սեռական պրոբլեմի առկայությունն ու դրանց դրսևորումները:

Միրային հարաբերությունների, հակասեռի տարատեսակ փոխհարաբերության շրջանակում առանձնանում է սիրո եռանկյունու դասական մոդելը տղամարդ-կին-սիրուհի տարբերակով, որն, իհարկե, բազմաթիվ փոփոխությունների ու առանձնահատկությունների արդյունքում համալրվում է՝ վերածվելով քառանկյունու կամ, երբեմն նույնիսկ՝ հնգանկյուն սեր-հարաբերության:

Քննվելիք բոլոր վեպերում էլ («Շերոսի մահը», «Բոլոր մարդիկ թշնամիներ են», «Գնդապետի աղջիկը», «Իրական դրախտ») ամուսին-կին-սիրուհի (Ջորջ-Էլիզաբեթ-Ֆաննի, Տոնի-Մարգրետ-Կատերինա), կին-ամուսին-սիրելեան (Էլիզաբեթ-Ջորջ-Ռեդջի, Մարգրետ-Տոնի-Հարոլդ), տղամարդ-սիրելի-սիրուհի (Քրիս-Աննա-Գվեն, Մարտա), կին-սիրելի-սիրելեաներ (Ջորջի-Ջոֆրի-Քարինգթոն, Փերֆլիթ), տղամարդ-սիրուհի-սիրուհի (Ջոֆրի-Ջորջի-Մարջի) մոդելը հստակ չի ուրվագծվում՝ հաճախ ենթարկվելով դերային որոշակի փոփոխությունների:

Կին-տղամարդ փոխհարաբերությունը վեպերում զարգացման մի քանի ընթացք է ունենում՝ հաճախ համընկնելով ժամանակային այնպիսի շրջանակների, ինչպիսիք պատերազմին նախորդող, համընկնող և հաջորդող փուլերն են: Գրողը, ժամանակային անցումներով ներկայացնում է կին-տղամարդ հարաբերության մոդելը, միաժամանակ պատկերում հարաբերությունների, հոգեկերտվածքի, ընկալումների փոփոխման ընթացքը:

Թվացյալ սեր. կինը որպես միջոց Նախապատերազմյան շրջանում զգացմունքը հոգևորի տարածքում էր՝ ձգտելով անհասի նվաճման, պատերազմական շրջանում²¹⁵ մարմնական մերձեցման, իսկ ետպատերազմյան շրջանում՝ օտարացման:

1. Տոնին Մարգրետի մեջ իր առաջին սիրուն՝ Էվելինին է տեսնում, Մարգրետի միջոցով Տոնին չկայացած սիրո վերհուշն է ապրում ու այս անգամ փորձում է կայացման տանել, լիարժեքանալ կնոջ միջոցով: Մարգրետի հետ հարաբերություններում իր բուռն ձգտումը «վերածնվել այլ էակի մեջ, ամբողջովին ապրել նրա մեջ և նրա միջոցով»²¹⁶, ձախողվեց: Մարգրետը զուտ միջոց է դառնում այս կամ այն իրավիճակներում և դա շարունակական բնույթ է կրում: Սիրո օբյեկտ հասկացությունը բացակայում է: Տոնին ոչ թե սիրում է օբյեկտին, այլ այն զգացմունքը, որը ներդնում է տվյալ օբյեկտի մեջ. *«Նա կին չէր գրկում, այլ սեր, ոչ թե հիասքանչ մարմին, այլ իդեալական կիրք»*²¹⁷:

2. Պատերազմի ընթացքում էլ, փաստորեն, Մարգրետը միջոց է դառնում դիմակայման, մարմնական մերձեցման, ֆիզիկական գոյության իմաստով, որովհետև միայն հոգևորը, որ Տոնին զգում էր Կատայի հանդեպ, բավական չէր: Սպասվածի նվաճումը, իրենց հարաբերության զարգացումը այդ իսկ հարաբերությունը տանում է ավարտի. Մարգրետն իր կողքին է, բայց իր մեջ չի կարողացել հասունանալ այնքան, որ մոռացնել տա Կատային. *«Մարգրետն ուզում է ամուսնանալ ինձ հետ...., բայց ես չեմ պատրաստվում ամուսնանալ, համենայնդեպս, քանի դեռ քեզ գտնելու թեկուզ չնչին հույս ունեմ* (Կատային ուղղված նամակում է գրում- Մ.Մ.)»²¹⁸: Հետաքրքրական է, որ Կատայի «անիրական» գոյությունն անգամ արժեգրվում է իր և Մարգրետի հարաբերությունը ու հատկապես, երբ սեփական դերի անկարևորության գիտակցումը կա կնոջ կյանքում. *«Մարգրետը յուրովի սիրում է ինձ, բայց նրա իրական շարժառիթն այլ է՝ նրան թվում է, որ ոչ ոք այլժմ չի ցանկանա իր հետ ամուսնանալ և այդ պատճառով ես պետք է քավեմ իմ մեղքը»*²¹⁹, այսինքն՝ Տոնին էլ ինքնըստինքյան Մարգրետի համար է միջոց դառնում:

²¹⁵ Բուն պատերազմի նկարագրությունը վեպում բացակայում է, այս մասին տեղեկանում ենք հերոսի մտորումներից:

²¹⁶ Aldington R., All men are enemies, Rome, The Albatross MDCCCL, 1950, p. 72.

²¹⁷ Նույն տեղում, էջ 75:

²¹⁸ Նույն էջում:

²¹⁹ Նույն էջում:

3. Արդյունքում՝ Կատայի կորստի հետ մտովի կամ ստիպողաբար հաշտեցումը Տոնիին «մոտեցնում» է Մարգրետին: Այսինքն՝ Տոնիին չմտածված ամուսնության է դրդում ետպատերազմյան հուսալքությունն ու միայնությունը, նա Մարգրետին ընտրում է, որպեսզի փարատի միայնությունը, ընտրում է, որովհետև Կատային չի գտնում: Եթե Ջորջն ու Էլիզաբեթը մինչ այդ քայլը քննարկում էին ամեն բան, ապա այս դեպքում քայլը միտված է Մարգրետի «բարոյական ընկալումների» բավարարմանն ու Տոնիի միայնության փարատմանը: Արդյունքում հանդիպում ենք նույն մոդելին, որն առաջին գույգի դեպքում առկա էր, մեկ տարբերությամբ միայն՝ Ջորջ-Էլիզաբեթ գույգը կանխավ պայմանավորվածությամբ է դիմում հարաբերության ցանկացած փոփոխության (թե՛ սեռական, թե՛ հոգևոր), իսկ Տոնի-Մարգրետ միության խզումը ինքնաբերաբար է լինում: Տոնին ևս, ինչպես Ջորջը, հասկանում է «ազատության», «ազատ սիրո» արհեստականությունը:

Իրական սիրո մոտիվը. սերը որպես փրկողակ

Սերը որպես կորուսյալ սերնդի փրկչական գործառույթ ներկայացնելով՝ հեղինակը հաջողում է մասնավորապես Տոնի-Կատերինա գույգի պարագայում, որովհետև սերը, որ գուրկ էր ցինիզմից, էգոիզմից, որը միտված է մյուսին երջանկացնելու, փոխարկվելու, առկա է միայն այս գույգի դեպքում: Կատերինան այն կինն է, որը ժամանակային 3 շրջափուլում (Նախապատերազմյան, պատերազմյան ու ետպատերազմյան) հերոսի կողքին է ֆիզիկապես կողքին չլինելով հանդերձ: Ընդամենը մի քանի օրվա մեջ ծնված սերը պատերազմի ողջ ընթացքում հերոսի ներշնչումն է դառնում. Կատայի՝ մտացածին ներկայությունն ավելի ուժգին է, քան Մարգրետի ֆիզիկական ներկայությունը Տոնիի կյանքում: Նա ընդունում է Կատային՝ անտեսելով անգամ մարմնավաճառության փաստը, շարունակվելու անհնարինությունը: Գրականագետներն այս առումով, իհարկե, տարակարծիք են՝ հիմնականում այնքան էլ համոզիչ չհամարելով սիրո այս պատմությունը: Տ. Խմելնիցկայան իրականության և իդեալի խզում է տեսնում սիրո այս պատմության մեջ՝ հատկապես հաշվի առնելով, որ Տոնիին հանուն այդ սիրո փորձում է փախչել կապիտալիստական հասարակարգից, իսկ դա անհնար էր, որովհետև դա էր ներկան. «Այդուհանդերձ կղզու այս սիրային իդիլիան կեղծ և անհամոզիչ ստացվեց հենց այն պատճառով, որ սա ոչ միայն պատերազմից հալածված, հոգնած հերոսի գեղեցկության և մաքրության քաղցի զգացումների արտահայտությունն էր, այլև բոլոր դժբախտություններից, կապիտալիստական աշխարհի հակասություններից ու անարդարություններից փրկության ծրագրային

դեղատոմս»²²⁰: Իսրայի կարծիքով էլ. «Մերը գունատվում է, զրկվում խորքայնությունից ու պայծառությունից, սիրո տեսարանները դառնում են քաղցր-մեղր, կորցնում են իրենց խորաթափանց քնարականությունը»²²¹:

Ամփոփելով վերոասվածը տեսնում ենք, որ կին-տղամարդ փոխհարաբերության մոդելը, մասնավորապես Տոնի-Մարգրետ-Կատերինա օրինակով, անպայմանորեն ներառում է ամուսին-կին-սիրուհի եռանկյունին, ինչն էլ վկայում է հերոսների հոգեբանական խզումների, ներքին չհասկացվածության, միմյանց կողմից չհասկացվածության, սեռական պրոբլեմի հաղթահարման անկարողության մասին, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են պրոբլեմների մի նոր շարան՝ տղամարդը և կինը միմյանց համար վերածվում են միջոց-սուբյեկտի՝ առաջադրելով հարաբերման նոր ձևաչափեր՝ ետ մղելով ամուսնական ինստիտուտը, սերը, որը միայն մի դեպքում է դառնում փրկողակ:

Мариам Сирунян

МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ МУЖЧИНЫ И ЖЕНЩИНЫ В РОМАНАХ ОЛДИГТОНА

В статье представлена одна из типичных для романов Олдингтона моделей взаимоотношений мужчины и женщины: треугольник муж – жена – любовница (Тони-Маргарет-Катерина) в романе «Все люди - враги». Анализируется авторская позиция в ряде проблем: роль мужчины и женщины в жизни друг друга в довоенные, военные и послевоенные годы, функции любви, поиск любимого, институт брака, проявления физической и духовной любви.

Mariam Sirunyan

MAN-WOMAN RELATIONSHIP MODEL IN ALDINGTON'S NOVELS

The article discusses relationship models typical for Richard Aldington's novels: husband - wife – mistress triangle (Tony-Margaret-Katrin) in the novel "All Men are Enemies". The article reveals Aldington's attitude towards a number of issues: the role of men and women in each other's life in the pre-war, war and post-war years, the function of love, the search for the beloved, the institution of marriage, the manifestation of physical and spiritual love.

²²⁰ Хмельницкая Т. Все люди враги, Лит. современник, 1937. N 10. стр. 184.

²²¹ Исбах А., Р. Олдингтон, Октябрь, 1939, N 8-9, стр. 290.

ՀՈՌԵՏԵՍԱԿԱՆ ՏՐԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՅՆԱՅՈՒՄԸ

Հ.ՄԻԼԵՐԻ «ԽԵՑՂԵՏՆԻ ԱՐԵՎԱՂԱՐՁԸ» ՎԵՂՈՒՄ

Հինաբառեր՝ Հ.Միլլեր, «Խեցղետնի արեվադարձը» հոռետեսական տրամադրություններ, ներակա/արտակա ձևեր

Այսօր հոռետեսական հայացքներ ունենալը կամ նույնիսկ հոռետեսական մոտեցումներ ցուցաբերելը թե՛ կյանքի, թե՛ առհասարակ որևէ երևույթի նկատմամբ ոչ քննադատության և ոչ էլ զարմանքի առարկա չի կարող լինել: Առաջին հայացքից հոռետեսությունը կարող է բնութագրվել կա՛մ որպես հոգեկան խանգարումների արդյունք և ժամանակավոր հոգեվիճակ, կա՛մ էլ ուղղակի տվյալ անհատին հատուկ բնավորության առավել ընդգծված հատկանիշ: Սակայն միանգամայն այլ է հոռետեսության մեկնաբանությունը փիլիսոփայության տեսանկյունից: Այստեղ հոռետեսությունը ներկայացվում է որպես աշխարհայացք, որպես միջոց՝ աշխարհը հակալավատեսական (*antioptimistic*)՝ այն է վատատեսական (*pessimistic*) տեսանկյունից դիտարկելու համար:²²² Մինչդեռ հոռետեսություն (*pessimus*) եզրը լատիներենից թարգմանաբար նշանակում է վատագույնը:

Ամերիկացի հոգեբան Մ.Ջելիգմանը եկել է այն եզրակացության, որ այն բառերը և/կամ բառային միավորները, որոնք մենք օգտագործում ենք մեր առօրյա կյանքում երևույթներն ու մարդկանց նկարագրելու համար, կարող են վկայել մեր լավատեսական կամ հոռետեսական վերաբերմունքի մասին: Նա առաջ է քաշել բացատրական ոճ (*explanatory style*) հասկացությունը, որն անմիջականորեն վերաբերում է մարդու՝ կյանքում զբաղեցրած տեղին և դերին, ինչպես նաև նրա հետ կատարվող երևույթներին ու գործողություններին որևէ գնահատական տալուն:²²³ Հետևաբար, Մ.Ջելիգմանի կողմից առաջ քաշված բացատրական ոճի շրջանակներում գնահատողական բառային միջոցների օգտագործմամբ բնութագրվում է մարդու կողմից իրականությանը տրվող դրական կամ բացասական արձագանքը:

Տարբեր դարաշրջաններում բազմաթիվ փիլիսոփաներ և մտածողներ իրենց հատուկ բնորոշումն են տվել հոռետեսությանն ու հոռետեսական

²²² Cartwright David. History dictionary of Schopenhauer's philosophy. 2005

²²³ Зелигман М.Э.П. Как научиться оптимизму: советы на каждый день. М. 1997

ընկալումներին: Հատկապես ուշագրավ են նրանց վատատեսական պատկերացումներն ու արտահայտությունները թերևս այնպիսի անփոխարինելի և անդադնալի արժեքների վերաբերյալ, ինչպիսիք են կյանքը, ժամանակը, պատմությունը, մարդկությունը և այլն: Առավել աչքի ընկնող հոռետեսական արտահայտություններից են «*Ժամանակը բեռ է*», «*Պատմության ընթացքը ծաղրանք է*», «*Ազատությունն ու երջանկությունը անհամատեղելի են*», և ի վերջո «*Մարդկության գոյությունը իսկական զառանցանք է*»:²²⁴ Մի թե Ն.Միլլերը հենց այս մտածողներով էր ոգեշնչված, երբ հակասության մեջ էր դնում «երջանկություն» և «ազատություն» գաղափարները: Լինելով այուրեակալիստ՝ Միլլերը փորձում էր լուծել ցանկությունների աշխարհի և իրականության հակասությունները, սակայն միշտ և միայն անկումային տրամադրությունների ֆոնին: Ուստի սեփական փորձի պրոյեկցիան վեպի գլխավոր հերոսի միջոցով իրացվում է ազատության, դատարկության, արքուրդի հասնող իրականության պատկերների և նկարագրական արտահայտությունների եզակի ընտրությամբ:

Յուրաքանչյուր արտահայտություն կոնկրետ իրավիճակում իմաստային և իրավիճակային տեղեկատվության փոխհարաբերությունների արդյունք է:²²⁵ Այսինքն՝ ցանկացած տողատակ ապակոդավորելու համար հարկ է հաշվի առնել այն իրավիճակը, որտեղ հեղինակը քեզ ազատ է թողնում «սավառնել» իր ստեղծագործության «թաքստոցներում»: Հեղինակը միշտ չէ, որ բացահայտորեն մատուցում է ուղերձը: Երբեմն ընթերցողից հավելյալ ջանքեր են պահանջվում այս կամ այն նախադասությունը, երբեմն էլ մինչև անգամ մի ամբողջ գլուխ վերծանելու համար:

Ն. Միլլերի կողմից հոռետեսական տրամադրություններն առավել ցայտուն արտահայտելու միջոցներից է ներակա և արտակա ձևերի կիրառումը: Արտակա կերպով արտահայտված տեղեկատվությունը հստակ է, զերծ երկիմաստությունից, մինչդեռ ներակա ձևով արտահայտված հաղորդագրությունը կրում է բազմիմաստություն, հետևաբար առաջ է գալիս տողատակային մեկնաբանության անհրաժեշտություն:²²⁶

²²⁴ Dienstag Joshua. Pessimism: Philosophy, Ethic, Spirit, Princeton UP, Feb 17, 2009

²²⁵ www.perevodovedcheskiy.academic.ru

²²⁶ Кобозева И.М. Интенциональный и когнитивный аспекты смысла высказывания. М., 2003

Տեքստում հեղինակը մշակում է կողային ազդանշանի հատուկ միջոց, որպեսզի ներկայացնի տեղեկատվության որոշակի մաս, մինչդեռ ընդունողը հանձն է առնում ապակողավորել այդ կողային ազդանշանը:

*I am a **free** man -- and I need my **freedom**. I need to be **alone**. I need to **ponder my shame and my despair in seclusion**; I need the **sunshine** and the **paving stones of the streets without companions, without conversation, face to face with myself, with only the music of my heart for company**. What do you want of me? When I have something to say, I put it in print. When I have something to give, I give it. Your prying **curiosity** turns my stomach! Your **compliments** humiliate me! Your tea **poisons** me! I **owe nothing** to anyone. I would be **responsible to God alone -- if He existed!**²²⁷*

Միլլերի հերոսը հակադրում է ազատության և կախյալության, միայնության և ուղեկցորդի ներկայության, ճգնավորի և ընկերակցողի հասկացությունները: Թեև այս հայտարարությունը թվացյալ կերպով փաստում է նրա կողմից միայնության և անկախության օգտին տրված քվեն, ակնհայտ է, որ սա միայնության մեջ ճգնող հոգու հուսահատ ճիչն է, հոգու, որը լիարժեք մենության է դատապարտված, քանզի չի ընդունում նաև Աստծո գոյությունը: Բողոք, ըմբոստություն, անհանդուրժողականություն, Աստծո գոյության հանդեպ ըղձականություն, որն անմիջապես հերքվում է սթափ և հռետես իրապաշտությամբ (*I owe nothing to anyone. I would be responsible to God alone -- if He existed!*):

Ասել, թե բախվում ենք բացարձակ հռետեսության հետ, սխալ մեկնաբանություն կլինի, քանզի *free, freedom* բառերը զերծ են բացասական գնահատողականությունից, սակայն հաջորդող *alone* բառը արտացոլում է հեղինակի ներքին խռովքը, ընդգծում է նրա հոգու վայրիվերումները, որի առավել ցայտուն բացատրությունը տրվում է *ponder my shame and my despair in seclusion* արտահայտությամբ:

Հեղինակի համար ազատությունն անձնական արատների, ամոթի և հուսահատության զգացմունքների ճանաչողական մշակման հարթակն է: Եվ այդ ազատությունը լիարժեք է, երբ իրեն ոչ ոք չի խանգարում, երբ նա մենակ է: Հետևաբար, ազատությունը միայնությունն է, այլոց կողմից միջամտության բացառումը:

Նույն համատեքստում *sunshine* և *streets* բառերի ներակա իմաստն արդեն կրում է լավատեսական երանգավորում, այն է պայծառության,

²²⁷ Miller Henry. “Tropic of Cancer”, New York, Grove Press, 1961. P. 34 (հաջորդիվ՝ մեջբերումները նույն հրատարակությունից են)

ջերմության, ազատության, բազմամարդության («փողոց» բառը ենթադրում է ազատության մեջ գտնվելը, մարդկանցով շրջապատված լինելը) գաղափարը: Սակայն հեղինակի խաբկանքային լավատեսությանն անմիջապես հետևում է արտակա կերպով շեշտադրված, ակնհայտորեն արտահայտված հոռետեսական վերաբերմունքը, նույնիսկ չարությունը՝ ուղղված դեպի մարդկությունը, մարդատյացությունը (*without companions, without conversation, face to face with myself, only the music of my heart for company*): Եվ հենց այս մարդատյացությունն է նրա ազատության գրավականը: Ուստի, ակնհայտ է, որ նրա ազատությունը հոռետեսական է, միննույն ժամանակ՝ ազատագրող և հավանաբար նաև դեպի լավատեսություն տանող ճանապարհ:

Վերոնշյալ հատվածից վերցրած *What do you want of me? When I have something to say, I put it in print. When I have something to give, I give it* նախադասություններից երևում է հեղինակի պատրաստակամությունը ինչ-որ բան տալու, ինչ-որ բան ասելու համար: Սակայն ո՞ւմ է ուղղված այս հաղորդագրությունը, մի թե՛ Միլլերն այդքան «առատաձեռն» է: Դե իհարկե՛ ոչ, Միլլերը չէր կարող այդքան առատաձեռն ու գթասիրտ լինել, դա նրան հատուկ չէր: Նրան հատուկ չէր նաև հանդուրժող և լավատես լինել հետաքրքրասիրության և հաճոյախոսությունների հանդեպ, որոնց վերջակետը դրվում է *I owe nothing to anyone* և *I would be responsible to God alone – if He existed!* արտահայտություններով:

Թվում է, թե Հ.Միլլերի հերոսը տենչում է մենության, միայնության գրեթե ամեն վայրկյան, սակայն այս «մոլուցքը» պայմանավորված է թե՛ սեռական կյանքում և թե՛ հոգեպես չբավարարված տղամարդու փնտրտուքներով:

It is not difficult to be alone if you are poor and a failure. An artist is always alone -- if he is an artist. No, what the artist needs is loneliness. The artist, I call myself. So be it. (34)

Ո՞վ է ի վերջո այս հերոսը, ո՞վ է հենց ինքը՝ Միլլերը: Նա այն արվեստագետն է, որի տիտղոսին հենց ինքն է իրեն առաջադրել և ձեռնադրել, արվեստագետ, որի կյանքի անբաժան մասն են կազմում տառապանքը, չբավորությունը, վայրէջքներն ու ձախողումները, արվեստագետ, որն այդ ամենից թերևս ուժասպառ, բայց և ոտքի վրա դիմակայում է կյանքի պատրաստած նորանոր փորձություններին: Բազմաթիվ դժվարությունների միջով անցած գրողի վրա կյանքը չէր կարող իր ճակատագրական կնիքը չդնել և չպարուրել հոռետեսական հայացքներով:

Եթե առաջին օրինակում Միլլերը համադրում էր «ազատության» և «միայնության» գաղափարները (*free, freedom-alone*), ապա այստեղ արվեստագետի միայնությունն անմիջականորեն առնչվում է «աղքատության» և «անհաջողության» (*poor and a failure*) հետ: Օրինակում արտահայտված պատճառահետևանքային կապը պատահական չէ (*poor, failure-alone-artist-loneliness-myself*). հեղինակը կարծես թե արդարանում է միայնությանն այդքան մեծ տուրք տալու համար, միայնության քաղց և տենչ, որը բերում է հոռետեսության և անհանդուրժողականության:

It seems wherever I go there is drama. People are like lice -- they get under your skin and bury themselves there. You scratch and scratch until the blood comes, but you can't get permanently deloused. Everywhere I go people are making a mess of their lives. Everyone has his private tragedy. It's in the blood now -- misfortune, ennui, grief, suicide. The atmosphere is saturated with disaster, frustration, futility. Scratch and scratch -- until there's no skin left. However, the effect upon me is exhilarating. Instead of being discouraged, or depressed, I enjoy it. I am crying for more and more disasters, for bigger calamities, for grander failures. I want the whole world to be out of whack; I want everyone to scratch himself to death. (6)

Վերոբերյալ հատվածում ներկայացվում է հոռետեսի և հոգեկան տառապանքի մագոխիստական հաճույքը: Հետաքրքրական է նաև հենց հոգեկան տառապանքի նկարագրությունը ֆիզիկական տհաճ զգացողությունների փոխանցման միջոցով: Խոսքի ինչպիսի վարպետություն և մտքի ինչպիսի թռիչք պետք է ունենալ, մարդկության գոյությունից որքան մեծ հիասթափություն պետք է ապրած լինել, որպեսզի աշխարհում տիրող քաոսի, ողբերգության, անհաջողության և վայրագության պատճառը լինելուց հաճույք ստանալ, ավելին՝ բարձրաձայնել դրա մասին: Սարսափ է առաջացնում «Միլլեր հեղինակի» և «Միլլեր հերոսի» ընտրած լեզուն, բառապաշարը, որտեղ ցանկացած հոգեվիճակ՝ լինի դա ուրախություն, բավարարվածություն, թե հիասթափություն, աստիճանաբար տանում է ոչնչացման:

Օր.՝ *disaster-frustration-futility; tragedy-misfortune-ennui-grief-suicide* բառաշարքերի աստիճանական հանգուցալուծումը տրվում է 'death' (մահ) բառով: Այս բառերից յուրաքանչյուրն արդեն իր մեջ ներակա իմաստով պարունակում է հոռետեսական երանգավորում, և այստեղ արդեն հեղինակը սկսում է խաղալ ընթերցողի հուզական, հոգեկան աշխարհների հետ: Ընթերցողն ինքն է ամբողջովին պատասխանատու իր ընկալումների, մեկնաբանությունների, եզրակացությունների համար:

Ինչպես ասում են՝ ցանկացած սկիզբ ունի իր տրամաբանական (երբեմն էլ ոչ տրամաբանական) ավարտը, ցանկացած վախճան

ենթադրում է մի նոր բանի սկիզբ, սակայն Միլլերի վեպում մի ողբերգության ավարտը ծնունդ է տալիս մեկ այլ ողբերգության: Ներակա ձևով արտահայտված միլլերյան հոռետեսությունը հանդիպում է նաև կրկնություններով կառուցված նախադասություններում:

Օրինակ՝ *Picking up a book in the red bedroom and the cane chair uncomfortable; tired of sitting on my ass all day long, tired of red wallpaper, tired of seeing so many people jabbering away about nothing.* (17)

His hair is made of straw. His ideas are straw. His wife too is straw, though still a little damp. The whole house is made of straw. (27)

Հիասթափության և հոռետեսության ողջ զգացողությունը փոխանցվում է մի շարք բառային միավորների միջոցով՝ հաղորդելով արտաքին իրականությունից ընդհանուր դժգոհությունը՝ որպես տհաճության և հոռետեսության նախապայման: *Tired* բայը շեշտադրելով՝ Միլլերն արտահայտում է ոչ թե բառի ուղիղ թարգմանական իմաստը, այլև առավել վառ կերպով ընդգծում է իր «զգված, հիասթափված, մինչև կոկորդը կուշտ լինելը»:

We stand on five minutes and devour centuries. (5)

Ժամանակի վերաբերյալ բացասականորեն արտահայտված վերաբերմունքի դրսևորումը (*devour centuries*) վկայում է հեղինակի մշտապես անհագ լինելու մասին, երբ վայրկյանը տարի է թվում, իսկ բուպեն՝ մի դար: Նույնիսկ մեր կարճաժամկետ կյանքի ընթացքում հասցնում ենք «խժռել» մի ամբողջ հավերժություն:

Ինչ վերաբերում է արտակա կերպով արտահայտված հոռետեսությանը, թերևս ամենատարածված ձևերից է *no, not* ժխտական մասնիկներով, ինչպես նաև *without* շաղկապող բառով կազմված նախադասությունները, որտեղ հեղինակն անմիջապես ընթերցողին է փոխանցում հոռետեսության, վատագույնի գոյության, լինել-չլինելու պարադոքսալ տեղեկատվություն:

Օրինակ՝ *For a hundred years or more the world, our world, has been dying. And not one man, in these last hundred years or so, has been crazy enough to put a bomb up the asshole of creation and set it off. The world is rotting away, dying piecemeal. But it needs to be blown to smithereens. Not one of us is intact, and yet we have in us all the continents and the seas between the continents and the birds of the air.* (14)

Այս հատվածը վկայում է արդարության ձգտող, բայցև մշտապես անհաջողությունների հետ բախվող մարդու մասին, որը, կամա թե ակամա, դառնում է դարի գերին, ժամանակաշրջանի գոհը, շինծու կենսակերպի հետ ստիպողաբար համակերպվող մի շնչավոր կենդանի, որի երևակայության «անսահման» սահմանները դժոխք են դարձնում

վերջինիս կյանքը: Աշխարհը քայքայվում է, փտում է, վերածվում է փլատակների, իսկ մարդիկ ոչինչ չեն անում՝ այն հիմնովին հողին հավասարեցնելու համար: Քայքայելով աշխարհը՝ քայքայում ենք ինքներս մեզ՝ լինելով հենց այդ աշխարհի հյուլեն:

*Coffee **without** milk or sugar. Bread **without** butter. Meat **without** gravy or no meat at all. **Without** this and **without** that!* (6)

Հոռետեսական տրամադրության առաջացման պատճառներից մեկն էլ զրկանքների մեջ լինելն է: Զրկանք, որը բերում է հարատև ընտրության կենսական կարևորություն ունեցող բաների միջև: Ընտրություն, որը հնարավորություն չի տալիս լիարժեք ապրել, դե իսկ ոչ լիարժեքությունն է հենց ծնում միլլերյան հոռետեսությունը: Թվում է, թե բացասական վերաբերմունքը հատուկ է միայն դատարկ ստամոքսը լցնելու ցանկությունից տոգորված սոված տղամարդուն, որի մտքի թռիչքն ու վառ երևակայությունը նրան տանում են դեպի անհասանելին:

*I **wouldn't** have minded so much if there weren't always coffee grounds in my beret and garbage on the floor, to say **nothing** of the cold cream jars and the greasy towels and the sink always stopped up.* (7)

*There is **no** escape. The weather will **not** change. I have **no** money, **no** resources, **no** hopes.* (7)

Վերոնշյալ օրինակներում *without* և *no* բառերի ընտրությունը ոչ միայն արտակա ձևով է նպաստում հոռետեսական գնահատողականության արտահայտմանը, այլ նաև վերջինիս շեշտադրված կրկնությունը առավել ցայտուն կերպով է ներկայացնում ամեն ինչում միայն վատը տեսնող հեղինակ/հերոսին: Ինչպես ասում են՝ տեղում դոփելն արդեն իսկ հետընթաց է, այսինքն՝ միօրինակությունն ու երբեք չփոփոզվող իրականությունը չէին կարող չբերել անխուսափելի հոռետեսության:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Միլլերի մոտ հոռետեսական տրամադրությունների առաջացման պատճառներն են միայնությունը, ազատության և բացարձակության հասնելու տենչը, մարդաստացությունը և հիասթափությունը, որոնք արտահայտվում են ինչպես ներակա, այնպես էլ արտակա ձևերով՝ մի շարք բառային արտահայտությունների միջոցով: Հեղինակն առավել հաճախ դիմում է հակադրությունների, հարատև ընտրության՝ իր հոռետեսական հայացքներն ավելի ակնհայտ կերպով ներկայացնելու համար:

Kristine Soghikyan, Alina Petrossian

**VERBALIZATION OF PESSIMISTIC ATTITUDES IN H. MILLER'S
"TROPIC OF CANCER".**

The current article studies the verbalization means of pessimistic attitudes in H. Miller's novel. It defines pessimism from the point of view of different philosophers as well as psychologists and tries to explicate the reasons and causes of Miller's pessimism. The author mostly turned to implicit/explicit modes and contradictions for expressing his pessimistic mood in the novel.

Кристине Согибян, Алина Петросян

**ВЕРБАЛИЗАЦИЯ ПЕССИМИСТИЧЕСКИХ НАСТРОЕНИЙ В
НОВЕЛЛЕ Г. МИЛЛЕРА «ТРОПИК РАКА»**

В статье рассматриваются способы вербализации пессимистических настроений в новелле Г.Миллера «Тропик Рака», приводятся определения пессимизма рядом философов и психологов, выявляются причины и мотивы миллеровского пессимизма. Автор в основном обращается к имплицитным/эксплицитным способам и противопоставлениям для выражения своего пессимистического настроения в новелле.

**ՆԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋՈՐՋ ՕՐՈՒԵԼԻ
«1984» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԴԻԱՆՑ ՎԵՐՍՏԵՂՈՒՄԸ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ
ԼՐԱԳՐԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր՝ հեղինակային նորաբանությունները, դիպվածաբանություն, լրագրային հոդված, պատկերավորություն

Հեղինակային նորաբանությունները գրողի ստեղծագործ, պատկերավոր մտածողության արգասիք են, որոնք երևան են զալիս թե՛ գեղարվեստական գրականության մեջ, թե՛ լրագրային հոդվածներում, թե՛ խոսողության ընթացքում: Հեղինակային նորաբանությունները երբեմն մնում են ստեղծագործության էջերում և դիտվում են որպես դիպվածաբանություններ, երբեմն՝ վերստեղծվում են, ձեռք բերում լայն գործածություն և վերածվում նորաբանությունների:

Ամերիկացի լեզվաբան Դ. Քրիսթալն իրավացիորեն առանձնացրել է լեզվագործածության հոսընթացում ստեղծված նորակազմությունների մի քանի կարգ՝ 1. *Definitely nonce*; 2. *Definitely neologism*; 3. *Uncertain between nonce and neologism*; 4. *Neither nonce nor neologism (i.e. an established item)*: Հեղինակը մեկ այլ հետաքրքիր դիտարկում է արել. «*Երբ արձանագրում ենք, որ դիպվածաբանությունը նախկինում ևս գործածվել է, այն կորցնում է իր դիպվածային կարգավիճակը: Երկու անգամ կիրառված կազմությունները (twice-formations) սկիզբն են այն երկար ուղու, որով բառը պետք է անցնի՝ նախքան որպես նորաբանություն ընդունվելը*»:²²⁸ Փաստորեն, Դ. Քրիսթալը վկայում է դիպվածաբանությունների զարգացման և դիպվածային չմնալու հավանականության մասին:

Ֆ. Խլղաթյանի տեսանկյունից՝ «...*Դիպվածաբանությունները գրողների, հրապարակախոսների, լրագրողների կողմից ստեղծված բառեր են, որոնք գործածվում են միայն մեկ անգամ՝ խոսքին*

²²⁸ Crystal D., *Investigating nonceness: lexical innovation and lexicographic coverage*, // *Manuscript, narrative and lexicon: essays on literary and cultural transmission in honor of Whitney F Bolton*, Lewisburg: Bucknell University Press; London: Associated University Presses, 2000, pp. 219-220 [file:///C:/Users/Hp/Downloads/-Lexicography4%20\(1\).pdf](file:///C:/Users/Hp/Downloads/-Lexicography4%20(1).pdf).

արտահայտչություն հաղորդելու նպատակով: Նորաբանություններից սրանց տարբերությունն այն է, որ չեն մտնում գրական լեզու, այլ մնում են հեղինակի ստեղծագործության էջերում: Դրա համար էլ հաճախ կոչվում են նաև **հեղինակային նորաբանություններ**»:²²⁹

Ըստ տեսաբան Ս. Էլոյանի՝ «Յուրաքանչյուր նոր հրատարակված գիտատեխնիկական կամ հանրամատչելի ամսագիր, գեղարվեստական ստեղծագործություն (ազգային թե թարգմանական), լրագրային հոդված աղբյուր է դառնում ինքնատիպ նոր բառագործածությունների, նոր փոխառյալ բառերի, միննույն բառի փոխաբերական կամ այլ անուղղակի իմաստների առաջացման... Սակայն նորաբանություններ լեզվում առաջանում են ոչ միայն ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական վերափոխումների, հասարակական-քաղաքական տեղաշարժերի հետևանքով, այլև ստեղծագործական նպատակադրումով»:²³⁰ Հեղինակը հավելում է նաև, որ «հեղինակային բառերի իմաստները երբեմն դժվար է լինում բացատրել հեղինակների ինքնահատուկ պատկերավոր մտածողության պատճառով»:²³¹

Անգլիացի գրող Ջորջ Օրուելի²³² (իսկական անվանումը՝ Էրիք Արթուր Բլեյր) «1984» հանրահայտ վեպում պատկերված է 1984 թ.-ի քաղաքակրթությունը, իսկ գիրքն առաջին անգամ լույս է տեսել 1949 թ.-ին: Քննադատական շնչով գրված այս վեպը բռնատիրական ռեժիմի դեմ ընդվզող անհատի կործանման մասին է: Գրքի գլխավոր հերոսը Ուինսթոն Սմիթն է, որն աշխատում է մի կառույցում (*Ministry of Truth/Minitrue*), որը համահավասար է արդարադատության նախարարությանը: Այստեղ կատարվում է պատմական փաստաթղթերի, արձանագրությունների ու գրքերի կեղծումներ՝ իշխանության տեսակետներին համապատասխանեցնելու համար:

Ջորջ Օրուելը իր «1984» վեպում ոչ միայն գործածել է հեղինակային նորաբանություններ, այլ նաև բացատրել է դրանց նշանակությունները

²²⁹ Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական և լեզվաբանական բուհերի ուսանողների համար, Երևան, Զանգակ-97, 2009, էջ 207:

²³⁰ Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի», 2002, էջ 5:

²³¹ Նույն տեղում՝ էջ 11:

²³² Orwell G., *Nineteen Eighty-Four* <http://orwell.ru/library/novels/1984/english/en>

վեպի վերջում զետեղված հավելվածում՝ *The Principles of Newspeak* Գրքում «*Newspeak*»-ը (նոր խոսք/լեզու) Օվկիանիայի (Oceania) անգլիական սոցիալիզմի (IngSoc/English Socialism) պաշտոնական լեզուն է և ենթադրվում է, որ մինչև 2050 թ.-ը այն կգերազանցի «*Oldspeak*»-ի (հին խոսք/լեզվի) գործածությունը:²³³ Մեջբերենք բնագրից մի հատված՝ ասելիքն ավելի հստակ ներկայացնելու համար.

*“Newspeak was the official language of Oceania and had been devised to meet the ideological needs of Ingsoc, or English Socialism. In the year 1984 there was not as yet anyone who used Newspeak as his sole means of communication, either in speech or writing. The leading articles in the Times were written in it but this was a tour de force which could only be carried out by a specialist. It was expected that Newspeak would have finally superseded Oldspeak (or Standard English, as we should call it) by about the year 2050”*²³⁴

Հեղինակը «*Newspeak*»-ի բառապաշարի մեջ մտնող բառերը դասակարգում է երեք կարգի՝ **A vocabulary, B vocabulary, C vocabulary**: «**A vocabulary**»-ն կազմում են առօրյա-խոսակցական լեզվում գործածվող բառերը, «**B vocabulary**»-ում ներառված են քաղաքական նպատակադրումով ստեղծված բառերը, իսկ «**C vocabulary**»-ն լրացնում է մյուս երկուսին և ամբողջովին ընդգրկում գիտատեխնիկական եզրույթներ:

Այսպես, հանրահայտ «1984» վեպում անգլիացի գրող Ջ. Օրուելի գրչին են պատկանում հետևյալ հեղինակային նորաբանությունները՝ *ungood (bad), unlight (dark), uncold (warm), pluscold (very cold), speedful (rapid), speedwise (quickly), Minitrue (Ministry of Truth), Minipax (Ministry of Peace, i.e. Ministry of War), joycamp (forced-labour camp), thinkpol (Thought Police), goodthink (otrodoxy), crimethink (thoughtcrime)*, և այլն:

Պետք նշել, որ վերը նշված բառերից մի քանիսը գործածվում են հակառակ իմաստով (*joycamp, Minitrue, Minipax*): Այսպես, «*joycamp*» բառը ոչ թե *ճամբար է, ուր կազմակերպվում են ժամանցային տարբեր միջոցառումներ*, այլ «*համակենտրոնացման՝ հարկադիր աշխատան-*

²³³ «*Oldspeak*»-ի հայերեն համարժեքը («հին խոսք/լեզու») փոխառել ենք Է. Սաստրյանից (տե՛ս Սաստրյան Է., Անհատի և ամբոխի փոխհարաբերությունը Ղոն ԴեԼիոյի «Մառ II» վեպում http://cultural.am/hy/gradaran/tester/ella-asatryan-anhati-ev-ambokhi-pokharaberutyuny-don-delilloyi-vepum?fb_comment_id=343135162471079_1920115#f219cd4ca4)

²³⁴ Orwell G., *Nineteen Eighty-Four*, p. 312 http://orwell.ru/library/novels/-1984/english/en_app

քային ճամբար», «Minipax/Ministry of Peace» բառն իրականում ոչ թե խաղաղության, այլ պաշտպանության («պատերազմի») նախարարությունն է, «Minitrue»-ը բառացի կարելի է թարգմանել «ճշմարտության նախարարություն», մինչդեռ այստեղ կեղծվում են պատմական փաստաթղթերը, արձանագրությունները և գրքերը:

Փորձենք վերհանել վերը թվարկված հեղինակային նորաբանությունների վերստեղծման դեպքերը անգլալեզու լրագրային հոդվածներում և հատկորոշել դրանց զարգացման եղանակները ժամանակակից անգլերենում:

1. **UNGOOD GOVERNANCE** (headline)... *In their joint statement of April 21, 2010 the five constituent elements of the People's Partnership declared "a national objective...to put into practice collaborative leadership to achieve good governance".*²³⁵

Տվյալ օրինակում *ungood* բառը հոդվածի վերնագրում կապակցված է *governance* բառի հետ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հոդվածագիրն իր դժգոհությունն է արտահայտում Տրինիդադ և Տոբագոյում առկա քաղաքական իրավիճակի և երկրում գործող հաստատությունների ներկա կառավարման վերաբերյալ: Հոդվածի վերնագիրը՝ ***ungood governance***, լավագույնս ներկայացնում է հաղորդվող նյութը՝ հոդվածը դարձնելով առավել պատկերավոր և արտահայտիչ: Կարելի է փաստել, որ նշված օրինակում Ջ. Օրուելի հեղինակային նորաբանությունը վերստեղծվել է և դրա գործաբանական արժեքը պայմանավորված է Տրինիդադ և Տոբագոյի քաղաքական իրավիճակի գնահատման անհրաժեշտությամբ: Հետևապես, այստեղ *ungood* բառն ունի գնահատողական գործառույթ:

Ինչպես Ջ. Օրուելի հանրահայտ վեպում, այնպես էլ նշված լրագրային հոդվածում ***ungood*** բառը կիրառվել է լեզվում արդեն առկա *bad* բառի իմաստով և հոդվածի վերնագրում իրացրել ***'bad, not successful'*** բառիմաստային տարբերակը: Փաստենք, որ Ջ. Օրուելը և տվյալ լրագրային հոդվածի հեղինակը հաշվի չեն առել բառաստեղծումը սահմանափակող գործոնները:²³⁶ Բանն այն է, որ տեսականորեն *bad* բառի առկայությունը անհնար է դարձնում մինևույն իմակով այլ բառի

²³⁵ Fraser M., *Ungood Governance*, 28 February 2012 <http://www.trinidadexpress.com/commentaries/Ungood-governance-140674643.html>

²³⁶ Տե՛ս Katamba F. & Stonham J., *Morphology*, Palgrave Macmillan, 2nd ed/ 2006, p. 74-81.

ստեղծումն անգլերենում: Հետևապես, անտեսվել է հոմանշային սահմանափակում (*synonymy blocking*) երևույթը:

2. *Nothing friendly about it: Orwell's Ministry of Peace would envy the US military's use of newspeak (headline) The US military has mastered newspeak in a manner that would be the envy of Ministry of Peace (Minipax) in Orwell's Nineteen Eighty-four, and it peddles the phrases - usually simple phonetically, vague semantically and inscrutable technically with such bombastic precision that they enter the popular lexicon.*²³⁷

Այս օրինակում ևս Ջ. Օրուելի հեղինակային նորաբանությունը վերստեղծվել է և դրա գործաբանական արժեքը պայմանավորված է լրագրանյութում Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությանը բնութագրելու անհրաժեշտությամբ: Հետևապես, մեջբերված լրագրային հոդվածում նշված հեղինակային նորաբանությունը կամ դիպվածաբանությունն ունի գնահատողական գործառույթ: Լրագրահոդվածում խոսվում է այն մասին, որ Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարությունը լավագույնս տիրապետում է Ջ. Օրուելի համանուն ստեղծագործության մեջ մշակված *նոր խոսք/լեզվին* (Newspeak): Իսկ Ջ. Օրուելի ստեղծագործության մեջ առաջ եկած «*նոր խոսք/լեզվի իմաստն այն էր, որ արդեն գոյություն ունեցող լեզուն որքան հնարավոր է պարզեցնում էին՝ «մաքրելով» այնպիսի բառերից և արտահայտություններից, որոնք կարող էին վտանգ ներկայացնել տարածված գաղափարախոսության համար*»²³⁸

3. *Ukraine forms 'ministry of truth' to regulate the media (headline) Journalists fear freedom of speech will be curtailed as Kiev follows Moscow in stepping up the propaganda war.*²³⁹

Ուկրաինայում մամուլի վերահսկումը քննություն առնող հոդվածում, վերստեղծվել է *ministry of truth* հեղինակային

²³⁷ Ray S., *Nothing friendly about it: Orwell's Ministry of Peace would envy the US military's use of newspeak*, 29 October 2010, <http://www.theguardian.com/media/mind-your-language/2010/oct/29/friendly-fire-mind-your-language>.

²³⁸ Ասատրյան 2013 http://cultural.am/hy/gradaran/tester/ella-asatryan-anhati-ev-ambokhi-pokharaberutyuny-don-delilloyi-vepum?fb_comment_id=343135162471079_1920115#f219cd4ca4

²³⁹ Vikhrov M., *Ukraine forms 'ministry of truth' to regulate the media*, 19 December 2014, <http://www.theguardian.com/world/2014/dec/19/-sp-ukraine-new-ministry-truth-undermines-battle-for-democracy>. Last retrieved on 30 January 2016.

նորաբանությունը: Մեջբերված հասվածից դյուրին է նկատել, որ այստեղ նշված բառային միավորն ունի փոխաբերական նշանակություն:

4. *Her valedictory message to **Ministry of Truth** – I mean **MoD** – civil servants reads: 'I have been proud to lead the MoD as its Permanent Secretary and Accounting Officer through a period of remarkable change'²⁴⁰*

Այս օրինակում **Ministry of Truth** արտահայտությունը ևս նշանակում է **Ministry of Justice**: Հոդվածում խոսվում է Միացյալ Թագավորության արդարադատության նախկին նախարար Ուրսուլա Բրենանի՝ պաշտպանության նախարարության քարտուղարի աշխատանքից պաշտոնաթող լինելու և արդարադատության նախարարությունում կրկին պաշտոն զբաղեցնելու մասին.

How permanent is a Permanent Secretary? In the case of Ursula Brennan at the MoD, the answer is twenty months. In a fortnight she clears her desk and goes back to the Ministry of Justice.

Նկատենք, նաև, որ նշված հոդվածի ասելիքն առավել պատկերավոր և արտահայտիչ դարձնելու նպատակով հոդվածի վերնագրում լրագրանյութի հեղինակը գործածել է **permanent** բառի հակադիր նշանակությամբ ներգոր (*potential*) բառային միավոր (**not-so-permanent**)՝ *“Goodbye to Ursula Brennan, the MoD’s not-so-permanent secretary”*.

Այսպիսով, կարելի է փաստել, որ մեջբերված լրագրային հոդվածում լրագրող-հեղինակը վերստեղծել է Ջ. Օրուելի հեղինակային նորաբանությունը (**Ministry of Truth=Ministry of Justice (MOJ)**): Ավելին, հոդվածագիրը լրագրանյութում գործածում է նաև Ջ. Օրուելի հեղինակած մեկ այլ նորաբանություն՝ **Oldspeak** (հին խոսք/լեզու).

Let me suggest what that message ought to have been – in ‘Oldspeak’: 'I am deeply embarrassed at not having done my duty as Permanent Secretary in allowing Dr Liam Fox to have irregular contacts with Mr Adam Werrity, leading to the resignation of the Secretary of State, and I apologise to all those civil servants and servicemen who are being made redundant because of the shortcomings of the defence management board in allowing the department to

²⁴⁰ Mallinson A., *Goodbye to Ursula Brennan, the MoD’s not-so-permanent secretary*, 15 June 2012, <http://www.dailymail.co.uk/debate/article-2159726/Goodbye-Ursula-Brennan-MoDs-permanent-secretary.html>. Last retrieved on 30 January 2016.

go bankrupt.’ But ‘Oldspeak’ would be unlikely to lead to a new job, would it not?

Հոդվածագրին հետաքրքում է՝ ինչ կնշանակեր պաշտպանության նախարարության նախկին մշտական քարտուղարի ելույթից մեջբերված վերը նշված հատվածը Ջ. Օրուելի «**Oldspeak**»-ում (հին խոսք/լեզվում) և եզրակացնում է, որ «**Oldspeak**»-ը չէր հանգեցնի նոր պաշտոն գրադեցնելուն:

5. *“Speed wise, he’s quick, but I’m quicker. When it comes down to power, I’m stronger as well. It is going to be a game of chess at times and at times I’ll be fighting him. I’ve watched a lot of videos of him and in his last fight, especially, he likes to stand there and fight.....”*²⁴¹

Տվյալ օրինակում վերստեղծվել է *speedwise* բառը *speed wise* ձևով: Պետք նշել, որ հոդվածում այն գործածվել է ըմբշամարտիկի խոսքից մեջբերված հատվածում, որտեղ այն վերաբերում է արագությանը/արագ կողմնորոշվելուն՝ ԱՄՆ-ում անցկացվող ըմբշամարտի եզրափակիչ խաղում:

Ուսումնասիրելով անգլերենում Ջ. Օրուելի հեղինակային նորաբանությունների վերստեղծումը լրագրային հոդվածներում՝ եկանք հետևյալ եզրահանգումներին՝

- Օրուելյան հեղինակային նորաբանությունները մեծամասամբ կիրառվում են քաղաքական բովանդակությամբ լրագրահոդվածներում:
- Օրուելյան հեղինակային նորաբանությունների գործածումը լրագրանյութին հաղորդում է պատկերավորություն և արտահայտչականություն:
- Օրուելյան հեղինակային նորաբանությունները լրագրանյութերում ունեն գնահատողական գործառույթ, քանի որ դրանց միջոցով լրագրողն իր գնահատականն է տալիս հասարակական-քաղաքական տեղաշարժերին:
- Ջ. Օրուելի հեղինակած նորաբանությունների մի մասը չի մնացել դիպվածային կարգավիճակում, այլ վերստեղծվել է լրագրային

²⁴¹ *Brenner S., Amir Khan and Devon Alexander have to deliver in career-defining fight, 12 December 2014, <http://www.theguardian.com/sport/2014/dec/12/amir-khan-devon-alexander-career-defining-fight-boxing--las-vegas> Last retrieved on 30 January 2016*

հոդվածներում: Այսպիսով, դրանց դիպվածային կարգավիճակը թեակա՞ն է (*uncertain between nonce and neologism*):

Եզրափակելով նշենք, որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ անդրադառնալ լրագրանյութերում գործածված Օրուելյան բոլոր հեղինակային նորաբանություններին, հետևապես ստացված արդյունքներն ու մշակված լեզվանյութը հիմք կարող են հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Гаяне Барсегян

**АВТОРСКИЕ НЕОЛОГИЗМЫ В РОМАНЕ ДЖОРДЖА ОРУЭЛЛА
“1984” И ИХ УПОТРЕБЛЕНИЕ В АНГЛОЯЗЫЧНОЙ ПРЕССЕ**

В данной статье анализируются авторские неологизмы английского писателя Джорджа Оруэлла в романе "1984", и их употребление в современной англоязычной прессе. Исследование показало, что некоторые из этих слов со временем стали общеупотребительными, другие так и остались авторскими неологизмами.

Gayane Barseghyan

**AUTHOR'S NEOLOGISMS IN GEORGE ORWELL'S NOVEL “1984” AND
THEIR USE IN ENGLISH JOURNALISTIC ARTICLES**

The present article touches upon the author's neologisms in George Orwell's novel *Nineteen Eighty-four* and gives the analysis of their use in English journalistic articles. The findings reveal that some of the words under study are widely used in newspaper articles, some of them remain as author's neologisms or occasionalisms.

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՖԵՆԹՐՉԻ ԺԱՆՐԻ
ՏԵՔՍՏԱԿԱԶՄԻՉ ԳՈՐԾՈՆ (Ջ. Բ. ՌՈՈՒԼԻՆԳԻ «ՀԱՐԻ ՓՈԹԵՐԸ և
ՓԵԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ՔԱՐԸ» ՎԵՊՈՒՄ)**

*Հիմնաբառեր՝ Ջ.Կ.Ռոուլինգ, «Հարի Փոթերը և փիլիսոփայական քարը»,
ֆենթրզի, նորաբանություն, տեքստակազմիչ գործոն*

Յուրաքանչյուր գրական ստեղծագործություն հանդես է գալիս որպես հեղինակի կողմից իրականության մտացածին ու երևակայական պատկերում, իսկ գեղարվեստական գրականության ֆենթրզի ժանրում իրականությունը պատկերվում է մեզ բոլորովին անծանոթ ու հորինված աշխարհում: Գոյություն ունեն ֆենթրզի ժանրի մի շարք սահմանումներ, որոնց էությունը գրեթե նույնն է. այն է՝ ֆենթրզին գրական ժանր է, որի հիմքում աշխարհի գերբնական, անսովոր, անկանխատեսելի պատկերումն է:

«Ֆենթրզի» եզրը, այնուամենայնիվ, միանշանակ չէ, և հաճախ անհրաժեշտություն է ծագում այն զատել մի շարք այլ եզրերից, որոնցով անվանվում են մտացածին, հեղինակի կողմից մոդելավորված իրականությունը պատկերող ստեղծագործությունները: Եզրի լայն սահմանումը հաջողությամբ տվել է Մինթիա Դունքանը. «Ժամանակակից գրականագիտության մեջ ֆենթրզին այնքան լայն հասկացություն է, որ օգտագործվում է գիտական ֆանտաստիկայի, հեքիաթների, ուրվականների մասին պատմությունների, ինչպես նաև տարբեր տեսակի այլ գերբնական ու կախարդական հեքիաթների մասին խոսելիս՝ այդ թվում ներառելով այնպիսի հեղինակների ստեղծագործություններ, ինչպիսիք են Ուրսուլա Լե Գուինը, Մթիվըն Քինգը և Ջ.Կ.Ռոուլինգը: Մյուս կողմից՝ «գերբնականը», «գարմանահրաշքը», «աբսուրդը», «գավեշտականը» և «գոթական սարսափը» եզրեր են, որ հորինվել են՝ կոնկրետ ստեղծագործությունների և գրողների վերաբերմամբ և այնքան հստակ են իրենց բնույթով և սահմանմամբ, որ դրանց կիրառումը սահմանափակվում է միայն այդ կոնկրետ տեսակի տեքստերի անվանմամբ»:²⁴² Ի վերջո՝ Ս.

²⁴² Duncan S., *Unraveling the Real*. Temple University Press, Philadelphia, Pennsylvania, 2010. p.3

Դունքանը եզրակացնում է, որ ֆենթերզին հանդես է գալիս որպես այս ամենին հարակից ժանր, որը չունի հստակ սահմաններ, տարբերվում է մշակույթից մշակույթ, փոփոխվում ժամանակի ընթացքում և որ այն հարցին, թե ինչ է ֆենթերզին իրականում, գրական քննատաղներից պատասխան ակնկալելն անիմաստ է:

Ջանգո Վեքսլերը սահմանում է ֆենթերզին՝ որպես «ուրիշ աշխարհի ֆենթերզի»։ «... այն է՝ երևակայական իրադարձություններ, որ տեղ են գտնում մի աշխարհում, որն ակնհայտորեն մերը չէ: Սա չի ներառում քաղաքային ֆենթերզին, որը ծավալվում է փոփոխված, ժամանակակից Երկիր մոլորակում, պատմական ֆենթերզին, որը ծավալվում է անցյալում և այլն: Մենք կարող ենք պայմանականորեն բացառել նաև խաչաձև աշխարհների ֆենթերզին, որում Երկիր մոլորակի հերոսները այլ աշխարհ են այցելում»:²⁴³

Ֆենթերզի ժանրի բազմազանության մասին կարելի է անընդհատ խոսել, սակայն, առավել կարևոր է բացահայտել և վերլուծել նմանատիպ ստեղծագործությունների հիմնական տեքստակազմիչ բաղադրիչները:

Ինչպես Ջանգո Վեքսլերն է պնդում. «Ֆենթերզի ժանրին պատկանող վեպում նրբորեն համադրված են ֆանտաստիկ տարրերը, որոնք զարմացնում և շարժում են ընթերցողի հետաքրքրությունը և աշխարհիկ տարրերը, որոնք օգնում են ընթերցողին հասկանալ և ապահովում են ճշմարտանմանությունը»: Իսկ այդ ֆանտաստիկ տարրերը լեզվական արտահայտություն են գտնում և մարմնավորվում են հեղինակի կողմից օգտագործվող նորաբանություններում: Ուստի, նորաբանությունները կարելի է դիտարկել որպես ֆենթերզի ժանրի կարևորագույն տեքստակազմիչ բաղադրիչ:

Փիթեր Նյումարկը տալիս է նորաբանությունների հետևյալ սահմանումը. «Նորաբանությունները կարելի է սահմանել որպես նոր կազմված բառային միավորներ կամ գոյություն ունեցող բառային միավորներ, որոնք նոր իմաստ են ձեռք բերում»:²⁴⁴

Նորաբանությունների ամենից ընդհանուր դասակարգումը ենթադրում է նորաբանությունների երկու հիմնական խումբ. ա. Նորաբանություններ, որ լայնորեն ընդունվում են լեզվում, այդ թվում՝ տվյալ լեզվի բառապաշարից վերջին ժամանակներում ստեղծված բառեր և այլ

²⁴³ Wexler D. The Fantasy Language Problem, Fantasy Fraction 24 Jan, 2014

²⁴⁴ Newmark P. A Textbook of Translation, Shanghai Foreign Language Education Press, Shanghai, 1988, p. 140

լեզուներից ներմուծված բառեր և բ. Կոնկրետ անհատ հեղինակի կողմից ստեղծվող հեղինակային նորաբանություններ: Առաջին դեպքում նորաբանության առաջացման պատճառը նոր երևույթի անվանման անհրաժեշտությունն է, մինչդեռ երկրորդ դեպքում գործ ունենք դիպվածային նորաբանությունների հետ, որոնք հորինվում են գրողի կողմից՝ որոշակի ազդեցություն գործելու համար: Այսպիսիք համատեքստից դուրս հազվադեպ են կիրառություն գտնում²⁴⁵:

Ըստ Անտոնինա Լիտակի՝ «Հեղինակային նորաբանությունները փոխանցում են հեղինակի նպատակը: Դրանց մեծ մասը երկար կյանք չունեն: Այս նորաբանությունները ստեղծվում են հաղորդակցման տվյալ պահին օգտագործվելու համար, ուստի դրանց հիմնական առանձնահատկությունն իրենց ժամանակավոր բնույթն է: Բառը կամ բառիմաստը գործում են միայն տվյալ համատեքստում: Քանի որ հեղինակային նորաբանությունները դիպվածային բնույթ ունեն, դրանք հաճախ անվանվում են «դիպվածային» կամ «մեկանգամյա օգտագործման» բառեր»:²⁴⁶

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն նորաբանությունների դասակարգման բազում տեսություններ, միննույն ժամանակ չկա նորաբանությունների դասակարգման մեկ ընդհանուր ամրագրված համակարգ: Նորաբանությունները դասակարգվում են տարբեր ձևերով՝ հիմնվելով տարբեր չափանիշների վրա:

Նորաբանությունների առավել հայտնի, համապարփակ ու ընդգրկուն դասակարգումը պատկանում է Փ. Նյումարկին: Չնայած Նյումարկը անդրադառնում է նորաբանություններին՝ վերջիններիս թարգմանական առանձնահատկությունների տեսանկյունից, այնուամենայնիվ տեսաբանը նախ և առաջ առանձնացնում է նորաբանությունների հետևյալ կարգերը.

1. **Հին բառերը՝ նոր նշանակությամբ (old words with new senses).** Երբ հին բառերը ձեռք են բերում նոր նշանակություններ: Այսպիսի բառերը չեն վերաբերում նոր առարկաների կամ գործընթացների, ուստի կապված չեն տեխնոլոգիաների հետ:

²⁴⁵ Neologisms, available online at [\[http://encyclopedia2-thefreedictionary.com/Neologisms\]](http://encyclopedia2-thefreedictionary.com/Neologisms),

²⁴⁶ Litak A. Author Neologisms in J.R.R. Tolkien's Trilogy "The Lord Of The Rings" (In Original And Translation), available online at [\[http://www.pulib.sk/web-kniznica/strana/nazov/uvodna-strana\]](http://www.pulib.sk/web-kniznica/strana/nazov/uvodna-strana),

2. **Հին բառակապակցությունները՝ նոր նշանակությամբ (old collocations with new senses)**. սրանք սովորական նկարագրական բառակապակցություններ են, որ ձեռք են բերել տեխնիկական նշանակություն:

3. **Նորաստեղծ բառեր (new coinages)**. ըստ Նյումարկի բոլոր նորաստեղծ բառերի հիմքում հնչազեղագիտությունն է, այսինքն՝ ցանկացած նոր բառ ստեղծվում է որոշակի իմաստներ արտահայտող հնչյուններից միայն:

4. **Ածանցված բառեր (derived words)**. Նյումարկը պնդում է, որ նորաբանությունների մեծ մասը ածանցված է հունական և լատինական ձևայիններից:

5. **Հապավումներ**. Նյումարկը նշում է, որ սրանք միշտ էլ նորաբանությունների տարածված տեսակ են եղել և անվանում է հապավումները «կեղծ նորաբանություններ», որոնք առավել բնորոշ են ֆրանսերենին, քան անգլերենին:

6. **Բառակապակցություններ (abbreviations)**. ինչպես օրինակ գոյական-գոյական կամ ածական-գոյական կապակցությունները:

7. **Էպոնիմներ (eponyms)**. մարդկանց անուններից ածանցված անվանումներն են (օր՝ մարքսիզմ, դարվինիզմ):

8. **Հարադրյալ բառեր (phrasal words)**. սրանք հիմնականում սահմանափակվում են անգլերենի՝ բայերը գոյականների վերածելու հատկությամբ (օր՝ work-out, trade-off, check-out)

9. **Փոխանցված բառեր (transferred words)**. սրանք հիմնականում մեղիա և ապրանքանշանային նորաբանություններ են՝ ոչ տեխնոլոգիական (օր՝ Adidas, kung fu, Wrangler, raga):

10. **Տառային հապավումներ (acronyms)**. ամենատարածված նորաբանություններից է:

11. **Կեղծ նորաբանություններ (pseudo-neologisms)**. այս դեպքում ընդհանուր բառը օգտագործվում է որևէ հատուկ իմաստով (օր՝ la Trilaterale մասնավոր քաղաքական հանձնաժողով, որի ներկայացուցիչները ԱՄՆ-ից, Արևմտյան Եվրոպայից և Ճապոնիայից են):

12. **Միջազգային բառեր (internationalisms)**. տարբեր լեզուների կողմից փոխառված բառերն են, որոնք կարևոր դեր են խաղում մեր հաղարդակցության մեջ (օր՝ philosophy, biology, mathematics):²⁴⁷

²⁴⁷ Newmark P. A Textbook of Translation, Shanghai Foreign Language Education Press, Shanghai, 1988, p. 140-149

Եթե փորձենք ընդհանրացնել նորաբանությունների՝ Նյումարկի կողմից առաջարկած դասակարգումը, ապա կհանգենք նորաբանությունների ստեղծման երեք հիմնական աղբյուրների.

- ա. Իմաստային փոփոխություն, որի դեպքում արդեն իսկ գոյություն ունեցող բառային միավորները ձեռք են բերում նոր իմաստներ,
- բ. Փոխառություններ, այսինքն՝ այլ լեզուներից փոխառվող բառերը տվյալ լեզվում հանդես են գալիս որպես նորաբանություններ,
- գ. Բառակազմական տարրեր հնարներով կազմվող նորաբանություններ:

Ջ. Ռոուլինգի «Հարրի Փոթեր» հայտնի վիպաշարում նորաբանությունները հանդես են գալիս որպես հիմնական տեքստակազմիչ գործոն, քանի որ թե՛ դրանցով արտահայտված հերոսների անունների և թե՛ մի շարք հասկացությունների միջոցով հեղինակը ստեղծում և պատկերում է կախարդական այն իրականությունը, որում ծավալվում են ստեղծագործության հիմնական իրադարձությունները: «Հարրի Փոթերի» նորաբանությունների բազմազանությունը կարող է հիմք ծառայել վերջիններիս մանրամասն դասակարգված վերլուծության համար, քանի որ դրանց առատությունը թույլ է տալիս առանձնացնել այնպիսի կարգեր, ինչպիսիք են «անուններ», «կենդանիներ», «բույսեր», «կախարդանքներ» և այլն: Այնուամենայնիվ, սույն հոդվածում սահմանափակվում ենք «Հարրի Փոթերը» վիպաշարի «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» հատորի նորաբանությունների բառակազմական և իմաստաբանական վերլուծությամբ: Ուստի, կարող ենք պնդել, որ այստեղ կիրառված վերլուծության հիմնական մեթոդը որակական է, այլ ոչ թե քանակական:

Հարկ է նշել, որ այս ստեղծագործության մեջ հանդիպող նորաբանությունները հեղինակային, դիպվածային են, սակայն, որոշ դեպքերում դրանք լայն կիրառություն են ստանում՝ վերածվելով բառապաշարային տարրերի: «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում Ջ. Ռոուլինգի կողմից օգտագործված հեղինակային նորաբանություններն այս հոդվածում ենթարկվել են համակողմանի վերլուծության: Քննվել են ինչպես բառակազմական գործընթացները, նորաբանության տեսակը այնպես և նորաբանության ստեղծման հեղինակի մտադրությունը, դրա մեջ ներդրված իմաստը և դերը տեքստում:

Ջ. Ռոուլինգի գրվածքում նորաբանությունների առատությունը անփիճեկի է: Այսպես, հեղինակի կողմից գործածված հենց առաջին նորաբանությունը՝ **«unDursleyish»** բառն է: Դարպիները Փոթերների

մեծամիտ ազգականներն էին և խուսափում էին Փոթերների հետ հանդիպելուց, քանի որ վախենում էին հարևանների կարծիքից: Միսիս Փոթերի քրոջ՝ միսիս Դարսլիի կարծիքով վերջիններս բավականին «unDursleyish» են, նման չեն Դարսլիներին, քանի որ չեն պատկանում նրանց դասակարգին.

*They didn't think they could bear it if anyone found out about the Potters. Mrs. Potter was Mrs. Dursley's sister, but they hadn't met for several years; in fact, Mrs. Dursley pretended she didn't have a sister, because her sister and her good-for-nothing husband were as **unDursleyish** as it was possible to be.*²⁴⁸

Կազմության տեսանկյունից նորաբանությունը ածանցված է, ընդ որում՝ երկակիորեն է ածանցված, քանի որ ստացել է թե՛ «un» ժխտական նախածանցը և թե՛ «ish» ածականակերտ վերջածանցը, որն արտահայտում է նմանության և պատկանելիության իմաստ: Ակնհայտ է, որ նորաբանությունն ունի կարևոր գործարանական նշանակություն և արժեք, բավականին դիպուկ կերպով փոխանցում է հեղինակի մտադրությունը և աչքի է ընկնում իմաստային պատճառաբանվածությամբ: Նորաբանությունը դիպվածային է, բացառապես ծառայում է հեղինակի նպատակին տվյալ տեքստում և դրա գործածությունը սահմանափակվում է տվյալ տեքստով:

Չաջորդ նորաբանությունը, որը թերևս վեպի ամենահայտնի և քննարկվող նորաբանություններից է, «**Muggle**» բառն է.

*Malfoy certainly did talk about flying a lot. He complained loudly about first-years never getting in the house Quidditch teams and told long, boastful stories which always seemed to end with him narrowly escaping **Muggles** in helicopters.*²⁴⁹

Ձ. Ռոուլինգը օգտագործում է այս բառը՝ «կախարդական կարողություններից զուրկ մարդ» նշանակությամբ: Ըստ Նյումարկի՝ նորաբանությունների դասակարգման, այս նորաբանությունը կարելի է դասել նորաստեղծ բառերի շարքին:

Բառն արդեն մուտք է գործել լեզվի բառապաշար և ամրագրված է բառարաններում: Dictionary.com էլեկտրոնային բառարանում այն

²⁴⁸ Harry Potter and the Philosopher's Stone, available online at [<http://lingualeo.com/ru/jungle/harry-potter-and-the-philosophers-stone-bloomsbury-30189#>], p. 1, last retrieved 20.10.2015

²⁴⁹ Նույն տեղում, էջ՝ 61

սահմանվում է որպես «a person without magical powers»²⁵⁰, իսկ բառի ծագումնաբանության առումով հղում է արվում հենց «Հարրի Փոթերը» վեպին: «Muggle» բառն, այսպիսով, ակնհայտ օրինակ է հեղինակային և դիպվածային նորաբանությունից լեզվի հիմնական բառապաշարային միավորի վերածվելու գործընթացի:

Ավելին, «Muggle» հեղինակային նորաբանությունը ոչ միայն ամրագրված է բառարանում որպես անգլերենի հիմնական բառապաշարային տարր, այլև ենթարկվել է իմաստային զարգացման՝ իմաստի վատթարացման: Այդպիսի կիրառության բազմաթիվ օրինակներ կարելի է հայտնաբերել ժամանակակից ամերիկյան անգլերենի կորպուսի միջոցով, ինչպես օրինակ.

*An area of Arctic ice larger than Maryland and Delaware combined is vanishing annually, thanks to the global warming caused by all of us Muggles in our **Muggle** lives. # Such growing environmental horrors did more than anything to wake up this new movement, I think...*²⁵¹

Վերոնշյալ օրինակում նորաբանությունն, ակնհայտորեն, օգտագործված է ոչ թե պարզապես «կախարդական կարողություններից զուրկ մարդ» իմաստով, այլ կրում է առավել բացասական իմաստ: Օրինակ, www.oxforddictionaries.com կայքում կարելի այն սահմանվում է որպես «A person who is not conversant with a particular activity or skill»²⁵², այսինքն՝ որևէ բանին անտեղյակ, անգետ մարդ:

Մեկ այլ հետաքրքրական օրինակ է «**Smeltings stick**» ձուլման փայտիկ նորաբանությունը, որը կրկին իր կազմության տեսանկյունից բառակապակցություն է.

*Harry, made Dudley go and get it. They heard him banging things with his **Smeltings stick** all the way down the hall. Then he shouted, 'There's another one! Mr H. Potter, The Smallest Bedroom, 4 Privet Drive –*²⁵³

Այս դեպքում մենք գործ չունենք նորաստեղծ բառի կամ բառակապակցության հետ, սակայն տվյալ օրինակը նույնպես դիտարկում ենք որպես նորաբանություն, քանի որ կապակցությունը

²⁵⁰ <http://dictionary.reference.com/browse/muggle?s=t>

²⁵¹ Mc.Kibben, B. Muggles in the Ozone, Mother Jones Mar/April, 2000. Web, last retrieved 18.10.2015

²⁵² <http://www.oxforddictionaries.com/definition/english/muggle>

²⁵³ Harry Potter and the Philosopher's Stone, available online at [<http://lingualeo.com/ru/jungle/harry-potter-and-the-philosophers-stone-bloomsbury-30189#>], p. 17, last retrieved 20.10.2015

հենց Ջ. Ռոուլինգի հեղինակային նորաբանությունն է, չի հանդիպում ո՛չ Բրիտանական ազգային կորպուսում և ոչ էլ Ժամանակակից ամերիկյան անգլերենի կորպուսում կամ որոնողական որևէ այլ համակարգում և բազմակիռքեն կիրառվում է միայն վեպի շրջանակներում: Կապակցությունը համարում ենք նորաբանություն նաև այն պատճառով, որ վերջինս ցույց է տալիս մի առարկա, որը Ջ. Ռոուլինգի երևակայական իրականության պատկերման տարրերից է: Այսինքն, կարող ենք ասել, որ կապակցությունն իրակություն է, որը գոյություն ունի հեղինակի հորինած կախարդական աշխարհի մշակույթի շրջանակներում: Ձուլման փայտիկները պատկանում էին Մետաղաձուլման ակադեմիայի սաներին:

«Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում նորաբանությունների մի ամբողջ խումբ են զանազան կախարդանքների անվանումները: Դրանցից մեկը «**Petrificus Totalus**» կապակցությունն է, որն առաջին անգամ օգտագործում է Հերմիոնը. "**Petrificus Totalus!**" she cried, pointing it at Neville.

Neville's arms snapped to his sides. His legs sprang together. His whole body rigid, he swayed where he stood and then fell flat on his face, stiff as a board.

Hermione ran to turn him over. Neville's jaws were jammed together so he couldn't speak. Only his eyes were moving, looking at them in horror.

*"What've you done to him?" Harry whispered. "It's the **full Body-Bind**," said Hermione miserably. "Oh, Neville, I'm so sorry."*²⁵⁴

Տվյալ դեպքում Հերմիոնը օգտագործում է կախարդանքը՝ այնուհետև բացատրելով այն: Այս նորաբանությունը բավականաչափ հետաքրքրական է բառակազմական տեսանկյունից: Նախ և առաջ Ջ. Ռոուլինգի ստեղծած «Petrificus» բառի արմատը petrify՝ քարացնել բառն է, որն էլ իր հերթին փոխառված է հունարեն «պետրա» քար բառից:

Նորաբանությունը կազմելու համար՝ հեղինակը բառարմատին ավելացրել է լատինական ծագում ունեցող «ficus» վերջածանցը, որի ունի անել, կատարել իմաստը:²⁵⁵

Նմանատիպ նորաբանությունները Ի. Փլազը անվանում է «նոր-դասական բարդ բառեր» (neo-classical compounds)²⁵⁶, որոնցում բառարմատին ավելացվում է հունական կամ լատինական ծագման

²⁵⁴ Նույն տեղում, էջ՝ 116

²⁵⁵ <http://www.memidex.com/~fic>

²⁵⁶Ingo Plag, "Word-formation in English", Cambridge, Cambridge University Press, 2003, p. 155

ածանց: Նույնը տեղի է ունեցել նաև կապակցության երկրորդ բաղադրիչի դեպքում, որում «total» բառարմատին ավելացվել է լատինական ծագման վերջածանց:

Հաջորդ դիտարժան նորաբանությունը «**Remembrall**» բառն է.

A barn owl brought Neville a small package from his grandmother. He opened it excitedly and showed them a glass ball the size of a large marble, which seemed to be full of white smoke.

*"It's a **Remembrall!**" he explained. "Gran knows I forget things -- this tells you if there's something you've forgotten to do. Look, you hold it tight like this and if it turns red -- oh..." His face fell, because the Remembrall had suddenly glowed scarlet, "... you've forgotten something..."²⁵⁷*

Ձ. Ռուլինգը օգտագործում է տվյալ նորաբանությունը՝ նշանակելով մի փոքրիկ ապակե գունդ, որը հիշեցնողի դեր է տանում: Այն կարմիր ծխով է լցվում, երբ նա, ում այն պատկանում է, որևէ բան է մոռանում, և պարզվում է, հենց վերջինս հիշում է մոռացածը: Այնուամենայնիվ, նորաբանությունը հետաքրքրական է հենց բառակազմության տեսանկյունից, քանի որ բառի կազմության համար հեղինակը օգտագործում է համակցման եղանակը (blending)²⁵⁸: Ակնհայտ է, որ այս դեպքում բառակազմությունը տեղի է ունենում երկու բառերի հատվածների ձուլումից, և կրկին ակնհայտ է իմաստային պատճառաբանվածությունը:

«Հարրի Փոթերի» կախարդական իրականությունը, հավանաբար, լիարժեք չէր լինի, եթե չլինեին գնման և վաճառքի՝ իրական աշխարհին բնորոշ գործընթացները: Այստեղ, թերևս, հեղինակը նույնպես դիմել է կախարդական իրականության պատկերմանը՝ ներմուծելով արժույթի տեսակներ, որոնք երեքն են՝ «**Gold Galleon**», «**Silver Sickle**», «**Bronze Knut**».

Seventeen silver **Sickles** to a **Galleon** and twenty-nine **Knuts** to a Sickle, it's easy enough...²⁵⁹

1 սիքլը հավասար է 29 նութի, իսկ 17 սիքլը մեկ գալեոն է:²⁶⁰

²⁵⁷ Harry Potter and the Philosopher's Stone, available online at [<http://lingualeo.com/ru/jungle/harry-potter-and-the-philosophers-stone-bloomsbury-30189#>], p. 61, last retrieved 20.10.2015

²⁵⁸Types of Word-Formation Processes, available online at [<http://www.ruf.rice.edu/~kemmer/Words/wordtypes.html>], last retrieved 12.10.2015

²⁵⁹ Harry Potter and the Philosopher's Stone, available online at [<http://lingualeo.com/ru/jungle/harry-potter-and-the-philosophers-stone-bloomsbury-30189#>], p. 32, last retrieved 20.10.2015

Եթե դիտարկենք բառերի ծագումնաբանությունը, ապա կնկատենք, որ «Galleon» բառը, օրինակ, փոխառություն է այն ֆրանսերեն «Galion» բառն է, որը նշանակում է «ռազմածովային նավ»: Այնուամենայնիվ, բառը նորաբանություն է, ավելի կոնկրետ՝ հեղինակային «նորաստեղծ բառ»²⁶¹, քանի որ վեպում դրա կիրառությունը ոչ մի կերպ չի առընչվում փոխառված բառի իմաստին:

Երկրորդը՝ «Sickle» նորաբանությունը, թերևս, ունի որոշակի պատճառաբանվածություն: Հեղինակը իմաստափոխության է ենթարկել այս բառը, որը «մանգաղ» է նշանակում՝ անվանելով մանգաղ հիշեցնող, կեռ ձև ունեցող մետաղադրամը, այսինքն՝ իմաստափոխությունը պայմանավորված է երկու նշանակյալների ձևային նմանությամբ:

Փոքր-ինչ անորոշ է մյուս մետաղադրամի անվանման «Knut» բառի ծագումը: Այստեղ դժվար է պնդել, թե արդյոք նորաբանությունը պարզապես նորաստեղծ բառ է, թե որևէ առընչություն ունի «Canute the Great» կամ, այլ կերպ անվանվող, «Knut the Great» թագավորի անվան հետ: Հավանական է նաև երրորդ տեսությունը, ըստ որի նորաբանության հիմքում «nut» բառն է, որն ունի «մանեկ, պնդոլակ» նշանակությունը և նորաբանության հիմքում կարող է լինել իմաստի փոփոխությունը՝ կրկին ձևային նմանության հիման վրա:

«Հարրի Փոթերը» վեպի նորաբանությունները դիտարկելիս՝ անհնար է անտեսել հերոսների մտացածին անունները, որոնք նույնպես հեղինակային նորաբանություններ են և որոնցից յուրաքանչյուրը նույնպես գործաբանական արժեք է պարունակում: Այսպես օրինակ, «**Albus Dumbledore**» անունով Ջ. Բոուլինգը անվանում է Հարի Փոթերի սիրելի ուսուցիչներից մեկին, Հոգվարթ դպրոցի տնօրենին.

*Albus Dumbledore, currently Headmaster of Hogwarts. Considered by many the greatest wizard of modern times, Professor Dumbledore is particularly famous for his defeat of the dark wizard Grindelwald in 1945, for the discovery of the twelve uses of dragon's blood and his work on alchemy with his partner, Nicolas Flamel.*²⁶²

²⁶⁰ <http://harrypotter.wikia.com/wiki/Sickle>

²⁶¹ Newmark P. A Textbook of Translation, Shanghai Foreign Language Education Press, Shanghai, 1988, p. 142

²⁶² Harry Potter and the Philosopher's Stone, available online at [<http://lingualeo.com/ru/jungle/harry-potter-and-the-philosophers-stone-bloomsbury-30189#>], p. 44, last retrieved 20.10.2015

Վեպում վերջինս հանդես է գալիս որպես լուսավոր և դրական կերպար, և բոլորովին պատահական չէ հեղինակի կողմից «Albus» անունի կիրառությունը, քանի որ լատիներեից վերջինս թարգմանաբար նշանակում է «ճերմակ»՝ արտահայտելով հերոսին հատուկ իմաստունության և լուսավորության իմաստը²⁶³: Հեղինակի մտադրությունը իրագործվում է նաև «Dumbledore» նորաբանության կիրառությամբ, որը ծագում է Հեմփշայրի բարբառից, որում նշանակում է «իշամեղու»²⁶⁴, արտահայտելով հերոսին հատուկ եռանդունության իմաստը:

Ամփոփելով՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

- Ֆենթըրզի ժանրի բնորոշ լեզվական առանձնահատկություններից է հեղինակային նորաբանությունների կիրառությունը: Հեղինակային տվյալ նորաբանությունները գրեթե միշտ ծնվում և մահանում են հենց տվյալ ստեղծագործությունում՝ կիրառվելով միայն դրա շրջանակներում, սակայն երբեմն հեղինակային այս նորաբանությունները կարող են լայն կիրառություն ստանալ և նույնիսկ ներառվել բառարաններում:

- Ֆենթըրզի ժանրին պատկանող «Հարրի Փոթերը և փիլիսոփայական քարը» վեպում նորաբանությունները հանդես են գալիս որպես կարևոր տեքստակազմիչ գործոն, քանի որ հենց դրանց օգնությամբ է հեղինակը պատկերում մտացածին, երևակայական իրականությունը, որում զարգանում են իրադարձությունները:

Վեպում հանդիպող հեղինակային նորաբանությունները բազմաթիվ են և բազմազան: Նորաբանությունների գոյություն ունեցող տարբեր դասակարգումներից գրեթե բոլորը տեղ են գտել տվյալ ստեղծագործության մեջ, որոնցից յուրաքանչյուրը կարևոր գործարանական արժեք է կրում:

Кристине Согикян, Анна Шахбазян

НЕОЛОГИЗМЫ КАК ТЕКСТОФОРМИРУЮЩИЕ ЭЛЕМЕНТЫ ЖАНРА ФЕНТЕЗИ В РОМАНЕ ДЖ. К. РОУЛИНГ "ГАРРИ ПОТТЕР И ФИЛОСОФСКИЙ КАМЕНЬ"

В статье изучается текстоформирующая роль неологизмов в жанре фэнтези, в частности, в романе Дж. К. Роулинг "Гарри Поттер и философский камень, анализируются различные лингвистические теории об основных типах неологизмов и их особенностях, а также их

²⁶³ http://www.etymonline.com/index.php?term=alb&allowed_in_frame=0

²⁶⁴ <http://www.etymonline.com/index.php?term=dumbledore>

источники, изучаются различные примеры авторских неологизмов с точки зрения происхождения, типов значения, семантической мотивации и прагматической ценности неологизмов.

Kristine Soghikyan. Anna Shahbazyan

**NEOLOGISMS AS TEXT-FORMING ELEMENTS IN FANTASY
GENRE IN J. K. ROWLING'S "HARRY POTTER AND THE
PHILOSOPHICAL STONE"**

The present article aims to explore the text-forming role of neologisms in fantasy genre, particularly in J. K. Rowling's "Harry Potter and the Philosophical Stone". It analyses various linguistic theories on the essence and main types and sources of neologisms, and proceed with the study of various examples of author's neologisms in the novel. The examples are analysed from the point of view of their origin, type, meaning, semantic motivation and pragmatic value.

КАТЕГОРИЯ АВТОРА В ЭСТЕТИЧЕСКОЙ СИСТЕМЕ
ДЖОНА ФАУЛЗА

Ключевые слова: Фаулз, категория автора, творческое сознание, проблема свободы, повествовательная стратегия

В эстетической системе Джона Фаулза категория автора – одна из важнейших проблемных областей в пространстве размышлений писателя о феномене творческого сознания. Он, безусловно, не одинок в своем интересе: для литературы и литературоведения XX века это один из самых дискуссионных вопросов (назовем здесь имена В.В.Виноградова, М.М.Бахтина, Р.Барта, М.Фуко).

Одним из свидетельств обостренного интереса писателя к данной проблеме нам представляется настойчивое возвращение Фаулза к вопросу о форме повествования: что предпочтительнее для романиста – первое или третье лицо? Эта дилемма возникает еще задолго до выхода в свет его первого романа «Коллекционер» (The Collector, 1963). В 1956 году, переживая творческие затруднения, он уговаривает себя: *«Необходимо писать в третьем лице – требуется аналитический подход. Недопустимо погружение в себя – вся природа двадцатого века восстает против этого. Или же это должно быть совершенно отстраненное, безучастное первое лицо, разрушающее любую симпатию, которую могли бы вызвать персонажи»*²⁶⁵. Спустя три года, размышляя о романе Джона Брейна «Путь наверх», Фаулз говорит о «смертельном риске» вести повествование от первого лица: выбирая этот путь, невозможно соблюсти объективность повествовательного тона²⁶⁶. Однако, в 1964, издав «Коллекционера» и вернувшись к работе над «Волхвом», он

²⁶⁵ Fowles J. The Journals. Vol.1: 1949-1965. – New York: Alfred A. Knopf, Publisher 2005. p. 372

²⁶⁶ Там же, с.422

констатирует, как будто окончательно: *«Пишу в первом лице. Не могу вообразить, что роман можно писать как-то иначе. Но мне кажется, что это тоже одно из проявлений малодушия. Возможно, когда-нибудь я заставлю себя писать в третьем лице»*²⁶⁷. И действительно, эта позиция не была бесповоротной: хотя десятилетие спустя в беседе с Дж. Кемпбеллом (1974) он вновь говорит о своем предпочтении первого лица: *«Я считал повествование от первого лица намного более естественным»*²⁶⁸, – доминировать эта форма все же будет только в начале творческой деятельности. Так, «Коллекционер» – два дневника, каждый из которых, естественно, написан от первого лица. Та же повествовательная позиция использована в романе «Волхв». Но уже среди произведений, входящих в сборник «Башня из черного дерева» (The Ebony Tower, 1974) лишь «Бедный Коко» (Poor Koko) – прямо повторяет эту повествовательную стратегию. В «Туче» (The Cloud) прихотливо переплетаются несколько голосов, а заглавная повесть (The Ebony Tower), «Элидук» (Eliduk) и «Энигма» (The Enigma) – повествования от третьего лица. Хотя, по свидетельству А.П.Сарухаян, первоначально повести сборника, как и «Женщина французского лейтенанта», писались от первого лица²⁶⁹. Так что уже в конце шестидесятых – начале семидесятых заметно постепенное смещение к повествованию в он-позиции. Позже, в романе «Дэниел Мартин», рассказ от первого и от третьего лица чередуются, однако здесь, на наш взгляд, несколько иная ситуация – выбор повествовательного фокуса обусловлен тем, что перед нами процесс создания романа, и в центре внимания здесь перипетии пишущего «я», авторской роли. Потому колебания между «я» и «он» при выборе способа повествования в данном случае – это сомнения не автора (Фаулза), но героя (Дэниела). Впрочем, эти сомнения близки самому

²⁶⁷ Там же, с. 609

²⁶⁸ Campbell J. An Interview with John Fowles // Contemporary Literature. Vol. XVII, № 4. The university of Wisconsin press, 1976. p. 463

²⁶⁹ Ерофеев В.В. Ж.-П. Сартр // Французская литература 1945-1990. М., 1995. С. 70-86

Фаулзу: он писал в дневнике, что о собственном «я» размышляет как о чем-то в третьем лице, и когда пишет стихи о себе, случается, что глагол, следующий за этим местоимением, он ставит в третьем лице²⁷⁰. Наконец, от третьего лица написаны поздние романы Фаулза – «Мантисса» (Mantissa, 1982) и, исключая главы в форме протоколов допросов и писем Генри Аскью, «Мэггот» (A Maggot, 1985).

Такое внимание к вопросу о выборе я- или он-фокуса повествования свидетельствует, что для английского романиста это не просто техническая проблема, не просто проблема стилистическая. Это вопрос, решение которого связано с формированием в рамках его собственной эстетической системы концепции автора. Это вопрос о мере объективности автора, степени авторской свободы, границах свободы персонажей романа и мере свободы читателя – а по большому счету, размышления об одной из важнейших для Фаулза философских проблем, решаемой им на протяжении всей творческой жизни – о проблеме свободы как таковой. Показательно, что к вопросу о власти романиста над текстом обращался и философ-экзистенциалист Жан-Поль Сартр, оказавший колоссальное влияние на осмысление проблемы свободы Фаулзом. В критической статье «Г-н Франсуа Мориак и свобода» (1939) Сартр утверждал, что *«романист не должен быть “богом” своих героев, то есть обладать вездесущностью, которая позволяла бы ему беспрепятственно менять точку наблюдения»*²⁷¹. Философ связывал жизнеспособность персонажа с его независимостью: *«Вы хотите, чтобы ваши персонажи жили? Так сделайте их свободными. Важно не определять и, тем более, не объяснять... а всего лишь показывать неподвижные страсти и действия»*²⁷².

Приведенные утверждения французского философа, безусловно, перекликаются с известными размышлениями тринадцатой главы

²⁷⁰ Fowles J. The Journals.... p. 446

²⁷¹ Ерофеев В.В. Ж-П. Сартр... С. 82

²⁷² Там же

романа Фаулза «Женщина французского лейтенанта» (The French Lieutenant's Woman, 1969) о мере власти романиста над своими персонажами. В этой главе писатель убеждает читателя: *«Чтобы обрести свободу для себя, я должен дать свободу и ему, и Тине, и Саре, и даже отвратительной миссис Поултни. Имеется лишь одно хорошее определение Бога: свобода, которая допускает существование всех остальных свобод. И я должен придерживаться этого определения»*²⁷³. Позже в беседе с Джеймсом Кемпбеллом Фаулз подтверждал факт близости ему точки зрения Сартра, согласно которой *«всеведущий рассказчик существует для того, чтобы разрушить анонимность персонажей; им ничего не остается делать, как обрести собственные роли, и романист не имеет права постоянно вторгаться в текст с оценивающими заявлениями»*²⁷⁴.

Характерно, что в своем интервью Кемпбеллу Фаулз соотносит повествование от третьего лица с позицией всезнающего рассказчика²⁷⁵. Однако писатель не абсолютизирует воздействие избранной автором повествовательной стратегии, отчетливо осознавая различный потенциал, присущий каждой из них. Для английских писателей XIX века всеведущее повествование от третьего лица – наиболее распространенная форма, но степень авторитарности и в случае выбора этого способа повествования, может быть различной. Так, еще в 1960 году, рассуждая об особенностях творческой манеры Джейн Остин, Фаулз писал в дневнике: *«Джейн просто создает мир, а не снисходит до него; она не властвует в нем, не возвышается над ним – даже для того, чтобы взять на себя... роль проводника. В некотором смысле Джейн отдаленнее..., отстраненнее, но ее мир более целостен и в высшем смысле более реален»*. И в этой способности противопоставляет ее Джордж Элиот, которую, как он полагает, *«не обошла стороной*

²⁷³ Фаулз Дж. Любовница французского лейтенанта / Пер. с англ. М.И. Беккер, И.Б. Комаровой. СПб.: Азбука, 2001.С. 114-115

²⁷⁴ Campbell J. An Interview with John Fowles... p. 463-464

²⁷⁵ Там же

*настоятельная потребность ее века в авторитарности, в том, чтобы быть авторитарным»*²⁷⁶.

В шестидесятые годы двадцатого века, когда писался роман «Женщина французского лейтенанта», вопрос о пределах власти романиста над текстом стоял особенно остро, именно шестидесятые оказались тем рубежом, за которым дискуссия о категории автора стала одной из центральных во французском литературоведении, а затем и в философии. И размышления Фаулза в романе об этом вопросе рождались не только в ситуации диалога с автором «Бытия и ничто», но и были откликом на работы доминировавшего на французской литературной сцене в течение 1950-х и 1960-х Ролана Барта и одного из крупнейших представителей школы «нового романа» Алена Роб-Грийе, чья творческая практика и теоретические концепции были особенно близки Барту.

С точки зрения Роб-Грийе и других «новых романистов» традиционный роман с его опорой на всезнающего повествователя устарел. *«Новороманистов никак не устраивал тот всевидящий и всезнающий Демиург, который царил в бальзаковском романе. Они низвели творца до уровня персонажа, читателя, от которых он отличался лишь тем, что предвидит неотвратимый ход событий»* – сформулировал этот аспект теории «нового романа» А.Ф. Строев²⁷⁷.

Анализируя предпринятую французским автором попытку воплощения теории «нового романа», Фаулз полемически пишет в эссе-комментарии по поводу создания романа «Женщина французского лейтенанта» (Notes on an Unfinished Novel, 1969): *«Может быть, Роб-Грийе и удалось совсем убрать писателя Роб-Грийе из текста, но ведь он никогда не отрицал, что этот текст написан им самим. Если писатель действительно верит собственному утверждению «Я ничего не знаю о своих героях, кроме того, что можно записать на магнитофон и сфотографировать» (а затем*

²⁷⁶ Fowles J. The Journals... p.441

²⁷⁷ Строев А.Ф. «Новый роман» // Французская литература 1945. 1990. М., 1995. С. 395

«перемешать» и «сократить»»), логичным следующим шагом было бы взяться за создание магнитофонных записей и фотографий, а не письменных текстов. Но раз такой писатель все еще пишет, и пишет хорошо, как это делает Роб-Грийе, значит, он сам себя выдает с головой: он принадлежит к La Cosa Nostra, и совершенно ясно видно, что он увяз в этом деле гораздо глубже, чем сам готов допустить»²⁷⁸.

Не менее значимой в вопросе о роли автор в романном повествовании была для Фаулза и позиция Ролана Барта. Нам представляется, что, упоминая в романе, опубликованном в 1969 году, имя Ролана Барта, Фаулз, по всей вероятности, вряд ли принимал во внимание знаменитую статью Барта «Смерть автора», вышедшую в свет только в 1968. Отсылка к Барту в данном контексте скорее обусловлена иными обстоятельствами. С одной стороны, тем, что французский структуралист разделял установку «новых романистов, направленную на ослабление власти создателя в романе (его концепция «смерти автора» станет закономерным развитием этой установки), – поэтому имена Барта и Роб-Грийе стоят рядом. С другой – тем, что Фаулза вообще интересует творчество Барта (до перехода последнего на постструктуралистские позиции)²⁷⁹.

²⁷⁸ Фаулз Дж. Кротовые норы / Пер. с англ. И. Бессмертной, И. Тогоевой. М.: Махаон, 2002. С.46

²⁷⁹ Барта заботит и вопрос о форме повествования. В «Нулевой степени письма» Барт подвергает обстоятельному разбору особенности письма романа – преимущественно XIX века. Он полагает, что использование простого прошедшего времени и третьего лица – способы, с помощью которых роман оповещает о своей вымышленности: это *«тот неотвратимый жест, с помощью которого писатель указывает на надетую им маску»*. Эти способы гарантируют потребителям чувство безопасности, которое внушает вымысел правдоподобный, но непрестанно напоминающий о своей лживости. При этом Барт замечает, что форма повествования от третьего лица неоднородна, и сравнивает их функционирование у Бальзака и в современном романе. О третьем лице в романе Бальзака он пишет: *«Это не конечный продукт, который породило «я», претерпевшее ряд трансформаций и возведенное в ранг всеобщности; это – первичный, исходный*

В пятидесятые – первой половине шестидесятых годов, согласно Г.К. Косикову, Барта особо занимала проблема противостояния автора и данного ему языка²⁸⁰. Рассуждая в работе «Нулевая степень письма» (1953) о различных видах письма, он констатировал, что писатель трагически несвободен в своих отношениях с языком, который навязывает ему дополнительные, идеологически окрашенные смыслы – письмо неизбежно состоит на службе у той или иной идеологии. Барт писал: *«Да, сегодня я вполне могу избрать для себя то или иное письмо и тем самым утвердить свою свободу – притязнуть на новизну или, наоборот, заявить о своей приверженности к традиции; но все дело в том, что я неспособен оставаться свободным и дальше, ибо мало-помалу превращаюсь в пленника чужих или даже своих собственных слов. Остаточные магнитные токи, упорно исходящие не только от всех разновидностей чужого, но и от моего собственного прошлого письма, перекрывают звучание моего нынешнего голоса»*²⁸¹.

элемент романа, его материал, а не плод созидательного акта». Напротив, у многих современных писателей, по его мнению, появление третьего лица - это не исходная точка, а результат: *«развитие истории индивида как бы совпадает с последовательной сменой спрягаемых форм глагола: начав с «я» как с наиболее полного воплощения безымянности, автор как личность – по мере того как экзистенция отливается в форму конкретной судьбы, а монолог, обращенный к самому себе, превращается в Роман – шаг за шагом завоевывает право доступа к третьему лицу».* Заметим, что вектор отмеченного Бартом движения в целом совпадает с направлением творческих поисков Фаулза, двигавшегося, как мы уже говорили, от формы первого лица в первых своих романах – к форме третьего в более поздних. Одновременно, та же тенденция характерна и для динамики повествовательной формы романа «Дэниел Мартин»: первоначально неустойчивая повествовательная позиция, колеблющаяся между «я» и «он» подходами, постепенно обретает устойчивое равновесие в форме повествования от третьего лица.

²⁸⁰ Косиков Г.К. Р. Барт – семиолог, литературовед // Барт Р. Избранные работы. Семиотика. Поэтика: Пер. с фр. / Сост., общ. ред. и вступ. ст. Г.К. Косикова. М.: Прогресс, 1989. С. 24

²⁸¹ Барт Р. Нулевая степень письма // Французская семиотика: От структурализма к постструктурализму: Пер. с фр. и вступ. ст. Г.К. Косикова. М.: Прогресс, 2000. С.57

Таким образом, когда писатель отправляется на поиски собственных слов, он неизбежно снова и снова получает в распоряжение письмо, «за которое он не несет никакой ответственности, но которым, однако, только и может пользоваться»²⁸². По мнению Г.К. Косикова, проблема для Барта состоит *«в отыскании такой позиции, которая, отнюдь не понуждая писателя порвать с языковой деятельностью, с литературой, то есть не обрекая его на “молчание”, тем не менее позволила бы ускользнуть из-под ига “массифицирующего” слова»*.

Поиски, которые велись в этой области Бартом, по словам того же ученого, были одним из способов противостояния Барта власти всевозможных культурных стереотипов, унифицирующей власти «всеобщности», «стадности», «безразличия» над единичностью, уникальностью и неповторимостью. И тем самым представляли для Фаулза несомненный интерес. Чтобы понять это, достаточно перелистать первые страницы его дневников: их лейтмотивом становится потребность вырваться из окружающей будущего писателя *«вечной атмосферы упрямой враждебности»* (1949 год)²⁸³. Его выводит из себя необходимость «быть как все». Те же эмоции сохраняются и в более поздних записях: «Такие вечеринки делают очевидным, насколько отвратителен средний уровень горожан. Пустота, пустота, пустота» (1955 год)²⁸⁴; *«представители английского среднего класса перешептываются за едой, после чего поднимаются и идут, чтобы затем, лениво развалясь, устроиться перед телевизором. Снаружи орут какие-то паршивцы, внутри последние представители апсиен региме поддерживают на плаву свой уже отмирающий образ жизни и нерушимые законы совершенно нежизнеспособного джентльменства»* (1964 год).²⁸⁵ И писатель с горечью констатирует: *«... обычные мужчина и женщина не*

²⁸² Там же, с. 95

²⁸³ Fowles J. The Journals... p.3

²⁸⁴ Там же, с. 368

²⁸⁵ Там же, с.616

способны видеть мир иначе, чем сквозь ужасающий смог истолкований и мнений, навязываемых обществом» (1962 год)²⁸⁶.

В позднейших текстах эта взаимосвязь размышлений Фаулза об убивающем живую мысль и чувство образе жизни и способах утверждения власти тех, кого он в «Аристосе» (The Aristos, 1964) назовет «многие», с ранним творчеством Барта, обнажится. Так, по мнению Арнольда Э. Дэвидсона, сборник «Башня из черного дерева» в значительной степени – реплика на «Мифологии» Барта: *«Сборник... высмеивает создателей мифов, буржуазных поставщиков стереотипов и самодовольство, с которым все это выдается за истину».*²⁸⁷

Это становится особенно явным, если обратить внимание на рассказ «Туча» из этого сборника. Эпиграф к нему взят Фаулзом из работы Барта «Мифологии» (1957), а один из эпизодов представляет собой диалог героев об этой книге. Героиня рассказа Кэт, редактировавшая, как следует из текста, перевод одной из работ Барта, поясняет свое понимание основного положения «Мифологии»: *«... существуют всевозможные категории знаков, при помощи которых мы общаемся. И одна из наиболее подозрительных – это язык; для Барта главным образом потому, что язык очень сильно испорчен и искажен структурой капиталистической власти».*²⁸⁸ Кэт полагает, что Барт стремится заставить людей осознать, каким образом в процессе общения они манипулируют другими при помощи языка. Слово – вместилище множества смыслов, неявных для получателей сообщения, и подчас скрытых от их отправителей: *«Фраза есть то, что говорящий подразумевает, что она подразумевает. То, что он втайне подразумевает, что она подразумевает. Но это может быть и прямо обратным. То, что он не*

²⁸⁶ Там же, с. 516

²⁸⁷ Davidson A.E. The Barthesian configuration of John Fowles's The Cloud // The Centennial Review, Ann Arbor, 1984/. Vol. 28, № 4, Vol.29, № 1. P. 80

²⁸⁸ Фаулз Дж. Пять повестей: Башня из черного дерева. Элидук. Бедный Коко. Энигма. Туча: Повести / Пер. с англ. И. Бессмертной и И. Гуровой. М.: ООО «Издательство АСТ», 2004. С. 400

*подразумевает, что она подразумевает. То, что она подразумевает, дает представление о его истинной натуре. Его истории. Его интеллекте. Его честности. И так далее».*²⁸⁹

Более того, герои рассказа, имея в своем распоряжении, казалось бы, общий для них всех язык, не способны понять друг друга. Слушают, но не слышат. В тексте складывается ситуация, подобная той, о которой Барт пишет в эссе «Доминиси, или торжество литературы» (1957): их *«языки... несхожи, непроницаемы друг для друга <...> сами фразы и слова языка, его элементарные аналитические частицы по большей части лишь слепо тычутся друг в друга и не могут сойтись».*²⁹⁰ И в условиях этого всевластия «мякины болтовни», Фаулз, подобно Барту, испытывает потребность вернуться к первичным, денотативным значениям слов, которые соответствовали бы реальности.

Однако в этой точке намечается расхождение Фаулза с Бартом. Представление последнего о тотальной власти языка по мере движения к постструктуралистскому этапу только укреплялось. Предполагаемый выход из ситуации – овладение «нулевой степенью письма», «позволяющей сбросить иго “ложного сознания” и способной привести человека в “новый и совершенный адамов мир”, где слова научатся передавать смысл “самих вещей”, а не их принудительных идеологических истолкований, обретут первозданную “свежесть” и станут наконец “счастливы”», представал для Барта все более утопическим. Как считает Г.К. Косиков, единственный способ освобождения Барт находит в том, чтобы «обмануть», «обойти с тыла» язык-противник. Сознательно подчинившись его нормам и правилам, писатель получает возможность свободно «играть литературой»: *«Варьирование» - единственное средство, позволяющее автору бороться с его подлинным врагом*

²⁸⁹ Там же, с.401

²⁹⁰ Барт Р. Мифологии: Пер. с фр. С.Н. Зенкина. М.: Изд-во им. Сабашниковых, 2000. 320 с.95

– банальностью, ибо «банальность» есть не что иное как стремление литературной институции подчинить писателя своим штампам».²⁹¹

Но в поединке «автор – язык» верх неизбежно одерживает последний, что привело Барта к выдвигению знаменитого тезиса о «смерти автора»: в произведении «говорит» не автор, а язык. Статья Барта «Смерть автора» (1968) и М. Фуко «Что такое автор?» (1969), как считает И.П.Ильин, знаменовали собой формирование специфически постструктуралистской концепции теоретической «смерти человека»²⁹², и проблема теоретической аннигиляции принципа субъективности впоследствии приобрела в постмодернизме особую актуальность.²⁹³ Так, согласно Ю. Кристевой, «смерть человека» выступает его растворением в детерминационных воздействиях на индивидуальное сознание со стороны структур языка и различных дискурсивных практик. А по мысли Ж. Деррида, интерпретирующее «я» само по себе есть не более чем текст, сотканный из «культурных универсалий и дискурсивных матриц, культурных кодов и интерпретационных конвенций».²⁹⁴

Фаулз в этой ситуации избирает прямо противоположное направление движения: не умерщвление субъекта, но усиление его власти. Не деперсонализация авторского, творческого начала, но его активизация. Изобель, героиня рассказа «Энигма» из сборника «Башня из черного дерева», говорит о другом герое рассказа, Джоне Маркусе Филдинге: «У его жизни был автор. В определенном смысле. Не человек. Система, мировоззрение? Что-то, что написало его. Действительно уподобило его персонажу книги».²⁹⁵ Человек, который всю жизнь существовал подобно созданному кем-то другим литературному персонажу, подчиняясь «мифологизирующему языку»,

²⁹¹ Косиков Г.К. Р. Барт – семиолог, литературовед... С. 29-30

²⁹² Западное литературоведение XX века: Энциклопедия / Гл. ред. Е.А. Цурганова. – М.: Интрада, 2004. С 134

²⁹³ Там же, с.129

²⁹⁴ цит. по: Новейший философский словарь. Постмодернизм / Гл. ред. и сост. А.А. Грицанов. Минск: Современный литератор, 2007. с.620

²⁹⁵ Фаулз Дж. Пять повестей...с. 348

в попытке выйти из-под власти системы вырывается и... исчезает. Изобель предлагает Дженнингсу гипотезу о самоубийстве Филдинга: в условиях, когда человек живет «неподлинной» жизнью, когда его «пишут» извне, стремление удрать из ловушки может претвориться в добровольное исключение себя из системы. И из жизни. В «смерть субъекта». Но чтобы действительно обрести свободу – подлинную свободу – существует другой, более плодотворный способ: человек должен сам стать автором своего существования. Магом. Творцом. И именно о способах обретения этого пути – большая часть созданного Фаулзом.

Однако проблема свободы возникает не только при постановке вопроса о противостоянии «автор – язык», но и при рассмотрении отношения «текст – читатель». Характер взаимодействия элементов последней пары привлекал внимание как Барта – особенно в последний, постструктуралистский, период его творчества, так и Фаулза.

Знаменитая финальная фраза статьи «Смерть автора», в которой Барт утверждал, что *«рождение читателя приходится оплачивать смертью Автора»*,²⁹⁶ отчетливо маркировала этот поворот в сторону «принимающей стороны». Для Барта процесс создания литературного текста – «работа», в которой на равных правах с писателем участвует читатель.²⁹⁷ Однако это оказывается возможным не всегда. В постструктуралистский период Барт различает две разнокачественные реальности – Произведение и Текст. Первая из них – «то, что «сказал» автор», вторая – «то, что «сказалось» в произведении независимо от авторской воли».²⁹⁸ И если чтение Произведения, по Барту, есть лишь потребление, то восприятие Текста – это свободная игра с ним. При

²⁹⁶ Барт Р. Избранные работы. Семиотика. Поэтика: Пер. с фр. / Сост., общ. ред. и вступ. ст. Г.К. Косикова. М.: Прогресс, 1989. С. 391

²⁹⁷ Андреев Л.Г. Художественный синтез и постмодернизм // Вопросы литературы. – М., 2001, № 1. С. 16

²⁹⁸ Косиков Г.К. «Структура» и/или «текст» (стратегии современной семиотики) // Французская семиотика: от структурализма к постструктурализму. М.: Прогресс, 2000. С. 38

условии, что слово «игра» понимается во всей его многозначности: *«Играет сам текст... и читатель тоже играет, причем двояко; он играет в Текст (как в игру) ... он еще и играет Текст»*. Подобно современной постсерийной музыке, в которой исполнитель становится соавтором партитуры, дополняет ее от себя, а не просто «воспроизводит», Текст нуждается в Читателе. *«Текст как раз и подобен такой партитуре нового типа: он требует от читателя деятельного сотрудничества»,* – пишет Барт.²⁹⁹

Принцип сотворчества важен и для Фаулза. Он говорил, что та проза, которая ему нравится и к созданию которой он сам стремится, «делает и чтение занятием активным». В статье «Мертв ли роман?» (Is the Novel Dead? 1970) писатель подчеркивал, что актуализация смысла происходит именно в сознании читателя. Как считает Эллен Пайфер, «работа», *«которую осуществляет читатель – из оставленных автором напечатанных слов вызывать к жизни образы и обдумывать антитезы, решения которых автором не предложены, – означает, что он действительно разделяет с писателем созидательную роль»*.³⁰⁰

Однако возникает вопрос о степени свободы, которой обладает при этом читатель. Барт обвиняет произведение в авторитарном характере его власти: *«... позволяя произведению увлечь себя... читатель (как правило, совершенно бессознательно) усваивает и всю его топику, а вместе с ней и ту идеологию, манифестацией которой является это произведение»*. Но и свобода Текста, как демонстрирует Барт в книге «S/Z» (1970), на поверку оказывается мнимой: *«... авторитарной властью обладает не только произведение, но и все те социально-идеологические инстанции, которые оно интегрирует, все те дискурсы, из которых соткан Текст»*.³⁰¹ В результате, «превращаясь» в произведение, «желая» его, читатель принимает его как данность и потому *«теряет иммунитет как против идеологии самого произведения, так и против всяких тех мелких идеологем, из которых*

²⁹⁹ Барт Р. Избранные работы. Семиотика. Поэтика... С.421

³⁰⁰ Pifer E. Introduction // Critical essays on John Fowles. Boston, Massachusetts, 1986. P.

³⁰¹ Косиков Г.К. «Структура» и/или «текст» ... С.40

*соткан скрывающийся за ним Текст».*³⁰² И для Барта это, естественно, лишает читателя свободы, в которой последний столь нуждается. Поэтому, как констатирует Г.К. Косиков, Барт избирает в своих книгах семидесятых годов авторскую позицию, предполагающую отказ *«от завершающей, резюмирующей, собственно «авторской» установки, которая могла бы охватить, сопрячь и иерархизировать множество голосов, которым он позволил зазвучать».*³⁰³

Позиция Фаулза в данном вопросе близка бартовской в том плане, что он вынуждает читателя дистанцироваться от произведения, не позволяя «превращаться» в него, отождествлять себя с объектом переживания. Особенно отчетливо это видно в романе «Женщина французского лейтенанта», где подобно Барту в «S/Z», Фаулз стремится *«вывернуть наизнанку текстовую ткань, из которой сфабриковано произведение, распустить ее на смысловые нити, смотать их в клубок и выставить напоказ – во всей их идеологической наготе».*³⁰⁴ Как показал В.Г. Тимофеев, используя в романе конвенции от викторианской литературы, Фаулз вновь и вновь помещает читателя в ситуацию, когда послушное, некритичное следование за «условиями игры» ведет его в тупик. С помощью этого приема Фаулз стремится создать художественное пространство, в котором взаимодействие читателя с текстом будет обогащено читательской рефлексией. И именно такой тип художественных текстов, с точки зрения Фаулза, дарует читателю свободу.

Однако в то время как позиция Барта – *«принципиальное уклонение от “последнего” слова и от “последней” ценностной установки»*,³⁰⁵ в центре художественного мира Фаулза существует вполне определенная ценностная система, к принятию которой он стремится привести своего читателя. Как бы не «самоустранялся» он,

³⁰² Западное литературоведение XX века: Энциклопедия / Гл. ред. Е.А. Цурганова. М.: Интрада, 2004. С.21

³⁰³ Там же, с 25

³⁰⁴ Косиков Г.К. Идеология. Коннотация. Текст // Барт Ролан. S/Z. Пер. с фр. 2-е изд., испр. Под ред. Г. К. Косикова. М: Эдиториал УРСС, 2001. С.21

³⁰⁵ Там же, с.25

перекладывая ответственность на плечи персонажей или читателей, Фаулз всегда остается Вседержителем созданной им Вселенной. И даже форма открытого финала, к которой писатель прибегает для сохранения за читателем необходимой степени свободы во взаимоотношениях с текстом («Волхв», «Женщина французского лейтенанта»), не меняет положения дел: смоделированная им реальность сознательно и целенаправленно организует восприятие читателей, ведет в необходимом автору направлении. О том, что произведения Фаулза не предполагают произвольной и безграничной игры с текстом, говорит хотя бы факт издания второй редакции романа «Волхв», которая, как констатирует Рональд Биннс, *«появляется, чтобы исправить возможные неверные прочтения текста»*.³⁰⁶

Таким образом, в эстетической системе Фаулза категория автора приобретает особую значимость. Выбор повествовательной стратегии, постановка вопроса о мере авторской объективности, прояснение отношений автора и языка или автора и читателя – все эти аспекты важны для писателя, считающего свободу одной из абсолютных человеческих ценностей. Можно сказать, что Фаулз всецело разделяет позицию Сартра: *«Автор пишет, чтобы воззвать к свободе читателей»*.³⁰⁷ [11:51]. Именно воззвать, а не принудить, сохранив при этом и свою собственную свободу.

Dina Chervyakova

THE CATEGORY OF THE AUTHOR IN JOHN FOWLES' AESTHETICS

The paper investigates the category of the author in John Fowles' aesthetics. The peculiarities of Fowles' choice of narrative strategy, his understanding of the relationship between author and reader, writer and language are studied.

³⁰⁶ Binns R. A New Version of The Magus // Critical essays on John Fowles. Boston, Massachusetts. 1986. P.100

³⁰⁷ Сартр Ж.-П. Что такое литература?: Пер. с фр. Н.И. Полторацкой – СПб.: Алетейя, 2000. С.51

ԸՆՏԱՆԻՔԻ ՄՈՂԵԼԸ Է.ՕԼԲԻԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՊԻԵՄՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր՝ Էդվարդ Օլբի, ամերիկյան թատրոն, ընտանիքի մոդել, սպառողական հարաբերություններ, արսուրդի թատրոն, պոստմոդեռնիզմ, ամերիկյան երազանք, անկայուն հավասարակշռություն

Սույն հոդվածը նվիրված է ամերիկյան թատրոնի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդվարդ Օլբիի (Edward Albee) ստեղծագործություններում ընտանիքի մոդելի ուսումնասիրությանը: Հետազոտության համար նյութ են հանդիսացել Օլբիի՝ 1960-ական թվականներին լույս տեսած երեք թատերգություններ, որոնք գրականագետների կողմից ստացել են «պիեսներ ամուսնության մասին» հավաքական անունը³⁰⁸: Դրանք են «Ամերիկյան երազանք» (*The American Dream, 1960*), «Ո՞վ է վախենում Վըրջինիա Վուլֆից» (*Who's Afraid of Virginia Woolf? 1961-1962*) և «Նուրբ հավասարակշռություն» (*A Delicate Balance, 1966*) պիեսները: Հարկ է նշել, որ նշված երեք պիեսներում ներկայացված ընտանիքի մոդելը հիմնված է հեղինակի ընտանիքի պատմության վրա և ունի հստակ ընդգծված ինքնակենսագրական բնույթ:

Օլբին, որպես կանոն, իր պիեսներում ներկայացնում է անկայուն ընտանիքներ, որոնք ունեն բազմաթիվ խնդիրներ: Հեղինակի՝ վերը նշված ստեղծագործությունների յուրահատկությունն այն է, որ կերպարները պիեսից պիես հիմնականում կրկնվում են: Ընտանիքի հայրը թույլ է և կնոջ որոշումներից կախված, մայրը, ընդհակառակը, ուժեղ է, կամակոր և ընտանիքի բոլոր որոշումները կայացնում է միանձնյա: Ինչպես նշում են Օլբիի կենսագիրները, նրա հայրն էլ ընտանիքում ճնշված էր, կնոջն անվանում էր «մայրիկ» /Mommy/, իսկ մայրն իշխող բնավորություն ուներ, ինչից կարող ենք եզրակացնել, որ պիեսների հերոսների համար նախատիպ են հանդիսացել հեղինակի ծնողները: Օլբիի պիեսներում գրեթե միշտ առկա է որդու կերպարը, որի մասին ծնողները կամ երազում են, կամ հորինում, կամ կորցնում դժբախտ պատահարի հետևանքով: Ինչպես հայտնի է, ինքը՝ Օլբին, երկու շաբաթական հասակում մանկատանից որդեգրվել է Օլբիների ընտանիքի կողմից և բավական սառը վերաբերմունքի է արժանացել ծնողների կողմից, ուստի նման կերպարի

³⁰⁸ <http://www.newyorker.com/magazine/2014/12/01/just-folks-4>

առկայությունը նրա ստեղծագործություններում ևս կենսագրական բնույթ է կրում:

Վերջապես, պիեսներում, որպես կանոն, առկա է ընտանիքի ևս մեկ անդամ, սովորաբար՝ ամուսիններից մեկի քույրը կամ մայրը, որին ազգականները ներկայացնում են որպես խենթ, ծալապակաս, որին լուրջ չեն վերաբերվում, որը, սակայն, ընտանիքի ամենախելացի անդամն է և տեսնում է իրական պատկերը արտուրդայնության շղարշից այն կողմ:

Առաջին անգամ ընտանիքի այս մոդելին հանդիպում ենք «Ամերիկյան երազանք» պիեսում, որտեղ Օլբին ներկայացնում է միջին դասի մի ընտանիք: Պիեսի առաջին էջերից պարզ է դառնում, որ ընտանիքի անդամներն ինչ-որ մեկին սպասում են: Ուշագրավ է, որ այս պիեսի գործող անձինք չունեն անուններ: Օլբին նրանց պարզապես անվանվում է Մայրիկ, Հայրիկ և Տատիկ: Մի կողմից՝ անունների բացակայությունը կարող է դիտարկվել որպես ինքնակենսագրական տարր, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, Օլբիի հայրն էլ կնոջն անվանում էր «մայրիկ», մյուս կողմից՝ հերոսների անունների բացակայությունը կարող է խորհրդանշել նրանց ներքին դատարկությունը, հոգևորի բացակայությունը: Պիեսի հերոսները, զուրկ լինելով անհատականությունից, հանդես են գալիս որպես խորհրդանիշներ, որոնք մարմնավորում են միջին վիճակագրական հասարակությունը՝ իր տարբեր դրսևորումներով: Հայրիկը թույլ է և անկարող ուղիղ և փոխաբերական իմաստներով: Ինչպես պարզվում է հետագայում, վնասվածքից հետո նա նաև սեռականապես տկար է դարձել: Մրանով Օլբին ցույց է տալիս, որ հայրիկը կորցրել է իր «տղամարդկությունը», և դա է հիմնական պատճառը, որ նա կախված է կնոջ որոշումներից և հեզմական վերաբերմունքի է արժանանում վերջինիս կողմից: Մայրը, իր հերթին, ուժեղ է, անզուսպ, կամակոր և ավտորիտար:

***Հայրիկ.** Կարծում եմ՝ պետք է մի փոքր էլ մտածենք այդ մասին: Գուցե շտապել ենք... մի փոքր... գուցե... Կցանկանայի մի քիչ էլ խոսեինք այդ մասին:*

Նորից լսվում է դրան զանգի ձայնը/

***Մայրի.** Խոսելու բան չկա: Դու որոշել ես: Դու վճռական էիր, առնական և հաստատուն:*

***Հայրիկ.** Մենք պետք է հաշվի առնենք դրական և...*

***Մայրիկ.** Չեմ վիճի քո հետ: Դա պետք է արվի: Դու ճիշտ էիր: Բացիր դուռը:*

***Հայրիկ.** Բայց ես համոզված չեմ...*

Մայրիկ. *Բացիր դուռը:*

Հայրիկ. *Ես իրոք չ'վճռական էի:*

Մայրիկ. *Այո, շատ վճռական:*

Հայրիկ. *Իսկ, ես իրոք հաստատուն էի:*

Մայրիկ. *Շատ հաստատուն էիր: Ես նույնիսկ դողացի:*

Հայրիկ. *Եվ առնական'ն: Ես իրոք առնական էի:*

Մայրիկ. *Օհ հայրիկ, դու այնքան առնական էիր, որ ես դողացի և ուշքս գնաց:*

Նորից հնչում է գանգը /

Հայրիկ *Գուցե պետք է նրանց ետ ուղարկել...*

Մայրիկ. *Օհ մի քեզ տես: Դու վախից հալվում ես: Դու անվճռական ես:*

Դու դգիկ ես:³⁰⁹

Պիեռում հատուկ ուշադրության է արժանի տատիկի կերպարը, որն առանցքային դեր է կատարում պիեռում: Պիեռի սկզբում տատիկը հանդես է գալիս որպես զառամյալ մի կին, որը միայն բողբոջում է և որի խոսքերը ոչ ոք լուրջ չի ընդունում: Սակայն ընթացքում հանդիսատեսը/ընթերցողը հասկանում է, որ տատիկը պիեռի ամենախոհեմ և խելացի կերպարն է: Հենց նա է լույս սփռում առաջին հայացքից արտուրդային թվացող իրադարձություններին: Հատկանշական է, որ հենց տատիկն է պիեռի վերջում, երկու անգամ քանդելով չորրորդ պատը, դիմում հանդիսատեսին, այսպիսով պիեռի գործող անձից վերածվելով, այսպես կոչված, ռեժիսորի օգնականի: Ինչպես գիտենք, ռեժիսորի օգնականի կերպարն առաջին անգամ ամերիկյան բեմում ներկայացրեց Թորնթոն Ուայլդերն «Մեր քաղաքը» պիեռում: Սա մի կերպար էր, որի հիմնական գործառույթն էր հանդիսատեսի հետ կապ պաշտպանելը, նրան պիեռի անմիջական մասնակից դարձնելը, ինչպես նաև կատարվող իրադարձությունների վերաբերյալ որոշ բացատրություններ տալը: Տատիկի միջոցով պարզվում է, որ մայրիկն ու հայրիկը զավակ են որդեգրել, որին, սակայն, վերաբերվել են ինչպես առարկայի: Պարզվում է՝ մարդը, որին պիեռի սկզբից սպասում են մայրիկն ու հայրիկը, մանկատան աշխատողն է, որը պետք է իրենք «ապրանքը»՝ որդուն, փոխարինի նոր «ապրանքով»՝ երիտասարդով, որին կոչում են «ամերիկյան երագանք»՝ արտաքուստ գեղեցիկ և հասարակության պատկերացումներին համապատասխան, սակայն ներքուստ դատարկ:

³⁰⁹ Albee E. The American Dream. The Collected Plays. Volume I. Overlook Duckworth. New York. USA. P.110. (թարգմ.՝ հեղ.):

Տիկին Բարկեր. Իսկ հետո նրանք ի՞նչ արեցին:

Տառիկ. Ի՞նչ արեցին: Իսկ վերջում, պատկերացնում եք, նա վերցրեց ու մահացավ: Եվ հասկանում եք, թե ինչպես էին նրանք իրենց զգում դրանից հետո, չէ որ նրանք վճարել էին դրա համար: Այդ պատճառով, նրանք կանչեցին այն կնոջը, որը վաճառել էր նրանց այդ բարուրը և ասացին նրան, որպեսզի իսկույն գա իրենց բնակարան: Նրանք բավարարվածություն էին ուզում ստանալ, ուզում էիր իրենց գումարը վերադարձնել: Ահա ինչ էին նրանք ուզում:³¹⁰

Այսպիսով, «Ամերիկյան երագանք» պիեսում Օլբին, առաջին անգամ ստեղծելով ընտանիքի նման մոդել, հանդիսատեսի ուշադրությանն է ներկայացնում միջին դասի ամերիկյան սպառողների: Նույնիսկ բարոյական հարցերը նրանք լուծում են փողի միջոցով. որդին գնվում է, իսկ նրա «վատ աշխատանքից» դժգոհ ծնողները նրան հետագայում փոխարինում են նոր «ապրանքով»:

Ընտանիքի նմանատիպ մոդել հեղինակը ներկայացնում է «Ո՞վ է վախենում Վըրջինիա Վուլֆից» պիեսում: Այստեղ որոշ կերպարներ կրկնվում են միայն մեկ տարբերությամբ. Օլբին այս պիեսում իր կերպարներին օժտում է անուններով: Մայրիկին և հայրիկին փոխարինում են Մարթան և Ջորջը, որոնց անունները հղում են ԱՄՆ առաջին նախագահ և առաջին տիկին Ջորջ և Մարթա Վաշինգտոններին: Ջորջը և Մարթան այս պիեսում ներկայացնում են առաջին հայացքից կատարյալ ընտանիք, սակայն, ինչպես պարզվում է, նրանք էլ ունեն բավական լուրջ միջանձնանային խնդիրներ: Այս հերոսների խնդիրները ներկայացնելու համար Օլբին ընդգծում է հաղորդակցման ճգնաժամը: Ամուսինները թեև հաճախ երկխոսության մեջ են մտնում, սակայն միմյանց չեն հասկանում:

Մարթա. Միրտս խառնում է քեզնից:

Ջորջ. Ի՞նչ:

Մարթա. Միրտս խառնում է քեզնից:

Ջորջ. Այդքան էլ գեղեցիկ բան չէ դա ասելը, Մարթա:

Մարթա. Ի՞նչ:

Ջորջ. Գեղեցիկ չէր:

Մարթա. Դուրս գալիս է, երբ կատաղում ես: Կարծում եմ՝ քո մեջ դա ինձ ամենաշատն է գրավում:

³¹⁰ Նույն տեղում, էջ 129.

*Դու այնքան պարզամիտ ես: Դու նույնիսկ այդքան խիզախություն չունես:*³¹¹

Այս պիեսում հանդիպում ենք մեկ այլ՝ ավելի երիտասարդ ընտանիքի՝ Նիքին և Հաննիին: Այս երկու ընտանիքներին հակադրելով՝ Օլբին ներկայացնում է յուրաքանչյուր ընտանեկան կյանքի մութ անկյունները: Եթե «Ամերիկյան երազանք» պիեսում հայրիկը մայրիկից կախման մեջ էր, որովհետև կորցրել էր իր «տղամարդկությունը», ապա այս պիեսում Ջորջը Մարթայից իր ամբողջ կյանքում կախման մեջ է ընկել այն պահից, երբ Մարթայի հայրը իրեն աշխատանք է տվել համալսարանում, ամուսնացրել իր դստեր հետ՝ այսպիսով նրա համար հասարակության մեջ դիրք ապահովելով:

Ջորջ. *Հանկարծ այնպես չանես, որ ասածդ տարածվի: Ծերուկին դա դուր չի գա: Մարթայի հայրը իր անձնակազմից նվիրվածություն է պահանջում: Ես այլ բառ էի ուզում օգտագործել: Մարթայի հայրը կարծում է, որ իր անձնակազմը պետք է այդտեղի պատերից կառչի, ինչպես բաղեղը՝ գա այդտեղ և ծերանա, մինչև աշխատանքի համար անպիտան դառնա:*³¹²

Եթե «Ամերիկյան երազանք» պիեսում ծնողները որդեգրում են իրենց երեխային, ապա Մարթան և Ջորջը, չկարողանալով երեխա ունենալ, հորինում են իրենց որդուն և խոսում են նրա մասին այնպես, ինչպես իրական մարդու: Եվ միայն հարբած Մարթայի սիրախաղը Նիքի հետ ստիպում է Ջորջին բացել գաղտնիքը և ընդունել, որ որդին գոյություն չունի: Նմանատիպ խնդրի առաջ էլ կանգնած են Նիքն ու Հաննին: Չնայած սկզբում նրանք ավելի երջանիկ են թվում, սակայն ընթացքում պարզվում է, որ նրանք էլ միմյանց չեն սիրում: Նիքն ամուսնացել է Հաննիի հետ այն բանից հետո, երբ Հանին խոստովանել է, որ հղի է: Սակայն, ինչպես պարզվել է հետագայում, նա ստել է՝ Նիքի հետ ամուսնանալու համար: Իրականությունից փախչելու կամ այն փոխելու հույսով՝ այս երկու ընտանիքներին էլ կապում է գոյություն չունեցող երեխան: Օլբին ցույց է տալիս, որ երկու գույգերին էլ երեխան իրականում պետք չէ, սակայն որոշակի նպատակների հասնելու համար, կյանքի որոշակի փուլում, երկուսն էլ օգտագործել են այդ խաղաքարտը:

³¹¹ Albee E. Who's Afraid of Virginia Wolfe? The Collected Plays. Volume I. Overlook Duckworth. New York. USA. P. 162.

³¹² Նույն տեղում, էջ 180.

Երկու պիեսներում էլ առկա են ինչպես աբսուրդի, այնպես էլ արդեն նշմարվող պոստմոդեռնիզմի տարրեր: Հեղինակն ինտերտեքստուալության միջոցով ավելի է շեշտում բովանդակության նշանակությունը: «Ամերիկյան երազանք» պիեսում Օլբին երիտասարդ տղային համեմատում է Դորիան Գրեյի հետ: Այսպիսով, Օսկար Ուայլդի հայտնի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը հանդես է գալիս որպես պիեսի ինտերտեքստ: Իսկ «Ով է վախենում Վերջինիա Վուլֆից» պիեսում Օլբին դեկոնստրուկցիայի է ենթարկում Զ. Ֆրոյդի Էդիպյան բարդության մասին տեսությունը՝ դրա համար օգտագործելով Էդիպի մասին հին հունական միթոսը:

Ի տարբերություն ներկայացված պիեսների, հաջորդ՝ Փուլլիցերյան մրցանակի արժանացած «Նուրբ հավասարակշռություն» պիեսում աբսուրդի տարրերը սինթեզվում են ռեալիստական տարրերի հետ: Պիեսում կրկին հանդիպում ենք միջին խավը ներկայացնող գույզի՝ Ագնեսին և Թոբիասին, որոնք ապրում են հարուստ առանձնատանը Ագնեսի հարբեցող քրոջ՝ Քլերի հետ: Եթե նախորդ երկու պիեսներում աբսուրդի միջոցով Օլբին ներկայացնում էր կնոջը որպես ծայրահեղ հիստերիկ, երբեմն գոեհիկ անձնավորություն, որը, հաճախ օգտվելով ամուսնու անօգնականությունից, ծաղրում և անարգում է նրան, ապա այս պիեսում Օլբին տրամաբանորեն բացատրում է Ագնեսի պահվածքի և բնավորության պատճառը: Եթե «Ամերիկյան երազանք»-ում՝ մայրիկը, իսկ «Ով է վախենում Վերջինիա Վուլֆից» պիեսում՝ Մարթան ընթերցողի մոտ կարեկցանք չեն առաջացնում, ապա Ագնեսին ընթերցողը հասկանում և նույնիսկ փոքր-ինչ խղճում է:

***Ագնես:** Մինչդեռ քո համար ամեն ինչ այդքան պարզ էր, ես էլ մի փոքր մտորեցի անցյալ գիշեր: Ես պատկած էի մթության մեջ և վերհիշում էի մեր կյանքը՝ տարիներ և տարիներ: Կինը շատ բան է անում: Նա իր սրտի տակ կրում է երեխաներին, եթե, իհարկե, արժանանում է այդ օրհնությանը: Օրհնություն: Այո, իհարկե, չնայած տխրությանը: Նա տիրություն է անում տանը, որպեսզի այնտեղ ուտելու բան լինի, կարգին սպիտակեղեն լինի... Անում է ամեն բան, որն իրենից պահանջվում է, հասկապես եթե սիրում է և սիրված է: Եվ նա ծրագրում է:*

Թոբիաս /մի թոքը ամոթխած/ Գիտեմ, գիտեմ...

***Ագնես.** ...Եվ ծրագրում է: Մինչև վերջ: Սպասում է, որ մի օր մենակ կմնա՝ կաթվածի կամ քաղցկեղի պատճառով: Նա պատրաստվում է դրան: Նա նաև նախօրոք պատրաստվում է նրան, որ մի օր իր երեխաները կմեծանան, օտար կդառնան: Պատրաստվում է նաև նրան,*

ինչի մասին Աստվածաշունչն է պատմում՝ այն պահին, երբ մենք կդադարենք օգտակար լինել: Բայց կան բաներ, որոնք կլինը չի անում:

Թորիաս. Այո՞:

Ազնես. Մենք չենք որոշում ճանապարհը: Մենք հետևում ենք: Մենք թույլ ենք տալիս, որ մեր տղամարդիկ որոշեն բարոյական խնդիրները:

Թորիաս. Երբեք: Դու դա երբեք չես արել քո կյանքում:

Ազնես. Մի շտ, սիրելիս: Ինչ էլ որոշես... ես դա կիրականացնեմ: Ես դա այնպես կանեմ, որպեսզի երբեք չհիմանաս, որ որևէ փոփոխություն է եղել:³¹³

Թորիասն այնքան հաճախ է խուսափել ընտանիքում որոշումներ կայացնելուց, որ Ազնեսը ստիպված որոշումներ կայացնելու գործառույթն իր վրա է վերցրել: Նա երբեմն խիստ է թվում, սակայն նրա խստությունն այս դեպքում տրամաբանական է և հիմնավորված: Ջուլյգն ունեցել է որդի, որին նրանք կորցրել են դժբախտ պատահարի հետևանքով, որն էլ ամուսինների՝ միմյանցից օտարվելու պատճառ է դարձել: Նրանք ունեն նաև դուստր՝ Ջուլիան, որին ընթերցողը հանդիպում է այն ժամանակ, երբ նա տուն է վերադառնում չորրորդ ամուսնալուծությունից հետո: Օլբին ողջ քննադատությունն ուղղում է Թորիասին, ում անգործությունը դստեր դժբախտության պատճառ է դարձել: Պիեսում ակնհայտ հնչում է այն միտքը, որ եթե Թորիասը լավ հայր լիներ և ժամանակին զբաղվեր դստեր խնդիրներով, դրանցից հնարավոր կլիներ խուսափել:

Հարբեցող քրոջ՝ Քլերի կերպարը համապատասխանում է տատիկի կերպարին՝ «Ամերիկյան երագանք» պիեսից: Եթե տատիկին համարում էին խելացնոր, ապա Քլերին անվանում են հարբեցող, ուստի՝ սթափ մտածելու կարողությունից զուրկ: Միննույն ժամանակ, խմիչքն այս պիեսում կարևոր կապող գործոն է համարվում, քանի որ խմում են բոլորը: Հեղինակն այս փաստին հեզմանքով է մոտենում, քանի որ խմիչք օգտագործում են պիեսի բոլոր կերպարները, սակայն միայն Քլերին են ընտանիքի անդամները համարում հարբեցող, այնինչ նա, ինչպես տատիկը, ամենախոհեմ կերպարն է: Կոնֆլիկտն իր գագաթնակետին է հասնում այն ժամանակ, երբ հյուր են գալիս Էդնան և Հարին՝ ևս մեկ ամուսնական զույգ: Նրանք էլ, ինչպես մյուս պիեսների զույգերը, ունեն իրենց խնդիրները: Միայնակ մնալով տանը՝ նրանք սարսափելի վախեցել են լռությունից և տեղափոխվել Թորիասի տուն: Օլբին այստեղ էլ

³¹³ Albee E. The Collected Plays. Volume 2. A Delicate Balance. Overlook Duckworth. New York. USA. P. 96-97.

բարձրացնում է օտարացման հարցը. տանը լռության պատճառը հաղորդակցության պակասն է, քանի որ ամուսիններն ուղղակի դադարել են միմյանց հասկանալ և իրար հետ շփվել: Չկարողանալով նրանց տանից դուրս հանել առանց վիրավորելու՝ Թոբիասն առաջին անգամ ստիպված է որոշում կայացնել: Այստեղ հեղինակը ժանրային փոփոխություն է կատարում՝ Թոբիասի մենախոսությունը ներկայացնելով որպես օպերային արիա՝ սրանով շեշտելով այն պահը, որ Թոբիասի պասիվությանը վերջ է դրվում և նա կարողանում է իրեն լիովին դրսևորել որպես ընտանիքի հայր:

Այսպիսով, բոլոր երեք պիեսներում Օլբին ներկայացնում է դժբախտ ընտանիքներ՝ քննադատելով ամերիկյան միջին դասը, որի ներկայացուցիչներին էլ տեսնում ենք պիեսներում: Հեղինակն ընդգծում է, որ ամուսնությունն ընկալվում է որպես նյութական շահ, օգուտ ստանալու, հարմարավետ կյանք ունենալու միջոց: Պիեսներում ներկայացված գրեթե բոլոր ընտանիքներում տիրում են սպառողական հարաբերություններ: Ուշագրավ է, որ ավելի ուշ գրված պիեսներում ընտանիքի այս մոդելը կազմաքանդվում է: Այսպես, օրինակ, 2003 թվականին հրատարակված «Այծը, կամ ով է Սիլվիան» պիեսում, չնայած մի շարք խնդիրների, գլխավոր հերոս Սարտինի կինը՝ Սթիվին, ընդհակառակը, կախման մեջ է ամուսնուց: Սա հստակ անցում է նախկինում ներկայացված մոդելից, որտեղ կինը միշտ հոգեբանորեն ավելի ուժեղ էր ամուսնուց և յուրօրինակ ճնշում էր գործադրում վերջինիս վրա:

Tamara Antonyan

THE FAMILY MODEL IN EDWARD ALBEE'S EARLY PLAYS

The article considers the role of the family in the plays by modern American playwright E.Albee. The author of the article analyzes the types of family models used by the author in "The American Dream", "Who's Afraid of Virginia Woolf?", "Delicate Balance". The analysis of the main characters of the plays reveals the role of the family in the contemporary society.

Тамара Антонян

МОДЕЛЬ СЕМЬИ В РАННИХ ПЬЕСАХ ЭДВАРДА ОЛБИ

В статье рассмотрена роль семьи в пьесах современного американского драматурга Э.Олби, проанализированы типы моделей семьи в произведениях «Американская мечта», «Кто боится Вирджинии Вульф?», «Неустойчивое равновесие». Выявлены основные черты характера главных героев пьес и их отношение к семейным ценностям, месту семьи в современном обществе.

**ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՆՆ ԴԵԼԻԼԼՈՅԻ
«ՄՊԻՏԱԿ ԱՂՄՈՒԿ» ՎԵՊՈՒՄ**

*Հիմնաբառեր՝ Դոն Դելիլլո, «Մպիտակ աղմուկ», պոստմոդերնիզմ, ժամանակ
և տարածություն, լրատվամիջոցներ*

Դեռևս 1983 թ-ին ամերիկացի պատմաբան Սթիվեն Քերնը իր «Ժամանակի և տարածության մշակույթը, 1880-1918թթ.»³¹⁴ գրքում նշում է. «*Հեռախոսը, հեռագիրը, կինոն, հեծանիվը, ավտոմեքենան և օդանավը հիմք դրեցին նոր մտածողությանն ու փորձառությանը, որոնք փոխեցին ժամանակ և տարածություն հասկացությունների մասին պատկերացումները*»: Այսպիսով, հեղինակը փաստում է, որ աշխարհում տեղի ունեցող իրադարձություններն ու փոփոխություններն անմիջականորեն ազդեցություն ունեն աշխարհի նոր պատկերի և զգացողության ձևավորման վրա: 1983-ին պատմաբանը դեռ չգիտեր, որ արագ զարգացող աշխարհում նորագույն տեխնոլոգիաներն ու հեռուստատեսությունն են դառնալու ժամանակատարածական նոր ընկալման կերտողը: Հենց այս մասին է ամերիկացի պոստմոդերն գրող Դոն Դելիլլոյի «Մպիտակ աղմուկ» (1985) վեպը:

Դելիլլոն ամերիկացի ժամանակակից արձակագիր է, ում ընկալում են որպես «համաամերիկյան գրող, ով տեսնում և լսում է իր երկրի ձայնն, ինչպես ոչ ոք»³¹⁵: Հեղինակը ստեղծագործում է 20-րդ դարի 70-ականներից և նրա յուրաքանչյուր վեպը մի նոր ճիչ է՝ միտված ներկայացնելու ամերիկյան կյանքի իրական պատկերն ու այն հիմնական խնդիրները, որոնք առկա էին տվյալ աշխարհում: Նշենք, որ 2015թ.-ի սեպտեմբերին Դելիլլոն արժանացել է ամերիկյան հայտնի «Ազգային գիրք» (*National Book Award*)³¹⁶ մրցանակին՝ բազմաձև ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար, ինչը բացահայտում է ժամանակակից ամերիկյան մշակույթն ու իդեալականորեն ներկայացնում ամերիկյան առօրյա խոսակցական լեզուն՝ համակարգված գրվածքով: Սա վկայում է

³¹⁴ Kern, S. The Culture of Time and Space 1980-1918. Cambridge University Press, London, 2003, p. 2

³¹⁵ <http://www.theguardian.com/books/2010/aug/08/don-delillo-mccrum-interview>

³¹⁶ http://www.nationalbook.org/amerletters_2015_ddelillo.html#.Vp-98FISbIU

այն մասին, որ հեղինակը ծանրակշիռ դեր ունի ժամանակակից ամերիկյան գրականության շրջանակում, ինչն, անշուշտ, առավել արժեքավոր է դարձնում մեր համեստ հետազոտությունը: Տվյալ ուսումնասիրության շրջանակում դիտարկելու ենք հեղինակի «Մպիտակ աղմուկ» վեպը՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե ինչպես է հեռուստատեսությունը ստեղծում ժամանակի և տարածության նոր ընկալում:

Պոստմոդեռնիստական գրականությունը աշխարհի ընկալման նոր մոտեցումներ առաջ բերեց, այդ թվում՝ ժամանակի ու տարածության: Ինչպես գրում են Էգգերն ու Շելթոնը, սահմանների տարրալուծումն ու ժամանակային և տարածական հարթությունների սեղմումը առաջացնում են ժամանակի ցանկացած պահին ցանկացած վայրում գործողության իրականացման հնարավորությունը:³¹⁷ Այս փաստը համընդհանուր հնչեղություն է հաղորդում պոստմոդեռնիստական ստեղծագործություններին և այս տեսանկյունից ենք քննելու Դոն ԴեԼիլլոյի վեպը՝ փորձելով սահմանել, թե ամերիկյան հասարակությունը, լինելով տեխնոլոգիական զարգացման կենտրոնում, ինչպես է ընկալում ժամանակ ու տարածություն հասկացությունները:

Ամերիկացի արձակագիրը պոստմոդեռնիստական աշխարհն իր վեպում արտացոլում է ժամանակակից հասարակության բոլոր ոլորտներում հեռուստատեսության առկայությամբ, ինչը հիմնավորվում է հեղինակի տվյալ պնդմամբ. «Մարդկանց մեծամասնության համար աշխարհում երկու վայր գոյություն ունի՝ իրենց տունն ու իրենց հեռուստացույցը»³¹⁸:

Այս միտքն այն հիմնաքարն է, որի վրա հեղինակը կառուցում է իր ստեղծագործությունը՝ արծարծելով ժամանակակից աշխարհի ամենակարևորագույն խնդիրներից մեկը՝ զանգվածային լրատվամիջոցների ազդեցությունն անհատի և հասարակության վրա: Տարածական նման կենտրոնացումը հստակ սահմաններ է գծում մարդկային գոյության համար, ինչը նշանակում է՝ գոյություն ունեցող աշխարհը սահմանափակվում է երկու վայրով: Աշխարհը փոքրանում է՝ ամփոփվելով ընդամենը երկու վայրում՝ տանը և հեռուստատեսությունում:

Այնուամենայնիվ, ուսումնասիրելով «Մպիտակ աղմուկ» վեպը, կարող ենք փաստել, որ հեղինակն ավելի է նեղացնում մարդկային գոյության

³¹⁷ Agger and Shelton, *Fast Families, Virtual Children*, Paradigm Publishers, NY, 2007, p. 38

³¹⁸ DeLillo, D. *White Noise*. Penguin Books USA Inc., New York. 1985, p.28

տարածական սահմանները՝ ցույց տալով, որ անհատն, իրականում, ապրում է հեռուստացույցի՝ լրատվամիջոցների, ժամանցային ծրագրերի, ռեալիթի շոուների ստեղծած իրականությունում: ԴեԼիլլոն սրանով իսկ հակադրվում է իր պոստմոդերնիստական ակունքներին և հիմք է դնում տարածության և ժամանակի նոր, ամբողջական մոդելի. ժամանակակից աշխարհում չկան տարածական և ժամանակային սահմաններ ու սահմանագծեր, այլ գոյություն ունի մեկ ընդհանուր տարածություն և ժամանակ՝ լրատվամիջոցների տարածությունն ու ժամանակը: ԴեԼիլլոյի այս վեպում ժամանակն ու տարածությունը փոխկապակցված են և չեն դիտարկվելու որպես առանձին իրողությունները, այլ ներկայացվելու են որպես մեկ ամբողջություն:

Նշենք, որ վեպը գրվել է 1985 թվականին, երբ ժամանակակից տեխնոլոգիաները դեռ զարգացման փուլում էին և հեղինակը միայն թռուցիկ է անդրադառնում, օրինակ, համակարգիչների ազդեցությանը՝ դրվագներից մեկում ցույց տալով, որ ըստ համակարգչային հաշվարկների և տվյալների է որոշվում մարդու կյանքի տևողությունը: Եթե ամերիկացի հեղինակի տարածական մոդելը պրոյեկտենք այսօրվա աշխարհի վրա, ապա լրատվամիջոցներին կփոխարինեն ժամանակակից տեխնոլոգիաներն ու ահաբեկչությունը, ինչին ԴեԼիլլոն մանրամասն անդրադառնում է իր 2000-թ-ից հետո գրված ստեղծագործություններում, թեպետ պետք է ընդգծել, որ ահաբեկչությունը ԴեԼիլլոյի վեպերի տարբերակիչ թեմաներից է արտացոլված բոլոր վեպերում:

Անդրադառնալով «Սպիտակ աղմուկ» վեպին՝ նշենք, որ ԴեԼիլլոն ներկայացնում է ամերիկյան մի ընտանիքի առօրյան՝ գերհագեցած հեռուստատեսությամբ և ռադիոյով: Հենց Գլեդինների ընտանիքի անդամների միջոցով է ընթերցողը տեսնում հեռուստատեսության դերը: Վեպի ուսումնասիրությունը վեր է հանում բազմաթիվ օրինակներ, որոնք փաստում են հեռուստատեսության անբեկանելի ազդեցությունը, ինչն էլ ուղղորդում և որոշում է հերոսների կյանքը. «*Ես ուշադիր գնում էի նրա դեմքը: Անցավ տասը րոպե: Նա երկու հստակ լսելի, ծանոթ և միաժամանակ աղոտ բառ շնջաց.....: Ընդամենը՝ Տոյոտա Սելիկա*»³¹⁹:

Տոյոտան ավտոմեքենաներ արտադրող ճապոնական ընկերություն է, որի գովազդով հեղեղված է ամերիկյան իրականությունը: Սա իհարկե մեկ օրինակ է, որն իր մեջ ամբողջացնում է ընդհանրականը և ապացուցում, որ ամերիկյան անհատն ամբողջովին ներծծված է

³¹⁹ DeLillo D. White Noise. Penguin Books USA Inc., New York. 1985, p. 150

գովազդներով և տեղեկատվությամբ, որոնք էլ դառնում են անհատի կյանքը՝ փոխարինելով իրականին: Այս երևույթը մշակույթի և գրականության մեջ հայտնի է սիմուլյակր եզրով, որի մասին խոսել է Պլատոնը, Դեյոզը, սակայն տվյալ համատեքստում մենք քննելու ենք ֆրանսիացի մշակութաբան Ժան Բոդրիյարի տեսությունը, ինչը տեսանելի է ԴեԼիլյոյի արձակում: Սիմուլյացիան մոդելների ստեղծումն է առանց իրական հիմքի և իրականության: Ըստ Բոդրիյարի՝ տվյալ դեպքում կրկնության կամ ընդօրինակման խնդիր չէ, այլ իրական նշանների փոխարինումն է դրանց կրկնօրինակներով, երբ իրականությունը գրկվում է ի հայտ գալու որևէ հնարավորությունից. «Սիմուլյացիան կասկածի է ենթարկում իրականի և թվացյալի սահմանագիծը՝ ստեղծելով իրականի մոդել, որը կոչվում է սիմուլյակր»³²⁰:

Սիմուլյակրը փոխարինում է իրականությանը՝ ներկայացնելով դրանոր տարբերակը, այնպես որ գոյություն ունեցող իրականությունը կորում է նոր իրականությունում, իսկ ստեղծված, հորինված իրականությունը դառնում է միակ իրականը: Ժ. Բոդրիյարը որպես օրինակ ներկայացնում է ամերիկյան Դիսնեյլենդը, որը ուրախության, ժամանցի, գեղեցկության և շքեղության խորհրդանիշն է: Սա Ամերիկայի մոդելն է, և հասարակությունն ապրում է պատրանքով, որ Ամերիկան նույնպես Դիսնեյլենդ է: Նույն տրամաբանությամբ և ԴեԼիլյոն է ցույց տալիս, որ մարդիկ ապրում են թվացյալ իրականությունում, որի հիմքում ընկած է հեռուստատեսությունը: Հատկանշական է այն փաստը, որ ԴեԼիլյոն հատկապես մատնանշում է, թե որքան զգայուն են երեխաները հորդող տեղեկատվության նկատմամբ և ցույց տալիս նրանց կույր հավատը հեռուստատեսություն հանդեպ: Դրվագներից մեկում տեսնում ենք ինչպես է տասնչորսամյա երեխան առանց հարցերի կամ կասկածների ծնողներին հրահանգում անել այնպես, ինչպես հայտարարել են ռադիոյով: Եթե ասված է ռադիոյով կամ հեռուստատեսությամբ, ապա տեղեկատվությունը միանշանակ հավաստի է և անբեկանելի:

-Մենք պետք է եռացնենք ջուրը, -ասաց Ստեֆին:

-Ինչո՞ւ:

-Ռադիոյով ասացին՝³²¹:

³²⁰ Бодрийяр Ж. Симулякры и симуляция. Перевод с французского О.А. Печенкиной, Тула, 2003, стр.5

³²¹ DeLillo, D. White Noise. Penguin Books USA Inc., New York. 1985, p. 17

Մեկ այլ դրվագում էլ տեսնում ենք, որ երեխաներից մյուսը՝ իննամյա տղան, շախմատ է խաղում և հաղորդակցվում է մի հանցագործի հետ, ով ցանկանալով պատմության մեջ թողնել իր անունը՝ սպանություններ է կատարում: Վերջինս ձայներ է լսել հեռուստատեսությամբ և հենց նրան են ընտրել՝ առաքելությունն իրականացնելու համար: Այս փաստը շատ բնական է ընկալվում երեխայի համար և հեռուստատեսության վտանգները բացարձակապես չեն անհանգստացնում տղային: Նշենք մի հետաքրքիր փաստ նույնպես. հանցագործը հիասթափություն է ապրում, քանի որ լրատվամիջոցները բավարար հետաքրքրություն չեն ցուցաբերել իր հանդեպ, այսինքն՝ լրատվամիջոցների անդրադարձն է, որ որոշում է ցանկացած իրադարձության կարևորությունը.

-Նա ձայներ էր լսել ՚:

-Հեռուստատեսությամբ:

-Միայն նրան են դիմե ՚: Հենց նրան են ընտրե ՚:

-Նրան հրամայել են պատմության մեջ հետք թողնել: Նա 27 տարեկան էր գործազուրկ, բաժանված: Կյանքը բեկվել էր:

-Իսկ լրատվամիջոցների հետ գործերն ինչպե՞ս էին:

-Այրոն Միթիում լրատվամիջոցներ չկան: Երբ գլխի ընկավ այդ մասին, արդեն ուշ էր: Իր խոսքերով՝ եթե նորից հնարավորություն ունենար, սովորական սպանություն չէր կատարի, այլ քաղաքական:³²²

Նույն մտահոգությունը տեսանելի է գլխավոր հերոսի՝ Ջեքի մտորումներում, երբ քիմիական տարր պարունակող փոխադրամիջոցների պայթյունից հետո նրա առողջությունը վտանգվում է, սակայն հեռուստատեսությունը անտարբեր է՝ ինչ է կատարվում իրենց փոքրիկ քաղաքում: Պատճառը մեկն է. հանրությանն անհրաժեշտ են ու հետաքրքիր միայն մեծ ու աղետալի իրադարձությունները. «Մի՞թե վախն այդքան նորություն չէ»³²³:

Հեղինակն առաջ է քաշում այն միտքը, որ որևէ աղետի կամ դժբախտ պատահարի դեպքում, եթե չկա հեռուստատեսություն՝ այն լուսաբանելու համար, ապա տեղի ունեցածը կորցնում է իր ուժը, կարևորությունը, վտանգները:

Դիտարկելով լրատվամիջոցների ազդեցությամբ ստեղծված մեկ տարածական և ժամանակային հարթությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև սպառողական հասարակությանը: «Սպիտակ աղմուկ»

³²² Նույն տեղում, էջ 24

³²³ Նույն տեղում, էջ 160

վեպում ներկայացված սպառողական հասարակությունը հետևանք է զանգվածային լրատվամիջոցների ստեղծած իրականությանը, որտեղ մարդիկ սպառում են ամեն ինչ՝ ապրանքներ, իրեր և արդեն իսկ ստեղեկատվություն: Այս դեպքում ԴեԼիլոն հատուկ ուշադրություն է դարձնում հիպերմարկետ երևույթին՝ այն որպես տարածական միավոր դիտարկելով: Սա գոյություն ունեցող իրականության այլընտրանքային տարածություն է, որտեղ ստեղծագործության հերոսները փախչում են գոյություն ունեցող աշխարհից: Հիպերմարկետների վերաբերյալ կրկին հետաքրքիր վերլուծություն է ներկայացնում Ժան Բոդրիյարը: Ըստ նրա՝ հիպերմարկետը կամ ապրանքների հիպերտարածությունն այն վայրն է, որտեղ նոր հասարակական նորմեր են ստեղծվում, որոնք էլ որոշում են մարդկանց վարքը. *«Այստեղ առարկաներն այլևս ապրանքներ չեն, անգամ նշաններ չեն, որոնց իմաստն ու բովանդակությունը հնարավոր կլիներ վերծանել և ընկալել: Դրանք հարցատոմսեր են և հենց իրենք են մեզ հարցադրումներ ներկայացնում, իսկ մենք պետք է պատասխանենք և այն դեպքում, երբ հարցն արդեն իսկ իր մեջ պարունակում է պատասխանը: Ահա այսպես է գործում ՁԼՄ-ի տարածած հաղորդագրությունը-չկատեղեկություն, չկա հաղորդակցություն, միայն անվերջ հարցադրումներ, պատասխաններ, համապատասխան կողի ստուգում և ամրապնդում»³²⁴:*

Հիպերմարկետը վերածվում է մի հասարակական կենտրոնի, որն իր մեջ պարունակում է հասարակության գործունեության բոլոր տեսակները՝ աշխատանք, ազատ ժամանակ, սնունդ, տրանսպորտային միջոցներ, սպորտ, մեդիա, մշակույթ, ժամանց: Ինչպես գրում է Ժ. Բոդրիյարը՝ հասարակությունում, որտեղ անհատը կարող է գտնել իր պահանջները բավարարող ցանկացած ապրանք, նա ավելի շատ շրջապատված է ոչ թե մարդկացնով, այլ առարկաներով. *«Մենք առարկաների ժամանակներում ենք ապրում՝ նրանց ռիթմով և նրանց համապատասխան: Մենք ականատես ենք, թե ինչպես են նրանք ծնվում, կատարելագործվում և մահանում»³²⁵:*

ԴեԼիլոն ցույց է տալիս մարդկանց՝ գնումներ կատարելու և սպառելու մոլուցքային գործընթացը: Ամեն ինչի չափման միավորը դառնում է հիպերմարկետը, իսկ դրա կարևորությունը դաջվում է մարդկանց ուղեղներում և կենսակերպում՝ ի շնորհիվ հեռուստատեսության: Հիպերմարկետը դառնում է սպառողական հասարակության գոյության

³²⁴ Бодрийяр Ж. Симулякры и симуляция. Перевод с французского О.А. Печенкиной, Тула, 2003, стр. 106

³²⁵ Бодрийяр Ж. Общество потребления. Республика, 2006 Казань, стр.5

ձևը: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հատվածին, երբ հեղինակը արտացոլում է մարդկանց վախն ու խուճապը, եթե հիպերմարկետում, օրինակ, տեղի է ունենում առարկաների դասավորվածության փոփոխություն: Անհատների համար սա առաջնային տազնապ է, ինչը նշանակում է՝ աշխարհում ինչ-որ բան է տեղի ունեցել, նրանց բնականոն կյանքը խաթարվել է, իրականությունն այլևս չկա և պետք հարմարվել նոր տարածական և ժամանակային իրականությանը. «... Մուպերմարկետում իրերի դասավորությունն այլ էր: Ամեն ինչ տեղի ունեցավ մի արևոտ օր, ծայրահեղ անսպասելի: Խտանաշփոթ ու անելանելիություն էր տիրում և վախ՝ դաջված գնորդների դեմքերին»³²⁶:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հեղինակը նոր տեսանկյունից է ներկայացնում ժամանակ և տարածություն հասկացությունները դրանք ներկայացնելով որպես մեկ ամբողջություն: Գոյություն ունի մեկ ամբողջական տարածական և ժամանակային հարթություն կամ իրականություն, ինչը ստեղծվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից մատուցած տեղեկատվության միջոցով:

Ella Asatryan

TIME AND SPACE IN DON DELILLO'S NOVEL "WHITE NOISE"

The article is devoted to the analysis of the novel *White Noise* by a prominent American contemporary writer Don DeLillo. The aim of the analysis is to reveal the change of perception of the concepts time and space under the influence of media. The author states that the reality created via media gives birth to a new spatial and temporal layer breaking all kind of borders. Thus there is one space and one time: media oriented one.

Элла Асатрян

ВРЕМЯ И ПРОСТРАНСТВО В РОМАНЕ ДОНА ДЕЛИЛЛО «БЕЛЫЙ ШУМ»

Статья посвящена анализу романа «Белый шум» американского писателя Дона Делилло, рассматривается изменение понятий время и пространство под влиянием средств массовой информации: СМИ создают новую реальность, где отсутствуют временные и пространственные границы, существуют только одно время и одно пространство, созданные СМИ.

³²⁶ DeLillo, D. *White Noise*. Penguin Books USA Inc., New York. 1985, p.62

ՄԵՎ ՀՈՒՄՈՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ Ֆ.ՌՈԹԻ

«ԿՈՒՐԾՔԸ» ՎԻՊԱԿՈՒՄ

Հիմնաբառեր՝ Ֆիլիպ Ռոթ, «Կուրծքը», սև հումոր, ճակատագիր, «հիմար կատակ», «գրոտեսկ», «խաբերա»

Ֆիլիպ Ռոթը համաշխարհային գրականության «մերօրյա դասականն» է, ով իր ստեղծագործական գործունեության 50 տարիների ընթացքում ոչ միայն անդրադարձել է ամերիկյան հասարակությանը հուզող խնդիրներին, այլ նաև վերլուծել մարդկային հոգեբանության առանձնահատկությունները: Իր վիպաշարերում և եռագրություններում հեղինակը հաճախ դիմում է միևնույն թեմաներին և կերպարներին (Ամերիկյան եռագրություն, Դեյվիդ Կեփեշի մասին եռագրություն, Նաթան Ցուկերմանի մասին վիպաշար և այլն), որոնցից յուրաքանչյուրն առանձին, բովանդակային և ժամանակագրական առումով ինքնուրույն ստեղծագործություն է: Ռոթի ստեղծագործությունների առանձնահատկությունն այն է, որ իր փիլիսոփայության առանցքը հանդիսացող հեգնանքը չի հասցվում երգիծանքի: Ընդհակառակը՝ հեգնանքի միջոցով արտացոլելով ամերիկյան իրականության խնդիրները՝ հեղինակը վերհանում է հասարակական արատներն ու հիվանդությունները և փորձում լուծումներ առաջարկել: Ինչպես ինքն է նշում, «20-րդ դարի կեսերին ամերիկացի գրողը փորձում է հասկանալ, սպա վերարտադրել ԱՄՆ-ի կյանքը և ստիպել ընթերցողին հավատալ այն ամենին, ինչ ինքն ասում է: Կյանքն աչքեցնում է, նողկանք ու ցասում է առաջացնում և, ի վերջո, նույնիսկ հեղինակին զգում շփոթության մեջ: Իրական կյանքի համեմատ գրողի երևակայությունն անգամ աղքատիկ է թվում»:³²⁷ 2011 թվականին տված հարցազրույցներից մեկում Ռոթը հայտարարել էր, որ վերջ է դնում ստեղծագործական կարիերային՝ պատճառաբանելով, որ ինքն արդեն 78 տարեկան է և գրեթե ոչինչ չգիտի ներկայիս ԱՄՆ-ի մասին. «Ես այն տեսնում եմ հեռուստացույցով, բայց չեմ ապրում այնտեղ»:³²⁸

³²⁷ Roth Ph. Writing American Fiction. Commentary. 1961. N31. P. 224

³²⁸ <http://www.independent.co.uk/news/people/news/i-m-done-with-writing-says-philip-roth-chronicler-of-the-american-jewish-experience-8301562.html>

Մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող «Կուրծքը» վիպակը Դեյվիդ Գեպելշի մասին եռագրության առաջին ստեղծագործությունն է, որը տպագրվեց 1972 թվականին: Հեղինակն իր երկում ստեղծում է մի իրավիճակ, որտեղ հոգեկան հիվանդ լինելն առավելություն է դառնում, իսկ վիպակի այդ հիմնական գաղափարն արտահայտվում է Սև հումորի դպրոցի ներկայացուցիչների աշխարհընկալման և արտացոլման հիմնական ձևերի՝ գրոտեսկի, խաղի, այլուզիաների միջոցով:

Մսերիկյան Սև հումորի դպրոցի կարևորագույն սկզբունքը գրոտեսկին հասնելու ձգտումն է՝ պարողիաների (սմանակումների) լայն կիրառմամբ և պարադոքսների առկայությամբ: Սև հումորիստներն քանդում են կարծրատիպերը, դեմ արտահայտվում նախախնամությանն ու հոգևոր գաղափարներին:³²⁹ Ստեղծագործության մեջ մենք աստիճանաբար ակնատես ենք լինում հեզմանքի վերափոխմանը գրոտեսկի: Գրականգետ Հ.Պինսկերը գտնում է, որ Ռոթի վիպակը ոչ այլ ինչ է, եթե ոչ *«մագոխիստական ստեղծագործություն»*, *Բ. Հոուն, իր հերթին, նշում է, որ չնայած այն բավականին լավ է գրված, սակայն ձանձրալի է և անճաշակ:*³³⁰

Վիպակի գլխավոր հերոսը՝ Դեյվիդ Գեպելշը, ով համեմատական գրականություն է դասավանդում, մի առավոտ արթնանալով, բացահայտում է, որ վերածվել է վեց ոտնաչափ մեծությամբ կանացի կրծքի: Բովանդակային առումով այստեղ անկհայտ են Ֆ.Կաֆկայի «Կերպարանափոխության» և Ն.Գոգոլի «Քիթը» ստեղծագործությունների հետ զուգահեռները: Հերոսն առանց վարանելու դիմում է բժիշկներին՝ նրանցից պատասխան ստանալու ակնկալիքով: Այս երևույթը նկարագրեցին որպես «հորմոնների գերհոսք», «էնդոկրինոլոգիական աղետ», «հերմոֆրոդիտային քրոմոսոմային պայթյուն», որն ի հայտ է եկել 1971 թվականի փետրվարի 18-ին ժամը 12-ից 4-ն ընկած ժամանակահատվածում:³³¹ Վեպի հենց առաջին նախադասությունը՝ *«Մի տղամարդու պատմություն, որը վերածվել է կանացի կրծքի»*³³², արդեն իսկ զավեշտ է պարունակում և թույլ է տալիս դասել Ռոթին Սև հումորիստների շարքին: Հեղինակը նկարագրում է կյանքի անհեթեթ և

³²⁹ http://www.nytimes.com/1964/09/27/humor-with-a-mortal-sting.html?_r=0

³³⁰ [Mikkonen, K.](#), The Metamorphosed Parodical Body in **Philip Roth's The Breast**, *Critique*. Fall99, Vol. 41 Issue 1, p. 11

³³¹ Philip Roth. *The Breast*. Houghton Mifflin. 1992. P. 3

³³² *Ibid* P. 3

անիմաստ կողմը, սակայն միևնույն ժամանակ փորձում է «պաշտպանել» իր հերոսին անհասկանալի իրավիճակում. «*Երբեմն ես ինձ խղճում եմ, սակայն հասկանում եմ իրավիճակի ծիծաղելի լինելը... Ես սկսում եմ կամաց-կամաց «հարմարվել» իմ նոր կացությանը»*:³³³ Հեզնանքը կարծես դառնում է մարդու գոյության, աշխարհընկալման և դրա մեկնաբանման միակ միջոցը, ինչը ևս բնորոշ է Սև հումորի դպրոցի ներկայացուցիչներին: «*Ես համոզված եմ, որ մարդ եմ, բայց ոչ ամբողջական մարդ... Չնայած իմ հավասարակշռված վիճակին և մտքի զգոնությանը՝ ինձ թվում է, որ ամենավատը դեռ առջևում է»*:³³⁴ Այստեղ, ահա, ստեղծվում է մի հակասական իրավիճակ, երբ հերոսն ինքնակամ ցանկանում է խելագարվել, սակայն դա անհնար է, վեր նրա հնարավորություններին: «*ԴԱ պետք է պատահեր, որպեսզի ինձ համար պարզ դառնար՝ ես առողջ հոգեվիճակի մարմնացում եմ»*:³³⁵ Ուշագրավ է, որ Ռոթի հեզնանքն ուղղված է նաև բժիշկներին և հոգեբաններին, որոնց տեսական և վերացական պատասխանները Կեպելշի այն հարցին, թե «երբ է կուրծքը դառնում ես, և երբ եմ ես դառնում կուրծք», ուղղակի անհասկանալի են և զավեշտալի: Նրանք իրականում անընդունակ են օգնել հերոսին, քանի որ նրա խնդիրը ոչ միայն ֆիզիկական է, այլև հոգեբանական, սակայն Ռոթը չի ստիպում ընթերցողին կարեկցել իր հերոսին. Կեպելշը գտնում է իրեն պաշտպանելու մեկ այլ միջոց. նա համբերությամբ լսում է բժիշկների ասածները, ապա վերարտադրում դրանք ճիշտ հակառակ իմաստով, թեպետ մինչև վերջ էլ չի գտնում իրեն հուզող հարցի պատասխանը: Այսպիսով, հեղինակը իր հերոսին չի զգում հուսահատության գիրկը, Կեպելշն ինքն է նշում, որ, չնայած իր վերափոխմանը, իր աշխարհընկալումն ու ինքնագնատականը բոլորովին չեն փոխվել, ինչը հնարավորություն է տալիս պահպանել իր անձի ամբողջականությունը և հոգեկան առողջությունը: Երբեմն գլխավոր հերոսը հրաժարվում է ընդունել իրականությունը, փորձում է փախչել դրանից. դա սկսվում է այն բանից հետո, երբ նրան այցելության է գալիս արվեստի և գիտության քուլեջի դեկան ու հերոսի վաղեմի ընկեր Արթուր Շոնբրունը, որի մոտ Կեպելշի տեսքը ուղղակի ծիծաղ է առաջացնում: Խորապես վիրավորվելով Շոնբրունի նման պահվածքից՝ Կեպելշը սկսում է կասկածի տակ դնել իր հետ պատահածի իրական լինելը: Բժիշկ

³³³ Ibid, P. 15

³³⁴ Philip Roth. The Breast. Houghton Mifflin. 1992. P. 21

³³⁵ Ibid, P. 16

Կլինգերի հետ խոսելիս Կեփեշն ասում է. «Մա երազ է, սա պատրանք է: Ես քնած եմ, պետք է ուղղակի արթնանալ»:³³⁶ Այս ամենը նա որակում է որպես «խելագարի զարանցանք», ով գտնվում է հոգեբուժարանում: Նա նույնիսկ իր հորը, ով գրեթե ամեն օր այցելում էր իրեն և տարբեր պատմություններ պատմում որդուն մտքերից շեղելու համար, ոչ մի ելք չի թողնում, քան արտաբերել.

«- Այո, որդիս, դու հոգեկան հիվանդ ես:

- Ես լսեցի դա, - գոչեցի ես բժիշկ Կլինգերին, - իմ հայրն է դա ասում: Ես հաղթեցի. ես լսեցի ճշմարտությունը: Լսեցի, թե ինչպես նա ասաց, որ ես հոգեկան հիվանդ եմ»:³³⁷

Ինչպես նշեցինք, Ռոթը կիրառում է նաև խաղի փիլիսոփայական դրույթը: Նա գրողին և գրողի գիտակցությունը դարձնում է պատումի հիմնական ձև: Ռոթի գլխավոր հերոսներից շատերը գրականագետներ և գրողներ են, ովքեր գտնվում են հասարակության թիրախում:³³⁸ «Կուրծքը» (The Breast, 1972), «Անատոմիայի դասը» (The Anatomy Lesson, 1983), «Փաստեր» (The Facts. A Novelist's Autobiography, 1988), «Մարդկային խարան» (The Human Stain, 2000), «Մեռնող կենդանին» (The Dying Animal, 2001) վեպերի գլխավոր հերոսները գրողներ են, որոնք ներկայացնում են հեղինակի երկրորդ «ես»-ը: Կեփեշի մարմնի վերափոխմանը զուգահեռ՝ նրա ինքնագիտակցությունը ևս վերափոխման է ենթարկվում՝ ստեղծելով միանգամից երկու ճգնաժամային իրավիճակ, որոնց լուծման համար անհրաժեշտ է նախ հասկանալ և հարմարվել նոր մարմնի գոյությանը, ապա վերախմաստավորել իր արժեհամակարգը և գտնել իր տեղը նոր իրականության մեջ: Նրա հետ պատահաձր «դուրս էր մարդկային գիտակցությունից, կարեկցանքից և կատակերգությունից»: Նա սկսում է նաև այդ խաղի մեջ ներգրավել բժիշկ Կլինգերին՝ մատնանշելով իրենց ազգանունների ընդհանրությունը. «Ղուք երբևէ մտածե՞լ եք, բժիշկ, թե ինչ ֆանտաստիկ գաղափարներ են ծնվում ձեր հիվանդների մոտ ձեր ազգանունը լսելիս: Ղուք երբևէ գիտակցե՞լ եք, որ բոլորիս ազգանունները սկսվում են Կ-ով... ձերը, իմը, Գաֆկայինը, ինչպես նաև Կլերինը և Կլարկինը»:³³⁹

³³⁶ Ibid, P 47

³³⁷ Ibid, P 68

³³⁸ <http://quarterlyconversation.com/cogito-ergo-doom-exit-ghost-and-the-rest-of-philip-roths-zuckerman-books>

³³⁹ Roth Ph.. The Breast. Houghton Mifflin. 1992. P. 32

Մեկ այլ դրույթ, որը բնորոշ է Սև հումորի դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործություններին, այլուզիաներն ու մեջբերումներն են: Վեպում գլխավոր հերոսը ոչ միայն հիշատակում, այլ նաև մեկնաբանում է Ֆ.Կաֆկայի, Ն.Գոգոլի, Ջ.Սվիֆտի, Ֆ.Դոստոևսկու, Մ.Բիլկեի ստեղծագործությունները՝ ստեղծելով ինտերտեքստ: Կեփեշի՝ իր աբսուրդային իրավիճակը ռացիոնալ բացատրելու փորձերը հանգեցնում են մեկ այլ տարբերակի, ըստ որի՝ իր այս վիճակը գրականության ազդեցության արդյունքն է, այն գրողների ազդեցության, որոնց ստեղծագործություններն ինքը դասավանդում էր, մասնավորապես, Կաֆկայի և Գոգոլի: Վերջիններս վարակել են նրան իրենց գաղափարներով: Նրանց հաջողվել է իրենց գործերի միջոցով ստեղծել կերպարանափոխության հիանալի օրինակներ, մարդուն վերափոխել քթի կամ միջատի, իսկ իրեն հաջողվել է անել ավելին. «*Ես խոսքն իրականություն դարձրի, ես ավելի Կաֆկա եմ, քան Կաֆկան*»:³⁴⁰ Վեպում կարծես միահյուսվում են ողբերգականն ու կատակերգականը, կյանքն ու գրականությունը: Եվ եթե սա հեքիաթ լիներ, հնարավոր կլիներ հասկանալ դրա իմաստը, սակայն Կեպեշը դիմում է ընթերցողին՝ ասելով, որ սա ճշմարիտ պատմություն է, թերևս՝ իր համար: Նա նախագոյազանում է ընթերցողին զգույշ լինել սեփական ցանկություններն արտահայտելիս. դրանք մի օր կարող են իրակականալ հենց այն պահին, երբ ամենաքիչն ես սպասում, քանի որ «իրականությունն ունի իր ոճը» ու ավելի գորեղ է, քան ցանկացած ստեղծագործական երևակայություն: Մակայն, ինչպես կարողանում ենք համոզվել, այս փաստարկումը ևս հակասական է. Կեփեշն ասում է, թե գիտի՝ ինչ է իրականությունը, բայց նրա՝ անընդհատ փոփոխվող բացատրություններն իր կուրծք լինելու վերաբերյալ և անկայուն վարքը հակառակն են ապացուցում:

Ընդհանրապես Սև հումորի դպրոցի ներկայացուցիչների հիմնական հարցադրումն այն չէ, թե ինչ պետք է անի մարդը սեփական կյանքի հետ, այլ ինչպես պետք է ապրի այդ կյանքը աբսուրդային աշխարհում:³⁴¹ Այստեղ, ահա, նույնպես Ռոթի հերոսը, այդպես էլ չկարողանալով լուծում գտնել, գալիս է այն եզրահանգման, որ Ամերիկյան ինքնատեալիզացման դարում անսահման հնարավորությունների տեր երկիր է, և ինքը կարող

³⁴⁰ Ibid, P. 42

³⁴¹ Schulz M. Black Humor Fiction of Sixties: A Pluralistic Definition of Man and His World. Athens, OH: Ohio U P, 1973, p. 52

է ապրել այնպէս, ինչպէս կցանկանա: Բժիշկի այն հարցին, թե որն է նա նախընտրում՝ «Ապրել և, թե մեռնել», Կեփեշը պատասխանում է. «*Ղեռ կտեսնենք, կտեսնենք, բժի՛շկ*», սակայն նա արդէն մտքում հստակ ունի այդ հարցի պատասխանը, ինչը երևում է վեպի եզրափակիչ հատվածում, երբ Կեփեշը դիմում է բոլորին՝ հիմարներին, համառներին, ընկերներին, ուսանողներին և այլոց՝ կարդալով Ռիլկեի բանաստեղծություններից մեկը, որը վերջանում է հետևյալ տողով. «Ապրի՛ր այսուհետ այլ կերպ»:

Գրականագետներ Ս.Բաումգարթենը և Բ.Գոթֆրիդը պնդում են, որ վեպի վերջնամասում Կեփեշն անցում է կատարում իր նախկին դասախոսի դերին և կարծես դասախոսություն է կարդում ինքն իր մասին:³⁴² Նա ինքը դառնում է մի յուրօրինակ տեքստ ընթերցողի մեկնաբանման համար: Ռոթը, այնուամենայնիվ, ուրվագծում է իրավիճակից դուրս գալու ելքը, այն է. կարևոր չէ՝ ինչ տեսք ունի մարդը, և ովքեր են նրան շրջապատում, մարդն ինքն է ընտրում իր ճակատագիրն ու ուղին՝ դառնալ հանրահայտ, «ապրել այլ կերպ», թե ուղղակի լինել «հիմար կատակ», «գրոտեսկ» կամ «խաբեքա»:

Лилит Мурадян

ОТРАЖЕНИЕ ЧЕРНОГО ЮМОРА В ПОВЕСТИ Ф.РОТА «ГРУДЬ»

В статье анализируется повесть одного из основных представителей школы Черного юмора Филипа Рота «Грудь». К анализу привлечены характерные черты школы Черного юмора, в частности, гротеск, игровая концепция, аллюзии.

Lilit Muradyan

THE REFLECTION OF BLACK HUMOR IN “THE BREAST” BY PH.ROTH

The article touches upon the novella “The Breast” by one of the main representatives of Black Humor Philip Roth. The main peculiarities of the School, particularly, grotesque, game concept and allusions, are analyzed in the article.

³⁴² [Mikkonen K.](#), The Metamorphosed Parodical Body in **Philip Roth's The Breast**, [Critique](#). Fall99, Vol. 41 Issue 1, p. 13.

**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՀՈՒՉԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆ
ԵՐԱՆԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԴՐԱ
ՎԵՐԱՐՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հիմնարաներ՝ Էդգար Պո, համարժեք թարգմանություն, լեզվագործարանություն, հուզարտահայտչականություն

Ժամանակակից լեզվաբանության մեջ հաստատվել է այն դրույթը, որ թարգմանությունը հաղորդակցման ակտ է, որը բնորոշվում է շարահյուսական, իմաստային և գործառնության կապերի բարդ համակարգով: Թարգմանական գործընթացում կարևորվում են ոչ միայն բովանդակային անվանողական և հավելական բաղադրիչները, այլև գործաբանական բաղադրիչը, որը որոշվում է լեզվական արտահայտման և հաղորդակցման ակտի մասնակիցների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությամբ:

Քանի որ գեղագիտական տեքստի արտահայտչական կառուցվածքն ու թեման հնարավոր չէ փոխանցել բնագրից թարգմանվածք՝ առանց որոշակի կորուստների, ապա անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխան տեղաշարժերը: Իսկ ինչն է տեղաշարժվում թարգմանվածքում:

Անհրաժեշտ է սահմանել, թե որքանով ոճական համակարգը կարող է ծառայել թարգմանվածքում տեղի գտած փոփոխությունները բնորոշմանը: Բնագրի համեմատությամբ տեղ գտած ոճական փոփոխությունները, որոնք կատարվում են թարգմանվածքի ստեղծման ժամանակ, կարող են մեկնաբանվել որպես ոճական տեղաշարժեր: Նրանք դիտարկվում են որպես ոճական, որովհետև վերաբերում են արտահայտչամիջոցների առանձնահատկություններին, որոնց հանդիպել է թարգմանիչը թարգմանվածքի ստեղծման գործընթացում: Պետք է նշել, որ ոճական տեղաշարժերը պարտադիր չէ, որ խախտեն բնագրի հետ նույնարժեքությունը, քանի որ լեզվական, ինչպես նաև գրական և մշակութային տարբերությունները թույլ չեն տալիս երկու կառուցվածքների ուղիղ և միաժամանակյա նույնականացում և, ուրեմն, թարգմանվածքը բնագրի համեմատությամբ պետք է տարբերվի որոշ ոճական տեղաշարժերով: Սա նշանակում է, որ տեքստային կառուցվածքի որոշ մասեր իրականացվում են և պահպանվում, իսկ

դրանց մի մասն էլ նոր է ստեղծվում: Եվ անհրաժեշտ ենք համարում նշել, որ թարգմանվածքում տեղ գտած կորուստները գոնե մասամբ այս կամ այն միջոցով պետք է փոխհատուցել: Հենց այն միջուկը, որն անցնում է բնագրից թարգմանվածքին՝ տեքստի *անփոփոխակն է*:

Ինչպես նշում է Ա. Պոպովիչը՝ <<կորուստները>> թարգմանվածքում լրացվում են գործառական միջոցներով: Նա գտնում է, որ գործառական համարժեքների սկզբունքը ենթադրում է թարգմանչի ազատությունը՝ միջոցների ընտրության հարցում և դրա համար էլ անխուսափելիորեն հանգեցնում ինչ-ինչ կորուստների, փոփոխությունների և հավելումների³⁴³: Թարգմանական գործընթացում այս երևույթը կարելի է անվանել կառուցվածքի փոխանցման միջոց, որը ձգտում է փոխհատուցել թարգմանվածքի կառուցվածքի գեղարվեստական միջոցների փոփոխությունները:

Ոճական տեղաշարժերը հաստատում են այն փաստը, որ անհնար է հասնել բնագրի հետ լիակատար նույնականության, բայց միևնույն ժամանակ այն վկայում է անհամապատասխանությունից խուսափելու ձգտումը: Տեղաշարժերը կատարում են ոչ միայն այն պատճառով, որ թարգմանիչը ուզում է փոփոխության ենթարկել բնագիրը, այլ այն, որ նա ձգտում է հնարավորինս ճշգրիտ փոխանցել, արտահայտել տեքստը՝ իր ամբողջականության մեջ: Թարգմանության հմտությունը հենց բնագրին ամբողջությամբ հարազատ մնալու մեջ է: Այսինքն՝ թարգմանական ճշգրտությունը չպետք է հակադրվի թարգմանչի ազատությանը, քանի որ այս երկու գործոնները պետք է ընկալել դիալեկտիկ ամբողջության մեջ:

Այսպիսով, բացարձակ թարգմանությունն գոյություն չունի ոչ՝ տեսության մեջ և ոչ՝ էլ գործնականում: Բայց գոյություն ունի միջոց, որի շնորհիվ կարելի է գործառությային փոխհատուցման հասնել. այդ լավագույն տարբերակը գործառությային ոճական տեղաշարժն է, որի նպատակն է այլ համակարգի շրջանակներում նույնարժեքության հասցնել բնագրի առանձնահատկությունները:

Ելնելով մեր աշխատանքի հիմնական դրույթներից՝ մենք կցանկանայինք անդրադառնալ այն հարցին, թե ինչպես կարող է աշխարհի պատկերումը ներկայացվել բառակազմական միջոցների շնորհիվ՝ գեղարվեստական տեքստի կառուցման և ընկալման գործընթացում, ինչպես նաև ուսումնասիրել այս միջոցների առանձնահատկությունները թարգմանության ժամանակ:

³⁴³ Попович А., Проблемы художественного перевода, Благовещенск, 2000. 167с.

Որպես օրինակ վերցնելով Է. Պոյի <<Ամբոխի մարդը>> պատմվածքը՝ կցանկանայինք վերլուծել բառապաշարի հուզարտահայտչական շերտը և տեսնել, թե պահպանվում է արդյոք թարգմանվածքում նրա գործառութային համապատասխանությունը, տեսնել, թե թարգմանիչները ինչպիսի համարժեք լեզվական միավորներ են օգտագործում՝ փորձելով պահպանել ստեղծագործության ընդհանուր հուզարտահայտչական երանգը:

<<Ամբոխի մարդը>> պատմվածքում Էդգար Պոյին հաջողվում է ապահովել գեղագիտական ազդեցությունը ընթերցողի վրա՝ դիմելով նրան առաջին դեմքից և օգտագործելով հուզարտահայտչական բառապաշար, որը նրան հնարավորություն է տալիս տանել ընթերցողին իր ապրումների և հույզերի աշխարհը (**despair of heart, convulsion of throat, conscience takes up a burthen so heavy in horror, with a delicious novelty of emotion** etc):

Թարգմանիչները, ձգտելով պահպանել բնագրի գործառութային համապատասխանությունը՝ փորձում են նմանատիպ հուզարտահայտչական բառային միավորներ գտնել թարգմանող լեզվում: Մենք կփորձենք օրինակների միջոցով պատկերել, թե որքանով է դա հաջողվում թարգմանիչներին:

Still all were distinguished by a certain **sodden swarthinness of complexion, a filmy dimness of eye, and pallor and compression of lip**³⁴⁴.

Ընդամենը մեկ նախադասության մեջ հեղինակը մի շարք խոսուն մակդիրներ է օգտագործում (**sodden swarthinness of complexion, a filmy dimness of eye, pallor and compression of lip**), քանի որ նա նկարագրում է հասարակության ամենաստորին դասին պատկանող մարդկանց՝ հարբեցողներ, պառաված և դեռ դեռահաս մարմնավաճառներ, խաբեբաներ և անազնիվ ծառայողներ: Նա փորձում է այս ամբոխից ստացած իր ողջ զգացողություններն ու հույզերը հաղորդել ընթերցողին: Սակայն պետք է նշել, որ համեմատելով բնագիրը ռուսերեն և հայերեն թարգմանվածքների հետ՝ մեծ մասամբ հանդիպում ենք դեպքերի, երբ թարգմանիչները համարժեքության հասնելու համար դիմում են գործարանական հարմարեցման հնարի սկզբունքին:

*Но у всех были землистые, испытые лица, тусклые глаза и бледные, плотно сжатые губы*³⁴⁵.

³⁴⁴ Poe, Edgar Allan, Prose and Poetry, Moscow, Raduga Publishers, 1983 p.160

³⁴⁵ По Э., Рассказы, М., Правда, 1982 стр. 141

*Ինչևէ, սրանք բոլորն էլ առանձնանում էին հողագույն դեմքով, պղտոր աչքերով ու գունատ, պինդ սեղմած շուրթերով:*³⁴⁶

Պետք է նշել, որ ռուսերեն տարբերակում թարգմանչին հաջողվել է պահպանել թե՛ հուզական, թե՛ իմաստային համապատասխանությունը: Սակայն մինևույն ժամանակ **distinguished** բառը բաց թողնելու հետևանքով արտահայտչականության նվազեցում է դիտվում: Ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, ապա հարկ է նշել, որ այն հիմնավորված ենք համարում, քանի որ **sodden swarthinness of complexion** բառակապակցությունը <<**թուխ դեմքով**>> արտահայտությամբ փոխանցելու փոխարեն թարգմանիչը է թարգմանել է **հողագույն դեմքով**՝ հայերենի համակցելիության նորմերից ելնելով: Կարծում ենք, նրա այսպիսի թարգմանությունը արդարացված է, քանի որ **հողագույն** բառով թարգմանիչը պահպանել է ոչ միայն բառի իմաստային և արտահայտչական երանգը արտահայտելու մտադրությունը, այլև կարողացել է պահպանել է հուզական կողմը:

Նշենք, որ տեքստի արտահայտչականության հասնելու հարցում մեծ դեր են խաղացել ածականներն ու մակդիրները, որոնց միջոցով հեղինակը փորձել է նկարագրել իր առջև սահող խառնիճադանձ ամբոխը (**unequivocal beauty; wrinkled, bejewelled and paint-begrimed beldame; dreadful coquetries of her trade; innumerable and indescribable drunkards; bruised visage; lack-lustre eyes; filthy garments; thick sensual lips; hurty-looking rubicund faces**):

Ինչպես տեսնում ենք, այս ամբոխը նկարագրելիս հեղինակը դիմում է տհաճ զգացումներ արթնացնող հուզարտահայտչական բառապաշարի: Բառապաշարի այս երանգավորումն է, որ թարգմանչական բարդություն է ստեղծում: Օրինակ, թե՛ ռուսերենում, թե՛ հայերենում մենք ունենք **face** բառի համարժեքը (лицо, դեմք), բայց թարգմանիչը ռուսերեն թարգմանվածքում **hurty-looking rubicund faces** արտահայտության մեջ **face** բառը, որ չունի հուզական, ոճական երանգավորում, փոխանցել է **пожа** բառով՝ դրանով գնահատողական և արտահայտչական երանգ հաղորդելով թարգմանվածքին: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ թարգմանչի առջև դրված է մեկ այլ խնդիր. նա պետք է ցույց տա հասարակության ստորակարգության ամենաստորին մակարդակին գտնվող այս հարբեցողների տեսքը:

³⁴⁶ Պո Է., Անուրջներ և Մղձավանջներ, Եր., Սովետական Գրող, 1983 էջ 120

Մեկ այլ օրինակում.

*...some in shreds and patches, reeling, inarticulate, with bruised visage and lack-lustre eyes – some in whole although filthy garments, with a slightly unsteady swagger...*³⁴⁷

*...некоторые в лохмотьях, с мутными, подбитыми глазами, брели пошатываясь и бормотали что-то невнятное, другие – в целой, хотя и грязной одежде...*³⁴⁸

*...ոմանք քնձռու ջնջոտիներով, կապտուկներով ու մարած աչքերով, ինչ-որ բան կարկանդո ու անվերջ սայթաքող, ոմանք նոր, բայց ջեխտո շորերով, երերուն քայլվածքով...*³⁴⁹

Ռուսերեն թարգմանության մեջ թարգմանիչը կոնկրետացման է դիմում. **with bruised visage and lack-lustre eyes** բառակապակցությունները ռուսերեն փոխանցելով **мутным, подбитым** ածականներով: Իսկ հայերեն տարբերակում թարգմանիչը օգտագործել է **կապտուկներ** գոյականը և **մարած** ածականը՝ դիմելով քերականական փոխակերպման:

Արտահայտչականությունը և հուզականությունը փոխկապակցված կարգեր են: Բայց պետք է նշել, որ նրանց գործառության խնդիրները տարբեր են: Լեզվում հուզական տարրերը ծառայում են զգացմունքներ արտահայտելու խնդրին, իսկ արտահայտչական տարրերը նպաստում են հուզականության արտահայտմանը, ինչպես նաև որոշակի բառիմաստի ուժգնացմանը: Արտահայտչականությունը խոսքին գնահատողական երանգ է տալիս, այն նպաստում է վերջինիս ազդեցության ուժգնացմանը: Քանի որ խոսքն իր արտահայտչականությունը կամ հուզականությունը ձեռք է բերում բառիմաստին որոշակի երանգ հաղորդելով, ապա կարելի է ասել, որ այն իմաստային և ոճական կարգ է:

Բնագիրը թարգմանող լեզվով վերարտադրելիս թարգմանչի առջև ծառանում է բնագիր տեքստի բովանդակության հնարավորինս ճշգրիտ փոխանցման և ոճական ու արտահայտչական յուրահատկությունների պահպանման խնդիրը:

<<Ամբոխի մարդը>> պատմվածքում Էդգար Պոն ծերունուն տեսնելու իր առաջին տպավորությունը նկարագրելիս օգտագործում է **arrested and absorbed my attention** փոխաբերությունը: Պետք է ասել, որ ռուսերեն

³⁴⁷Poe, Edgar Allan, Prose and Poetry, Moscow, Raduga Publishers, 1983 p.161

³⁴⁸ По Э., Рассказы, М., Правда, 1982 стр. 142

³⁴⁹ Պո Է., Անուրջներ և Մղձավանջներ, Եր., Սովետական Գրող, 1983 էջ 120

թարգմանվածքում թարգմանչին հաջողվել է գտնել թե՛ ոճական, թե՛ արտահայտչական համարժեք փոխաբերությունը. **приковало к себе и поглотило все мое внимание**: Ինչ վերաբերում է հայերեն թարգմանվածքին, ապա այստեղ թեև թարգմանիչը փոխաբերությամբ է արտահայտել. **զավթեց իմ ուշադրությունը**, նա մեր կարծիքով ուժգնացրել է արտահայտչականությունը՝ փոխանցելով արտախոսական ազդեցությունը, այսինքն՝ իրականացնելով հեղինակի մտահղացումը գործաբանական ազդեցության միջոցով: Պետք է նշել, որ պատմվածքում գերակշռող ածականները և մակբայները մակդրավոր են, մեծ մասամբ գերադրական աստիճանով են օգտագործված և հանդես են գալիս՝ որպես որոշակի հուզական երանգավորման ձևավորող և հավասարապես բաշխված են պատմվածքում. (**so heavy in horror; moods of the keenest appetency; eyes hideously wide and red; vast mental power; excessive terror; of intense-of extreme despair; wild and vacant stare; incrtedible swiftness; the most noisome quarter of London**): Կարծում ենք, հեղինակը, ստեղծելով իմաստային այս շառավիղը, որը ամբողջ պատմվածքի ընթացքում ընթերցողին ցույց է տալիս իր վերաբերմունքը նկարագրվող երևույթների և մարդկանց հանդեպ, փորձում է լուծել գործաբանական ազդեցության խնդիրը, որն ուղղված է ընթերցողի մոտ առաջացնելու համապատասխան ազդեցություն, ձևավորելու որոշակի կարծիք:

Եթե դիտարկենք ռուսերեն և հայերեն թարգմանությունները, ապա կնկատենք, որ թարգմանիչները դիմում են տարբեր ոճական փոխակերպումների.

Որպես օրինակ վերցնենք հետևյալ նախադասությունը.

*For some months I had been ill in health, but was now convalescent, and with returning strength, found myself in one of those happy moods which are so precisely the converse of ennui – moods of keenest appetency, when the film from the mental vision departs...*³⁵⁰

moods of keenest appetency արտահայտությունը հայերեն թարգմանվել է բոլոր զգացողությունները սրվում են արտահայտությամբ. այստեղ թարգմանիչը դիմել է ն՛ բառային, և՛ քերականական փոխակերպումների: Պետք է ասել, որ այս բառային և քերականական փոխակերպումները հանգեցնում են նրան, որ հայերեն տարբերակում ոճական նվազեցում է դիտվում:

³⁵⁰ Poe E. A. Prose and Poetry, Moscow, Raduga Publishers, 1983 p.158

Հետևյալ օրինակում անհամարժեքություն է դիտվում հայերենում թարգմանչի կողմից կատարված բառացի թարգմանության ժամանակ՝

*He entered shop after shop, priced nothing, spoke no word, and looked at all objects with a **wild and vacant stare**.*³⁵¹

*Նա հերթով մտնում էր բոլոր խանութները, չէր սակարկում, չէր խոսում և ամեն ինչին նայում էր վայրի, թափուր հայացքով:*³⁵²

*Он заходил во все лавки подряд, ни к чему не оценивался, не произносил ни слова **и диким, отсутствующим взором** глядел на все окружающее.*³⁵³

wild and vacant stare արտահայտությունը փոխանցվել է – վայրի, թափուր հայացքով արտահայտությամբ, փաստորեն թարգմանիչը բառացի է թարգմանել vacant բառը, ինչը և հանգեցրել է անհամարժեքության: Նույնը չի կարելի ասել ոուսերեն թարգմանության մասին, քանի որ ոուսերեն տարբերակում, մեր կարծիքով, թարգմանչին հաջողվել է հասնել համարժեքության՝ vacant բառը փոխանցելով ոուսերեն отсутствующим բառով (диким, отсутствующим взором):

Ոճական նվազեցում է դիտվում նաև հետևյալ օրինակի հայերեն թարգմանության տարբերակում՝

*The rain fell fast; **the air grew cool; and the people were retiring to their homes.***

*Անձրևը շարունակվում էր, օդը ցրտեց, և մարդիկ սկսեցին տուն գնալ:*³⁵⁴

*Дождь все еще лил, **стало холодно, и люди начали расходиться по домам.***³⁵⁵

*the rain fell fast - անձրևը շարունակվում էր, մինչդեռ ոուսերենում, չնայած այն փաստի, որ թարգմանիչը փոխակերպում է կատարել. նա fell բայը արտահայտել է մեկ այլ՝ *лил* բառով, իսկ fast մակբայը օրինակում մակբայով, նրան հաջողվել է հասնել համարժեք արտահայտչականության:*

Անհրաժեշտ է նշել, որ ինչ տիպի էլ որ լինեն փոխակերպումները, թարգմանիչները, դրանք իրականացնելիս մեկ նպատակ են

³⁵¹ Նույն տեղում, p.164

³⁵² Պն Է., Անուրջներ և Մղձավանջներ, Եր., Սով. Գրող, 1983 էջ 123

³⁵³ По Э., Рассказы, М., Правда, 1982 стр. 144

³⁵⁴ Պն Է., Անուրջներ և Մղձավանջներ, Եր., Սով. Գրող, 1983 էջ 123

³⁵⁵ По Э., Рассказы, М., Правда, 1982 стр. 144

հետապնդում. այն է՝ հասնել համարժեքության: Ինչևէ, պետք է ասել, որ չնայած տեղ գտած տեղաշարժերին՝ թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն թարգմանվածքներում պահպանվել է այս ստեղծագործության ոճական կառուցվածքը, քանի որ հիմնականում ապահովվել է ուսումնասիրվող լեզվական նյութի գործառութային համապատասխանությունը բնագրի նյութի հետ: Օգտագործելով համարժեք բառային միավորներ, համապատասխան տարբերակներ և համատեքստային համապատասխանություններ՝ թարգմանիչներին հաջողվել է պահպանել նաև ստեղծագործության ընդհանուր հուզական երանգը:

Бела Маргарян

**ПРАГМАТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ЭКСПРЕССИВНЫХ И
ЭМОТИВНЫХ ЭЛЕМЕНТОВ ХУДОЖЕСТВЕННОГО ТЕКСТА И ИХ
ТРАНСФОРМАЦИИ В ПЕРЕВОДЕ**

В статье рассматривается вопрос экспрессивности – эмотивности художественного текста. Анализируются различные трансформации в переводе текста и его прагматического потенциала.

Bela Margaryan

**THE PRAGMATIC VALUE OF EMOTIVENESS –EXPERSSIVENESS OF
THE TEXT AND ITS TRANSFORMATIONS IN TRANSLATION**

The article touches upon the problem of expressive-emotive value of the literary work and the ways of its transformation in the translation. It is stated that the aim of these transformations is to achieve equivalent translation both in semantic and expressive layers.

83(09)

ՉԵՐՄԱՆ ՀԵՍՍԵԻ ԱՐՁԱԿԻ ՂՐՈՒԼԵՄՆԵՐԸ

Հիմնաբառեր՝ Չերման Հեսսե, գերմանական փիլիսոփայական վեպ, հոգեվերլուծություն, հոգի, անգիտակցական, ինքնություն

20-րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպի պատմության ուսումնասիրության առումով հարուստ նյութեր է տրամադրում հատկապես **Չերման Հեսսեի (1877-1962)** ստեղծագործությունը: Անկյունաքարային լինելով, առհասարակ, ոչ միայն գերմանական, այլև եվրոպական նոր գեղարվեստական մտածողության տեսանկյունից, Հեսսեի բազմաժանր ստեղծագործությունը (արձակ, քնարերգություն, էսսեներ, նամակներ) ըստ էության փիլիսոփայական է իր խորքով ու լայնքով, և փիլիսոփայական հարցադրումները բնորոշ են ոչ միայն նրա արձակին, այլև առաջնակարգ պոեզիային:

Հեսսեն ապրել է ստեղծագործական երկար կյանք և անցել հասունացման շրջաններ³⁵⁶: Թեև նամակներից մեկում խոստովանում է, որ ինքը հետևորդ չի եղել որևէ հստակ ձևակերպված ուսմունքի, այլ՝ որոնումների և կայացման մարդ, այդուհանդերձ, կայուն արժեքներ նրա կյանքում եղել են: Համաձայն գրողի խոստովանության, այդ արժեքներն են նրա հայրական տան **քրիստոնեական և ազգայնականությունից գրեթե ամբողջությամբ զերծ ոգին, մեծ չինացիները և պատմաբան Յակով Բուրկհարդտը**³⁵⁷:

³⁵⁶ Հետաքրքիր դիտարկում է կատարում Ս. Ավերինցերը: Համեմատելով գրողի տարբեր տարիների լուսանկարները, եզրահանգում է, որ նրա դեմքը իր վերջնական ձևավորման հասնում է ուշ տարիքում: «Հեսսեն պատկանում է այն մարդկանց թվին, - գրում է նա, - ովքեր յոթանասուն տարեկանում ավելի գեղեցիկ են, քան երեսուն կամ քսան» (Аверинцев С. Герман Гессе, в кн: Hermann Hesse. Die Morgenland fahrt. Gedichte. Märchen. Kleine Prosa. Moskau, Progress, 1981, S. 367): Այս դատողությունը կարող ենք տարածել նաև նրա գրական ժառանգության վրա, եթե նկատի ունենանք գրողի ստեղծագործական հասունացումը՝ վաղ շրջանի ոչ այնքան աչքի ընկնող վեպերից մինչև «Հուլունքախաղը» կամ «Գոլդմունդը և Նարցիսը», երբ կոմպոզիցիոն բոլոր տարրերն աստիճանաբար հասնում են կատարելության:

³⁵⁷ Гессе Г. Письма по кругу. Москва, «Прогресс», 1987, стр. 277-278.

Հեսսեի փիլիսոփայական վեպերին, ժանրին բնորոշ ընդհանրական գծերի հետ մեկտեղ (պայմանական միջավայր, փիլիսոփայական գաղափար և դիալեկտիկական հերոս)³⁵⁸ հատուկ են նաև գծեր, որոնք առկա են հատկապես նրա վեպերում և կազմում են նրա գեղագիտության և աշխարհայացքի հիմքը:

1. Նախ, ինչպես գրական յուրաքանչյուր մեծարժեք ստադիագործություն, Հեսսեի վեպերը ևս ունեն կարևոր մի հատկանիշ: Նրանք ***եռադեմ են՝ միտված անցյալին, ներկային և ապագային:*** Բնականաբար, լինելով 20-րդ դարի իրողությունների արտահայտություն, իրենց ներքին և արտաքին գծերով գլխավորապես կապված են արդիականության հետ, բայց առանց ապագայի և անցյալի միտվածության հաշվառման նրանց գեղագիտական և աշխարհայացքային ամբողջականությունը, անկասկած, խախտվում է: Տվյալ դեպքում անցյալին միտվածություն ասելով՝ պետք է հասկանալ Հեսսեի վեպերում առկա մշակութային այն շերտը, որ առնչվում է գերմանական միջնադարի, 17-րդ դարի միստիկայի, 18-րդ դարի լուսավորական և վերջապես ռոմանտիկական մեծ գրականության հետ: Ապագայի միտվածությունը ենթադրում է նաև ուտոպիականություն, ինչը նույնպես շատ բնորոշ է Հեսսեի մտածողությանը: Երբ համեմատում ենք Հեսսեին և Կաֆկային, ապա պարզ է դառնում, որ մտածողության և ճանապարհի սկզբնական հատվածում նրանք ինչ-որ չափով նման են իրար: Նրանք երկուսն էլ խոսում են այն փակուղիների մասին, որում հայտնվել է 20-րդ դարի մարդը: Բայց եթե Կաֆկայի համար փակուղիները մնում են փակ, ապա Հեսսեն փորձում է բացել դրանք: Գրականագետ Կ.Հոբստը, խոսելով 20-րդ դարասկզբի եվրոպական վեպի մասին, մի դատողություն է անում, որ տվյալ դեպքում պատշաճում է ինչպես Կաֆկային, այնպես էլ Հեսսեին: Քանի որ, նշում է Հոբստը, փոփոխված իրադրության պայմաններում իրականությունը դուրս է գալիս վերահսկողությունից և բացակայում է որևէ կարգ, որ վստահություն սահմանի գրողի և ընթերցողի միջև, ուստի վիպասանին մնում է երկու տարբերակ. կամ ներկայացնել քաոսը (*ինչը անում է Կաֆկան՝ Ա.Ա.*), կամ ուտոպիայի

³⁵⁸ Հերման Հեսսեի վեպերում պայմանական միջավայրի, փիլիսոփայական գաղափարների և դիալեկտիկական հերոսի մասին առավել մանրամասն տե՛ս Կարալաշվիլի Ք. Միր романа Германа Гессе. Тбилиси, «Сабчота Сакартвелო», 1984.

միջոցով իրականության մեջ մտցնել կարգավորվածություն³⁵⁹: Հեսսեի բոլոր մեծ վեպերը, իբրև փիլիսոփայական գործեր, նաև ուտոպիական են: Ուտոպիան առկա է հատկապես «Հուլունքախաղը» վեպում³⁶⁰: Այսինքն, Հեսսեի համար կարևոր է ոչ այնքան մերկ ճշմարտությունը կյանքի մասին, որքան նրա հեռանկարը: Այս հանգամանքը Հեսսեի վեպերում պայմանավորում է կարևոր մի մոտիվի մշտական առկայություն, այն է՝ ուսուցչի և աշակերտի: Այս միֆոլոգներ ուտոպիականության հետ միասին գրեթե մշտապես հանդիպում է Հեսսեի մոտ՝ դառնալով հեսսեագիտության էական ուղղություններից մեկը³⁶¹:

2. Հերման Հեսսեի փիլիսոփայական վեպերում կարևորագույն տեղ է զբաղեցնում *հոգու սյրոբլենդը*: «Հեսսեին մշտապես հետաքրքրում է գաղափարների աշխարհը, գաղափարների կյանքը, հոգու գոյությունը, ոչ թե նյութը»- գրում է Ա.Բերեզինան³⁶²: Կարելի է ասել, որ Հեսսեի ամենամեծ թեման հոգին է, գերմանական, այսպես կոչված, հոգեկանությունը (Innerlichkeit): Հեսսեի փիլիսոփայական վեպերում բոլոր ճանապարհները տանում են այս խնդրի մեկնաբանությանը: Ինքը՝ Հեսսեն, իր ստեղծագործությունների ծնունդը պայմանավորում է անձի (ոչ հասարակության) պաշտպանության անհրաժեշտությամբ: Գրականագետ Ռեգո Կարալաշվիլին Հեսսեի վեպերն անվանում է «հոգու կենսագրություններ»: Բոլորովին պատահական չէ Հեսսեի գրական ժառանգության մեջ «Ճանապարհ դեպի ներս» ծրագրային պատմվածքի առկայությունը, որը թեև փոքրածավալ, բայց առանցքային գործ է: Ոգու, հոգու և մարմնի կենտրոնացման շնորհիվ, ինչը տեսնում ենք պատմվածքում, կարելի է հասնել դրանց միավորմանը և Համընդհանուր սուբստանցին: Այս գաղափարը, որ ուղղակի արտահայտությունն է Հեսսեի երիտասարդական հետաքրքրություններից մեկի՝ մոնիստական փիլիսոփայության, գեղարվեստական բարձր արտացոլման է հասնում

³⁵⁹Horst K. Die deutsche Literatur der Gegenwart. München, Nymphenburger Verlagshandlung, 1957, S. 28-29.

³⁶⁰Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Առաքելյան Ա. Հերման Հեսսեի «Հուլունքախաղ» վեպն իբրև գերմանական ուտոպիա, Գրականագիտական հանդես, Երևան, 2011, էջ 226-244:

³⁶¹Այդ կապակցությամբ տե՛ս, օրինակ՝ Röttger J. Die Gestalt des Weisen bei Hermann Hesse, Bonn, 1980.

³⁶²Березина А. Герман Гессе. Ленинград, «Издательство Ленинградского университета», 1976, стр. 3.

«Միթհարթա» և «Հուլունքախաղ» վեպերում, որտեղ հերոսները տառաջիտորեն տարրալուծվում են բնության կամ Համընդհանուր սուբստանցի հետ: Հեսսեն անհատի և աշխարհը հավերժական հակադրության մեջ սուկ հոգու խնդիր է տեսնում՝ ողջ պատասխանատվությունը վերցնելով մարդու, անձի վրա՝ ի տարբերություն շատ գրողների (Գաֆկա, Էլիոթ...), ովքեր չարիքի արմատը տեսնում են մարդուց դուրս իրականության մեջ: Օրինակ, Թ.Էլիոթի պիեսներից մեկում հերոսն ասում է. «Միտքս չէ ախտով շաղախված, այլ երկիրը, որտեղ ապրում եմ»³⁶³: «Համառոտ կենսագրության» մեջ նա գրում է. «Ես մի բան հստակ եմ հասկանում. դատապարտել ողջ աշխարհը իր խելագարության և անհոգության համար իրավունք չունի մարդկանցից և աստվածներից ոչ մեկը; իսկ ես՝ ամենից շատ: Հնարավոր է, որ հենց իմ մեջ է բնավորվել որևէ անկարգություն, որ ես հակադրության մեջ եմ մտել ողջ աշխարհի հետ»³⁶⁴: Իրականության և մարդու հին կոիվը տեղափոխելով մարդու ներաշխարհ՝ Հեսսեն կեցության ողջ պատասխանատվությունը կապում է մարդու հետ, ինչը էզոփստենցիալ լինելով՝ միաժամանակ և շատ հումանիստական գաղափար է: Այստեղ առկա է նաև քրիստոնեական հանրահայտ գաղափարը՝ «Աստծո արքայությունը մեր մեջ է» (Ղուկաս, 17,21): Սոցիալական խնդիրների հանդեպ Հեսսեի հետաքրքրությունները մեծ չեն³⁶⁵: Գարալաշվիլին այս կապակցությամբ իրավացիորեն գրում է. «Գրողի ողջ հետաքրքրությունը կենտրոնանում է առանձին անհատի, նրա հոգևոր կյանքի վրա, ուստիև դրանից դուրս ամեն ինչ, որ անմիջական կապ չունի հոգեբանական ներքին գործընթացների հետ, հնարավորության սահմաններում դուրս է մղվում նրա (Հեսսեի-Ա.Ա.) վեպերից»³⁶⁶:

3. Առանձնահատուկ ուշադրությամբ և մանրամասնությամբ նա կերտում է իր հերոսների **ներաշխարհը՝ իբրև ապաստան**. Սա վերաբերում է հատկապես իրեն, որովհետև մի շարք փաստեր խոսում են

³⁶³Eliot T. The Family Reunion. New York, 1939, p. 31.

³⁶⁴Гессе Г. Письма по кругу. Москва, 1987, стр. 42.

³⁶⁵Ի տարբերություն սրա, կան գրականագետներ, ովքեր հակառակ կարծիքն ունեն, օրինակ, Ֆրից Բյոտգերը, որի կարծիքով Հեսսեի վեպերի աշխարհը սոցիալական խնդիրների աշխարհ է (տե՛ս Böttger F. Hermann Hesse. Berlin, 1974):

³⁶⁶Каралашвили Р., Мир романа Германа Гессе. Тбилиси, «Сабчота Сакартвелო», 1984, стр. 48:

այն մասին, որ ամբողջ կյանքում Հեսսեն երազել է ապաստան-անկյան մասին (մեծ քաղաքներից մշտապես խուսափող Հեսսեի կյանքը այլ բան չէր, քան ճգնավորի կյանք): «Ապաստան» էսսեում (1917) այսպիսի տողեր կան. «Նպատակը կրկին ապաստանն է: Բայց ոչ քարանձավ կամ նավ: Ես փնտրում եմ և ծարավի եմ ապաստանի իմ իսկ ներսում, փնտրում եմ տարածություն կամ կետեր, ուր չի հասնի աշխարհը, որտեղ տանը մենակ ես եմ»³⁶⁷:

4. Հեսսեի փիլիսոփայական վեպերի հիմնահարցերի քննությունը անխուսափելիորեն առնչվում է նաև **հոգեվերլուծությանը**: Հերման Հեսսեի և հոգեվերլուծության կապերը չափազանց բարդ են և հակասական: Այդ կապերը դիտարկելու տեսանկյունից անժխտելի հետաքրքրություն է ներկայացնում Արթուր Ծնիցլերին Զիգմունդ Ֆրեյդի նամակը: «Ինձ հաճախ է տանջել այն հարցը,- կարդում ենք նամակում,- թե ինչու Ձեզ հետ կապ հաստատելու կամ գրուցելու փորձ այսքան տարիների ընթացքում... չարեցի: Կարծում եմ՝ ես Ձեզանից խուսափել եմ ձեր կրկնորդը լինելու երկյուղից: Ես այն տպավորությունն եմ ստացել, որ Դուք ներքնատեսությամբ (ինտուիցիա), բայց նուրբ ինքնազննումով հասու եք դառնում այն ամենին, ինչը ես մեծ ճիգով հայտնաբերում եմ ուրիշներին գննելով»³⁶⁸: Կարծում ենք, տվյալ դեպքում խնդիրը դուրս է գալիս Ծնիցլեր-Ֆրոյդ առնչությունների սահմաններից և ընդգրկում հարցեր, որոնք վերաբերում են գրողին և հոգեբանին առհասարակ: Մինչ հոգեբանությունը գիտական փաստերով ապացուցում է մարդկային վարքի այս կամ այն օրենքը, պարզվում է, դրա օրինակները արդեն կան գրականության մեջ: Դա է ապացուցում, օրինակ, Սոֆոկլեսի, Շեքսպիրի, Դոստոևսկու ստեղծագործական փորձը: Ըստ էության այս նամակը Ֆրոյդը կարող էր ուղարկել ոչ միայն Ծնիցլերին, այլև Հեսսեին, Թ.Մանին, Ջոյսին կամ Պրուստին, նրա բովանդակությունը, երևի, չէր փոխվի: «Արվեստագետը և հոգեվերլուծությունը» էսսեում, ընդհանուր առմամբ կարևորելով հոգեվերլուծության գիտական արժեքը, Հեսսեն գրում է. «Ինձ՝ նոր գիտական հոգեբանության հանդեպ փոքրագույն իսկ հետաքրքրություն չունեցողիս, թվում է, որ Ֆրոյդի, Յունզի, Շտեկելի և մյուսների առանձին ստեղծագործություններում ասված է ինչ-որ նոր և կարևոր բան, ես նրանց կարդացի եռանդով և ընդհանրապես գտնում եմ հոգևոր գործընթացների մասին նրանց հայացքներում հաստատումը իմ

³⁶⁷Гессе Г. Письма по кругу. Москва, 1987, стр. 82.

³⁶⁸Freud S. Briefe. 1873-1939. Frankfurt am Main, S. Fischer, 1960, S. 249.

բոլոր պատկերացումների, որ ստեղծվել են ֆանտազիայի և սեփական դիտարկումների ճանապարհով»³⁶⁹:

Ինչպես բազմաթիվ գրողների, այնպես էլ Հեսսեին հոգեվերլուծությունը օգնեց բյուրեղացնել, որոշակիացնել մարդու, նրա ինքնության մասին պատկերացումները: Հատկանշական է, որ Հեսսեի փիլիսոփայական վեպերը առավել ամբողջականորեն մեկնաբանության տրվում են հենց հոգեվերլուծության գաղափարների, մասնավորապես ինքնության գաղափարի, խորհրդանիշների, մոտիվների կիրառման դեպքում: Այսպես, «Դեմիանը» և «Միթհարթան» կարող են դիտարկվել իբրև ճանապարհի դեպի ինքնություն, դեպի ներս; «Տափաստանի գայլը» առավելապես ինքնության գիտակցման վեպ է, իսկ «Ուլիսսագնացություն դեպի Արևելքը»՝ ճանապարհի ինքնության մեջ: «Հուլունքախաղը» ինքնության իրականացում է:

5. Հեսսեի աշխարհայացքի հիմնավոր շերտ է նաև *Արևելքը*³⁷⁰: Արևելքին դիմելը, որ ուշ լուսավորիչներից և հատկապես ռոմանտիկներից հետո Եվրոպայում ձևավորվեց իբրև մշակութային-ստեղծագործական կայուն միտում, Հեսսեի մոտ ունի իր առանձնահատկությունները: *«Հեսսեի ստեղծագործություններում Արևելքին դիմելը ավելի քիչ փախուստ էր իրականությունից դեպի ուտոպիա, իրավացիորեն գրում է Բ.Սանդբերգը, քան փորձ անսովոր կենտրոնացման և միստիկայի միջոցով գտնելու դեպի ներս տանող ճանապարհը»³⁷¹:*

6. Հեսսեի փիլիսոփայական վեպերի համար կարևոր է ևս մեկ առանձնահատկություն: *Հեսսեի հերոսը անշարժ, ստատիկ կերտվածք չէ, այլ շարժուն, դինամիկ մարդ, ով մշտապես ձգտում է դեպի սահմանային իրավիճակներ, մինչև վերջին իմացություն և վերջին հանգրվան:* Ֆաուստյան տիպի այդ հերոսների, օրինակ, Միդհարթայի կամ Յոզեֆ Կնեխտի համար, ըստ էության, վերջնական իմացություն կամ հանգրվան չկա: Այս առումով նրանք մի կողմից նմանվելով Ֆաուստին, մյուս կողմից համադրելի են դառնում Սյոբեն Կյերկեգորի՝ մարդու ներդաշնակ զարգացման գեղագիտական մարդ, բարոյական մարդ և հոգևոր մարդ

³⁶⁹Называть вещи своими именами. Москва, «Прогресс», 1986, стр. 400.

³⁷⁰Այս մասին առավել մանրամասն տե՛ս Առաքելյան Ա. Հեսսեն և Արևելքը, Երևան, «Վան Արյան», 2009:

³⁷¹Sandberg B. Der Roman zwischen 1910 und 1930, in: Handbuch des deutschen Romans. Düsseldorf, Bagel, 1983, S. 503.

եռաստիճան համակարգի պատկերացումների հետ: Օրինակ, Միդհարթան կամ Յոզեֆ Կնեխտը իդեալականորեն համապատասխանում են այդ աստիճաններին: Հասնելով իրենց զարգացման ամենաբարձր աստիճանին, երբ հոգևոր և մարմնավոր իդեալները այլևս նվաճված են, նրանք բառացիորեն ոչնչանում, տարրալուծվում են իրականության մեջ՝ տալով կյանքի, մահվան և հարության առեղծվածային օրինակներ: Ներքևից դեպի վեր ընթացող այս շարժմանը վիպական կառույցում համապատասխանում է պարզից դեպի բարդ կոմպոզիցիաները: Հեսսեն, ինչպես 20-րդ դարի բազմաթիվ գրողներ, սկսում է պարզ կառույցներից կամ հակադրություններից, օրինակ, Գայլ և Մարդ («Տափաստանի գայլը»), Փիլիսոփայություն և Արվեստ («Նարցիս և Գոլդմունդ»), Միտք և Ոգի («Հուլունքախաղ»), Հեսսեն հաճախ գործածում է նաև հին չինական Ին և Յան, Նիցշեի դիոնիսյան և ապոլոնյան հակադիր ֆիգուրաները, սակայն հետագայում այդ պարզ և հանրահայտ կառույցները աստիճանաբար բարդանալով՝ ձեռք են բերում խորհրդավոր և հերմետիկ բնույթ: Այդ կապակցությամբ Ն.Պավլովան իրավացիորեն գրում է. «Պարզությունը նրա (Հեսսեի- Ա.Ա.) փիլիսոփայական վեպերի սկզբունքորեն կարևոր հատկությունն է: Իր էությամբ այն հանելուկային է և իր մեջ թաքցնում է ոչ միայն գեղագիտական, այլև բարոյական իմաստ»³⁷²:

Գրական ճակատագրով և աշխարհայացքով Հեսսեին ինչ-որ չափով մոտ է Թոմաս Մանը: Համաեվրոպական հեղինակություն վայելող այս գրողների երկերում շատ բան ընդհանուր է: Լինելով ժամանակակիցներ և ապրելով եվրոպական պատմամշակութային գրեթե միևնույն միջավայրում, նրանք, անշուշտ, ունեցել են , աշխարհայացքային, գեղագիտական պատկերացումների ընդհանրություններ: Այդուհանդերձ, նրանք խորապես տարբերվում են միմյանցից: Նրանց ստեղծագործական ճանապարհները, նպատակները և ինքնաճանաչման եղանակները տարբեր են: Լինելով գերմանական ոգու ամենահետաքրքրական դրսևորումը, նրանց ստեղծագործություններում առավել ամբողջական և համապարփակ ձևով ներկայացնում են 20-րդ դարի եվրոպական գեղագիտական մտքի կարևորագույն միտումները: Եթե Հերման Հեսսեի համար կարևորագույնը հոգու, անգիտակցականի և ինքնության

³⁷²Павлова Н. Поэтика немецкого романа. Москва, «Наука»,1982, стр. 54.

խնդիրներն են, ապա Թոմաս Մանի ստեղծագործության մեջ համապարփակ մեկնաբանություն է ստանում ժամանակը:

Արա Արակեյան

ПРОБЛЕМАТИКА ПРОЗЫ ГЕРМАНА ГЕССЕ

В статье рассматривается проблематика прозы Германа Гессе, а так же некоторые аспекты его поэтики. Особое внимание уделяется многожанровости прозы Гессе, которая способствовала формированию европейской эстетической мысли 20-го века. Важнейшими сторонами прозы Гессе представляются трехмерность его произведений (что определяется одновременностью прошлого, настоящего и будущего), а также – утопизм и интерес к вопросам души. В статье рассматриваются психоаналитические аспекты и литературно-философские восточные традиции, а так же вопрос динамики и фаустичности героев Гессе.

Ara Arakelian

THE PROBLEMATICS OF HERMAN HESSE'S PROSE

In the present article author discusses the problematics of Herman Hesse's creative works and the peculiarities of his poetics. Here, the author underlines the fact that Hesse's multigenre creativity has influenced the aesthetic thought of Europe of the 20th century. The author discusses most important aspects of Hesse's prose, which is a three-dimension perspective of the past, present and future. The utopian ideas, the problems of the soul, psycho-analytical issues, the invention of eastern literary-philosophical tradition as well as the dynamics and <<faustism>> of the character are also considered in the article.

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԸ և ԿՐՈՆԱԿԱՆ ԹԵՍԱՏԻԿԱՆ
Ֆ.ԿԱՖԿԱՅԻ «ԴՄԱՍՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Ֆրանց Կաֆկա, «Դատավարություն», ինքնակենսագրական տարրեր, կրոնական ինքնություն

Գրական ազդեցություն ասելով՝ հասկանում ենք հետևյալ գործոնները. դարաշրջանը, որում գրվել է ստեղծագործությունը, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ վարք ու բարքերը, սովորույթները, կենցաղը, հասարակությունը, միջավայրը, որտեղ ապրել և ստեղծագործել է գրողը: Իսկ այն, ինչ մեր կարծիով յորաքանչյուր ստեղծագործության մեջ ամենակարևորն է, լինի այն վեպ, նովել, թե մեկ այլ ժանր, անշուշտ, գրողի ազգային պատկանելությունն է, ինչպես նաև նրա կողմնորոշումը դեպի որևէ հավատամք:

Կաֆկան այն գրողներից մեկն է, ում ստեղծագործություններում մշտապես իր ուրույն տեղն է զբաղեցնում կրոնական թեմատիկան: Թեև նրա ստեղծագործություններում հաճախ են արծարծվում կրոնական թեմաները, սակայն դրանք գլխավոր թեմա չեն դառնում, ինչպես օրինակ իրավական բնույթի թեմաները, որպես կանոն նրանք «կողպված» են, ինչպես և սեռական թեմատիկան և հենց այդ պատճառով էլ հաճախ դժվար մեկնելի: Որպես օրինակ կարելի է դիտարկել «Տաճարում» գլուխը «Դատավարություն» վեպում ու «Օրենքի առաջ» պատմվածքը և արձանագրել դրանց կրոնական բնույթը: Վերջինիս մեջ արծարծվում է «լուսիսի հասնելու» խնդիրը: Կաֆկայի գործերի հերոսները երբևէ ինքնաձանաչում չեն գտնում, փոխակերպվում են և իրենց օտար են զգում շրջապատում:

Կաֆկայի վեպերի իրական իմաստն ըմբռնելու համար ստիպված ենք հաճախ մեկնել նրա գործերը՝ գործածության մեջ դնելով հերմենևտիկական մեթոդը, առանց վերջինիս կիրառության դժվար կլիներ հասկանալ օրինակ «Տաճարում» գլխի իմաստը:

Կաֆկայի ստեղծագործական ոճը բնորոշվում է իբրև փոքր-ինչ սուրբեալիստական, էքսպրեսիոնիստական, որն իրենից ներկայացնում է երևակայականի, փիլիսոփայական, հոգեբանական տարրերի և իր իսկ սեփական կենսագրության խառնուրդ: Կաֆկայի գործերն արդեն վաղուց եվրոպական մոդեռնիզմի դասական ստեղծագործությունների արժեք ունեն: Մարդու հոգեկան աշխարհի մոդեռնիզացման պատճառած

վնասները, որոնց հետևանքով 20-րդ դարի աշխարհը նկարագրվում էր իբրև օտար, առարկայացված, սառը և անթափանց, պատկանում էին Կաֆկայի գործերի հիմնական մոտիվների թվին: Կաֆկայի մյուս մոտիվներից են միայնությունը, մեկուսացումը և այլն:

Պրահայում՝ որպես ապահովագրական կազմակերպության աշխատող, Կաֆկան մշտապես առճակատում էր աշխատավորների մոդեռնիզացված աշխարհի հետ կապված հարկադրանքների հետ: Ի դեմս Կաֆկայի՝ նույնիսկ կարելի էր տեսնել ժամանակակից իրականության մարգարեի կամ պայծառատեսի: Այստեղ տեղին է մեջբերել Հերման Հեսեի՝ Կաֆկայի և նրա ստեղծագործությունների վերաբերյալ կարծիքը.

«Կաֆկայի պատմվածքները կրոնական, մետաֆիզիկական և բարոյական ինդիքների նկարագրություններ չեն կամ էլ հորինվածքներ: Ով ընդունակ է որևէ գրողի իսկապես կարդալ առանց հարցերի, առանց ինտելեկտուալ կամ բարոյական սպասելիքների, պարզ պատրաստականությամբ ընդունելու այն, ինչ տալիս է գրողը, նրան այդ ստեղծագործությունները իր լեզվով տալիս են այն պատասխանը, որը նա ցանկանում է: Կաֆկան մեզ չունի ասելիք ո՛չ որպես աստվածաբան, ո՛չ էլ որպես փիլիսոփա, այլ միայն որպես գրող: Այն, որ նրա մեծագույն ստեղծագործություններն այսօր արդի են, այն որ դրանք կարդում են մարդիկ, ովքեր ո՛չ ընդունակ են, ո՛չ էլ պատրաստակամ՝ այդ ստեղծագործություններն ընդունելու, նա դրանում մեղք չունի: Նա մեզ է փոխանցում իր միայնակ, դժվար կյանքի երազներն ու տեսիլքները, իր վշտերն ու երջանիկ պահերը, և այդ երազներն ու տեսիլքները միակ բանն են, որոնք մենք փնտրում ենք նրա մոտ և ուզում ընդունել»³⁷³

Չնայած Կաֆկան անհամատեղելի էր համարում իր գոյությունը որպես գրող և պաշտոնյա, այնուամենայնիվ, նրա գրական գործունեությունը, ինչպես ոճական, այնպես էլ բովանդակային առումներով արտահայտված են մասնագիտական փորձով: Նրա գրական իրողությանն էին պատկանում ակտեր, պաշտոնական գրություններ,

³⁷³ Zitiert nach Pfeifer, Martin: Königs Erläuterungen und Materialien. Bd. 209. Erläuterungen zu Franz Kafka. Amerika“, „Der Prozeß“, „Das Schloß“. Hrsg. von Klaus Banners, Gerd Eversberg, Reiner Poppe. C. Bange Verlag-Hollfeld 1981, S.8.

միջնորդագրեր, իրավական փաստաթղթեր, բողոքարկման դիմումներ, վիճակագրություններ և մասնագիտական կյանքն ընդհանրապես:

1914թ. օգոստոսին, առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո, Կաֆկան սկսեց աշխատել իր «Դատավարություն» վեպի վրա, որը հետագայում պետք է դառնար նրա ամենահայտնի գրական աշխատությունը: Կաֆկայի ստեղծագործություններին հատուկ էր այն, որ նա իր բազմաթիվ ձեռագրերը մշտապես դեն էր նետում կամ ոչնչացնում էր: Այս վեպի վրա աշխատանքը նա նույնպես բազմիցս ընդհատել է: Վեպը մնաց անավարտ, բայց այն, այնուամենայնիվ, հրատարակվեց նրա մահից հետո 1924թ. ընկերոջ՝ Մաքս Բրոդի կողմից:

«Դատավարությունը» Կաֆկայի միակ գործն է, որը չի գրվել տրամաբանական հերթականությամբ: Նախ նա գրել է առաջին և վերջին գլուխները, այսինքն նկարագրել է գլխավոր հերոսի ձերբակալումն ու պատիժը: Կաֆկայի օրագրերում նկատվում է, որ «Դատավարություն» վեպում ծավալվող գործողությունները հիմնականում համընկնում են նրա կյանքում տեղի ունեցած իրադարձությունների հետ և բխում դրանցից:

Այն ժամանակ, երբ Կաֆկան սկսել էր գրել «Դատավարություն» վեպը, դեռևս չէր լրացել նրա երեսունմեկ տարին: Դա սերտորեն կապված է այն փաստի հետ, որ նրա վեպի հերոսը՝ Յոզեֆ Կ.-ն, նույնպես դեռ չէր դարձել երեսունմեկ տարեկան, երբ իր ծննդյան նախորդ օրը երեկոյան սպանվեց: Հենց իր ծննդյան նախորդ օրը երեկոյան Կաֆկան որոշեց մեկնել Բեռլին և չեղյալ հայտարարել իր նշանադրությունը Ֆելիս Բաուերի հետ: Նույն ժամանակահատվածում սպանվեց Ավստրիայի թագաժառանգը, ինչն էլ դարձավ պատերազմի բռնկման առիթ, իսկ Կաֆկան ավստրիական քաղաքացիություն ուներ: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Կաֆկան զուգահեռներ է անցկացնում իր՝ նշանադրությունից հրաժարվելու պատճառով ծագած ներքին խռովությունների, իր կյանքում առաջ եկած մի շարք խնդիրների և թագաժառանգի սպանության հետևանքով բռնկված պատերազմի միջև: Հետևաբար, նման են նաև իր և իր վեպի գլխավոր հերոսի ճակատագրերը: Օրագրերից մեկում կարելի է կարդալ.

«Նորից հազիվ երկու էջ: Սկզբում կարծում էի՝ Ավստրիային պատած անհաջողությունները և ապագայի հանդեպ ունեցած վախն ինձ ընդհանրապես կխանգարեն գրել: ...Տանջալի մտքերը, որ կապվում են պատերազմի հետ, և կարծես խժռում են ինձ տարբեր ուղղություններից,

նման են այն մտահոգություններին, որոնք կապված են Ֆ.-ի (Ֆելիսի) հետ:»³⁷⁴

Նշենք, որ վեպի հերոս Յոզեֆ Կ.-ն բանկում պաշտոնյա էր, որն իր երեսուներորդ տարեդարձի օրն առավոտյան առանց պատճառների պարզաբանման ձերբակալվում է արթնանալուց անմիջապես հետո, ինչի հետևանքով նա կորցնում է կապն իր շրջապատի հետ: Գործը տևում է տասներկու ամիս, որոնց ընթացքում Կ.-ին չի հաջողվում դատարանի առաջ ապացուցել իր անմեղությունը: Նա նույնիսկ տեղյակ չէր, թե ինչում է մեղադրվում ինքը: Նա օգնություն է փնտրում իր մասնագիտության, արվեստի, գիտության և սիրո բնագավառներում, սակայն իզուր: Վեպի հերոսը այնդպես էլ չի ընդունում իր մեղքը, ինչը պայմանավորում է նրա մտածելակերպն ու հետագա գործողությունները:

Հստակ նմանություն կարելի է տեսնել Կաֆկայի և Յոզեֆ Կ.-ի կյանքի միջև. նախ և առաջ նկատենք, որ վեպի գլխավոր կերպարի անունը ոչ մի անգամ լիարժեք չի նշվում: Կարելի է կարծել, որ Յոզեֆ Կ.-ի անվան տակ նկատի է առնված Յոզեֆ Կաֆկա անունը: Մյուս կողմից՝ միևնույն դիտարկումը կարելի է անել հսկիչի («Դատավարություն» վեպի հերոսներից մեկի) դեպքում: Վերջինս հանդես է գալիս Ֆրանց անունով, և նա էլ հարսնացու ունի, ինչպես վեպի հեղինակ Ֆրանց Կաֆկան, ինչը ևս պատահական չէ: Գրողը ճշգրիտ նմանություն է տեսնում իր կարգավիճակի և իր հարսնացուի բնակարանում տեղի ունեցած նշանադրության տեսարանի միջև՝ *«Ես կապկպված էի ինչպես հանցագործ»*³⁷⁵: Իսկ հերոսի ձերբակալումը տեղի է ունենում գրամեքենավարուհու սենյակում, որի անվան սկզբնատառերը, վանկերի քանակը և վերջնահնչյունները միանման են հնչում՝ *Fräulein Bürstner - Felice Bauer*. Կաֆկայի գրական խաղն, իրոք, մեծամասամբ միախառնված է ինքնակենսագրական տարրերով: Կարելի է ենթադրել, որ վեպում պատմվում է մի դատավարության մասին, որը ինքը՝ Կաֆկան, վարում է հենց իր դեմ.

«Ինչ-որ մեկը պետք է զրպարտած լիներ Յոզեֆ Կ.-ին, որովհետև նա ձերբակալվեց մի առավոտ առանց որևէ զանցանք կատարելու»:³⁷⁶

³⁷⁴ <http://www.odaha.com/sites/default/files/Tagebucher.pdf>. S. 168

³⁷⁵ <http://www.xlibris.de/Autoren/Kafka/Biographie/Seite7>

³⁷⁶ Kafka, Franz: Der Prozeß. Frankfurt am Main 1994, S. 9.

⁴ նույն տեղում, էջ 52.

Այսպիսով, կարելի է հետևություն անել, որ վեպը լի է ինքնակենսագրական տարրերով, որոնք արտացոլում են հեղինակի կյանքը: Անգամ վեպի վերնագիրը խոսում է այն իրավիճակի մասին, որում գտնվում է գրողի անձը, և որից նա այլ ելք չի գտնում, քան, ինչպես վեպի ավարտն է ցույց տալիս, մահը: Այն կրիտիկական պահերը, որոնց նկարագրությունը տեղ է գտնում վեպում, համապատասխանում են գրողի կյանքի այն իրադարձություններին, որոնք նա ի վիճակի չէր հաղթահարել:

Շարունակելով կենսագրական տարրերի ուսումնասիրությունը վեպում՝ նկատենք, որ ինչպես Կաֆկայի, այնպես էլ Յոզեֆ Կ.-ի կյանքում, ամեն ինչ նման է. շուտով վերջինս հասկանում է, որ դատավարությանը վերջ չկա, և միակ ելքը հետաձգումը կամ էլ փախուստն է: Երկու դեպքում էլ տառապանք է սպասվում: Յոզեֆ Կ.-ն, ինչպես Կաֆկան իր մանկության տարիներին, ապրում է մշտական սպառնալիքներով (Յ. Կ.-ն դատարանի և դատավարության պատճառով, իսկ Կաֆկան՝ ամենագոր հոր), առանց գիտենալու՝ ինչ են արել իրենք, առանց տեղեկացվելու իրենց մեղավորության մասին, իրադարձությունների վրա ազդել չկարողանալով և չիմանալով, թե երբ է այդ ամենը հանգուցալուծվելու:

Ինքնակենսագրական տարրերի հետ մեկտեղ վեպում տեղ են գտել նաև ակնարկների մի շարք, որոնց միջոցով գլխավոր հերոսի անձնական պայքարը դատական մարմինների դեմ պարզաբանվում է հրեական, քրիստոնեական և փիլիսոփայական ավանդույթների ներքո: Սակայն ամենից առաջ Կաֆկան նկարագրում է միջանձնային և ֆիզիկական կոնֆլիկտները, որոնք առկա էին նաև նրա կյանքում:

Անդրադառնալով կրոնի կարևորության թեմային Կաֆկայի կյանքում և ստեղծագործություններում՝ նշենք, որ Կաֆկայի հոգևոր դաստիարակության հարցում այնքան էլ մեծ դեր չխաղաց այն փաստը, որ նա ծնվել և մեծացել էր հրեական, սակայն աշխարհիկացված ընտանիքում, քանի որ նույնիսկ դպրոցում ստացած կրոնական գիտելիքները նրա համար էլ ավելի անհետաքրքիր էին դարձնում հրեական կրոնը: Ինչ վերաբերում է կրոնական միջոցառումներին, ապա դրանք նրա համար ձանձրալի, նույնիսկ ծիծաղելի էին: Քրիստոնեությունը ևս նրա համար մեծ դեր չէր խաղում, քանի որ նրան մեկ այլ՝ «ավելի կենդանի»³⁷⁷ կրոն էր հետաքրքրում, այն է արևելահրեականությունը: Միայն այն բանից հետո, երբ նա ծանոթացավ մի հրեական թատերական խմբի հետ, նա սկսեց

³⁷⁷ Wagenbach, Klaus: Franz Kafka, Reinbeck bei Hamburg 1964, S.71.

ուսումնասիրել հրեական պատմությունն ու գրականությունը, որի հետևանքով սկսեց խորությամբ գիտակցել իր հրեական ծագումը: Միաժամանակ նա սկսեց նաև եբրաերեն սովորել: Հետագայում կրոնը էլ ավելի մեծ տեղ է սկսում զբաղեցնել Կաֆկայի կյանքում. Կյանքի վերջին տարիներին նա սկսում է Աստվածաշունչ կարդալ: Այս փաստն իր անջնջելի հետքն է թողում նրա ստեղծագործություններում:

Կաֆկան կրոնական նրբերանգներ է հաղորդում նաև «Դատավարություն» վեպին: Աչքի է զարնում այն, որ Կաֆկան իր ստեղծած կերպարներից շատերին մոտեցնում է քրիստոնեությանը կամ էլ կապ է ստեղծում նրանց և կրոնի միջև: «Դատավարության» մեջ Յոզեֆ Կ.-ն իր մահից առաջ դիտում է մի նկար, որտեղ պատկերված էր Քրիստոսի թաղումը, իսկ «Դատավճիռ» վեպում Գեորգ Բենդեմանն իր ինքնագոհաբերման ճանապարհին «Հիսուս» է կանչում: «Ամրոց» վեպում գյուղացի վաճառական Կ.-ն, ինչպես Հիսուսը, իր կյանքի առաջին գիշերն անցկացնում է իջևանատանը՝ ծղոտի վրա, իսկ միևնույն վեպում Բառնաբասը, որը Կաֆկայի՝ արական սեռի հերոսներից ամենաշատն է նմանեցվում գյուղացի վաճառականին, հրեական անուն է կրում:

Երբ խոսում ենք այս վեպի կրոնական բնույթի մասին և փնտրում ենք կրոնական տարրեր, հարկ է ուշադրություն դարձնել նախ այն գլխի վրա, որը հաճախ դիտարկվում է որպես առանձին պատմվածք: Դա «Տաճարում» գլուխն է, որը ներկայանում է նաև «Օրենքի առաջ» կամ «Դոնապահի լեզենդը» վերնագրերով: «Լեզենդը» հասկացությունն արդեն իսկ կրոնական նրբերանգ ունի, քանի որ այն հաճախ դիտվում է իբրև հրեական պատկերացումների և հավատամքի դրույթների արտահայտություն: Յոզեֆ Կ.-ին լեզենդը տաճարում պատմում է մի հոգևորական: Տաճարն իբրև գործողության վայր և հոգևորականը ևս մատնանշում են կրոնական ավանդույթները: «Օրենք» եզրույթը վեպում խորհրդանշում է Աստծո օրենքը: Որպես աստվածայինի խորհրդանշիչ և ներկայություն՝ վերջում հայտնվում է «լույսը»՝ անմոռանալի կերպով ճառագելով դրան ճեղքից:³⁷⁸

Նշենք, որ «Օրենքի առաջ» պատմվածքը գյուղից եկած մի մարդու մասին է, ով փնտրում է դատարան մտնելու մուտքը: Մակայն սարսափազդու դոնապանը արգելում է նրան և զգուշացնում ավելի գորեղ դոնապաններից: Գյուղացին ողջ կյանքում սպասում է օրենքի դարպասների առաջ և միայն իր մահից քիչ առաջ է իմանում, որ մուտքը

³⁷⁸ նույն տեղում, էջ. 227.

միայն իր համար էր նախատեսված, և որ այն այժմ փակվում է: Այստեղ կա հակադրություն, պարադոքս, ինչն էլ ավելի վառ է դարձնում այն տպավորություններն ու զգացողությունները, որոնք գրողը փոխանցում է ընթերցողին: Այս պատմվածքն ընթերցելիս բազմաթիվ հարցեր են առաջանում՝ կապված «օրենք», «դոնապան», «գյուղից եկած մարդը» հասկացությունների հետ: Ելակետային կարող ենք համարել գյուղից եկած մարդուն, որը չունի աշխարհաճանաչում, փորձ և ուզում է մտնել դատարանի դռնից ներս: Դոնապանը հսկիչ է, օրենքի ներկայացուցիչ, որն իր տեսքով սարսռեցնում է. նա հագին ուներ մորթե վերաբլու, քիթը ցցուն էր, մորուքը՝ երկար, բարակ, սև ու տարտարոսային, իրականում նրա տեսքը բոլորովին էլ «օրինական» չէր: Այն, որ գյուղացի մարդը երկար տարիներ ապաստում էր, նշան էր անգիտության և անորոշության: Իրականում ոչ մի պատճառ չկար, միայն դոնապանի արգելքն ու զգուշացումն էին մարդուն անօգնական դարձնում և նրան խանգարում՝ քաջություն հավաքելու և ըմբոստանալու: Այս ամենից բացի գյուղացին փորձում է դոնապանին կաշառել և նույնիսկ նվերներ էր հետը բերել, ինչը նույնպես վկայում էր այն, որ նա ոչինչ չգիտեր օրենքի մասին և, հետևաբար, իրավունք չունեիր այնտեղ մտնելու:

Կաֆկան դոնապահին նկարագրում է իբրև հրեական ավանդույթի ներկայացուցիչ, իսկ գյուղացուն՝ որպես Կաֆկայի սերնդի հրեա, որ կորցրել է իր կրոնական ինքնությունը: Այն մարդու համար, ում օրենքի գրերը ծանոթ չեն, փակ է ճամփան դեպի այդ օրենքը (այստեղ՝ «օրենք» ասելով, կարելի է հասկանալ միաժամանակ և՛ դատական, և՛ Աստծո օրենքները): Ըստ հրեական հավատամքի՝ հնագանդ հրեայի առջև բաց է մուտքը դեպի Աստծո թագավորություն, սակայն, ի հակառակ դրան, Կաֆկան իր պատմվածքներում այդ մուտքը ներկայացնում է իբրև մինչև մահ անհաղթահարելի արգելք:

Վեպում Կաֆկան օգտագործում է «ժամանակի մոնտաժի» մեթոդը, ինչն էլ խանգարում է ընթերցողին՝ հասկանալու իմաստը: Գործողության վայրի նկարագրության բացակայությունը դժվարեցնում է շրջապատի հստակ ուրվագծումը: Թվում է՝ գործողության վայրը՝ դատարանը, որևէ հիմնարկություն է: Գործողությունների ընթացքը նկարագրված է չեզոք պատմողի կողմից: Կաֆկան, հավանաբար, մտադրություն ուներ դրդել ընթերցողին, որ վերջինս իրեն նույնականացնի որևէ կերպարի հետ: Դրա մասին է վկայում անանունությունը: Կաֆկայի վեպերում հաճախ է հանդիպում անօգնական, շփոթված պրոտագոնիստի կերպարը: Կարելի է ենթադրել, որ այդ երևույթը նրա և հոր հարաբերությունների խտացումն

է արտահայտում: Այս վեպում արտացոլվում են Գաֆկայի ընկճված կամքը, ընտանիքում բռնատիրական հարաբերությունների դեմ պայքարը: Այստեղ պատմողին, որը որոշ չափով հեղինակի մարմնավորումն է, կարելի էր տեսնել անօգնական, պասիվ, գյուղից եկած մարդու դերում, որը հակադրվում է Գաֆկայի՝ ակտիվ, դոնապան - հոր կերպարին: Վերջին հատվածում կրկին ակնհայտ են դառնում հասարակ մարդու և գորեղ իշխանության միջև հարաբերությունները:

«Օրենքի առաջ» պատմվածքը, ինչպես արդեն նշեցինք, թույլ է տալիս մեկնել այն կրոնական տեսակետից: Համատեքստից կարելի է հետևություն անել, որ, «օրենք» ասելով, հեղինակը գուցե նկատի ունի դրախտը, այլապես այն, որ գյուղից եկած մարդը թույլտվություն էր պահանջում ներս մտնելու համար, անիմաստ կլիներ: Աստվածաշնչյան, հոգևոր և կրոնական ոլորտները Գաֆկայի այս վեպում հստակ արտահայտված են սիմվոլներով: Դրանց են պատկանում ձերբակալման առավոտյան խնձոր ուտելը, ինչը խորհրդանշում է անմեղության կորուստը: Հատկանշական է, որ վեպի գլխավոր հերոսը ձերբակալման օրը, ինչպես նաև Գաֆկան՝ վեպը գրելիս, երեսուն տարեկան էին, ինչը համապատասխանում է Հիսուսի տարիքին՝ իր առաքելության մեջ մտնելու ժամանակ:

Армине Абрамян

АВТОБИОГРАФИЧЕСКИЙ ХАРАКТЕР И РЕЛИГИОЗНАЯ ТЕМАТИКА РОМАНА Ф. КАФКИ «ПРОЦЕСС»

В статье рассматриваются автобиографические элементы и религиозные мотивы в романе «Процесс» немецкого писателя еврейского происхождения Ф.Кафки. В романе проводятся параллели между событиями из жизни писателя и главного героя Йозефа К., и делается вывод о наличии в романе автобиографических черт. Центральное место в статье занимает религиозная тематика и сопряженная с ней проблема еврейской идентичности автора.

Armine Abrahamyan

THE NOVEL "THE TRIAL" BY KAFKA: AUTOBIOGRAPHICAL CHARACTER OF THE NOVEL AND THE RELIGIOUS THEME

This article is devoted to the study of autobiographical elements and religious motives presented in the novel "The Trial" by German-Jewish writer Kafka. The novel reflects the important events and their reflection in the hero's, and, at the same time, in the writer's life. The article focuses on the means by which the religious character of the novel is reflected.

ՀՈՒՆԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Հիմնաբառեր՝ հունական ռոմանտիզմ, Աթենքի դպրոց, Իոնական դպրոց, «կլասիկոռոմանտիզմ», կաֆարեբուսա

Ժամանակակից գրականագիտության վճռահարույց խնդիրներից է մնում հունական ռոմանտիզմի յուրահատկությունը, դրա ձևավորման և զարգացման գործընթացը, ազդեցությունների և ինքնուրույնության խնդիրը:

Հայտնի է, որ 19-րդ դարի հունական գրականության զարգացման համար նշանակալից է եղել Աթենքի հին կամ առաջին դպրոցի (հուն. Α΄ Αθηναϊκή σχολή) և Իոնական (հուն. Επτανησιακή Σχολή, այլ կերպ նաև՝ Էպտանիսիական՝ յոթ կղզիների) դպրոցի երկարատև հակամարտությունն ու պայքարը:

Աթենքի առաջին գրական դպրոցը հիմնվեց 19-րդ դարի 20-ական թվականներին Կոնստանդնուպոլսից և արևմտյան Եվրոպայից Աթենք ժամանած կրթված հույների՝ **ֆանարիոսների** կողմից, որոնք իրենց համարում էին հայրենական ժառանգության պահապանները և իրենց պարտքն էին համարում հիմք դնել նոր ազգային մշակույթին: Պանայոտիս Մուցոսը, Ալեքսանդրոս Մուցոսը և Ալեքսանդրոս Ռանգավիսը այն ֆանարիոսներն էին, որոնք կազմեցին Աթենքի ռոմանտիկ դպրոցի կորիզը՝ դառնալով նրա առաջին սերունդը:

Հունական հողում գրական խմբակների և դպրոցների ձևավորումը բացառապես կապված է իոնական ռոմանտիզմի, հատկապես Մոլոմոսի և նրա խմբակի անդամների ստեղծագործական գործունեության հետ: Այս առումով Ղ.Վելուդիսը նշում է, որ գրական «Σχολή» դպրոց, տերմինը՝ որպես այդպիսին, վերաբերում է հենց Իոնական դպրոցին և ոչ թե ռոմանտիզմի դարաշրջանի Աթենքի դպրոցին³⁷⁹:

Մինչ Աթենքում և Կոնստանդնուպոլսում կրթված հույները փորձում էին զարգացնել մեռած աստիկյան բարբառը, 18-րդ դարի վերջին և 19-րդ

³⁷⁹ Βελουδής Γ., Ο Επτανησιακός, Ο Αθηναϊκός και Ο Ευρωπαϊκός Ρομαντισμός, Μονά - ζυγά, Δέκα νεοελληνικά μελετήματα, 1992, Αθήνα, σελ. 104 http://www.lit.auth.gr/sites/default/files/documents/nef250_veloudis.pdf/

դարի սկզբին Իոնական կղզիներում սկսում է զարգանալ գրական մի շարժում, որը հայտնի է՝ որպես **Իոնական դպրոց**: Իոնական դպրոցը բարգավաճում է հատկապես ազատագրական պայքարից հետո 1821-1829 թվականներին: Իոնական դպրոցի ամենահայտնի ներկայացուցիչը Դիոնիսոս Մոլումոսն է: Ռանգավիսից դեռ տասամյակներ առաջ՝ 1825-1828 թվականներին, նա կիրառել էր ռոմանտիզմի թեման իր «Լամբրոս» ստեղծագործության մեջ՝ երեք գլխավոր հերոսների մեջ արտացոլելով ռոմանտիզմի մի շարք առանձնահատկություններից երկուսը՝ ֆանտաստիկան և պաթետիկան: Նա 19-րդ դարի 20-ական թվականներին իր ստեղծագործություններում սինթեզելով ազգային ավանդույթները համաշխարհային նորարար փորձի հետ լուծում է ազգային լեզվի խնդիրը և դառնում ժամանակակից հունական գրականության հիմնադիրը: Բտալիայում անցկացրած տարիներն, անշուշտ, իրենց հետքն են թողնում Մոլումոսի գրական ոճի ձևավորման վրա, հատկապես Բտալիայում այդ ժամանակաշրջանում հաստատված ռոմանտիզմի առանձնահատկությունները՝ հայրենասիրության ոգին, ազատամտությունը և ազգային լեզվի պահպանման գաղափարը: Իր «Երկխոսություն» ստեղծագործության մեջ, որը գրույց է բանաստեղծի, նրա ընկերոջ և բժախնդիր գիտնականի միջև, Մոլումոսն արծարծում է ազատության ու լեզվի խնդիրները, որոնք պոետի մոտ սերտորեն փոխկապակցված են: Պաշտպանելով ազգային լեզվի իրավունքը՝ բանաստեղծն ապացուցում է, որ դա է այն միակ ճանապարհը, որ կարող է ապահովել ազգային ինքնագիտակցության լիարժեք և բեղումնալից զարգացումը ազատագրված Հունաստանում:

Այս ժամանակաշրջանում իր ակտիվ գործունեությամբ հայտնի էր նաև ազգային լեզվի ևս մեկ ջատագով՝ Անդրեաս Կալվոսը: Ինչպես Մոլումոսը, Կալվոսը նույնպես իր կրթությունը ստացել էր Բտալիայում և նրա օդաների երկրորդ «Լիրիկական» ժողովածույում ակնհայտ էին ազատագրված Հունաստանի ռոմանտիկ, էմոցիոնալ ու կամային սկիզբների յուրօրինակ պտոթկումները: Այս երկու բանաստեղծների ստեղծագործական ուղին 1821 թ. ազատագրական պայքարի վառ ու անմիջական նկարագրությունն է, ժամանակակից հունական ռոմանտիկ պոեզիայի սկիզբը: Նրանք իրենց ստեղծագործական գործունեությամբ ներգրավվեցին ռոմանտիզմի համաեվրոպական համայնապատկերի մեջ իրենց լիրիկական և էպիկական արտահայտություններով: Նրանց մոտ հեղափոխական ոգու մեջ մարմնավորվում է ռոմանտիզմի երկակի

աշխարհը՝ իդիալականը կապակցվում է ազատության գաղափարի և 1821 թ. հեղափոխության իրողությունների հետ:

Հունական ռոմանտիզմի ամենահայտնի ուսումնասիրությունների և մոտեցումների հեղինակներ Կ.Թ.Դիմարասի և Լ.Պլիտիսի համոզմամբ ռոմանտիզմի դերը նոր հունական գրականության մեջ բացառապես սահմանափակվում է Աթենքի առաջին դպրոցի շրջանակներով³⁸⁰, մինչդեռ մեր կարծիքով Իոնական դպրոցի մշակույթի ու գրականության ազդեցությունը ավելի նշանակալից է, քանի որ հենց Իոնական դպրոցի ներկայացուցիչների մոտ են առկա եվրոպական ռոմանտիզմի գրեթե բոլոր բնութագրիչ հատկանիշները՝ իդեալիզմ, արվեստի և արհեստի իդիալականացում, կլասիցիզմի կանոնների մերժում, ապաստան կրոնում, զգացմունքայնություն, էսասիրություն, սուբյեկտիվիզմ, կարոտ, լավատեսություն, հոգեվերլուծություն, հետաքրքրություն գերհոգեբանական երևույթների հանդեպ, անվերջ շարժում, կիրք, հեզնանք ու երկիծանք, պոեզիայի և երաժշտության, գրականության և փիլիսոփայության սինթեզ, ինչպես նաև անդրադարձ ազգային արժեքներին (հեքիաթներ, ավանդույթներ, ժողովրդական երգեր), միջնադարյան և ժամանակակից ազգային պատմությանը, մարդկային գիտություններին, հատկապես հոգեբանությանն ու հոգեֆիզիոլոգիային, փիլիսոփայությանն ու էսթետիկային, առասպելների ուսումնասիրությանն ու մեկնաբանմանը:

Ըստ Սոնիա Բլինսկայայի Աթենքի հին դպրոցի գրողները ամբողջությամբ կրթվել են եվրոպական ռոմանտիզմի մթնոլորտում, հետևաբար Հունաստանում ռոմանտիզմի ընկալումը համընկնում է այս դպրոցի հետ՝ իր սահմաններից դուրս թողնելով հունական ռոմանտիկ պոեզիայի շատ ավելի կարևոր և կարկառուն այնպիսի գրողների ստեղծագործություններ, ինչպիսիք են Կալվոսն ու Սոլոմոսը, որոնց տիպաբանական բնութագիրը միանշանակ չէ հունական գրականության մեջ: Դրա ապացույցներից է Ամերիկայում 1985 թ. լույս տեսած Ե.Կոնստանտինիդեսի «Հունական ռոմանտիզմի վերասահմանման ճանապարհին» հոդվածը, նվիրված 19-րդ դարի ամենամեծ երեք հույն հեղինակներին՝ Սոլոմոսին, Կալվոսին ու Պալամասին³⁸¹: Սակայն պետք

³⁸⁰ Beaton. R., Ο Σολωμός Ρομαντικός: Οι Διακειμενικές Σχέσεις του "Κρητικού" και του "Πόρφυρα", σελ. 132

http://media.ems.gr/ekdoseis/ellinika/Ellinika_40_1/ekd_peel_40_1_Beaton.pdf

³⁸¹ Նույն տեղում, էջ 133

է հաշվի առնել, որ Մոլոմոսն ու Կալվոսը Իոնական դպրոցի ներկայացուցիչներն են, իսկ Պալամասը Աթենքի նոր դպրոցի այն գրողներից է, որոնք այդ թվականներին հաստատեցին և ամրապնդեցին դիմոտիկիի գործածությունը հունական պոեզիայում:

Ակնհայտ հակասություն է առաջանում նաև «հունական ռոմանտիզմ» եզրույթի բովանդակության հարցում:

Մենք հիմնվում ենք այն սկզբունքի վրա, որ եվրոպական ռոմանտիզմը, ձևավորվելով որպես գրական ուղղություն 19-րդ դարի առաջին կեսին, իր զարգացման ընթացքում բաժանվել է երկու տեսակի: Առաջինը հատուկ էր այն երկրներին, որտեղ բուռն հակաֆեոդալական, բուրժուական պայքար էր ընթանում: Այստեղ գեղարվեստական համակարգի կետնրոնում էին անհատականության ընկալման նոր ձևերը, մարդու ներքին աշխարհի նոր կառուցվածքը, իսկ հիմնական խնդիրն էր անհատի և հասարակության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Ռոմանտիզմի երկրորդ տեսակը, որը գոյացավ ավելի ուշ, սակայն տևեց ավելի երկար՝ գրեթե մինչև 19-րդ դարի վերջը, առավել հախուռն զարգացում էր ապրում այն երկրներում, որտեղ ընթանում էր ազգային ազատագրական պայքար՝ օտարերկրյա երկարատև լծից ազատվելու համար: Այս ռոմանտիզմը կապված էր այնպիսի կարևոր խնդիրների հետ, ինչպիսիք էին գրական լեզվի և ավանդույթների պահպանումը, ազգի ազատագրումը: Այստեղ անհատի ընկալումը անբաժանելիորեն կապված էր ազգային շահերի հետ և ընկալվում էր որպես հավաքական ազգային անհատականություն³⁸²: Ռոմանտիզմի հենց այս տեսակն էր ընկած Իոնական դպրոցի գաղափարախոսության հիմքում, որն ամբողջությամբ ուղղված էր 1821 թ. ազգային ազատագրական պայքարին, թուրքական երկարատև իշխանությունից ազատագրվելու ջանքերին և ազգային լեզուն պահպանելու խնդրին: Հույն ազգային պոետի և Իոնական դպրոցի ամենանշանավոր ներկայացուցչի՝ Դիոնիսոս Մոլոմոսի մոտ անհատի ազատության ընկալումը անխզելիորեն կապված էր ազգի ազատության գաղափարի հետ:

Եվրոպական նախառոմանտիկ և ռոմանտիկ ժամանակաշրջանի գրականագետների և գրողների կտրուկ անդրադարձը *ժողովրդական ավանդույթներին*, պատմվածքներին, երգերին, այն հիմնական

³⁸² Тертерян И.А. Введение//История всемирной литературы. В 9 тт. Т.6. М. НАУКА. 1989. С. 13

առանձնահատկություններից էր, որ հատուկ էր Իոնական դպրոցի ռոմանտիկ ժամանակաշրջանի գրեթե բոլոր ներկայացուցիչներին՝ Սոլոմոսին, Տիբալդոսին, Պոլիլասին, Մատեսիսին, Մուստոքսիդիսին և այդ ժամանակաշրջանի շատ այլ գրողներին:

Իոնական դպրոցի ռոմանտիզմի ժամանակաշրջանի գրողների ստեղծագործությունների կարևոր կողմերից են անորադարձը **հոգեբանական և սպարահոգեբանական** երևույթներին, ծայրահեղ իդիալիզմն ու արվեստի իդիալականացումը, հակաքաղթենիության և ճղճիմ ու սուղ մտածելակերպով բուրժուական բարքերի հանդեպ աստելությունը, առանձնահատկություններ, որոնք իրենց արտահայտությունն են գտել իոնական ռոմանտիզմում, հատկապես Սոլոմոսի մոտ: Օրինակ՝ «Կինը Ջակինթից» ստեղծագործության մեջ Սոլոմոսն իր սեփական ազգի ամենամեծ թշնամին է համարում արիստոկրատիայի գրոտեսկային կերպարը, որը հակադրվում է Մեսալոնգ քաղաքի ազատագրական վեհ պայքարին:

Իոնական դպրոցի ռոմանտիզմի ամենակարևոր առանձնահատկություններից էր նաև **հակակլասիցիզմը**, որ որոշակիորեն ազատում էր գրականությունը, հատկապես պոեզիան, 18-րդ դարի եվրոպական կլասիցիզմի կանոններից: Աթենքի հին դրոցի ներկայացուցիչների մոտ ընդհակառակը կլասիցիզմն ընթանում է ռոմանտիզմին զուգահեռ և գրեթե նրան համագոր, ոչ միայն գրականության, այլ արվեստի մյուս ձևերում նույնպես, ինչն էլ հանգեցրեց Աթենքի գրական դպրոցի համար յուրահատուկ առանձնահատկության՝ **«կլասիկոռոմանտիզմ»** հասկացության կիրառությանը:³⁸³

Մշակութային այս դուալիզմը միևնույն ժամանակ ներկայանալով մեկ անձի մեջ՝ հանգեցրեց անձնական, հոգեբանական, մշակութային և գաղափարական պառակտումների, ինչպես օրինակ՝ Ռանգավիսի մոտ «Դիոնիսի ճանապարհորդությունը» ստեղծագործության մեջ, որը Աթենքի կլասիցիստական պոեզիայի հավանաբար միակ արժեքավոր գործն է:

Իոնական դպրոցի ներկայացուցիչների նշանակալից առանձնահատկություններից էր նաև եվրոպական ռոմանտիկների և նախառոմանտիկների մոտ առկա **փախուստը դեպի բնություն՝ անձնական զգացումներին**, հոգեվիճակի արտահայտության և **արվեստ-բնություն** կարևոր կապի ստեղծումը: Այստեղ կրկին ամենացայտուն

³⁸³ http://www.lit.auth.gr/sites/default/files/documents/nef250_veloudis.pdf

օրինակ են ծառայում Սոլումոսի ստեղծագործությունները, ինչպես օրինակ՝ նրա «Կրետացին» պոեմը:

Եվս մեկ արժեքավոր տարբերություն, որ առկա էր այս երկու դպրոցներում, դա եվրոպական տարբեր երկրների գրական ուղղությունների ազդեցությունն էր այս երկու հունախոս վայրերում: Աթենքում առավել մեծ էր ֆրանսիական ազդեցությունը, հատկապես դասական թատրոնի՝ Ռասինի, Կոռնելի, Մոլիերի, Վոլտերի, ինչպես նաև ռոմանտիզմի՝ Զյուգոյի, Լամարտինի, Բերանժեի, Գոտիեի, Ժամանակակից ֆրանսաիացի գրողների և վիպագիրների՝ Դյումայի, Է.Սյույի և այլոց ազդեցությունը: Աթենքի դպրոցի ներկայացուցիչների կրթոտ և ողբերգական սիրո, տանջալից ճամփորդությունների, միայնության և տառապանքների թեմաններում ակնհայտ է ֆրանսիական ռոմանտիզմի ազդեցությունը, որովհետև և՛ Պանայոտիս Սուցոսը, և՛ նրա եղբայր՝ Ալեքսանդրոս Սուցոսը Զունաստան էին տեղափոխվել Փարիզից, որտեղ 19-րդ դարի 20-ական թվականներին ռոմանտիզմը ծաղկում էր ապրում: Իսկ Իոնական կղզիներում մեծ էր անգլիական և իտալական ազդեցությունը: Իտալական գրականության ազդեցությունը հիմնականում պայմանավորված էր այն հանագամանքով, որ Իոնական կղզիների գրողների մեծ մասը կրթություն էր ստանում Իտալիայում, հետևաբար նրանց ստեղծագործություններում ակնհայտ է Ալֆիերիի, Մանձոնիի, Ֆոսկոլոյի, Մոնտիի, Լեոպարդիի ազդեցությունը:

Իոնական գրականության վրա մեծ է եղել նոր իտալական բանասիրության ազդեցությունն իր առանձնահատկություններով ու գաղափարներով: Սոլումոսի պոեզիայում ակնհայտ է Դանթեի, Պետրարկայի, Մոնտիի, Մանձոնիի ազդեցությունը, իսկ Կավվոսն իր ողբերգություններում հետևում է Ալֆիերիին և Ֆոսկոլին: Պալամասը նշում է հիմնական թեմաների նմանությունը. քրիստոնեապաշտություն, հայրենասիրություն և կնապաշտություն, դրանք են այն երեք իդիալները, որոնք գնահատել են նշանավոր իտալացի գրողները Դանթեից մինչև Պետրարկա, Ալֆիերիից մինչև Ֆոսկոլո³⁸⁴:

Իտալական ազդեցությունն ակնհայտ է հատկապես լեզվական խնդրում: Օրինակ՝ Սոլումոսը կազմել է 14 տներից բաղկացած

³⁸⁴ Ζώρας Γ., Ποίησης και πεζογραφία της Επτανήσου, Βασική Βιβλιοθήκη 14, Αθήναι, 1953, σ. 38

բանաստեղծական չափը՝ որպես նախատիպ ընդունելով իտալական տաղաչափությունը:

Անգլիական գրականությունը նույնպես օտար չէ Իոնական գրականությանը, քանի որ կղզիները երկար տարիներ եղել են անգլիական տիրապետության տակ: Օրինակ՝ Մոլոմոսի «Լամբրոս» պոեմը գրված է Բայրոնի «Դոն Ժուան» պոեմի ազդեցության տակ:

Ժամանակի ընթացքում ակնհայտ է դառնում գերմանական գրականության և փիլիսոփայության գերիշխանությունը իոնական գրական աշխարհում: Նշանավոր գերմանացի գրողների ստեղծագործությունները թարգմանվում են և լայն տարածում գտնում Իոնական կղզիներում: Պոլիլասը հանձն է առնում ուսումնասիրել այն ժամանակ դեռ նոր ծաղկունք ապրող գերմանական փիլիսոփայությունը՝ բացահայտելով գերմանական գեղագիտության և Մոլոմոսի պոեզիայի միջև եղած կապը: Մոլոմոսի «Շնաձուկը», «Ազատ պաշարվածները» ստեղծագործություններում գաղափարների և խոսքի հզորության մեջ ակնհայտ են Շիլլերի գեղագիտական նամակները, Հեգելի ոգու ֆենոմենոլոգիան, Գյոթեի պոետիկ ստեղծագործությունները և, ընդհանրապես, գերմանական գաղափարախոսությունը:

Երկու դպրոցների հակամարտության հիմնական պատճառներից մեկն, անշուշտ, լեզվի ընտրությունն էր: Աթենքի դպրոցի ներկայացուցիչները ստեղծագործում էին **կաֆարեբուսայով** (հուն. καθαρῆσος — «մաքուր»), որն, ինչպես նշում էր Աթենքի ռոմանտիկների ամենանշանավոր ներկայացուցիչ, դիմոտիկիի ակտիվ հակառակորդ Պ.Մուցոսը, իր տխրահռչակ արխայիկ մանիֆեստում. *«Բոլորին հասկանալի գրավոր խոսքի մի նոր դպրոց կամ հին հունարեն լեզվի վերածնունդ»*:³⁸⁵

Հունական գրական ասպարեզում կաֆարեբուսայի կողմնակիցներից էր հունական Լուսավորչության ամենակարկառուն ներկայացուցիչ՝ Ադամանտիոս Կորայիսը, որն իր նոր հունական բանասիրության հիմքում դրեց ազգային լեզուն, հարստացրեց այն հին հունարենից վերցված առօրեա խոսակցական արտահայտություններով և ստեղծեց արհեստական այդ լեզուն՝ կաֆարեբուսան: Ըստ նրա՝ հունարեն լեզուն բավականին մեծ փոփոխությունների էր ենթարկվել օսմանյան

³⁸⁵ Βελουδής Γ., Ο Επτανησιακός, Ο Αθηναϊκός και Ο Ευρωπαϊκός Ρομαντισμός, Μονά - ζυγά, Δέκα νεοελληνικά μελετήματα, 1992, Αθήνα, σελ. 106 http://www.lit.auth.gr/sites/default/files/documents/nef250_veloudis.pdf/

տիրապետության ժամանակաշրջանում և հարկավոր էր անպայման մաքրել խոսքը «բարբարոսական» շերտավորումներից և համակարգել դրա քերականությունը:³⁸⁶

Նրա առաջարկը մեծ քննադատության ալիք բարձրացրեց պյուրիստ-լուսավորիչների շրջանակներում: Մակայն կային նաև Կորայիսի գաղափարին հավանություն տվողներ, ինչպիսիք էին Ալեքսանդրոս Մուցոսը և Ալեքսանդրոս Ռանգավիսը, Իոանիս Վիլարասը և այլք: Այս դպրոցի շատ ներկայացուցիչներ, որոնք մինչև Հունաստանի ազատագրումը գրում էին ազգային լեզվով, արդյունքում վերադառնում են անցյալի պյուրիստներին և ատտիկական բարբառին: Ազատագրված հանրապետության մեջ ռոմանտիզմի առաջին տասնամյակում երկու լեզուների՝ դիմոտիկիի և կաֆարեբուսայի համակեցությունը անխուսափելի էր, որովհետև այդ ժամանակաշրջանում կաֆարեբուսան պետական լեզուն էր, իսկ դիմոտիկին՝ ազգի, ինչը չէր կարող ազդեցություն չգործել այդ ժամանակաշրջանի Աթենքի դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործական գործունեության վրա: Այդ էր պատճառը, որ Աթենքի դպրոցի շատ ներկայացուցիչներ ստեղծագործում էին երկու լեզուներով՝ վերջ ի վերջո առաջնությունը տալով դիմոտիկիին: Այդ գրողներից էր մի շարք պատմական դրամաների հեղինակ Ալեքսանդրոս Ռանգավիսը, որը ձգտում էր հույներին ներկայացնել իրենց փառավոր անցյալը և դաստիարակել նրանց մեջ ազգային ոգին: Ռանգավիսի մոտ ակնհայտ է մաքուր ռոմանտիկ ոճը, հատկապես՝ «Դիմոսը և Էլին» (1831) դիցաբանական թեմայով ստեղծագործության մեջ, որտեղ կա նաև մի կեղծ ժողովրդական-հունական երանգ, որն արտահայտվում է հերոսների ազգային անուններում, խճճված դիմոտիկիի գործածությամբ, այլ կերպ ասած՝ խոսքի որոշակի սառնությամբ: Մյուս կողմից՝ նրա «Տարբեր Պոեմներ» ժողովածույում կան ֆանարիոտների պոետիկ կաֆարեբուսայով գրված պոեմներ, որոնց շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նաև դիմոտիկիով գրված ստեղծագործությունները: Արդեն 30-ական թվականներին նա իր վրա զգաց ազգային պոետիկ ավանդույթների ազդեցությունը և սկսեց ստեղծագործել ազգային մաքուր լեզվով՝ օգտագործելով տասնհինգվանկանի տաղաչափությունը: Դա ակնհայտ երևում է նրա «Ֆրուսինի» ռոմանտիկ դրամայում: Մակայն նրա «Դեմագոգ» պոեմում

³⁸⁶ Ильинская С.Б., Греческая Литература, //История всемирной литературы// В 9 тт. Т.6. М. НАУКА. 1989. С. 542.

նա կրկին անդրադառնում է արխայիզմին և հետագայում նույնպես նրա թեմաները, լեզուն և պոետիկ տաղաչափությունը արխայիկ բնույթ են կրում:

Ճանաբիոտների համար հին լեզվին անդրադարձը միանգամից չձևավորվեց, քանի որ Աթենքի դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչներից շատերը ստեղծագործում էին դիմոտիկիով կամ նրա ազդեցության տակ: Սակայն շուտով և դիմոտիկին, և Կորայիսի անցած ուղին հերքվեց Աթենքի դպրոցի ներկայացուցիչների կողմից և նրանց լեզվի արխայիզացումն ընթացավ բուռն կերպով: Արդյունքում Աթենքի դպրոցի ներկայացուցիչներն ամբողջովին կորցրեցին ժողովրդի հետ կապը: Այս մթնոլորտում շատ արագ մարեց Աթենքի դպրոցի ռոմանտիկ ոգևորությունը: Արդեն Սուցոսի «Կիթառ» բանաստեղծությունների ժողովածույում ակնհայտորեն գերիշխում են կլասիցիստական միտումները:

Ինդիքը նրանում էր, որ ժամանակի ընթացքում արդեն վաղուց մեռած լեզվի վերածնունդն ու դրա գործածությունը դարձավ անիրատեսական: Ինչպես նշում է Կոստիս Պալամասը այդ ժամանակաշրջանում միակ խոչընդոտը կաֆարեբուսայի՝ որպես գրական լեզվի կիրառությունն էր,³⁸⁷ որովհետև այս արհեստականորեն ստեղծված լեզուն հասկանալի չէր ազգի բոլոր շերտերին՝ հետևաբար այդ լեզվով գրված գրականությունը չէր կարող երկար կյանք ունենալ: Բացի այդ, հատկանշական էր այն հանգամանքը, որ Աթենքի դպրոցի անզիջում ռոմանտիկների մեծ մասը բացի կաֆարեբուսայից ստեղծագործել են նաև դիմոտիկիով (հուն. δημοτικη — «ազգային»), ինչպես նշում է Ջ. Պապադոնիուսը «նրանք նույնպես սայթաքեցին դիմոտիկիի մեղքի մեջ»:³⁸⁸

Թեև հունական ռոմանրոզմն ուսումնասիրող գրականագետների մեծամասնությունը ուշադրությունը կենտրոնացնում է երկու դպրոցների միջև գոյություն ունեցող ակնհայտ տարբերությունների վրա, մենք գտնում ենք, որ դրանց միջև կան նաև ընդհանրություններ՝ օտարում, անահանգստություն, անդադար շարժում, անհամբերություն, գրողի ապստամբություն շրջակա հասարակաքաղաքական միջավայրի նկատմամբ, փախուստ և հանգրվան կրոնում, որոշակի լավատեսություն, կիրք, զգացմունքների, հեզնանքի և ծաղրի բուռն արտահայտություն, ինչպես նաև հայրենասիրություն, պայքար հանուն ազգային

³⁸⁷ Μίρασγέζη Δ. Μ., Νεοελληνικη Λογοτεχνία, Αθήνα, 1978, σελ. 13

³⁸⁸ Նույն տեղում

ավանդույթների և լեզվի պահպանման ու զարգացման, որն էլ 19-րդ դարի երկրորդ կեսին հանգեցրեց այս երկու դպրոցների միաձուլմանը: Արդյունքում Իոնական դպրոցի տասնամյակների փորձը իր ահռելի ազդեցությունն ունեցավ ընդհանուր հունական գրականության զարգացման վրա:

Չնաբանական մակարդակում այս երկու ռոմանտիկ դպրոցներն էլ հրաժարվում են դասական կանոններից և գրական տեսակներից՝ հիմն, սիրավեպ, առասպել, տերցին և այլն:

Ամենակարևոր գրական ընդհանրությունը, որ առկա է այս երկու դպրոցների միջև՝ միևնույն ռոմանտիկ գրական մոտիվների գործածությունն է. գերեզման, երևակայական սիրուհի, դեգերումներ, արցունք, հառաչանք, տեսիլք և այլն:

Իոնական դպրոցի հաջորդ սեռնդի ներկայացուցիչները (Բ.Պոլիլասը, Ի.Տիբալդոսը, Գ.Մարկարոսը), որոնք համարվում էին Մոլոմոսյան շրջանի պոետներ, մշակելով ավանդական ռոմանտիկ թեմաներ՝ հայրենասիրական պայքար, սեր, մահ, ազատություն, հավատարիմ էին մնում ազգային լեզվին և ազգային երգերի տաղաչափությանը:

Աթենքի դպրոցի երկրորդ սերնդի ներկայացուցիչների ստեղծագործական գործունեության ոլորտն ավելի նեղ էր: Չնայած որ նրանք անդրադառնում էին հայրենասիրական թեմաներին, նրանց մոտ առավել բարձր էր անհատի ներքին կյանքի հանդեպ հետաքրքրությունը և առկա էր որոշակի զսպվածություն ազգային լեզվի կիրառության նկատմամբ:

Вioletta Абовян

ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ ГРЕЧЕСКОГО РОМАНТИЗМА

Статья посвящена проблеме формирования греческого романтизма, его развития и влияний на него различных литературных направлений. Рассматриваются конфликт и борьба Афинской и Ионической школ. Несмотря на принятое в литературоведение мнение, доказывается, что развитие греческого романтизма больше связано с деятельностью Ионийской, а не Афинской школы, поскольку у писателей этой школы ярко выражены такие характерные черты романтизма как идеализм, идеализация искусства, отрицание классицизма, чувствительность, субъективность, ностальгия, оптимизм, психоанализ, страсть, ирония, синтез философии и литературы, обращение к национальным ценностям, средневековой и современной истории, исследованию и интерпретации

мифов. Кроме того, представители Афинской Школы писали на кафаревусу (консервативной разновидности древнегреческого языка), а представители Ионической школы – на димотики, языке народа.

Violetta Abovyan

THE PROBLEM OF FORMATION OF GREEK ROMANTICISM

The object of the article is the formation of Greek Romanticism, its development and the influence of various literary movements on it.

In the 19th century long conflict and struggle between the First Athenian School and the Ionian school played significant role in the process of formation of Greek literature. The author of the article proves that the development of Greek Romanticism has more to do with the activities of the Ionian and not Athenian School, as it is considered by literary critics. The works of representatives of the Ionian school have such characteristic features of Romanticism as idealism, idealization of art, denial of Classicism, subjectivity, nostalgia, optimism, psychoanalysis, passion, irony, synthesis of philosophy and literature, appeal to national values (fairy tales, traditions, folk songs), medieval and modern history, study and interpretation of myths. It is also noted that representatives of the Athenian School wrote in Katharevousa, while the representatives of the Ionian school wrote in Demotic Greek, the language of people.

The article also reveals aesthetic principles common to both schools.

ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒՒՏՏԵՐԸ ՈՒ. ԷԿՈՑԻ «ՎԱՐՂԻ ԱՆՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ

Հիմնաբառեր՝ Ումբերտո Էկո, «Վարդի անուն», Բենեդիկտյան միաբանություն, Տրանցիսկյան միաբանություն

Միջնադարյան արևմտաեվրոպական պատմությունն անմիջակա-
նորեն կապված է հոգևոր կյանքի կարևորագույն ուժի՝ Կաթոլիկ
եկեղեցու հետ: Սա է, թերևս պատճառներից մեկը, որ Ու.Էկոն
միջնադարյան վանքն է դարձնում իր վեպի գործողության վայրը. էթե
միջնադարյան աշխարհը կարելի է համարել *մակրոկոսմոս*, ապա վանքը,
վեպի գլխավոր հերոսներից մեկի՝ Վիլհելմի դիպուկ սահմանամար,
նեկայացնում է մի *միկրոկոսմոս* և առաջին հայացքից կարող է թվալ, որ
ոչ մի բան չի կարող խախտել այս կուռ համակարգը: Միջնդարի և
քննարկվող վեպի ընկալման համար կարևոր է ծանոթությունը
կրոնական ուխտերի հետ, որոնք սկսեցին ձևավորվել քրիստոնեության
տարածումից գրեթե անմիջապես հետո: Սա հատկապես հատկանշական
է հենց Կաթոլիկ եկեղեցու համար: Եվ ուրեմն էական է դառնում նաև այն,
թե ո՞ր ուխտին է պատկանում վեպում նկարագրված վանքը:
Հասկանալու համար թե ինչու է հեղինակն ընտրել հատկապես
բենեդիկտյան միաբանությունը, և որն է դրա դերը Եվրոպայի հոգևոր
կյանքում, հարկ է հակիրճ կերպով անդրադառնալ դրա և վեպում տեղ
գտած այլ ուխտերի պատմությանը:

Միաբանության հիմնադիր Բենեդիկտոս Նուրսիացին (V դարի վերջ)
ծնվել է ազնվականի ընտանիքում³⁸⁹ կենտրոնական Իտալիայի Ումբրիա
շրջանում: Այդ ժամանակների համար սովորական ճարտասանական
կրթություն ստանալուց հետո, «*արհամարհելով գիտությամբ զբաղվելը*»
այս «*խնանալով՝ չիմացող և իմաստուն անգետը*» հեռացավ աշխարհիկ
գայթակղություններից³⁹⁰ փորձելով ինքնախոշտանգման միջոցով գտնել
ճանապարհն առ Աստված³⁸⁹: Երկար դեգերումներից հետո Բենեդիկտոսը
հիմնում է իր միաբանությունը հարավային Իտալիայի Կամպանիա
շրջանում՝ Ապոլոնի տաճարի փլատակների վրա: Չնայած դաժան
կյանքին և վանահոր խստությանը՝ միաբանությունն արագ համալրվում
է նոր վանականներով, և առաջանում է միաբանության հստակ

³⁸⁹ Христианство. Энциклопедический словарь, т.1. М.1993. С.194.

կանոնադրության ստեղծման անհրաժեշտություն: Այդ ժամանակ էլ, VI դարի 30-ականներին, գրվում է արևմտյան վանականության համար կարևորագույն դեր խաղացած Բենեդիկտյան Կանոնակարգը: Դրա հենց առաջին հոդվածը խոսում է վանականների կյանքի լավագույն կազմակերպման³⁹⁰ ասել է թե վանական հանրակացարանի մասին, որը Բենեդիկտոսն առավել նպատակահարմար էր համարել վանականների գործունեության և հոգիների փրկության համար: Կանոնադրությունը նախկին երդումներին (ողջախոհություն և հրաժարում սեփականությունից) ավելացնում էր նաև նույն վանքում ամբողջ կյանքն անցկացնելու պարտավորվածությունը՝ *stabilis loci u oboedientiae*՝ հնազանդության երդումը, որը կանոնադրությանը հաղորդեց գրեթե ռազմական խստություն: Ինքը³⁹⁰ կանոնադրությունը կոչվում է *lex sub qua militare vis* (օրենք, որին ենթարկվելով՝ մտադրվում ես մարտնչել), ուստի դրանում մեծ տեղ է հատկացվում ֆիզիկական, ինչպես նաև մտավոր աշխատանքին: Այս նպատակով մշակվել էր հստակ ժամկետացանկ, որը թելադրում էր, թե տարվա որ եղանակին և օրվա որ ժամին ինչով և ինչպես պետք է զբաղվի վանականը: Յոթանասուն հոդվածներից մեկում հատուկ նշվում են այն հատկանիշները, որոնցով պետք է օժտված լինի վանահայրը, նրա³⁹⁰ որպես վանքի ներսում Տիրոջ ներկայացուցչի, գրեթե անսահմանափակ իրավունքներն ու արտոնությունները: Սա առաջին կանոնադրությունն էր, որ սահմանեց ու կանոնակարգեց վանքի կյանքը, դարձավ դրա նոր և օրինակ՝ հետագա միաբանությունների կանոնադրությունների համար³⁹⁰:

Ստեղծվելով վաղ Միջնադարում՝ Բենեդիկտյան միաբանությունը ձևավորվել է³⁹⁰ ժամանակի պահանջներից ելնելով: Բենեդիկտոսը հետևել է արևելյան քրիստոնյա վանականների օրինակին, որոնք հեռանում էին անապատներ, ճգնում հանուն հոգու փրկության, ինչը կրում էր շատ անհատական բնույթ, մինչդեռ Բենեդիկտոսն առաջարկում է նույն նպատակին ծառայել միասին և մեկ վայրում: Բենեդիկտյան հարուստ միաբանությունը մեկուսացված էր վանքի պատերի ներսում, և դրա խիստ կանոնակարգը վկայում է բենեդիկտյանների շարքը ընդունվելու դժվարությունների մասին: Բացի այդ բենեդիկտյաններ էին դառնում հիմնականում ազնվական ընտանիքներից սերող երիտասարդներ (օրինակ «Վարդի անունը» վեպի հերոսներից՝ Ադոն): Հետաքրքրական է Ադոնյի հետևյալ դիտարկումը. «*Uhu,- սասցի ինքս ինձ,- մեր*

³⁹⁰ Նույն տեղում՝ էջ 194-197

միաբանության իրական մեծությունը. հարյուրամյակներ շարունակ նրանց (վանականների – Յ. Ե.) նմանները տեսնում էին, թե ինչպես են գալիս բարբարոսների հորդաները, թալանում նրանց վանքերը, թե ինչպես են կրակի մեջ անհետանում թագավորություններ, իսկ նրանք շարունակում են սիրել իրենց մագաղաթներն ու թանաքը և կիսաձայն կարդալ դարերի խորքից և գալիք դարեր ուղղված իրենց բառերը: Նրանք շարունակում էին կարդալ ու արտագրել, երբ բոլորվում էր հազարամյակը, և ուրեմն ինչու՞ պետք է չշարունակեն իրենց գործը հիմա»³⁹¹: Այս խոսքերից կարելի է եզրակացնել, որ մի կողմից բենեդիկտյանների համար արտաքին աշխարհն ու կապը ժողովրդի հետ կարևորություն չունեին, նրանցը ինքնանպատակ «կարդալն ու արտագրելն» էր, մյուս կողմից նկատվում է գրքի պաշտամունք: Ակնհայտ է նաև հերոսի միջոցով արտահայտված հիացմունքն այն գործառույթի նկատմամբ, որը ստանձնել են բենեդիկտյանները: Սրա մասին են վկայում բենեդիկտյան կանոնադրության մի քանի կետեր, ինչպես, օրինակ. «Չորրորդից վեցերորդ ժամը վանականները պետք է զբաղվեն ընթերցանությամբ, կիրակի օրը թող բոլորը զբաղվեն ընթերցանությամբ» (հոդվ. 48): Նշենք, որ ավագ վանականները կոչվում էին «գրքային վանականներ» (*monachi literati*)³⁹²: Այսպիսով, գրքի հանդեպ երկրպագության հասնող հարգանքն ու հետաքրքրությունը ամրագրված էին այս միաբանության կանոնադրությամբ: Սա, անշուշտ, նույնպես կարևոր էր վանքի ընտրության համար, քանի որ, ինչպես առիթ ենք ունեցել անդրադառնալու գրքի դերին Ու.Էկոյի քննարկվող վեպում³⁹³, այս թեման նույնպես կենտրոնական է հեղինակի համար: Բենեդիկտյանների քրոնաջան ու անխոնջ աշխատանքի շնորհիվ է արևմտյան վանականությունը կարողանում ծանոթանալ ու ընկալել հռոմեական մշակույթը և հետագայում դառնալ լուսավորության աղբյուրներից մեկը³⁹⁴: Բենեդիկտյանների կրթական գործունեության միջոցով է պահպանվում նոր վանական մշակույթի կապը Հռոմի ուչ

³⁹¹ Eco U., Il nome della rosa Bibliotex, S.L. Barcellona, 2002, p 172.

³⁹² http://ora-et-labora.net/RSB_it.html

³⁹³ Տե՛ս Եղիազարյան Յ. Գիրքը՝ որպես գործող անձ Ու.Էկոյի «Վարդի անունը» վեպում// Գրականության և մշակույթի արդի խնդիրներ, պրակ Ե, Եր. «Լինգվա». 2014, էջ 165-170

³⁹⁴ Христианство. Энциклопедический словарь, т.1, М.,1993, с.195

շրջանի մշակույթի հետ. դրա վկայությունն է «Բենեդիկտոս Նուրսիացու վարքը»³⁹⁵:

Խոսելով բենեդիկտյանների մասին՝ չենք կարող չանդրադառնալ այն փաստին, որ Մխիթար Մեբաստացու կողմից ստեղծված միաբանությունը, որի կարևորագույն առաքելությունը հայ մշակույթի ուսումնասիրությունն է, պահպանումն ու սերունդներին փոխանցումը, նույնպես ընդունել է բենեդիկտյան կանոնադրությունը և շարունակել դրա ավանդույթը:

Հայտնի է, որ XI-XII դարերում Կաթողիկ եկեղեցին կանգնում է լուրջ խնդրի առջև. եկեղեցու ամենաթողության և ժողովրդի ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում Եվրոպայում ծաղկում են հերետիկոսական շարժումները: Այս հարցին լուծում տալու համար եկեղեցին, հանձինս Ինոկենտիոս III պապի, պաշտոնական եկեղեցու շարքերն է ընդունում իր համար ընդունելի կրոնական ուխտերը, օրինակ՝ ֆրանցիսկյաններին, որոնց քարոզելու իրավունք տալով՝ դրանց իսկ միջոցով պայքարում է մնացած, եկեղեցու համար անընդունելի հերետիկոսական շարժումների դեմ:

Բենեդիկտյան միաբանության ստեղծումից մի քանի դար անց ստեղծվում է վերոհիշյալ ֆրանցիսկյան միաբանությունը, որը նույնպես պիտի մեծ դեր խաղար թե՛ Իտալիայի և թե՛ ողջ Եվրոպայի կյանքում: Այդ միաբանության ստեղծումը կապված է Կաթողիկ եկեղեցու ամենասիրված սրբերից մեկի՝ Ֆրանցիսկոս Ասիզացու (1181-1226) անվան հետ: Հայտնի է, որ վերջինս սերել է հարուստ ընտանիքից, վարել շվայտ կյանք, բայց հրաժարվել է ամենից և սկսել է աղքատություն քարոզել³⁹⁶: Ֆրանցիսկյան միաբանությունն առաջինն էր աղքատություն քարոզող այն ուխտերից, որոնք XIII-րդ դարում մեծ տարածում գտան կաթողիկների շրջանում: 1209-ին միաբանությունն ընդունվեց Վատիկանի կողմից և մեծ արտոնություններ ստացավ: Սակայն Ֆրանցիսկոսի մահից հետո միաբանության ներսում երկպառակություններ առաջացան: Օրինակ՝ ավելի ծայրահեղական վանականները պահանջում էին հետևել Ֆրանցիսկոսի իսկական պատգամին, որը ժամանակի ընթացքում փոփոխության էր ենթարկվել: Հռոմի պապի և պաշտոնական եկեղեցու հետ կապված անհամաձայնությունների հետևանքով այս

³⁹⁵ <http://www.ora-et-labora.net/dialoghidis.html>

³⁹⁶ <http://www.sanfrancesco.com/san-francesco-assisi.asp?group=19&post=98>

միաբանությունից առանձնացան որոշ հոսանքներ՝ սպիրիտուալներ, ֆրատիչելիներ և այլն:

Սուրացիկ ուխտերի ստեղծումը, կարծես, խախտում էր բենեդիկտյանների մենաշնորհը. այս իրողությունն արտացոլվում է վեպի մեկ այլ հերոսի՝ Խորխեի արհամարհանքում, որը զգացվում է Վիլհելմի հետ նրա զրույցներում:

Ֆրանցիսկյան և բենեդիկտյան միաբանությունների հակադրությունը շատ կարևոր է, քանի որ, քաջ ծանոթ լինելով միջնադարյան հոգևոր կյանքի բոլոր նրբություններին, հեղինակը դիտավորյալ ընտրում է հենց այս երկու եղբայրությունները՝ որպես երկու գաղափարախոսություն: Հենց այս գաղափարախոսությունների կրող երկու հերոսների՝ ֆրանցիսկյան Վիլհելմի և բենեդիկտյան Խորխեի հակամարտության վրա է հիմնված վեպի սյուժեն:

Մեկ այլ բենեդիկտյանի՝ վանահոր և բենեդիկտյան ուխտի՝ եվրոպական հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ հաշվի չնստելու և պահպանողական բնույթի մասին է վկայում նաև Վիլհելմի ու վանահոր հետևյալ զրույցը.

«– Աբոնե, – ասաց Վիլհելմը, – դուք ապրում եք մեկուսացած այս հիասքանչ ու սուրբ վանքում, աշխարհի կեղտից հեռու: Քաղաքներում կյանքը շատ ավելի բարդ է (...)

– Քաղաքը միշտ էլ արատավոր է:

– Քաղաքն այն տեղն է, ուր այսօր ապրում է Աստծո հոտը, որի հովիվներն ենք դուք և մենք»³⁹⁷ :

Ֆրանցիսկյանների գրեթե հավասար արտոնություններ են ստանում նաև դոմինիկյանները, օրինակ՝ քարոզելու և եկեղեցական խորհուրդ կատարելու իրավունքը: Կաթոլիկ եկեղեցու համար աղանդների տարածման պատճառով ծանր տարիներին այն մի շարք քայլեր էր ձեռնարկում մի կողմից՝ ժողովրդի վստահությունը վերադարձնելու, մյուս կողմից՝ աղանդների դեմ պայքարելու նպատակով: Պատահական չէ, որ Սուրբ Դոմինիկոսն Ինոկենտիոս III Պապի աջակցությամբ ստեղծում է իր միաբանությունն այն ժամանակ, երբ տեսնում է, թե ինչ ժողովրդականություն են վայելում աղքատություն քարոզող աղանդավորները: Փաստորեն, ի տարբերություն Ֆրանցիսկոսի անկեղծ ու ինքնաբուխ գործունեության, որի արդյունքում ձևավորվում է ֆրանցիսկյան միաբանությունը, Դոմինիկոսը, աղանդավորների

³⁹⁷ **Eco U.**, Il nome della rosa Bibliotex, S.L., Barcellona , 2002, p. 143

օրինակով ստեղծում է իր եղբայրությունը և վարում թափառական կյանք՝ մոլորվածներին քարոզելով վերադարձ դեպի եկեղեցին³⁹⁸:

Երկու միաբանությունների կարևորագույն գործառնություններից էր նաև հավատաքնությունը, որի արդյունքում հերետիկոսների կյանքը գտնվում էր ֆրանցիսկյանների և դոմինիկյանների ձեռքում: Բնական է, որ այս երկու միաբանությունների միջև առաջանում է մրցակցություն, որը նկատվում է Վիլիելմի և հավատաքննիչ՝ դոմինիկյան Բերնարդո Գվիդոյի լարված երկխոսություններում: Մեր կարծիքով, սակայն, ակնհայտ է հեղինակի համակրանքը ֆրանցիսկյանների նկատմամբ, ինչը դրսևորվում է Վիլիելմի կերպարի միջոցով:

Այսպիսով, Էկոն իր վեպում ներկայացնում է միջնադարյան արևմտաեվրոպական հիմնական կրոնական միաբանությունները, դրանց առանձնահատկությունները և պայքարը: Կարելի է ասել, որ ֆրանցիսկյանները և դոմինիկյանները շատ ավելի բաց էին, ունեին սեփական գաղափարները քարոզելու և դասավանդելու իրավունք և ավելի հանդուրժող էին, օգտագործելով այսօրվա եզրը՝ ունեին «սոցիալիստական» կամ ձախակողմյան հայացքների ընդհանուր ուղղվածություն, իսկ բենեդիկտյաններն ավելի դոգմատիկ էին, պարփակված, պահպանողական և էլիտար: Ֆրանցիսկյանների քարոզն, այնուամենայնիվ, շատ ավելի մատչելի էր բոլոր խավերի համար, քան դոմինիկյանների խրթին քարոզները: Կարելի է գուգահեռներ անցկացնել միջնադարյան ուխտերի ու նոր ժամանակների կուսակցությունների միջև, քանի որ դրանց գործառնությունները բավականին նման են և, եթե ընդունենք այս համեմատությունը, կարելի է ասել, որ բենեդիկտյանները աջ պահպանողական, իսկ ֆրանցիսկյանները, ինչպես նաև դոմինիկյանները ձախակողմյան հայացքների կուսակցականների էին նմանվում: Եվ ինչպես հաճախ է պատահում՝ նույն ուղղվածությունն ունեցող տարբեր խմբավորումները երբեմն նույնքան թշնամանքի կարող են հասնել որքան տարբեր գաղափարներ կրողները: Բավական է հիշել նույն Իտալիայի գուելֆերի և գիբելինների հակամարտությունը, երբ թշնամացան գուելֆերի պառակտման հետևանքով առաջացած խմբավորումները: Վեպում այս երևույթը դրսևորվում է ֆրանցիսկյանների և դոմինիկյանների մրցակցությամբ: Անշուշտ նման դրվագները հատուկ են նաև XX դարի պատմությանը, նաև Իտալիայի

³⁹⁸ http://www.roberto-crosio.net/1medioevo/chiesa_ordini.htm

ներքին քաղաքական վիճակին, որի ականատեսն ու մասնակիցն է եղել նաև Ու.Էկոն:

Ինչպես նշում է ինքը հեղինակը «Նշումներ “Վարդի անունի” լուսանցքներում», անցյալի մասին գրող ցանկացած հեղինակ նկատի ունի իր ժամանակը և այն հասկանալու համար պետք է հասկանալ անցյալը: Ուստի վեպի համակողմանի ընկալման համար կարևոր է հասկանալ այն համատեքստը, որում ծավալվում են քննվող վեպի գործողությունները, կրոնական ուխտերի ձևով դրսևորվող այն գաղափարախոսությունները, որոնց կրողներն են վեպի հերոսները:

Асмик Егиазарян

**РЕЛИГИОЗНЫЕ ОРДЕНА СРЕДНЕВЕКОВЬЯ В РОМАНЕ У. ЭКО
«ИМЯ РОЗЫ»**

Монашеские ордена и аббатства играли исключительно важную роль в духовной жизни средневековой Европы, и такая же роль им отведена в романе У.Эко «Имя розы», действие которого разворачивается в бенедиктинском аббатстве. Главные герои романа являются носителями идеологий бенедиктинского, францисканского, доминиканского орденов, история и деятельность которых, по мнению автора, важны для понимания как европейского средневековья, так и основной концепции романа.

Hasmik Yeghiazaryan

**RELIGIOUS ORDERS IN THE NOVEL “THE NAME OF THE ROSE” by
U.ECO**

Abbeys and religious orders played an important part in the life of the Medieval Europe, and their role is also central in the novel “The Name of the Rose” by U.Eco, where the events take place in Benedictine Abbey. The main heroes of the novel are carriers of the ideology of such religious orders as Benedictines, Franciscans and Dominicans. Thus, the history and the activity of these orders are essential for understanding the medieval Europe, as well as the above mentioned novel.

**ՊԱՏՐԱՆՔԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԻՏԱԼՈ ԿԱԼՎԻՆՈՅԻ «ԽԱՉՎՈՂ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԻ ԱՄՐՈՑԸ» և
«ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ» ՎԵՊԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Իտալոտ Կալվինո, «Խաչվող ճակատագրերի ամրոցը», «Անտեսանելի քաղաքները», իրականություն, պատրանք

Իտալոտ Կալվինոյի պոստմոդեռնիստական շրջանի ստեղծագործություններն այժի են ընկնում իրենց յուրօրինակ կառուցվածքով, տեքստային երկրորդությամբ, բազմաշերտությամբ և թեմատիկ հարստությամբ: Ստեղծագործական այս փուլը Կալվինոն սկսում է «Խաչվող ճակատագրերի ամրոցը» (*Il castello dei destini incrociati*, 1969) վեպով, որից մի քանի տարի անց հրատարակում է «Անտեսանելի քաղաքները» (*Le città invisibili*, 1972) և ավարտում է «Եթե մի ձմեռային գիշեր մի ճանապարհորդ» (*Se una notte d'inverno un viaggiatore*, 1979) վեպով: Այս ստեղծագործությունները միմյանց սերտ կապված են կոնցեպտուալ առումով և տեքստային Ֆրագմենտարությամբ. երեքում էլ կիրառված է միևնույն «*համակցման խաղ*» (*gioco combinatorio*) հնարքը: Առաջին հրատարակություններից հետո երեք վեպերն էլ շարունակ գտնվել են գրականագետների ուշադրության կենտրոնում: Գրաքննադատները, մասնավորապես ստրուկտուրալիստները, դիտարկել են հիմնականում նրանց տեքստային կառուցվածքային կողմը՝ հպանցիկ անդրադարձ կատարելով այնպիսի հարցերի, ինչպիսիք են պատրանքի և իրականության փոխհարաբերությունը, երազի և իրականության միախառնումը: Երազ-իրականություն փոխհարաբերությունը, որն արտացոլվել է հատկապես առաջին երկու վեպերում, մեր կարծիքով, նշանակալի գիտական հետաքրքրություն է ներկայացնում: «Խաչվող ճակատագրերի ամրոցը» վեպում ընթերցողի առջև հեղինակն անմիջապես բացում է վեպի այսպես ասած «անփոփոխ պատկերը». «Թվաց՝ գտնվում եմ մի հարուստ արքունիքում, որ չէիր սպասի տեսնել նման համեստ ու անշուք ամրոցում, և ոչ միայն թանկարժեք կահույքի և հախճապակյա սպասքի համար, այլև այն հանգստության ու թեթևության համար, որ տիրում էր սեղանի շուրջ հավաքվածների մոտ».³⁹⁹

³⁹⁹ Calvino I., “*Il Castello dei Destini Incrociati*”, Mondadori, Milano 2014, p.5

Ինչպես նկատել է գրականագետ Ջ.Մանգանելլին, Կալվինոն իր վեպն սկսում է «*երագի*» լեզվով, այստեղ նկարագրվածը միջնադարյան մի տեսիլք է⁴⁰⁰։ Սա, ինչպես վերը նշեցինք, վեպի անփոփոխ պատկերն է, մի տեսիլք, որը չի ջքանում։ Վեպի անհայտ հերոսը մոտենում է սեղանակիցներին, որոնք, ճանապարհի հոգնածությունից խոսելու անկարող, տարոյի քարտերով սկսում են միմյանց լռելյայն պատմություններ պատմել։ Յուրաքանչյուրը, քարտեր նետելով, պատմում է իր պատմությունը։ Ամրոցում հայտնված «անհայտ հերոսը» պատմում է պատկերների հաջորդականության վրա հիմնված պատմությունների սեփական տարբերակները։ Իսկ ներկաները հնարավոր է, որ այդ պատկերներից այլ բան հասկացած լինեն։ Այսպիսով յուրաքանչյուր սեղանակից իր պատմության համար օգտագործում է միևնույն քարտերը, սակայն դրանք դասավորում է տարբեր հաջորդականությամբ և հաճախ տարբեր դիրքով, այնպես որ միևնույն քարտերից կարող է ստացվել միանգամայն տարբեր պատմություն։ Իհարկե, քարտերի այս խաղով Կալվինոն տեքստի ներսում ստեղծում է վերը նշված կոմբինատորական խաղը։ Տեքստը և տարոյի արկանները այստեղ նույնանում են։

Գրականագետ Մ.Շնայդերը նշում է, որ այս «*պատկերագարող պատմությունները, որ կարող են ընթերցվել դիմացից կամ հետևից և նույնիսկ կողքերից, արտացոլում են գրքի սեզմենտացված և հայելային դասավորությունը և գերազանցում են “գծային” լեզվի սահմանափակումները*»⁴⁰¹։ Շնայդերն ավելացնում է, որ այստեղ «*պատկերների կոնֆլիկտն է, որտեղ հակառակորդները փորձում են մուտք գործել ֆիզիկական, հոգեկան, առասպելական, հոգևոր և հոետորական պայքարի մեջ*»⁴⁰²։ Ավելացնենք, որ կերպարների պատմած պատմությունները քիչ թե շատ արտացոլում են ճիշտ հասկացվելու և ինչ-որ չափով իրականության հասնելու նրանց ձգտումը։

Արդյունքում ստեղծվում է պատկերների ու պատմությունների մի մեծ նկարահյուս, որտեղ յուրաքանչյուր արկան կարող է ընկալվել յուրովի, տարբեր կերպ արտացոլելով իրականությունը։ Վեպի վերջին գլուխներում արկանները սկսում են մարմնավորել հայտնի գրական

⁴⁰⁰ *Il Mondo Ammirato con la Testa in Giù*, L'«espresso», XVI, 12, 22 marzo 1970, p.22

⁴⁰¹ Schneider M., *Calvino at a crossroads. Il castello dei destini incrociati*, PMLA, Vol. 95, No. 1 (Jan., 1980), pp. 73-90, p. 73

⁴⁰² *Ibid*

կերպարներ՝ Ֆաուստ և Պարցիֆալ, Համլետ, Լիր և Մակբեթ, Օֆելյա, Կորդելիա և Լեդի Մակբեթ: Հետաքրքրական է, որ բոլոր այս գրական կերպարները հայտնվում են անսպասելի, գրեթե ուրվականների պես և ստեղծում մի նոր՝ այսպես ասած ճշմարիտ պատումի պատրանք: Կավլինոն, իհարկե, այս ամենին վերջնական լուծում չի տալիս: Պատմությունները, ինչպես իրականության որոնումը, կարող են լինել անվերջ:

«Անտեսանելի քաղաքները» իր համակցման խաղով մոտ է «Ամրոցին», որից, սակայն, տարբերվում է տեքստային ավելի բարդ լուծումներով, թեմատիկ ընդարձակությամբ և երկիմաստությամբ: «Ամրոցը» վեպ է «պատմություն պատմելու մասին», ասել է թե՛ պատկերները պատմում են «ցնորական պատմություններ»:

«Քաղաքներում» նույնպես տեսնում ենք պատմիչի և լսողի, սակայն այստեղ որոնման և իրականության ընկալման խնդիրն առավել խորն է, գրեթե դրամատիկ: Վեպը բաղկացած է ինը գլխից, յուրաքանչյուրում՝ հինգ կամ վեց կրկնվող վերնագրերով «*վինյետներ*»՝ «քաղաքներ և հիշողություն», «քաղաքներ և երազանք», «քաղաքներ և նշաններ» և այլն: Յուրաքանչյուր վինյետում պատկերված է կանանց անուն կրող մի քաղաք: Վեպի երկու գլխավոր հերոսները հայտնի պատմական կերպարներ են՝ վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն և թաթարների իշխան Կուրլա Խանը. «*Չենք ասում, թե Կուրլա Խանը հավատում է այն ամենին, ինչ նրան ասում է Մարկո Պոլոն՝ նկարագրելով նրա տիրություններում գտնվող քաղաքները... սակայն թաթարների կայսրն անշուշտ շարունակում է լսել երիտասարդ վենետիկցուն ավելի մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ, քան կլսեր իր որևէ ենթակայի կամ հետախույզի*»⁴⁰³:

Վեպի էքսպոզիցիան արդեն պատրաստում Մարկո Պոլոյի՝ ոչ իրական, մտացածին պատումների: Այստեղ, ինչպես «Ամրոցում», պատմողը օգտագործում է ոչ թե բառերի, այլ ժեստերի լեզուն՝ հաճախ՝ նաև շախմատի խաղաքարեր: Այստեղ նույնպես տեղի է ունենում խոսքի և ոչ խոսքային միջոցների որոշակի նույնացում: Մարկո Պոլոյի նկարագրած քաղաքները չեն հավակնում իրական լինելուն. նրանք ֆանտաստիկ են և սյուրռեալ: Թերևս կհամաձայնենք գրականագետ Մ.Վուդի այն պնդմանը, որ «*մենք (ընթերցողներս – Բ.Ս) նույնպես սկսում ենք կասկածել՝ արդյո՞ք այս ամենն իրականում տեղի է ունենում*

⁴⁰³ Calvino I., “*Le Città Invisibili*”, Mondadori, Milano 2014, p.5

նույնիսկ պատումի շրջանակներում, արդյո՞ք Կուբլա Խանը և Մարկո Պոլոն հաղորդակցվում են միմյանց հետ, թե՛ այդ ամենը երազում են տեսնում»⁴⁰⁴։ Գրականագետի՝ երազի վերաբերյալ այս վարկածը կարող է վերաբերել ոչ միայն երկու կերպարների միջև անսովոր հաղորդակցությանը, այլ նաև քաղաքներին։ Ճանապարհորդ Մարկո Պոլոն չի պատմում իր ճանապարհի մասին, այստեղ ճանապարհի տոպոս չկա, քանի որ շարժում, որպես այդպիսին, նույնպես չկա։ Պատկերները հայտնվում են մեկ ակնթարթում և գրեթե նույն ակնթարթում չքանում են. «Բայց քաղաքը չի պատմում իր անցյալը, այլ պարունակում է այն իր փողոցների ծայրերում, լուսամուտների ցանցերում, աստիճանների քազրիքներում, կայծակների պեհավաքներում, դրոշակների ձողերում, ամեն մի հատված՝ արված իր կտրվածքով...»⁴⁰⁵։

Այս և այլ քաղաքների նկարագրության մեջ տեսնում ենք առարկաներ, դետալներ, որոնք քաղաքային «իրականության» մասն են կազմում։ Սակայն այս օբյեկտները հարաբերականորեն են արտացոլում իրականությունը. սրանք քաղաքի անցյալի սիմվոլներն են։ Յուրաքանչյուր քաղաքային օբյեկտ արտացոլում է քաղաքի անցյալը։

Ինչպես «Ամրոցում» տարոյի միևնույն պատկերներն են տարբեր պատմություններ ներկայացնում, նույն կերպ էլ այստեղ որոշ քաղաքներ կարող են ունենալ տարբեր կերպարանքներ. «Կայսրությանը քարտեզում, օ՜ մեծ խան, կարող են գտնվել թե՛ մեծ Ֆեդորան, որ քարից է կառուցված, թե՛ փոքր ֆեդորաները, որ ապակե գնդերում են։ Ոչ նրա համար, որ բոլորն էլ հավասարապես իրական են, այլ որ բոլորն էլ ենթադրյալ են։ Մեկն իր մեջ ամփոփում է այն, ինչ ընդունված է որպես անհրաժեշտ, սակայն դեռ այդպիսին չի դարձել. Մյուսներն՝ այն, ինչ մտածված է որպես հնարավոր, սակայն մեկ րոպե հետո այդպիսին չէ»⁴⁰⁶։

Ինչպես տեսնում ենք, նույն քաղաքը կարող է տարբեր կերպ արտահայտվել թեկուզև այն պատճառով, որ ապրում է պատմիչի երևակայության մեջ։ Այսպիսին է Էռուսապիա քաղաքի նկարագրությունը. «Ասում են՝ տարեցտարի հանգուցյալների Էռուսապիան անճանաչելի է

⁴⁰⁴ Wood M., *Hidden in the Distance: Reading Calvino Reading*, The Kenyon Review New Series, Vol. 20, No. 2 (Spring, 1998), pp. 155-170, p.157

⁴⁰⁵ Calvino I., *Le Città Invisibili*, Mondadori, Milano 2014, p. 11

⁴⁰⁶ Ibid, p.31-32

դառնում: Իսկ ողջերը նրանցից հետ չմնալու համար ամեն ինչ անում են այնպես, ինչպես հանգուցյալների մասին իրենց պատմում են նրանց աշխարհ ուղարկվածները: Այսպես ողջերի էուսապիան կրկնօրինակում է իր ստորգետնյա նմանակին: Ասում են՝ սա ոչ միայն հիմա է տեղի ունենում. իրականում հանգուցյալներն են կառուցել վերին էուսապիան իրենց քաղաքի նմանությամբ: Ասում են՝ այս երկվորյակ քաղաքներում հնարավոր չէ իմանալ, թե ովքեր են ողջերը, և ովքեր են հանգուցյալները»⁴⁰⁷:

Ինչպես Ֆեդորան է տարբեր կերպարանքներում շարունակում երևակայական մնալ, այնպես էլ էուսապիան, գտնվելով ողջերի և հանգուցյալների խաչմերուկում, չի կարողանում ձեռքազատվել իրականության և պատրանքի շփոթից: Գրականագետ Լ.Կիեզան «լարված աշխարհագրություն» է անվանում Կալվինոյի բազմապրոֆիլ քաղաքները, որոնք, գտնվելով «հնի» և «նորի», «իրականի» և «երևակայականի», «անտեսանելիի» և «ապրելու համար անհնարինի» միջև, բոլորն էլ խոսում են «թաքնված» և «պարականոն» քաղաքի մասին⁴⁰⁸: Ավելացնենք, որ այս քաղաքները նույնքան ակնթարթային են, որքան երազը: Պատմիչը բոլոր այս քաղաքներում հայտնվում է հանկարծակի, ուստի հնարավոր է, որ սրանք միննույն երազի անվերջանալի ֆրագմենտներ են: Քաղաքներն անտեսանելի են, չունեն սկիզբ ու վերջ, ուստի կարող են անվերջ ընթերցվել: Կալվինոն թույլ չի տալիս տեսնել քաղաքները, որոնք տեսիլքի պես հայտնվում են և չքանում, քաղաքային ճարտարապետությունը վերածվում է տեքստի, որը հնարավոր է միայն ընթերցել, ճիշտ այնպես, ինչպես «Ամրոցում» ընթերցվում են արկանները:

Այսպիսով՝ թե՛ «Խաչված ճակատագրերի ամրոցում», թե՛ «Անտեսանելի քաղաքներում» Կալվինոն փորձում է իրականության և պատրանքի միջև սահման գծել: Առաջինում «ուրվական պատկերները» փորձում են «պատմություն» դառնալ, իսկ երկրորդում «տեսիլք-քաղաքները» իրականության և երևակայության շփոթի մեջ վերածվում են տեքստի:

⁴⁰⁷ Ibid, p.110

⁴⁰⁸ Chiesa L., “Calvino and Perec: Cities and Puzzles”, The Romanic Review, 2006, pp.401-423, p.403

Баграт Аветисян

**СООТНОШЕНИЕ ИЛЛЮЗИИ И ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ В РОМАНАХ
ИТАЛО КАЛЬВИНО «ЗАМОК СКРЕСТИВШИХСЯ СУДЕБ» И
«НЕВИДИМЫЕ ГОРОДА»**

The present article dwells on the study of the relation between reality and fantasy, real images and visions, reality and fiction, the confusion between the dream and consciousness.

Bagrat Avetisyan

**THE CORRELATION BETWEEN ILLUSION AND REALITY IN «THE
CASTLE OF CROSSED DESTINIES» AND «INVISIBLE CITIES» BY ITALO
CALVINO**

The present article dwells on the study of the correlation between reality and fantasy, real images and visions, reality and fiction, the collision between the dream and consciousness.

ТРАДИЦИИ ИСПАНСКОЙ ПЕСНИ В «НАРОДНЫХ ДРАМАХ» ФЕДЕРИКО ГАРСИА ЛОРКИ

Ключевые слова: Федерико Гарсия Лорка, фольклор, Канте хондо, испанская колыбельная, «народные драмы»

*В песнях, как и в сладостях,
таится душа истории,
ее вечный цвет, без дат и фактов.
Ф.Г. Лорка*

Отличительная черта творчества поэта, драматурга, музыканта и художника Федерико Гарсия Лорки (1898 – 1936) – связь с фольклором, с духовным миром испанского народа. Выступая с лекциями и докладами, Лорка нередко исполнял собранные им народные песни, аккомпанируя себе на рояле. Свое природное дарование поэт расширил и обогатил живым творческим освоением всего лучшего, что веками копила культура испанского народа, и того, что создало искусство его времени.

Федерико Гарсия Лорка родом из южной области Испании – Андалузии. Он вырос в краю жгучего солнца, простых людей, не потерявших ощущения единства с природой, в атмосфере народной музыки и поэзии. Он смолоду собирал, записывал, исполнял и пропагандировал народные песни, сверяя свой голос с голосом народа. Возможно, немаловажную роль в формировании андалузской основы художественного мира Федерико Гарсия Лорки сыграла и то, что вся его семья была очень музыкальна, его родные умели и любили петь народные песни. Размышляя о неповторимой глубине испанских колыбельных песен, сравнивая их с иными явлениями искусства, Лорка подчеркивал их органичную связь с историей и удивительную современность: в отличие от старинного собора *«песня вырывается в сегодняшний день из глубины истории живая и пульсирующая, как лягушка, вписывается в панораму, как*

молодой куст, донося в дуновении своей мелодии живой свет ушедших дней»⁴⁰⁹.

Традиции народной испанской песни определили и своеобразие его ранних лирических сборников («Стихи о Канте хондо», «Первые песни», «Песни»), и поэтику его драматических произведений.

Эта работа посвящена традициям народной песни в трех самых известных драматических произведениях Лорки – «народных драмах», созданных в 1933-1936 гг. В этот цикл вошли пьесы «Кровавая свадьба (1933), «Йерма» (1934) и «Дом Бернарды Альбы» (1936).

По замечанию французского писателя, историка и исследователя творчества Лорки Альбера Бенсуссана, «Кровавая свадьба» носит на себе явный отпечаток Андалузии с ее цыганской мифологией, – всего того, что поэт широко использовал в двух первых своих поэтических книгах»⁴¹⁰.

Сам Лорка называл эту пьесу первой частью трилогии об испанской земле. «*Она написана под влиянием Баха*»⁴¹¹, – говорил он. Действительно, это одна из самых музыкальных его пьес.

Сюжет драмы связан с действительным происшествием – похищением невесты и мезтью жениха за оскорбленную честь. В драме Невеста во время свадьбы бежит с возлюбленным, Леонардо. В финале Невеста остается одна: Жених настигает беглецов, убивает Леонардо и гибнет сам. Реальная история в драме приобретает обобщающий смысл, и главными мотивами пьесы становятся мотивы любви и смерти. Символический обобщающий характер произведению придают песни, включенные в прозаический текст. Их три – это колыбельная, с которой начинается действие драмы,

⁴⁰⁹ Гарсия Лорка Ф. Колыбельные песни // Гарсия Лорка Ф. Избранные произведения. В 2-х т. Т. 1. Стихи; Театр; Проза: Пер. с исп. /Редакт., Л.Осват, Г.Степанов, В. Стиолбов, Н.Томашевский. М: Худ. лит, 1975. с. 456-457

տաքօրինակ սիրով» (Լերմոնտով),- նույնը և Հովի Գրիգորյանի պոեզիայում, որ անսովոր, «տաքօրինակ սիրո» աշխարհայեցողությունն է կրում, ուստի հայրենիքի ճակատագրի տագնապի, ողբերգական սիրո ընկալումն է հիմքում, ուր մեծը և փոքրը փոխատեղվում են միմյանցով, հետևապես պատակոված է թե՛ էպիկականի և թե՛ քնարականի միասնությունը: «Հայաստան» բանաստեղծությունն ահա դրա վկայությունն է, ուր ասվում է այսպես.

Մա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,
որ կարող եմ վերցնել հետս,
թե մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ, ինչպես ծերացած մայր,
փոքրիկ, ինչպես նորածին զավակ,
իսկ քարտեզի վրա
ընդամենը արցունքի մի կաթիլ:
Մա իմ երկիրն է- չափսերով այնպիսին,
որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
որ չկորցնեմ հանկարծ... (Հ, 9)

Համեմատությունը դիպուկ է, ինչպես ծերացած մոր և նորածնի համեմատության պատկերում: Մոր և նորածին մանկան նման հայրենիքը հարազատ է, իսկ մորից և մանկանից ավելի հարազատ ոչ ոք չի լինում, ուստի հայրենիքի «աշխարհագրական վայրը» բանաստեղծի սիրտն է... Բայց երբ Աստված այդ փոքրիկ հողի վրա ցանկացավ գրել «երջանկություն» և «խաղաղություն» ,«հարմար չեղավ», բայց միայն ցավ-ը, սուգ-ը, լաց-ը եղան հարմար («Եվ ի՞նչ աներ Աստված»): Իսկ բանաստեղծին ի՞նչ է մնում այս դեպքում, գուցե անհուսության աղոթքը: Սակայն նոր «Աղոթքն» էլ տագնապի նման է հնչում.

Չորս քայլ վեր...սահման է,
Չորս քայլ վար...սահման:
Աստված իմ,
այսքան էլ փոքրիկ հայրենիք...
Նորածնի բարուր է իսկական...
Նորածնի բարուրը գրկել եմ,

Աստված իմ, մոլորվել, կանգնել եմ.
ասա՛ ինձ, ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ –
Չորս քայլ վեր՝ ավեր է ու մահ,
Չորս քայլ վար՝ ավար ու թալան...(Հ,7)

1990-ականների պտեզիայում, իհարկե, բանաստեղծի տագնապը մի այլ ենթատեքստում է հնչում, որ բնորոշ է «Աղոթք»-ին, ինչպես և նրանից հետո գրված գործերին, մանավանդ «Ոստիկանական լրատու» բանաստեղծությանը, «Չզիտեսթեինչ» շարքին: Քննադատությունը արդիականությանը արձագանքելու իմաստով անդրադարձել է պրոցեսին, խնդիրը դիտարկել է սակայն կեցության և գրականության նույնության ընկալմամբ՝ արձանագրելով գրապատմական փաստը և ասելով, թե «անկախությունը չներբողվեց բացարձակապես և ոչ մի բանաստեղծությամբ», երևույթը բնորոշելով իբրև «անկախ Հայաստանի գրական հոգևարք»⁵¹: Վերլուծողը՝ Արք. Նիկողոսյանը, «լռության» այդ արգելքը գրողի հոգեբանության և պատմական ընթացքի անորոշության մեջ է տեսնում, մինչդեռ եթե անգամ գրապատմական փաստն այդպիսին է և ճիշտ է ասված, կարևորը «գրական ճգնաժամի» հասկացությունն է, որ ձևավորում է շարժում և անկախության շրջանում չի սկսվել այն, այլ նախորդ տասնամյակում: Ուրեմն, ավելի լայն ըմբռնման հարցադրում է սա, որ կախում ունի գրողի փիլիսոփայական աշխարհըմբռնումից, ինչպես դարասկզբին Տերյանի «հոգևոր հայրենիքի» որոնման գաղափարը, որը բանաստեղծը մեկնաբանում է «կրիզիսի» հասկացությամբ՝ բացատրելով երևույթը հնի՝ մի ամբողջ մշակութային շրջանի ավարտի և նորի հաստատման տրամաբանությամբ: Տերյանն ուղղակի ասում է նաև, թե հայրենիքի երգը...«մի ֆանտոմ է եղել», «ցավատանջ իղձ» և «յոթնապատիկ խոցված տիրամոր» ճակատագիրը երգելիս կարող էր ասել՝ «դու հպարտ չես, իմ հայրենիք, տրտում ես դու և իմաստուն...»: Ուստի Հովհ. Գրիգորյանը, նույնի շրջմամբ, «Չզիտեսթեինչ» բանաստեղծական շարքում հայրենիքը բնորոշում է «թշվառ» («և ինչքան շատ են թշվառ ու խեղճ, այնքան շատ են հայրենիք»), «հեռու» (« Աստծու

⁵¹Գրականագիտական հանդես, Երևան, ԺԳ, 2012, էջ 81-82 (տե՛ս Արք. Նիկողոսյանի «Կեցություն, հոգեբանություն, գրականություն» հոդվածը)

աչքից հեռու»), հայրենի տները՝ կիսաքանդ, հայրենիքը մի եղանակ ունի միայն՝ ձմեռը... Ուստի անհնար է ինչպես բանաստեղծությունը, այնպես էլ հայրենիքի բանաստեղծական կերպարի արտահայտումը պոեզիայի և պոետականի անհնարինության պատճառով, ինչը Հովհ. Գրիգորյանը պատկերում է բանաստեղծության թե՛ բովանդակության, թե՛ վերնագրի «անիմաստության» իմաստի մեջ, որ գրված է բառերի միակցումով (չգիտեսթեինչ), որը նոր իմաստի գաղափարն է արտահայտում իհարկե: Բայց նաև՝ հայրենիքն այնտեղ է, ուր խոմփոց է լսվում» և կամ «քնելուց զգված երեխայի լաց»: Ուստի՝

Հայրենիքները, ահա թե ինչու երազներով ու երազանքներով են

բերնեբերան լցված... Բոլորն են քնած:

Սակայն ճիշտն այն է, որ սովորաբար

նախ հայրենիք են լինում սկզբում և հետո միայն,

Ժամանակներ անց- դառնում են

երկիր: Երևի թե բոլորն անխտիր: (ԵՋ, 27)

Բանաստեղծի հայացքում «շրջված քնարականությունը», որի պատկերներում պարողիկ, անգամ սարկազմի հասնող խոսքում կերպավորվում է հայրենիքը, սկսած վերնագրից (չգիտեսթեինչ), ժամանակի անորոշության, անհեթեթության և տագնապի բնութագրում է, որի «հեռվում» (ներսում) թաքնված է «երկիր» դառնալու գաղափարը, ինչպես հարուստ Անգլիան և Միացյալ Նահանգները, որոնք «անունով են կոչվում»: Ահա այդ «անվան» իմաստի որոնումն է Հովհ. Գրիգորյանի պոեզիայում, ուստի անունն է, որ ձգտում է իմաստի ամբողջության, **որովհետև անունը երկիրն է**, գաղափարի գոյականացումը: Հետևապես «Հայ ժողովրդի համառոտ պատմություն...» բանաստեղծության մեջ հայրենիքը և ժողովուրդը, «Ժամանակի-և ժամանակների» տագնապը հաղթահարելով, հասել է մեր օրերի «բարոյական հաղթանակների օրերը» և, ինչպես չարենցյան «Երկիր Նաիրին»՝ որպես «չամիչի պես գործածվող» գոյական, Գրիգորյանի պոեզիայում ևս անուն է ստանում՝ Հայաստան, որի ներկան այսպիսին է.

...ափիս մեջ նշխարաչափ մի պատառ

ամեն կողմից կրծոտված մեղրաբլիթ... Հայաստան: (ԿԺ, 8)

Ահա այդ անվան գաղափարն է նաև, որ պատմությունը ներկա է դարձնում: Գենետիկ միասնություն ունեն նրանում ժողովրդի ճակատագիրը, անցած ճամփան, փիլիսոփայությունը, որ Գրիգորյանը նկարագրում է սկսած վաղ նախնադարից մինչև 19-20-21-րդ դարերը: Կորուստների և տագնապների պատմություն է «համառոտ ձեռնարկը», որ թե՛ առաջին, թե՛ խմբագրված տարբերակներում «հասցեատեր ունի», ում հետ, թվում է, բանաստեղծը երկխոսական բանավեճով է կապված (ով կարողալու ժամանակ չունի) կամ՝ «անհրաժեշտ հետևությունների» պատվիրանով՝ ճանապարհի փիլիսոփայության գիտակցությամբ: Բանաստեղծությունը, հետևաբար, ներքին քնարախոսական պլանում «պահպանում է» գրողի հայացքի ուղղությունը (հայրենքը երկիր դառնալու և անվան փոխակերպվելու իմաստով), որ նախահիմքի նշանակություն ունի, ուստի՝ լեզվական առումով չարտահայտվածի՝ «բացակայի ոլորտն է», իսկ արտաքին՝ նկարագրական «կառուցվածքում» Գրիգորյանը, վերապրելով հայրենիքի ճակատագրի «էկզիստենցիալ դրաման», եթե կուզեք՝ «պատմում» է ներկան, հայացքը՝ շրջված ներս՝ ասես պատկերի առարկայական իմաստը հակադրելով ճակատագրի ողբերգական հեզնանքին և անհուսությամբ... Այսպես՝ վաղ միջնադարից հայրենիքի հողերն է «տարել» թշնամին՝ ասելով, թե մենք «կարող ենք քարից հաց քամել», հետո ծովերն ու ճանապարհներն է տարել և ասել, որ մենք «կարող ենք ճանապարհորդել մտովի», հետո հացն են տարել՝ թողնելով մեզ «առավել սննդարար հոգևոր հացը», կոտորել են և մեղադրել, ասելով, թե «դիմադրության փորձ եք արել», որպեսզի մեր հարևանները՝ «բնության այդ պարզ ու անմիջական զավակները», խայտառակվեն աշխարհով մեկ, մինչդեռ ասել են՝ խելացի, «հայրենասեր և խաղաղ ժողովրդի համբավ եք վայելում...»: Ահա և՛ ողբերգության վերջին արարը, որ նախորդում է... «երկիր դառնալու» կամ ուղղակի ասենք՝ **անվան և իմաստի** միասնությամբ ամբողջանալու անհնարիիությունը, որ հայրենիքի գաղափարի վերջին հանգրվանն է... Ինչը, իբրև վերջին արար, բանաստեղծության «անհետացումն» է խորհրդանշում նաև և նշանակում է ոչ միայն էպիկական աշխարհի քայքայում, այլև բանաստեղծության անհնարիիություն, երբ քայքայվում է

ձևը, ռիթմը(երաժշտականությունը), խոսքը առհասարակ: Ահա թե ինչու է Հովհ. Գրիգորյանը «գրում» ոչ թե «Հայ ժողովրդի պատմություն...», այլ միայն՝ «համառոտ պատմություն...», որովհետև պատմությունը ամբողջականի արտահայտություն է, իսկ համառոտը՝ պառակտվածի(քայքայվածի), որ լեզվական առումով էլ համակարգման չի կարող ենթարկվել: Հետևապես «Հայ ժողովրդի համառոտ պատմություն...» ստեղծագործությունը ոչ միայն հայրենիքի ճակատագրի ընկալման ողբերգությունն է, այլ նաև՝ բանաստեղծության ողբերգությունը, որ գոյը(գոյությունը) պատմության չի կարող փոխակերպել, ինքնին մասնատված է...Ուստի կարող ենք ասել(և ինչու չասենք), սա նաև բանաստեղծի՝ Հովհ. Գրիգորյանի ողբերգությունն է՝ անավարտ և անկատար...որ ծնվում է բանաստեղծի աշխարհում, տևում՝ ինչպես իր ցավը, իր ճակատագիրը, որ հնարավոր է ընկալել արդեն «շրջված», երբ բանաստեղծությունն է «գրում» այլևս բանաստեղծին, մեկնաբանում նրան, որովհետև ինքն է այնուհետ «պահպանում» (տեքստից և գրությունից հետո և նրանով՝ ասել է՝ լեզվում) բանաստեղծի ճակատագիրը...

Сурен Абрамян

ПЕСНИ ОВАНЕСА ГРИГОРЯНА О РОДИНЕ

Автор статьи анализирует песни Ованеса Григоряна о родине в художественной системе поэта, комментирует его мировоззрение и систему ценностей, его место и роль в современном литературном процессе.

Suren Abrahamyan

HOVHANNES GRIGORYAN'S SONGS ABOUT MOTHERLAND

The author analyzes Hovhannes Grigoryan's songs about Motherland within the poet's artistic system, comments on his worldview and value system, his place and role in the contemporary literary process.

Թարգմանության խնդիրներ
Проблемы перевода
Problems of translation

81.355

Ашхен Атанесян

**СКАЗКИ САЛТЫКОВА-ЩЕДРИНА В АРМЯНСКИХ
ПЕРЕВОДАХ**

(некоторые вопросы смысловой и стилистической адекватности)

Ключевые слова: М.Е.Салтыков-Щедрин, сказка, адекватность перевода

В творческом наследии великого русского сатирика М.Е.Салтыкова-Щедрина его знаменитые сказки являются одной из самых ярких страниц. Они и сегодня пользуются у читателей популярностью, так как многие из них остаются злободневными и в наши дни .

Сказки Салтыкова-Щедрина оказались в центре внимания армянских писателей, критиков и переводчиков еще в 80-х годах позапрошлого века. До революции на армянском языке было опубликовано в журналах и в отдельных сборниках девять сказок сатирика, причем некоторые из них в разных переводах. В советское время, в 1935 году, вышел из печати второй том собрания сочинений Щедрина на армянском языке, куда вошли 32 сказки, переведенные известным армянским переводчиком русской литературы А.Тер-Овнаняном, благодаря переводам которого армянский читатель смог познакомиться со многими гениальными произведениями русского сатирика. Заслуги А.Тер-Овнаняна, конечно, велики, но, на наш взгляд, его интерпретация щедринской прозы не всегда бесспорна.

Неоднозначность решений тех или иных задач, возникающих в процессе перевода, позволяет четче определить и представить «проблемные» с точки зрения переводимости «зоны» щедринских

сказок. В данной статье нам хотелось бы остановиться на некоторых общих для всех сказок сатирика переводческих проблемах.

Одной из сложных проблем для переводчика сказок является адекватное воспроизведение их стилистических, лексических и синтаксических особенностей. К художественным особенностям сказок относится употребление Щедриным особых сказочных элементов, имеющих стилеобразующие функции. Таковы сказочные зачины и присказки. Рассмотрим несколько примеров.

«Жили да были два генерала» («Повесть о том, как один мужик двух генералов прокормил»)⁵¹², «В некотором царстве, в некотором государстве жил-был помещик» («Дикий помещик») (23), «В старые годы, при царе Горохе это было» («Дурак») (140).

Закономерны переводы зачинов «жил-был» формой «լիսում է, չի լիսում», «в некотором царстве, в некотором государстве» - «ինչ-որ մի թագավորության մեջ, ինչ որ մի պետության մեջ». Сложный с точки зрения перевода зачин сказки «Дурак» удачно передается А.Тер-Овняняном: «Այս դեպքը պատահել է շատ հին տարիներում, Նոյ նահապետի ժամանակ» (488)⁵¹³ и в более позднем переводе Д.Есяян: «Հին ու հին ժամանակներում, Նոյի տարին է սս եղել...»⁵¹⁴.

Присказка «по щучьему велению, по моему хотению» («Повесть о том, как один мужик двух генералов прокормил») звучит бессмысленно в переводе А.Тер-Овняняна «ձկան հրամանով և իմ ցանկությամբ» (279), а в переводе В.Папазяна (1899) - «Վար չվար երկու գորապետ կար. և որովհետև երկուսն էլ թերևամիտ էին, շուտով երկուսն էլ, անհայտ պատճառով, երևացին հանկարծ մի

⁵¹² Салтыков-Щедрин М.Е. Собр.соч. в 20 томах.М.«Худ.лит.».1965-1977.Т.16.Кн.1.С. 7. Ссылки на это издание даются в тексте с указанием страницы в скобках .

⁵¹³ Армянский текст цитируется по изданию Սալտիկով-Շչեդրին Մ.Ե. Ընտիր երկեր. 3 հատ, Եր.Հայպետհրատ.Հ.1.1951 - с указанием в тексте страницы в скобках

⁵¹⁴ ,Գարուն. 1976. N1. էջ 9

անմարդարնակ կղզու մեջ»⁵¹⁵ - еще более бессмысленно, так как нарушается логическая связь внутри абзаца: «Жили да были два генерала, и так как оба были легкомысленны, то в скором времени, по щучьему велению, по моему хотению, очутились на необитаемом острове» (7).

Присказку «ни в сказке сказать, ни пером описать» (13) из той же сказки оба переводчика передают калькированием «գրչով չի կարելի նկարագրել և ոչ էլ պատմել» (288), при этом смысл сохраняется, но пропадает один из стилиобразующих элементов, создающих особый узор сказочной прозы. То же относится и к переводу других присказок: «отпустил волка на все четыре стороны» («Бедный волк») (42) - «ազատ արձակեց գայլին» (344), «мужик там был, мед-пиво пил, по усам текло, в рот не попало» («Повесть о том, как один мужик двух генералов прокормил») (13) - «գյուղացին ... այնտեղ եղել է, կերել է, խմել է, բայց բերանը բան չի ընկել» (287), «նամիկը ... այնտեղ եղել էր, կյանք էր վարել, խեղճ ու կրակ կյանք» (В.Папазян, 378).

Для усиления сатирического звучания сатирик использует и такой прием, как грамматически неправильная речь героев. В сказке «Медведь на воеводстве» это эзоповский прием, с помощью которого высмеивается безграмотность высоких должностных лиц: «Но Лев не только не наградил его, но собственноручно на Ословом докладе сбоку нацарапал: Не верю, штоп сей офицер храбр был; ибо это тот самый Таптыгин, который маво любимова Чижика сиел!» (55). Непонятны причины, из-за которых переводчик игнорировал этот важный прием, так как существуют примеры, подтверждающие, что при желании он мог находить соответствующие формы отображения этой речевой особенности героев. Воспроизведен подобный прием, высмеивающий безграмотность Орла, в сказке «Орел-меценат»: «Учили его по звуковому методу, легко и занятно,

⁵¹⁵ Տարիք 1899. N16. էջ 374. В дальнейшем при ссылках на это издание в тексте в скобках приводятся фамилия переводчика и номер страницы.

но как ни бились, он и через год, вместо Орел, подписывался Апер» (77). «Սովորեցնում էին նրան հնչական մեթոդով, հեշտ ու հետաքրքիր, բայց որչափ էլ աշխատեցին, նա մեկ տարուց հետո էլ «Արծիվե գրելու փոխարեն գրում էր «Ածեվ» (389).

Что касается фразеологических оборотов, то и они используются сатириком настолько своеобразно, что максимально привлекают к себе внимание читателя. Акцентируя фразеологизм, Щедрин перестраивает его и грамматически. Так, в сказке «Вяленая вобла» люди, дивясь уму-разуму воблы, говорят ей: «Откуда у тебя такая ума палата взялась? ведь кабы не ты, мы, наверное бы, с Макаром, телят не гоняющим, познакомились!» (67). А.Тер-Овнянян находит удачный вариант перевода, в котором фразеологический оборот, хотя и не звучит столь необычно, но созвучен оригиналу стилистически: «—Որտեղից՞ է քեզ այդչափ անսպառ խելքը ... եթե դու չլինեիր, հավանորեն, մեր բանը բուրդ կլիներ» (375). В сказках, где фигурируют животные, автор употребляет поговорки, измененные соответственно их повадкам. Однако переводчик воспроизводит их буквально, из-за чего теряется и фразеологизм и его оригинальная интерпретация: «об соловье только одно слышал: что эта птица малая, не стоит из-за нее клюв марать» (75). «...սոխակի մասին լսել էր միայն, որ դա շատ փոքրիկ թռչուն է և չարժե կտուց կեղտոտել նրա համար» (386). Совершенно недопустим следующий перевод. В сказке «Чижиково горе» Чижик, вспоминая свою подружку-трясогузочку, восклицает: «Что за шустренькая, аккуратненькая была девушка точно огурчик!» (128). «Ինչ կայտառ, ճշտապահ աղջիկ էր ... ասես վարունգ լիներ» (468). Как мы видим, специфическим приемом писателя при употреблении фразеологизмов в сказках является обновление их звучания путем замены отдельных слов, изменения грамматической структуры устойчивых оборотов. Привычные ассоциативные связи, вызываемые у читателя этими выражениями, и неожиданная свежесть звучания способствуют созданию комического и сатирического эффекта. Это один из важных стилистических элементов сказок, требующий особого внимания переводчика.

Таким образом, своеобразие поэтики щедринских сказок ставит перед переводчиком ряд достаточно сложных переводческих задач, и если переводы А.Тер-Овнаняна в свое время явились фактом большой значимости, то сегодня в свете современных требований, предъявляемых теорией перевода, многие проблемы, связанные с переводом щедринской прозы, могут получить свое новое, иное разрешение в новых переводах.

Աշխեն Աթանեսյան

**ՍԱԼՏԻԿՈՎ-ՇԷԴՐԻՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**(Իմաստաբանական-ոճաբանական համապատասխանության
հարցեր)**

Հոդվածը նվիրված է ոուս մեծ երգիծաբան Մ.Ե.Սալտիկով-Շչեդրինի հեքիաթների հայերեն թարգմանության հարցերին: Որպես թարգմանչական խնդիր մեկնաբանվում են մի շարք ոճաբանական, բառագիտական և շարահյուսական առանձնահատկություններ: Որպես թերություն նշվում են բնագրում հեղինակի կողմից յուրովի օգտագործված դարձվածքների և այլ միջոցների ոչ բավարար չափով արտացոլումը թարգմանության մեջ, ինչպես նաև իմաստային այն սխալները, որոնք բնագրի ոչ ճիշտ ընկալման հետևանքն են:

Ashkhen Athanesyan

**SALTYKOV-SCHEDRIN'S TALES IN ARMENIAN TRANSLATIONS
(some issues of the semantic and stylistic adequacy)**

The article is devoted to the study of issues concerning the Armenian translations of the fairy tales by a great Russian satirist M.E. Saltikov-Shchedrin. A number of stylistic, lexical and syntactic peculiarities are focused on within the framework of the given article. The insufficient reflection of the phraseological units and other means used by the author, as well as those meaning mistakes, which are a result of a faulty perception of the original text, is mentioned as drawbacks of the translation.

**«ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ԻՄՈՒՑԹՈՎ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԻՋԱՍՍ ՍԱՐՈՑԱՆԻ ԿԱՐԸ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Վիլյամ Մարոյան, կարճ պատմվածք, «միայնություն» իմույթ, «նույնական թարգմանություն»

Վիլյամ Մարոյանը 20-րդ դարի ամերիկյան գրականության ականավոր ներկայացուցիչներից է: Նրա ստեղծագործությունները թարգմանվել ու թարգմանվում են աշխարհի տարբեր լեզուներով: Վ.Մարոյանը իր ուժերը փորձել է գրական գրեթե բոլոր ժանրերում, բացառությամբ բանաստեղծությունների, սակայն կարճ պատմվածքը Մարոյանի ամենահաջողված ժանրն է: Իր գրական ուղին Մարոյանը սկսել է որպես կարճ պատմվածքի հեղինակ՝ հենց այդ ժանրում ասելով իր լավագույն խոսքը և ընթերցողի առջև բացելով մի աշխարհ՝ լի զգացմունքային և բարոյական մթնոլորտով, ինքնատիպ հատկանիշներով, երազներով, հույզերով և զգացումներով⁵¹⁶:

Ընտրելով և ուսումնասիրելով սարոյանական կարճ պատմվածքներում վառ արտահայտված զգացումներից մեկը՝ միայնության զգացումը՝ սույն հոդվածում ներկայացնում ենք «միայնություն» իմույթով բառային միավորների թարգմանական խնդիրները Վիլյամ Մարոյանի կարճ պատմվածքների հայերեն և ռուսերեն թարգմանվածքներում:

Գեղարվեստական տեքստի թարգմանական խնդիրների ուսումնասիրությունը անհնար է պատկերացնել՝ հաշվի չառնելով տեքստի, մասնավորապես՝ գեղարվեստական տեքստի լեզվական կապակցմանն /*linguistic cohesion*/ առնչվող տեսական խնդիրներն ու թարգմանության ընդհանուր խնդիրները: Թարգմանության գործընթացում թարգմանչի կարևորագույն նպատակն է հասնել աղբյուր և թիրախ տեքստերի նույնականության: Ռուս լեզվաբան, թարգմանիչ Յա.Բ.Ռեկցերի⁵¹⁷

⁵¹⁶ Гончар, Н.А. Уильям Сароян и его рассказы. Изд-во Ереванского университета, 1976, 216 с.

⁵¹⁷ Рекцер, Я.И. Теория перевода и переводческая практика, Москва: Р.Валент, 2006, 238 с.

կարծիքով՝ նույնական թարգմանվածքը պետք է վերարտադրի աղբյուր տեքստում արտացոլված իրավիճակը և պահպանի հաղորդակցական ներգործությունը:

«Նույնական թարգմանություն» հասկացությունն ավելի լայն իմաստ ունի. այն կոնկրետ իրավիճակներում ապահովում է միջլեզվական հաղորդակցության անհրաժեշտ լիակատարությունը և կարող է համարվել «լավ թարգմանություն» հասկացության հոմանիշ:

Թայթլերի⁵¹⁸ բնորոշմամբ «լավ թարգմանությունն այն է, որում աղբյուր տեքստի արժեքը այնպես է միահյուսվել թիրախ լեզվին, որ ընկալվում է թիրախ լեզվի կրողների կողմից այնպես, ինչպես բնագիրը՝ աղբյուր լեզվի կրողների կողմից»: Ի հավելումն սրան, Վ. Բենիամինի⁵¹⁹ կարծիքով՝ «լավ թարգմանությունը արտացոլում է լեզուների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները և ներքին կապերը, որոնք, սակայն, անտեսանելի են առանց թարգմանության»: Հետևաբար, սույն հոդվածի նպատակն է դիտարկել «լավ թարգմանությանը» նպաստող քայլերն ու միջոցները՝ Վ. Սարոյանի կարճ պատմվածքներում «միայնություն» առանցքային հասկացության լիարժեք փոխանցման ժամանակ:

Ուսումնասիրելով «միայնություն» իմությունը բառային միավորների թարգմանական խնդիրները Վ. Սարոյանի կարճ պատմվածքներում՝ կարող ենք նշել, որ, որպես կառուցվածքային բաղադրիչներ, իմությունները համագոր չեն իրենց կարգավիճակով և բնույթով: Բացի բառիմաստային կառուցվածքի հիմքում ընկած իմություններից, գոյություն ունեն նաև համատեքստային իմություններ, որոնք, ըստ Գրեյմսի⁵²⁰, արտահայտում են տվյալ բառի՝ տարբեր իրավիճակներում կիրառման հետևանքով առաջացած զուգորդությունները:

Համատեքստային իմությունները միշտ կապված են նշված երևույթների և առարկաների հետ, և ընկած են բառային միավորների իմաստների տարբեր երանգների հիմքում: Յուրաքանչյուր բառիմաստի վերլուծության և թարգմանության ժամանակ պետք է սահմանել բառային միավորի

⁵¹⁸ Tytler, A. F. *Essay on the Principles of Translation*, Edinburgh, (ed.) (1997b)

⁵¹⁹ Benjamin, W. 'The task of the translator', translated by H. Zohn, in L. Venuti (ed.) (2000), pp. 15-25.

⁵²⁰ Greimas, A.J. *Structural Semantics: An Attempt at a Method*. University of Nebraska Press 1983, p. 325.

հարաբերակցությունը իմաստային դաշտի այլ միավորի հետ, սահմանել նրա տեղը, դերը և նշանակությունը⁵²¹:

Վ.Սարոյանի կարճ պատմվածքներում «միայնություն» իմույթով բառային միավորների թարգմանական խնդիրն այն է, որ «միայնություն» հասկացությունը վերաբերում է այն կատեգորիաներին, որոնց կենսական նշանակությունը հստակ պատկերվում է առօրյա գիտակցության մեջ, սակայն թվացյալ հստակությունն ու թափանցիկությունը խաբուսիկ են, քանզի պարունակում են բարդ փիլիսոփայական բովանդակություն:

«Միայնություն» հասկացությունը վկայում է անհատի անհամերաշխության, աններդաշնակության, տառապանքի և անձի ճգնաժամի մասին: Նման բառային միավորների թարգմանական դժվարություններն անմիջապես կապված են միայնության խնդրի ընկալման, կենսական պայմանների, ինչպես նաև այն գիտակցության հետ, որ մարդը միայնակ է, թեև շրջապատված է այլ մարդկանցով⁵²²: Վերլուծելով «միայնություն» իմույթով բառային միավորները Վ.Սարոյանի կարճ պատմվածքներում՝ մենք առաջարկում ենք հետևյալ դասակարգումը և առանձնացնում երեք հիմնական բառիմաստային խմբեր.

Ֆիզիկական վիճակ,

Հոգեվիճակ,

Միայնության դրսևորումը նյութական օբյեկտների միջոցով:

Թարգմանության ժամանակ միայնության՝ որպես ֆիզիկական վիճակի, արտահայտման համար թարգմանիչը պետք է ունենա փիլիսոփայական ֆոնային գիտելիքներ, որպեսզի ընկալի միայնությունը (միաձուլված չլինելու գաղափարը) որպես «ես»-ի գոյության առանձնություն այլ գոյություններից⁵²³:

Վերլուծենք առաջին խմբում ընդգրկված օրինակները:

What's the use to be alive if you're all alone in the world and no mother and father and nobody to love you? «The Oranges».⁵²⁴

Ի՞նչ միտք ունի ապրելը, երբ ամբողջ աշխարհում դու մենն- մենակ ես, չունես ոչ հայր, ոչ մայր, ոչ մեկը, որ սիրի քեզ: «Նարինջները», թարգմ. Հ.Դավթյան:⁵²⁵

⁵²¹ Апресян, Ю.Д. Избранные труды. Т.1. Лексическая семантика. Синонимические средства языка. М.: Языки рус. Культуры, 1995, 472 с.

⁵²² Пузанова, Ж.В. Проблема одиночества (социологический аспект). М.: РУДН, 1998, 59 с.

⁵²³ Heidegger, M. Being and Time, translated by Joan Stambaugh. State University of New York Press, 1996, p. 419.

⁵²⁴ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 96.

Какой смысл жить, когда ты один во всем мире и нет у тебя ни отца, ни матери, никого, кто бы тебя любил? «Апельсины», перевод Л.Шифферса.⁵²⁶

Բնագրի *all alone* արտահայտությունը թարգմանության հայերեն տարբերակում փոխանցվել է *մեն-մենակ* կրկնավոր բարդությամբ այդ կերպ միայնության ֆիզիկական վիճակի իմաստի ուժեղացումը շեշտելու համար: Ռուսերեն թարգմանվածքում թարգմանիչը կիրառել է *один* արտահայտությունը, որը ցույց է տալիս այլ մարդկանց, մասնավորապես՝ ընտանիքի անդամների, հարազատների, բարեկամների հետ կապի բացակայությունը: Աղբյուր լեզվի *no* և *nobody* բառային միավորները հայերեն (*ոչ* հայր, *ոչ* մայր, *ոչ մեկը*) և ռուսերեն (*ни* *отца*, *ни* *матери*, *никого...*) թարգմանվածքներում ավելի են ուժեղացնում և ընդգծում միայնակ, լքված, որք, այլ մարդկանցից ֆիզիկապես առանձնացված լինելու վիճակը:

When he had awakened in the morning, he had known he would decide which he would do, but he had imagined that he would make the decision alone, and now this accompaniment, this presence of the girl beside him, was a pleasant improvement. «The Trains».⁵²⁷

Առավոտյան Ջոն գգում էր, որ պիտի կայացնի իր որոշումը, բայց նրան միշտ թվացել էր, թե դա սուկ իր գործն է, իսկ հիմա այդ աղջկա ներկայությունը անսպասելի էր, և չափազանց հաճելի նրա միջամտությամբ որոշելը: «Գնացքները», թարգմ. Լ.Գալստյան:⁵²⁸

Проснувшись утром, он уже знал, что предстоит принять решение, только раньше он думал, что решать придется в одиночку, а тут, глядишь, кто-то тебе вторит, и от того, что рядом девушка, сделать это будет куда легче и приятнее. «Поезда», перевод Ю. Абызова.⁵²⁹

Բնագրի *alone* բառային միավորի թարգմանությունը ռուսերեն տարբերակում (*в одиночку*) արտահայտում է այս բառի սովորական, առօրեական իմաստը, որի պարզության ետևում, սակայն, թաքնված է ֆիզիկական առանձնության զգացումի բարդությունն ու խորիմաստությունը: Այստեղ, *alone* և *в одиночку* բառային միավորները

⁵²⁵ Մարոյան, Վ., Ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, «Պատմվածքներ», «Մարդկային կատակերգություն», Երևան, «Սովետական գրող» 1986, էջ 56:

⁵²⁶ Сароян Уильям. Рассказы. Издательство АТС, 2003, с. 156.

⁵²⁷ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 144.

⁵²⁸ Մարոյան, Վ., Ընտրանի, հատոր երկրորդ, Երևան, «Նաիրի» 2008:

⁵²⁹ Сароян Уильям. Меня зовут Арам. Рассказы. Издательство «Советакан грох», Ереван-1980, с. 203.

կարևոր դեր են խաղում թե՛ բնագրում, թե՛ ռուսերեն թարգմանվածքում՝ միաժամանակ արտահայտելով նաև հոգեվիճակ:

Ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, ապա թարգմանիչը, կիրառելով *սոսկ* եղանակավորող բառը և *հր* դերանունը, փոխանցում է իրեն բոլորից գատելու, ինչպես նաև սեփական ուժերի կարևորության, կարողության և ինքնուրույնության իմաստները:

Հաջորդ օրինակը, որում միայնությունը համարում ենք հոգեվիճակ, հետևյալն է.

He had heard about strangers and he had heard about enemies and he had come to believe that they were the same thing, but here was somebody he had never seen before who was neither a stranger nor an enemy. All the same it was awful lonesome without his angry father. «The Third Day After Christmas».⁵³⁰

Նա լսել էր, որ կան օտար մարդիկ ու լսել էր, որ կան թշնամիներ և եկել այն համոզման, թե դրանք նույնն են, բայց տեսնելով, որին նա տառջ երբեք չէր տեսել, ոչ օտար էր, ոչ թշնամի: Չնայած միևնույն է՝ նա իրեն սարսափելի մենակ էր զգում և տանջ իր բարկացած հայրիկի: «Օննոյան տոներից երեք օր հետո»»⁵³¹

Он слышал о незнакомцах и о врагах, и он начал думать, что это было одно и то же, но сейчас перед ним был кто-то, кого он никогда не видел раньше, но это не был ни незнакомец, ни враг. И все равно, без его сердитого отца ему было ужасно одиноко. «На третий день после Рождества», перевод О. Кайдаловой.⁵³²

Բնագրի թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն տարբերակի թարգմանիչները, փորձելով չկորցնել միայնակ լինելու, միայնությունից տանջվելու հոգեվիճակի գաղափարը, ներկայացրել են *awful lonesome* արտահայտության նույնական թարգմանություն: Իսկ բնագրում *awful* ածականը, և թարգմանվածքներում համապատասխանաբար *ужасно* մակբայը և *սարսափելի* ածականը շեշտում են այդ հոգեվիճակի վառ արտահայտված բացասական իմաստը և մարդկային հոգևոր տառապանքը հարկադրված միայնությունից: Հարկ ենք համարում նշել, որ բնագրում միայնության զգացումը ընդհանրական է և ամենուրեք է (*it was awful lonesome*), մինչդեռ հայերեն և ռուսերեն թարգմանվածքների թարգմանիչները, կիրառելով հայերենում *հրեն* դերանունը և զգալ բայը և ռուսերենում *ему* դերանունը և *было* բայը, վերագրում են միայնությունը անմիջապես հերոսին:

⁵³⁰ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 269.

⁵³¹ Սարոյան, Վ., Պատմվածքներ, էջ. 16:

⁵³² <https://www.proza.ru/2013/06/16/1589>

Home was not home. He was home: everything was in place, and yet he was a stranger. He was alone. «The Trains». ⁵³³

Տունը տուն չէր, ամեն ինչ առաջվանն էր, բայց ինքն օտար էր: Մենակ էր: «Գնացքները», թարգմ. Լ.Գալստյան: ⁵³⁴

Родной дом — и все равно не дом. Да, он дома: все на своем месте, и все равно он здесь чужой. Чужой и одинокий. «Поезда», перевод Ю. Абызова. ⁵³⁵

Այս օրինակում «միայնություն» իմույթով բառային միավորը արտահայտում է ոչ հարազատ, օտար, կողմնակի, անծանոթ, հոգեպես հեռու, հարազատներից մեկուսացված լինելու իմաստը, որը ավելի է ընդգծվում բնագրում *stranger*, հայերեն թարգմանվածքում *օտար* և ռուսերեն թարգմանվածքում *чужой* բառային միավորների առկայությամբ: Ի դեպ, ռուսերեն թարգմանվածքում թարգմանիչը, կրկնելով *чужой* բառային միավորը, շեշտում է հերոսի միայնակ լինելու փաստը և ուժեղացնում միայնության զգացումը տեքստում:

Ստորև բերված հաջորդ օրինակում *lonely* բառային միավորը զուգակցվում է *frightened* բառային միավորի հետ և արդյունքում թե՛ բնագրում, թե՛ հայերեն և ռուսերեն թարգմանվածքներում ի հայտ են գալիս միայնության որպես անօգնական, անտերունչ, լքված, մենակ լինելու վիճակի իմաստները:

Once he saw a young girl with a small black satchel descend from a train, and she seemed so lonely and frightened that he wanted to shout to her and run down to her and smile and tell her, My name is Joe Silvera. «The Trains». ⁵³⁶

Մի օր փոքրիկ, սև ճամպրուկով մի աղջկա տեսավ կառամատույցում: Աղջիկն այնքան մենակ էր ու վախվորած, որ ցանկացավ ձայն տալ, իջնել նրա մոտ, ժպտալ ու ասել. «Իմ անունը Ջո Միլվերա է»: «Գնացքները», թարգմ. Լ.Գալստյան: ⁵³⁷

Однажды он увидел, как из вагона вышла девушка с небольшой черной сумкой, такая одинокая, такая испуганная, что ему захотелось окликнуть

⁵³³ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 136.

⁵³⁴ Մարոյան, Վ., Ընտրանի, հատոր երկրորդ, Երևան, «Նաիրի» 2008:

⁵³⁵ Сароян Уильям. Меня зовут Арам. Рассказы. Издательство «Советакан грох», Ереван-1980, с. 197.

⁵³⁶ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 137.

⁵³⁷ Մարոյան, Վ., Ընտրանի, հատոր երկրորդ, Երևան, «Նաիրի» 2008:

ее, подбежать к ней, улыбнуться и сказать: «Меня зовут Джо Сильвера». «Поезда», перевод Ю. Абызова.⁵³⁸

Ինչպէս հայտնի է, իմաստային դաշտը հնարավոր է հստակ պատկերացնել նաև տվյալ հասկացույթի գուգորդական կապերի և իմաստային առանձնահատկությունների միջոցով: Վերլուծենք երրորդ խմբում ընգրկված օրինակները, որոնցում միայնությունը դրսևորվում է նյութական օբյեկտների միջոցով:

What's the use to sit in a cold room until it is time to go to bed and hear Jake and his wife fighting all the time and go to sleep and cry and wake up and see the sad sky and feel the cold air and shiver and walk to school and eat oranges for lunch instead of bread? «The Oranges».⁵³⁹

Ինչ միտք ունի նստել ցուրտ սենյակում, մինչև քնելու ժամանակը գա, հետո անկողին մտնել՝ լսելով Ջեյկի ու իր կնոջ անդադար կոչվր, արտասվելով քնել ու արթնանալ և տեսնել մռայլ երկինքը ու դողդողալ ցրտից: Դողդողալով դպրոց գնալ ու նախաճաշին հացի փոխարեն նարինջ ուտել: «Նարինջները», թարգմ. Հ. Դավթյան:⁵⁴⁰

Какой смысл сидеть в холодной комнате, пока не придет время спать, слушать, как все время ноют Джек и его жена, ложиться в постель и плакать, просыпаться и видеть унылое небо, дрожать от холода, идти в школу и есть на завтрак апельсины вместо хлеба? «Апельсины», перевод Л. Шифферса.⁵⁴¹

Վերոնշյալ օրինակում միայնության վերապրման խորությունը ընդգծելու համար, հեղինակը փոխաբերական իմաստով ներկայացնում է այն *ցուրտ սենյակի, մռայլ երկինքի, սառը օդի* նկարագրությամբ: Այս փախաբերությունները ավելի են սրում միայնության զգացումը, դժվարացնում և խոչընդոտում են միավորումը այլ մարդկանց հետ: Այստեղ նկատում ենք, որ գեղարվեստական տեքստի բովանդակության հասկացութային առանձնահատկությունը ճշգրիտ փոխանցված է թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն թարգմանվածքներում: Թարգմանիչները հավատարիմ են մնացել տեքստի ոճին, բնույթին և տրամադրությանը:

⁵³⁸ Сароян Уильям. Меня зовут Арам. Рассказы. Издательство «Советакан грох», Ереван-1980, с. 198.

⁵³⁹ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 96.

⁵⁴⁰ Մարոյան, Վ., Ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, «Պատմվածքներ», «Մարդկային կատակերգություն», Երևան, «Սովետական գրող» 1986, էջ 56:

⁵⁴¹ Сароян Уильям. Рассказы. Издательство АТС, 2003, с. 157.

*I am sitting in a very cold room and there is no sun anywhere, and the only thing I can talk about is the cold because it is the only thing going on today. «A Cold Day».*⁵⁴²

*Շատ ցուրտ մի սենյակում եմ, արևի նշույլ իսկ չկա ոչ մի տեղ, միակ բանը, որից կարող եմ խոսել, ցուրտն է, քանի որ այսօր ցրտից բացի ոչինչ չկա: «Ցուրտ օրը», թարգմ. Ն.Գոնչար, Ա. Հովհաննիսյան:*⁵⁴³

*Я сижу в страшно холодной комнате, и солнца не видать. Единственное, о чем я способен говорить, — это о холоде, потому сегодня у нас, кроме холодов, ничего не происходит. «Холодный день», перевод А.Оганяна*⁵⁴⁴

Վերոնշյալ օրինակում միայնությունը հեղինակի կողմից փոխանցվում է *ցրտի, ցուրտ սենյակի, արևի բացակայության* նկարագրությամբ: Փոխաբերական իմաստով միայնության գաղափարն արտահայտող այս նախադասությունը ընդգծում է այն փաստը, որ պատմվածքի հերոսը միայնակ, անօգնական է, և չկա ոչ ոք, ոչ մի կենդանի շունչ, ով իր ներկայությամբ ջերմություն կպարզևի իրեն և կլուսավորի այդ ցուրտ ու մռայլ սենյակը: Բնագրի «միայնություն» իմությունը բառային միավորները նույնությամբ թարգմանվել են հայերեն, սակայն, ինչպես նկատում ենք, ռուսերեն տարբերակում թարգմանիչը *very* մակբայը, որը ռուսերենում ունի *очень* իմաստը, թարգմանել է *страшно* մակբայով՝ այդ կերպ ուժեղացնելով փոխանցվող իմաստը:

*... there were no leaves on the trees, and the street was sad. «The Oranges».*⁵⁴⁵

...ծառերին՝ ոչ մի տերև, փողոցը՝ տխուր... «Նարինջները», թարգմ. Հ.Դավթյան:⁵⁴⁶

*Деревья стояли без листьев, и улица выглядела унылой и печальной. «Апельсины», перевод Л.Шифферса.*⁵⁴⁷

Այս օրինակում տերևազուրկ ծառերի և աշնանային տխուր փողոցի կերպարը օգտագործվում է հեղինակի կողմից որպես հոգու դատարկության, ունայնության, լքվածության և հոգու միայնության արտահայտման միջոց: Հայերեն թարգմանվածքում կարող ենք նկատել,

⁵⁴² Saroyan, W. The Daring Young Man on the Flying Trapeze and Other Stories, New Directions Publishing Corporation, New York, Fourth Printing, 1997, p.154.

⁵⁴³ Մարոյան, Վ., Ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, «Պատմվածքներ», «Մարդկային կատակերգություն», Երևան, «Սովետական գրող» 1986, էջ 28:

⁵⁴⁴ Сароян Уильям. Отважный юноша на летящей трапеции, 2014, 220с.

⁵⁴⁵ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 97.

⁵⁴⁶ Մարոյան, Վ., Ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, «Պատմվածքներ», «Մարդկային կատակերգություն», Երևան, «Սովետական գրող» 1986, էջ 57:

⁵⁴⁷ Сароян Уильям. Рассказы. Издательство АТС, 2003, с. 157.

որ թարգմանիչը մասնակիորեն դուրս է թողել բնագրի որոշ բառային միավորներ (there were, and, was), սակայն նրան հաջողվել է փոխանցել բնագրի տրամադրությունն ու ոճը: Ինչ վերաբերում է ռուսերեն թարգմանվածքին, ապա կարող ենք նկատել, որ թարգմանիչը փողոցի տիրությունը փոխանցում է մեկ բառային միավորի փոխարեն, երկու հոմանիշներով՝ унылый և печальный որակական ածականներով, որոնցում տիրության իմաստն ավելի ուժեղ է արտահայտված:

Վերլուծենք մեկ այլ օրինակ.

You belong the same place your brother is,” she said. “*In the ground. Dead,*” she said. «The Oranges».⁵⁴⁸

— Ինչ դու՛, ինչ քո եղբայրը: Գերեզման՝ մտնելիք նրա ետևից, գերեզման՝ Այնտեղ է միայն քո տեղը: «Նարինջները», թարգմ. Հ.Դավթյան:⁵⁴⁹

— Что ты, что твой брат, оба вы одного поля ягоды. Ну и шел бы за ним в могилу. Там тебе только и место. «Апельсины», перевод Л.Шифферса.⁵⁵⁰

Միայնության իմաստն այստեղ արտահայտված է համատեքստի և իմաստային բաղադրիչների միջոցով: Բնագրի *in the ground* և *dead* բառային միավորները արտահայտում են ամայության, լքվածության, հավերժ մեկուսացված և մոռացված լինելու իմաստները, որոնք նույն կերպ արտահայտված են նաև հայերեն և ռուսերեն թարգմանվածքներում:

Անգլերեն բնագրերի և հայերեն ու ռուսերեն թարգմանվածքների համեմատական և վերլուծական ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք եզրակացնել, որ միայնության հասկացությունը Վ.Սարոյանի կարճ պատմվածքներում շատ բազմակողմանի է: Պատմվածքների թարգմանությունները փոխանցում են բնագրի հասկացության տեղեկատվությունը՝ տվյալ պարագայում միայնության հասկացությունը: Կարելի է հավելել, որ թարգմանիչները, փորձելով հնարավորինս խորը փոխանցել ստեղծագործությունների հիմնական միտքը, երբեմն կիրառում են պարզ, չեզոք բառային միավորներ և համարժեքներ և փորձում են հասնել ամբողջական լեզվական ձևակերպման՝ պահպանելով տեքստի ներուժը:

⁵⁴⁸ Saroyan, W. Selected Short Stories. Progress Publishers, Moscow 1975, p. 94.

⁵⁴⁹ Սարոյան, Վ., Ընտիր երկեր չորս հատորով, հատոր առաջին, «Պատմվածքներ», «Մարդկային կատակերգություն», Երևան, «Սովետական գրող» 1986, էջ 55:

⁵⁵⁰ Сароян Уильям. Рассказы. Издательство АТС, 2003, с. 159.

Mariam Baghdasaryan, Kristine Soghikyan

**THE PROBLEMS OF TRANSLATING LEXICAL UNITS WITH THE SEME
“LONELINESS” IN SHORT STORIES BY WILLIAM SAROYAN**

The article contains the analysis of the problem of adequate translation of lexical units with the seme “loneliness” in Armenian and Russian translations of the short stories by William Saroyan. The main difficulties of translating lexical units are directly related to the complexity of the interpretation of the notion “loneliness” and the problem of understanding it. All lexical units, containing the seme “loneliness”, are divided into three groups (physical state, state of mind, manifestation of loneliness through material objects). In the article, the peculiarities of their translation into Armenian and Russian can be compared.

Мариам Багдасарян, Кристине Согикиан

**ПРОБЛЕМЫ ПЕРЕВОДА ЛЕКСИЧЕСКИХ ЕДИНИЦ С СЕМОЙ
«ОДИНОЧЕСТВО» В КОРОТКИХ РАССКАЗАХ УИЛЬЯМА САРОЯНА**

В статье анализируются проблемы адекватного перевода лексических единиц с семой «одиночество» в коротких рассказах Уильяма Сарояна на армянский и русский языки. Основные трудности перевода связаны, в первую очередь, со сложностью интерпретации понятия «одиночество» и с проблемой понимания этой семы. Все лексические единицы, содержащие сему «одиночество», подразделены на три группы (физическое состояние, душевное состояние и проявление одиночества через материальные предметы).

THE PRAGMATIC CHARACTERISTICS OF ORWELLIAN
'NEWSPEAK' AND ITS ARMENIAN TRANSLATION

Keywords: *George Orwell, 1984, political discourse, theory linguistic relativity, translation theory, oldspeak, doublethink, thought crime, pragmatics, dystopian novel*

The interrelations between thought and language have been a subject of thorough analysis ever since the establishment of ancient philosophical schools. Numerous attempts have been made to settle thought and language patterns, also to determine which comes first and which one of these two dominates the other. These attempts enjoy an ancient history, dating back to ancient Greek philosophy and evolving into a widely discussed linguistic-philosophical problem.

Steven Pinker, a Canadian-born American psycholinguist, cognitive scientist, asserts that long before the lingual structures would formulate in the mind of the speaker, the thoughts come first, later triggering the necessity of the formation of such lingual structures that encompass the thought itself⁵⁵¹. Contrastively, Werner Heisenberg, the famous German theoretical physicist once came up with this engrossing statement “**what we observe is not nature itself but nature exposed to our method of questioning**”⁵⁵². Similarly, the founders of the theory of linguistic relativity insist that in a strong sense the actions and the thoughts of a speaker are determined by their lingual capabilities. In a weaker sense, language somewhat shapes our thought behavior⁵⁵³. The boundaries between the two notions are very delicate. Conclusively, since reality undergoes linguistic processing its proneness to personal modification is very great. And because language has preeminently a

⁵⁵¹ (Pinker, Steven (2007). *The Language Instinct*. New York: Harper Perennial Modern Classics.)

⁵⁵² (Physics and Philosophy: The Revolution in Modern Science (1958) Lectures delivered at University of St. Andrews, Scotland, Winter 1955-56).

⁵⁵³ Whorf, B.L. (1956). "The Relation of Habitual Thought and Behavior to Language". In Carroll, J.B. *Language, Thought, and Reality: Selected Writings of Benjamin Lee Whorf*. Cambridge, Massachusetts: MIT Press. pp. 134–159

communicative function and the standalone capability to encode thought, it is not at all improbable that language can create thought and spread it out with its communicative nature.

And where would this ability be more of use than in Politics. The place behind the pulpit is perhaps the brightest example of how one's words and expressions have the capability to influence the audience to think or even do what a political speaker wants them to do or think. In this sense the proper transmission of thoughts and ideas requires a sophisticated choice of words and arrangement of speech.

Hereby, political discourse, especially when designed to manipulate, certainly requires public discourse as a means to reach the target group. And language, constituting the axis of discourse and being itself very tentative, intangible and flexible provides a very hospitable environment for the speaker to be able to communicate to the audience whatever thought, belief or ideology they desire.

In 1946, exactly three years before the publication of *Nineteen Eighty-Four*, **George Orwell** published his very famous essay called "Politics and the English Language", in which he more specifically notes, **"The great enemy of clear language is insincerity. When there is a gap between one's real and one's declared aims, one turns as it were instinctively to long words and exhausted idioms, like a cuttlefish squirting out ink."** Orwell claimed that instead of being "an instrument for expressing thought," language had become a means "for concealing or preventing thought, technically a means not to extend but to actually diminish the range of thought. Now the consequences, according to Orwell were quite reciprocal: **"if thought corrupts language, language can also corrupt thought."** He also notes, **"In our time, political speech and writing are largely the defense of the indefensible.... Thus political language has to consist largely of euphemisms, question-begging and sheer cloudy vagueness.... Political language is designed to make lies sound truthful and murder respectable, and to give an appearance of solidity of pure wind."** ("Politics and the English Language- George Orwell") And even now, the language that Orwell describes depicts the actual conditions of today's public and political discourse, the way people conduct essential business. This beautiful slippery play between thought and language is quite masterly depicted in Orwell's masterpiece- "*Nineteen Eighty-Four*".

"*Nineteen Eighty-Four*" is George Orwell's dystopian novel printed in 1949. Set up in Oceania, an all-powerful superstate, the novel depicts a life of

perpetual war, omnipresent government surveillance and public manipulation which is controlled by a political system called English Socialism, with Big Brother as the head of the leading political party. As literary political fiction and a breathtaking dystopian novel, "Nineteen Eighty-Four" is unique in style and sense. With it Doublethink, Thoughtcrime, Big Brother, this novel was able to penetrate into the world culture, unveiling truth and showing its ultimate importance.

In his novel "1984" Orwell uses an interestingly controlled language, different new, creative and playful technique and strategies to deliver his ideas to the reader- **Newspeak**. It is basically a newly made up language by the totalitarian state, aimed at limiting the freedom of thought, as well as concepts that threaten peace, freedom, human self-expression, individuality and so on. Any form of rumination or even the simplest thought against the views of the party is considered "thought-crime". Orwell claims that the main goal of Newspeak is to remove all shades of meaning from language, leaving only simple concepts. What is also really interesting at this point is that Newspeak words in the novel act as both nouns and verbs, that is, Orwell has quite masterfully managed to pierce the part-of-speech meaning. Orwell has created Newspeak on the basis of conversion as a main means of word-building. This is not at all surprising since Newspeak is entirely built with the use of English word-formation ways, patterns, affixes and stems, naturally inheriting the elements already existing in the language. Consequently, he has reduced the total number of words; for example, "**think**" is both noun and verb, so the word "**thought**" is not required and can be abolished. The party also intends Newspeak to be spoken in staccato rhythms with syllables that are relatively easy to pronounce. It is believed that this will make the speech more automatized and subconscious and reduce the necessary participation of thinking, turning the verb from a continuous notion to a static action. That is, the temporal dimension is completely eliminated and the process is thus suspended. In other words, newspeak prevents thinking from happening.

Orwell constructed his vocabulary in such a way so as to address exact expression to every meaning that a Party member could properly wish to express, at the same time excluding all the other connotative shades and also the possibility of getting there by indirect ways. This is achieved partly by the creation of new words, but mainly by eliminating undesirable words. Orwell has presented Newspeak words in 3 groups- **A vocabulary** consisting of words

for everyday business, **B vocabulary**- compound words with manipulative implications and **C vocabulary** of scientific and technical terms and words.

The grammar of Newspeak has some interesting characteristics. One of the peculiarities is that there was complete interchangeability between different parts of speech. As already mentioned, Orwell really did manage to get out of the boundaries of the part-of-speech meaning. Any word in the language, even the most abstract words such as **if** or **when** could be used either as a verb, noun, adjective or an adverb.

The adjectives were formed by adding the suffix **-ful** to the noun-verb, and adverbs with the suffix **-wise**. Consequently, **speedful**, per se, meant “rapid” and **speedwise** meant “quickly”. Some of our present-day adjectives, such as **good**, **strong**, **big**, **black**, **soft** were preserved, but the total amount was not very large as any adjectival meaning could be achieved by adding **-ful** to a noun-verb. Most of the already existing adverbs were not retained, except for the ones already formed with **-wise**. The word “**well**”, for example, was changed to **goodwise**. In addition, any word could receive a negative meaning by getting the prefix **un-** or get an amplified meaning with the help of the affix **plus-**, or got greater emphasis **doubleplus-**. As a result, **uncold** meant “**warm**”, while **pluscold** and **doublepluscold** meant respectively “**very cold**” and “**superlatively cold**”. (Orwell, 175)

